

ՄՊԻՏԱԿ ԹՈՒՂԹ

2020 թ. Ղարաբաղյան պատերազմը եւ
Հայաստանի ապագա արտաքին ու
անվտանգության քաղաքականությունները

Ռոբերտ Այդաբիրյան (Փարիզ)
Ժիրայր Լիպարիտյան (Բոստոն)
Թալին Փափազյան (Էքս ան Պրովանս)

Հունիս, 2021

© Ռոբերտ Ադաբիբյան 2021
© Ժիրայր Լիպարիտյան 2021
© Թալին Փափազյան 2021

Ռոբերտ Ադաբիրյանը միջուկային ճարտարագետ է, գործադիր պաշտոններ է զբաղեցրել Եւրոպայի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ասպարեզում: Նա Հայ ուսանողների եւրոպական միության համահիմնադիրն է, ինչպես նաեւ մի քանի վերլուծական կենտրոնների (think and do tanks), որոնք ծառայում են Հայաստանի պետականաշինությանն ու երկրում ժողովրդավարության կայացմանը: Այժմ նա համակարգում է Հայաստանում երեք արհեստագործական ուսումնարանների ստեղծման եւ Շուշիի Մոզայնի անվան դպրոցի՝ Ստեփանակերտ տեղափոխման աշխատանքները:

Ժիրայր Լիպարիտյանը թռչակառու պատմաբան է ու դիվանագետ է: 1991-1997 թթ. նա մի շարք պաշտոններ է զբաղեցրել անկախ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի վարչակազմում: Դասախոսի նրա վերջին աշխատանքը եղել է Միջիգանի համալսարանում (Անն Արբոր), որտեղ նա ղեկավարել է Ալեք Մանուկյանի անվան Ժամանակակից հայոց պատմության ամբիոնը: Նա դասախոսել է բազմաթիվ երկրներում, եւ նրա գործերը հրատարակվել են տարբեր լեզուներով:

Թալին Փափազյանը քաղաքագետ է: Նա դասախոսել է Ֆրանսիայի ու Միացյալ Նահանգների տարբեր համալսարաններում, նրա աշխատանքները հրատարակվել են տարբեր լեզուներով: 2018 եւ 2019 թվականներին նա եղել է ՀՀ ՊՆ ավագ փորձագետ արտասահմանում: Դասախոսելուց եւ հրատարակվելուց բացի, նա ղեկավարում է շահույթ չհետապնդող «Հայաստան խաղաղության նախաձեռնությունը», որտեղ նա զբաղվում է երկրորդ ուղու դիվանագիտության (second-track diplomacy) եւ քաղաքացիական հասարակության ծրագրերով:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում «Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան Հայկական համայնքներու քաժանմունք»-ին՝ տեխնիկական եւ թարգմանական հարցերում տրամադրած ֆինանսական օժանդակության համար:

Այս հրատարակության մեջ արտահայտված կարծիքներն անպայմանորեն չեն արտացոլում «Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան» կարծիքը: Հիմնարկության աջակցությունը չի նշանակում, որ Հիմնարկությունը զորավիճ է այս զեկույցում արտահայտված որեւէ հատուկ կարծիքի կամ տեսակետի:

Բովանդակություն

Նախաբան	1
Կատարողական ամփոփագիր.....	3
Սպիտակ թղթի ծագումը եւ մեթոդաբանությունը	11
Ներածություն	13
ՄԱՍ I. Մասնակիցների կողմից հարցաշարին տրված պատասխանների ամփոփում.....	16
Բաժին 1. Հայաստանը 2020 թ. դարաբաղյան պատերազմում	16
1.1. Ռազմական գործոններ, որոնք նպաստել են պարտությանը	16
1.2. Հայաստանի պատասխանատվության հարցը Ղարաբաղյան հակամարտության մեջ՝ ընդհանրապես, եւ 2020 թ. պատերազմի մեջ՝ մասնավորապես	19
1.3. 2020 թ. նոյեմբերի 10-ի ստեղծած իրավիճակը. Հրադադարի հայտարարությունը.....	24
Բաժին 2. Մասնակիցները ինչպե՞ս են ընկալում քաղաքականությունն ու ապագա տարբերակները	31
2.1. Չափանիշներ եւ արժեքներ՝ արտաքին քաղաքական նպատակների որոշման համար	32
2.2. Ի՞նչը պետք է լինի հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը	33
2.3. Որո՞նք պետք է լինեն Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները.....	36
2.4. Ադրբեջան.....	39
2.5. Ռուսաստան	41
2.6. Թուրքիա.....	42
2.7. Իրան.....	44
2.8. Վրաստան	46
2.9. Արեւմուտք (ԱՄՆ եւ Եւրոպա)	47
2.10. Հայաստան եւ Ղարաբաղ	49
2.11. Սփյուռք	58
2.12. Ցեղասպանության ճանաչման հարցը.....	59
Բաժին 3. Արտաքին եւ անվտանգության քաղաքականությունների գործոնների գնահատում	61
3.1. Որո՞նք են Հայաստանի արտաքին եւ անվտանգության ակտիվներն ու խոչընդոտները	61

3.2. Ո՞վ է մշակում եւ ո՞վ է իրականացնում Հայաստանի արտաքին քաղաքականությունը.....	65
ՄԱՍ II. Հեղինակների դիտարկումները, առաջարկություններն ու եզրակացությունները	68
Բաժին 1. Դիտարկումներ եւ նկատառումներ երկարաժամկետ քաղաքականությունների համար	68
1.1. Հայաստանի շուրջ առկա միջազգային իրողությունները.....	68
1.2. Հայաստան	76
1.3. Ղարաբաղ.....	78
1.4. Բանավեճի անհրաժեշտությունը	82
Բաժին 2. Առաջարկություններ	85
2.1. Անմիջական մտահոգություններ.....	86
2.2. Առաջարկներ՝ երկարաժամկետ արտաքին քաղաքականության զարգացման համար.....	90
2.3. Անվտանգության եւ պաշտպանության մասին.....	96
Բաժին 3. Եզրակացություններ.....	100
ՄԱՍ III. Առնչվող փաստաթղթեր.....	106
Առնչվող փաստաթուղթ 1. Հարցարան	106
Հայերեն հարցարան.....	106
Անգլերեն հարցարան.....	109
Առնչվող փաստաթուղթ 2. Պատասխանողների/մասնակիցների ցուցակ	112
Առնչվող փաստաթուղթ 3. 2020 թ. նոյեմբերի 10-ի հրադադարի հայտարարություն	115
Հրադադարի հայտարարություն՝ հայերեն	115
Հրադադարի հայտարարություն՝ ռուսերեն.....	116
ՄԱՍ IV. Հավելվածներ	119
Հավելված Ա. Ղարաբաղի վերաբերյալ Հայաստանի բանակցային դիրքորոշումների համառոտ ակնարկ.....	119
Հավելված Բ. Դիտարկումներ հայկական պետականության հետագծի վերաբերյալ՝ կապված Ղարաբաղյան խնդրի հետ, ինչպես նաև այդ թեմայով որոշ առաջարկություններ.....	121
Հավելված Գ. Զինված եւ միջազգայնորեն երաշխավորված չեզոքության գաղափարը	123
Հավելված Դ. Հանգուցյալ դեսպան Ռուբեն Շուգարյանի ժառանգությունը.....	129
Հավելված Ե. Առաջարկություններ Հայաստանի Զինված ուժերի բարեփոխումների համար	131

Հապավումներ

- ԶՈԻ Զինված ուժեր (Հայաստանի)
- ՀԱՊԿ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (Ռուսաստանի կողմից փոխադարձաբար հովանավորվող)
- ԵՄ Եվրոպական Միություն
- ԳՇ Գլխավոր շտաբ (Զինված ուժերի)
- ՇԳ Շփման գիծ
- ԼՂԻՄ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզ (խորհրդային ժամանակաշրջան)
- ԵԱՀԿ Եվրոպական անվտանգության եւ համագործակցության կազմակերպություն
- ՀԿ Հարավային Կովկաս
- ՊԶ Պետական ձեռնարկություններ
- ՄԱԿ Միավորված ազգերի կազմակերպություն

Ինչպես անհատների կամ հաստատությունների դեպքում է, աշխարհաքաղաքականությունն էլ արտացոլվում է հարաբերական ուժի, բայց նաև ճգնաժամային իրավիճակներում հնարավորություններից օգտվելու՝ պետությունների կարողությունների մեջ. «Մաքիավելյան տաղանդները էական են, ինչպես եւ զգացմունքային բանականությունը, որը հնարավորություն է տալիս հասկանալու փոփոխվող միջավայրը, օգտագործելու դրա միտումները եւ, համապատասխանաբար, օգտագործելու մեր տրամադրության տակ գտնվող մյուս տաղանդները»:

Ժոզեֆ Նայ
Քաղաքագետ

Նախաբան

Հայաստանի զինված ուժերի պարտությունը 2020 թ. Ղարաբաղյան¹ պատերազմում, սովորական իմաստով, ապոկալիպսիս էր՝ հաշվի առնելով վնասի ծավալն ու խորությունը, որը հասցվել է պետականությանն ու հասարակությանն առնչվող հարցերին՝ Հայաստանում, Ղարաբաղում, ինչպես նաև Սփյուռքում: Պետք է խոստովանել, որ ունանց համար Հայաստանի արտաքին քաղաքականության մասին խոսելն ավելորդ մի բան է արդեն:

Ապոկալիպսիսին նայելու մեկ այլ եղանակ է հիշելը դրա սկզբնական իմաստը՝ հայտնությունը: Ի՞նչ բացահայտեց 2020 թ. պարտությունը: Մի շարք սխալ պատկերացումներ, ձախողումներ, խնդիրներ եւ խանգարումներ (dysfunctions) հայոց պետականության եւ ժողովրդի ներսում: Այս Սպիտակ թուղթն այդ հիվանդություններն ախտորոշելու, ինչպես եւ հնարավոր բուժում առաջարկելու փորձ է: Որպես այդպիսին, դա կարող է հնարավորություն ընձեռել շտկելու անցյալի սխալները եւ այլ կերպ վարվել ապագայում, հուսանք՝ ավելի լավ կերպով:

Պարտությունը առաջացրել է ինքնիշխանության ճգնաժամ՝ իրական եւ հոգեբանական: Ամեն անգամ, երբ հայ ժողովուրդը բախվում է էութենական ճգնաժամի, գլուխ է բարձրացնում հավերժական երկրնորանքը. ինքնափրկությունն ընդդեմ ինքնիշխանության ձեռքբերման անհրաժեշտության: Հնարավոր է ջարդել արատավոր շրջանը: Մի՞թե սրանք են միակ ընտրանքները, եւ արդյո՞ք այդ ընտրանքներն այնքան իրար հակադրված են, որքան թվում է: Կարո՞ղ է լավ մտածված արտաքին քաղաքականությունը եւ անվտանգության քաղաքականությունը գործիք դառնալ այդ արատավոր շրջանը ջարդելու համար:

Սրանք այն հարցադրումներն են, մտահոգությունները եւ հույսը, որոնց շուրջ համաձայնություն ունեն նախաձեռնողներն ու համագործակիցները, եւ որոնք ձեւակերպված են այս զեկույցում:

Մի Սպիտակ թղթի ստեղծումը, որի փորձն արվեց այստեղ՝ ազգային աղետից հետո, բարդ վարժանք է այնքանով, որքանով այն պահանջում է վերագործարկում (reset): Դժվարությունն այն է, որ պետք է պահպանել այն, ինչը կարելու է Հայաստանի համար եւ ինչի վրա կարելի է կառուցել. եւ թողնել այն, ինչը կարող է թվալ կարելու այս կամ այն մակարդակում, բայց դա կա՛մ անհրաժեշտ է, կա՛մ մեծ դժվարություններ է ստեղծում առավել կարելուի համար: Կարող ենք նաև նշել, որ Հայաստանում արագ փոփոխվող հանգամանքները՝ այս Սպիտակ թղթի վերջնական

¹ Հակիրճության համար այս փաստաթղթում Ղարաբաղ եզրը կօգտագործվի Լեռնային Ղարաբաղի կամ Ղարաբաղի համար:

խմբագրման եւ թողարկման պահերի միջեւ, կարող են այս փաստաթղթի որոշ տարրերը դարձնել իրականությունից կտրված կամ ավելի վատ:

Ստորեւ թվարկված երեք հեղինակները լիովին պատասխանատվություն են կրում սույն փաստաթղթի բովանդակության եւ դրա ներկայացրած առաջարկությունների համար:
Մասնակիցները, թվարկված թե ոչ, պատասխանատվություն չեն կրում դրա բովանդակության համար:

Ռոբերտ Այդաբիբյան
Ժիրայր Լիպարիտյան
Թալին Փափազյան

Կատարողական ամփոփագիր

Այս փաստաթուղթն անկախ նախագիծ է, որը նախաձեռնել է հեղինակել են երեք մտահոգ հայեր: Նախագիծը փորձում է պատասխանել 2020 թ. Ղարաբաղյան պատերազմի հետեւանքների հետ կապված երեք հարցի. **ինչպե՞ս է Հայաստանը հասել իր պատմության այս շատ ցածր եւ վտանգավոր կետին, ի՞նչ կարելի է եւ ինչ պետք է արվի, ինչի՞ հիման վրա պետք է կառավարությունը եւ, ընդհանրապես, իշխանությունները կատարեն այս որոշումները:**

Հեղինակները հուսով են, որ մինչ այս զեկույցի հրապարակումը Հայաստանի քաղաքացիները կընտրեն նոր եւ օրինակարգ դեկավարներ, որոնք ունակ կլինեն մտահղանալու, բանակցելու եւ իրականացնելու հնարավոր ամենախելացի լուծումները: Սպիտակ թուղթը մտադիր է այդ դեկավարներին տրամադրել վերլուծությունների մի փաթեթ, ինչպես նաեւ այդ վերլուծություններից ուրվագծված առաջարկություններ:

Զեկույցի նախաձեռնողներն օգտվել են ողջ հայոց աշխարհի բազմաթիվ փորձագետների եւ մտավորականների ներդրումներից: Այդ մասնակիցները պատասխանել են մի մանրամասն հարցաշարի, համաձայնել են, որ իրենցից անհատապես հարցազրույց վերցվի կամ հրապարակել են հանրությանը հասանելի նյութեր՝ համապատասխան թեմաների վերաբերյալ: Սույն զեկույցի հեղինակները կարծում են, որ նրանց պատասխաններն ու կարծիքներն ընդգրկում են ներկայիս հայկական մտածողության ողջ պատկերը: Դրանք ամփոփված են Սպիտակ թղթի առաջին մասում: Երկրորդ մասը ներկայացնում է հեղինակների դիտարկումներն ու մտքերը տարածաշրջանային եւ միջազգային համատեքստերի վերաբերյալ, որոնցում գտնվում է Հայաստանը: Դա արվում է հարցեր տալով եւ պատասխանելով դրանց՝ առանց կանխորոշված արդյունքի, ինչպես նաեւ դիտարկելով կարճաժամկետ եւ երկարաժամկետ փոփոխություններն ու օրինակաչափությունները՝ համապատասխան պետությունների կողմից շահերի ընկալման մեջ: Այս զեկույցի երրորդ մասում հեղինակները ներկայացնում են իրենց առաջարկությունները:

Անկախ իրենց քաղաքական հակումներից եւ նախասիրություններից՝ նախագծի մասնակիցներն իրատեսական դիտարկումներ են ներկայացրել անմիջապես հետպատերազմյան իրավիճակի վերաբերյալ: Մա նախադրված է այն հարցի խոր դիտարկման վրա, թե ինչն էին նրանք համարում դեկավարության երկարաժամկետ սխալներ Ղարաբաղյան հակամարտության հարցում. սխալներ, որոնք հանգեցրին այս նոր պատերազմին եւ դրան հետեւող պարտությանը: Ըստ այդ փորձագետների՝ նոր համատեքստը, որում գտնվում է երկիրը, խրախուսում է կասկածի տակ դնել գերակշռող գաղափարախոսությունները, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար օգտագործված ուղիները, ինչպես նաեւ արտաքին ու անվտանգության առկա քաղաքականությունները: Մասնակիցները համարել են, որ անհրաժեշտ է մշակել մի համապարփակ մոտեցում՝ այն բազմաչափ ճգնաժամը լուծելու համար, որն ապրում է

երկիրը, որն առկա է ինչպես՝ սոցիալական, հոգեբանական, առողջապահական, քաղաքական, այնպես էլ անվտանգության մակարդակներում:

Բացի այդ, մասնակիցները նշել են մի շարք գործոններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ապագա արտաքին և անվտանգության քաղաքականությունները մշակելիս. (ա) Ռուսաստանի՝ ռազմական և դիվանագիտական դերի աճը, (բ) Ադրբեջանի շարունակվող ագրեսիվ քաղաքականությունը, (գ) Թուրքիայի ավելի մեծ նկրտումները, (դ) Իրանի և Վրաստանի կաշկանդված չեզոքությունը, (ե) արեւմտյան պետությունների էականորեն անտարբեր դիրքորոշումը և (զ) միջազգային հարաբերությունների հեղեղուկ և անորոշ ապագան՝ հատկապես խոշոր ու ընդլայնվող տարածաշրջանային տերությունների միջև հարաբերությունների:

Կառուցվածքային ռազմական գործոններ

Այս փաստաթուղթը սկսվում է 2020 թ. պարտության պատճառների վերլուծմամբ՝ փորձելով պատահակցության (conjunction) հետ կապված գործոնները տարանջատել կառուցվածքային թերություններից:

2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը շրջադարձային էր նման կառուցվածքային անբավարարությունների բացահայտման համար: Դրանցից առանձնահատուկ նշանակություն ունեն հետևյալ գործոնները, որոնք այնքան կարևոր են 2020 թ. պատերազմի ելքի համար.

1. Ընդհանրապես՝ Ջինված ուժերի, և հատկապես՝ պահեստայինների գորահավաքը (mobilization):
2. Հաստատված հայեցակարգային (doctrinal) բարեփոխումների թերությունները և թերի կիրառումը:
3. Վատ հետախուզական ծառայությունները և տեղեկատվությունը:
4. 2016 թ.-ից հետո Ջինված ուժերի (ՁՈՒ)՝ բացահայտված իրական իրավիճակի և նրանց հնարավորությունների վերաբերյալ հասարակության հետ ազնիվ հաղորդակցության բացակայությունը:
5. Ռազմավարական սխալ պատկերացումները երկարաժամկետ ռազմաշինության ընթացքում:
6. Ռազմական կրթությունը:

Քաղաքական գործոնները և կառավարությունների պատասխանատվությունը

Սպիտակ թղթում քննարկվում են խնդիրներ, որոնք ընկած են հայկական (Հայաստան և Արցախ) քաղաքականության հիմքում, ներառյալ մշակութային կողմնակալությունները,

որոնք վերնախավերին եւ կառավարություններին թույլ չեն տալիս այլընտրանքային քաղաքականություն որդեգրել:

Փաստաթուղթն իշխանություններին առաջարկում է ճանաչել Հայաստանի կրած կորուստների ամբողջ ծավալը՝ որպես հետեւանք 2020 թ. նոյեմբերի պարտության: Այս աղետը պետք է դիտվի որպես կոչնակ՝ վերանայելու գերիշխող մոտեցումներն ու ենթադրությունները:

Փաստաթուղթը ներկայացնում է Հայաստանի գույքագրումը.

- Ակտիվներ եւ պարտավորություններ՝ արտաքին եւ անվտանգության քաղաքականությունները մշակելիս:
- Չափանիշներ, որոնցով Հայաստանը որոշում է իր առաջնահերթությունները:
- Արտաքին եւ անվտանգության նպատակներ, ներառյալ ինքնիշխանությունը, անկախությունը եւ անվտանգությունը՝ բարեփոխված զինված ուժերի միջոցով, դաշինքների ստեղծումը եւ դիվանագիտության միջոցով անվտանգության սպառնալիքների նվազեցումը (եթե ոչ՝ դրանց չեզոքացումը):

Այսպիսով, սույն փաստաթղթում շոշափվում են տարբեր կարեւոր դերակատարների (Ռուսաստան, Թուրքիա, Իրան, ՆԱՏՕ, Եւրամիություն (ԵՄ)) դիրքորոշումները. երկրներ, որոնց քաղաքականությունն ու շահերը առավել կարեւոր են Հայաստանի առաջարկած տարբերակների առումով:

Աշխարհաքաղաքական ենթատեքստ. Ռուսաստան-Թուրքիա-ՆԱՏՕ-ԵՄ

Այս փաստաթղթում քննարկվում են առավել առանձնահատուկ հարցեր՝ կապված տարածաշրջանային եւ համաշխարհային խոշոր դերակատարների հետ:

Ա. Ռուսաստան

Ռուսաստանն այժմ վերահսկում է այն, ինչ մնացել է հայկական Արցախից/Ղարաբաղից, եւ այդպիսով Հայաստանին ավելի ամուր է կապում իր ուղեծրին: Ռուսաստանը, իրեն ընկալելով որպես պաշարված միջնաբերդ, անհրաժեշտություն է զգում պաշտպանվելու Արեւմուտքի շարունակական առաջխաղացումից:

Բայց եւրոպական նախատիպն ընդունելու գայթակղությունը դրսևորվել է վերջին երեսուն տարիների ընթացքում տարբեր ժամանակներում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, ինչպիսիք են՝ Բելառուսը, Մոլդովան, Ուկրաինան եւ Հարավային Կովկասի (ՀԿ) հանրապետությունները:

Մի կողմից, Հայաստանի վստահությունը Ռուսաստանին՝ անվտանգության եւ պաշտպանության առումով էապես չի վիճարկվում միջազգային մակարդակում: Մյուս կողմից, Ռուսաստանը շատ ավելի անհանգստացած է ռուսական ուղեծիրը լքելու ադրբեջանական սպառնալիքից: Հարուստ լինելով ածխաջրածնային ռեսուրսներով՝ Ադրբեջանը սերտորեն համագործակցել է արեւմտյան երկրների եւ բազմազգ կորպորացիաների հետ, դիվերսիֆիկացրել է իր ներդրումները արտերկրում. դրանով իսկ Ադրբեջանը Թուրքիայի աչքում դարձել է Ասիայի եւ Եւրոպայի միջեւ բացակայող օղակը: Ռուսաստանի մտահոգությունները՝ կապված Ադրբեջանի քաղաքականության եւ Թուրքիայի կանխատեսումների հետ, ստեղծել են բարդ իրավիճակ, որում հայտնվել է Հայաստանը, որում Ռուսաստանն ու Թուրքիան զուգահեռ աշխատում են, եւ որը նրանց մրցակից է դարձնում տարածաշրջանում, նույնիսկ եթե յուրաքանչյուրը հետապնդում է իր շահերը:

Բ. Թուրքիա

Ադրբեջանն ու Թուրքիան շրջափակման էին ենթարկել Հայաստանը անգամ մինչեւ 1994 թ.-ը՝ Ղարաբաղյան առաջին պատերազմի ավարտը: Թուրքիան Հայաստանի հետ իր սահմանի բացումը եւ Երեւանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորեց Հայաստանի կողմից Ադրբեջանի հետ հակամարտության կարգավորմամբ: Այդ խոչընդոտը հաղթահարելու փորձերը չհաջողվեցին: Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ բռնապետական շրջադարձից ի վեր, Թուրքիան մի շարք արտաքին ռազմական արկածների մեջ է ընկել՝ ի վերջո դառնալով 2020 թ. Ղարաբաղյան պատերազմում Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի տարած հաղթանակի հիմնական ներդրողը: Բաքվի հաղթանակից հետո Անկարան առաջարկեց կարգավորել հարաբերությունները Երեւանի հետ, սակայն Հայաստանը դեռ պատրաստ չէ նման քայլի: Հայաստանն այդ առումով կարելու որոշումներ ունի կայացնելու, գերիշխող ռազմավարական շահերով եւ տեղական իրողություններով կաշկանդված որոշումներ: Ռուսաստանի եւ Թուրքիայի ներկայիս համագործակցությունը կարող է երկար չտևել, բայց սա ծանրակշիռ գործոն է առկա համատեքստում:

Գ. ՆԱՏՕ/ԵՄ – Ռուսաստան

Ռուսաստանի ներկայիս միջնորդական դերը կարելու է հայկական գոյապահպանական հարցերի լուծման համար: Թուրք-ադրբեջանական դաշինքն ունի ԱՄՆ-ի եւ Միացյալ Թագավորության ոչ բացահայտ աջակցությունը, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի ներքին գոհությունը, որը ստեղծում է շատ անհավասարակշիռ ու հայկական կողմի համար վնասակար իրավիճակ: Կարող է, արդյոք, Ֆրանսիան, Եւրոպական այլ ենթադրյալ դաշնակիցների հետ համաձայնեցված ստեղծել մի համագործակցություն (synergy)՝ վերականգնելու համար Ռուսաստանի հետ Հայաստանի գործակցության հավասարակշռությունը: Այդ առումով դեռեւս լուրջ կասկածներ կան, քանի որ այս տարբերակը հնարավոր է միայն Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ ավելի համապարփակ փոխըմբռնման շրջանակներում՝ կապված իրենց «մերձավոր արտասահմանում» տարբեր

«սառեցված հակամարտությունների» լուծման հետ: Սա ենթադրում է անվտանգության՝ նոր երոպական եւ երասիական ճարտարապետություն:

Առաջարկություններ, որոնք վերաբերում են կառավարության անմիջական մտահոգություններին.

- Վերասահմանել պաշտպանության հայեցակարգը եւ ՁՈԻ նպատակը: Տրամաբանական է ենթադրել, որ դրան հետեւելու է բանակի վերակառուցումը:
- Անվտանգության ռազմավարության վերանայում, ներառյալ նոր դաշինքների որոնումը:
- Հանձնարարել եւ լուրջ ուշադրություն դարձնել Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից իրական ու ընկալվող սպառնալիքների վերաբերյալ հաշվետվություններին, որոնք գերծ են գաղափարական կողմնակալությունից:
- Հասկանալ, ճիշտ գնահատել վտանգները եւ նվազեցնել սպառնալիքները՝ համապատասխան քաղաքականության ու դիվանագիտական նախաձեռնությունների միջոցով. դրանք անվտանգության համակարգի անբաժանելի մասն են նույնքան, որքան համարժեք ռազմական պաշտպանությունը եւ դաշինքները:
- Ադրբեջանի եւ Թուրքիայի քաղաքականություններն ըմբռնելու եւ գնահատելու նպատակով նրանց հետ բացել հաղորդակցության ուղիղ գիծ, ցանկալի է խորհրդապահ կերպով:
- Վերախմաստավորել Արտաքին գործերի նախարարության դերը, նրա դիվանագիտությունը եւ դիվանագետների պատրաստումը:
- Հայաստանից եւ Սփյուռքից հրավիրել հնարավոր լավագույն ուղեղներին՝ մասնակցելու համար վերը նշված բոլոր հետազոտություններին եւ ուսումնասիրություններին, այդ թվում՝ կիրբեր եւ SS անվտանգության ոլորտներում:

Ճիշտ քաղաքականությունը ներառում է ոչ միայն այն, ինչ պետք է արվի, այլեւ այն, ինչ չպետք է արվի.

- Դիվանագիտական խոսույթում օգտագործել ռեֆլեքսիվ եւ ռեակտիվ քաղաքականություններ ու հոետորաբանություն: Դիվանագիտությունը լոբբինգ չէ ո՛չ չափանիշների, ո՛չ էլ նպատակների առումով:
- Ազգի (ամբողջ աշխարհի հայության) օրակարգը շփոթել պետության հետ:
- Չափից շատ կարդալ հայամետ տեքստ (անկախ նրանից, որ դա վերաբերում է Ցեղասպանության ճանաչմանը եւ Ղարաբաղին):
- Ենթադրել, որ այն, ինչը վատ է Ադրբեջանի եւ Թուրքիայի համար, անպայման լավ է Հայաստանի եւ Ղարաբաղի համար, կամ ինչը լավ է նրանց համար, մեզ համար անպայման վատ է:

Արտաքին քաղաքականության երկարաժամկետ զարգացում

Ղարաբաղի վերաբերյալ

Չնայած պատերազմից ի վեր Ղարաբաղի եւ Հայաստանի հետագծերը կարող են տարամիտվել, երկու հայկական հանրապետությունների եւ նրանց ապագա արտաքին քաղաքականությունների միջեւ տարբերությունները պետք է ծառայեն նույն նպատակին.

- Հայ բնակչությանը հնարավորություն տալ՝ մնալու կամ վերադառնալու Ղարաբաղում գտնվող իր նախնիների հողերը:
- Անհատների եւ համայնքների գոյապահպանական կարիքների բավարարում, ընդ որում՝ անվտանգությունը առաջնային նշանակություն ունի:

Ղարաբաղի դեկավարությունն ու, ամենայն հավանականությամբ, ժողովուրդը կարծես իրենց ապագան կապել են ռուս խաղաղապահների ներկայության եւ Ռուսաստանի հետ: Այդ ուղու ապագան այս պահին մնում է անհայտ՝ մի շարք գործոնների պատճառով: Հեղինակները չեն տեսնում անկախության հավանականություն՝ այս պատերազմից հետո, ինչպես դա եղել է նաեւ պատերազմից առաջ:

Մինչդեռ, այդ պատճառով, դիվանագիտության նպատակը կարող էր լինել հետեւյալը.

- Առավելագույնի հասցնել Հայաստանի ներդրումը Ղարաբաղի ապագայի որոշման գործում:
- Հնարավորինս շատ իրավունքներ ապահովել Ղարաբաղի բնակչության համար՝ տարածքային սահմանման եւ հայկական գոյության ճանաչման շրջանակներում: Դա պետք է ներառի Ղարաբաղի՝ իր ապագայի վերջնական որոշմանը մասնակցելու իրավունքը, այլ ոչ թե ձեւակերպել մի հարմար լուծում՝ որպես վերջնական եւ ոչ բանակցելի նպատակ:
- Առավելագույնի հասցնել Ղարաբաղի բնակչության անվտանգությունը՝ նաեւ նվազագույնի հասցնելով նրա հավաքական բարեկեցության սպառնալիքները ուղղակի քննարկումների եւ դիվանագիտության միջոցով:
- Հետեւաբար, Հայաստանի նոր կառավարությունը պետք է անցնի երկկողմանի մոտեցման. (ա) բացի Մոսկվայից, հաղորդակցվելու ուղիղ ճանապարհներ ստեղծի Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ, թեթեւացնի տարածաշրջանում տնտեսական կապերի ստեղծման հարցը եւ զբաղվի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերով, (բ) այդ քաղաքականությունը վարի միջազգային ասպարեզում, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով:

Այնուամենայնիվ, հակամարտության երկարաժամկետ կարգավորման բանալին կարող է կախված լինել այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ Հայաստանի արդյունավետ արտաքին քաղաքականության ձեւակերպումը եւ իրականացումը, եւրոպական եւ եւրասիական անվտանգության նոր ճարտարապետությունը, եւ Ռուսաստանի ու Թուրքիայի մրցակցային/փոխլրացնող շահերը տարածաշրջանային այլ հակամարտություններում: Դա կպահանջի զգույշ հավասարակշռման գործողություն, հնարավոր է՝ այդ նպատակների շուրջ Ռուսաստանի եւ այլ միջնորդների համաձայնություն, եւ տեղի բնակչության կողմից դրանց ընդունում:

Հայաստանի վերաբերյալ

- Անհրաժեշտ է, որ Հայաստանը հաստատի եւ օգտագործի ուղղակի ճանապարհներ երկկողմ քննարկումների համար՝ բոլոր շահագրգիռ պետությունների հետ. մասնավորապես Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի եւ ՀԱՊԿ պետությունների՝ առանձին-առանձին վերցրած:
- Հայաստանը պետք է աշխատի Ադրբեջանի եւ Թուրքիայի կառավարությունների հետ, որպեսզի նվաստացման եւ ենթակայեցման հոետորաբանությունից անցնեն հարգալից համակեցության: Գործնականում նրանք պետք է շեշտադրեն առաջադրված խնդիրները, ոչ թե կառուցակարգված (institutionalized) հայաֆոբիան:
- Նոր կառավարությունը պետք է իր քաղաքացիներին հասկանալի դարձնի, որ հաղորդակցության ուղիների եւ ճանապարհների բացումը գործիք է՝ երկարաժամկետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու եւ տարածաշրջանային համագործակցության ուղի ձեւավորելու համար, նույնիսկ եթե սկզբում համագործակցությունը փոքրածավալ է լինելու: Այս առումով, գործուն դիվանագիտությունը կարող է նույնքան արդյունավետ լինել փաստացի սպառնալիքներին դիմակայելու համար, որքան Հայաստանի պաշտպանական դաշտի բարելավումը: Հայաստանը, սակայն, հնարավորություն ունի պատերազմը հետագայում դարձնելու ավելի թանկ տարբերակ՝ տարածաշրջանի բոլոր շահագրգիռ կողմերի համար, ինչպես նաեւ նվազեցնելու իր անվտանգության եւ տարածքային ամբողջականության՝ իրական ու ենթադրյալ սպառնալիքները: (Գ եւ Ե Հավելվածները պարունակում են առաջարկություններ երկու ոլորտների վերաբերյալ):

Զեկույցում նաեւ քննարկվում է Հայաստանի դիվանագետների նախապատրաստման եւ աշխատանքի, ու Մփյուռքի հետ հարաբերությունների բարելավման անհրաժեշտությունը, եւ առաջարկություններ են ներկայացվում երկուսի առնչությամբ էլ:

Եզրակացություններ

նոյեմբերի 10-ի հայտարարության ցանկացած փոփոխություն պետք է իրականացվի այդ հայտարարության մյուս երկու ստորագրողների հետ՝ բանակցությունների միջոցով,

ներառյալ՝ Ադրբեջանի հետ ուղղակի բանակցությունների միջոցով: Դրանց մեջ պետք է ներգրավվեն երեց եւ փորձառու պետական գործիչներ:

Առաջիկա ամիսներին Հայաստանը պետք է վճռական որոշումներ կայացնի այն հարցի վերաբերյալ, թե ինչպիսի ապագա է ցանկանում կառուցել եւ ինչի հիման վրա. ընդգրկելով երիտասարդ ուղեղների՝ հեռատեսությամբ եւ երեւակայությամբ պատկերացնելու համար ապագայի Հայաստանը, վերականգնելու համար տնտեսությունը, սոցիալական համախմբվածությունը, պետական հաստատությունները, կրթական ու առողջապահական համակարգերը, ներառյալ ժամանակակից պաշտպանական համակարգը:

Իր նոր արտաքին եւ անվտանգության քաղաքականությունը սահմանելիս՝ Հայաստանը պետք է նաեւ հասկանա, որ բախվում է տարածաշրջանային ու միջազգային փոփոխված պայմաններին:

Սպիտակ թղթի ծագումը եւ մեթոդաբանությունը

Այս փաստաթղթի գաղափարը Ռոբերտ Այդաբիրյանինն է: Թալին Փափազյանը եւ Ժիրայր Լիպարիտյանը միացել են Այդաբիրյանին, երեքով մշակել են ծրագրի մեթոդաբանությունը եւ այն հասցրել ավարտին:

Նախաձեռնողները նախ կազմել են հարցաթերթիկ՝ այն հարցերի շուրջ, որոնք, իրենց կարծիքով, պետք է բարձրացվեն եւ ուսումնասիրվեն (Տե՛ս Հավելված 1ա եւ 1բ): Հարցաթերթիկն այնուհետեւ ուղարկվել է հինգ փորձագետներից բաղկացած մեկ այլ խմբի՝ քննադատության եւ առաջարկների համար: Որից հետո վերանայված հարցաշարն ուղարկվել է տարբեր մասնագիտական ու գիտական ոլորտներից շուրջ յոթանասուն հավանական պատասխանողների. Հայաստանից, Ղարաբաղից եւ Սփյուռքից: Հավանական պատասխանողների ցուցակը, որը սահմանափակվում է հայկական ծագում ունեցող գործընկերներով, կազմվել է նույն խմբի փորձագետների օժանդակությամբ: Ընտրության չափանիշներն էին պրոֆեսիոնալիզմը, հանրային խոսույթին մասնակցության փաստը, մտավոր պարկեշտության զգացման արտահայտումը եւ անկեղծ մտահոգությունը՝ կապված այն հարցերի հետ, որոնք պետք է քննարկվեն: Նախաձեռնողները կարծում են, որ ցուցակում ընդգրկվել են անհատներ, որոնք ներկայացնում են վերլուծաբանների ողջ քաղաքական սպեկտրը (Տե՛ս Հավելված 2): Հարցմանը պատասխանել են քառասունհինգ մասնակիցներ:

Բացի այդ, նախաձեռնողները անհատական հարցազրույցներ են անցկացրել այն հարցվածների հետ, որոնք այս կամ այն պատճառով չէին կարող լրացնել հարցաթերթիկը: Ի վերջո, պատասխանների հավաքման ողջ ընթացքում, որը տեւել է 2020 թ. դեկտեմբերից մինչ զեկույցի պատրաստումը, երեք նախաձեռնողները վերանայել են զգալի թվով փորձագետների, վերլուծաբանների եւ քաղաքական առաջնորդների դիրքորոշումները, որոնք արտահայտված էին հեղինակային հոդվածներում ու հարցազրույցներում, եւ նույնիսկ հանգուցյալ մի դիվանագետի հրապարակված աշխատանքը: Այս փորձագետների տեսակետները շարադրված են Մաս I-ում: Ընթերցողը Մաս II-ում կգտնի նախաձեռնող-հեղինակների վերլուծությունները, տեսակետներն ու եզրակացությունները:

Վերջնական զեկույցի համար լիարժեք պատասխանատվություն ստանձնելով՝ հեղինակների նպատակն էր տեքստը հնարավորինս մոտեցնել մի հավաքական աշխատանքի, ի հակառակ առկա ոչ նպաստավոր հանգամանքների ու համաշխարհային համաճարակի:

Ամբողջական զեկույցի առաջին նախագիծը շրջանառվել է մասնակիցների շրջանում՝ մեկնաբանությունների եւ առաջարկների համար: Մեր գործընկերներին առաջարկվել է նախնական եզրափակիչ տարբերակն ընթերցելուց հետո այս Սպիտակ թղթում ավելացնել իրենց անունը՝ որպես մասնակիցների:

Հարկ է նշել, որ որպես այս փաստաթղթի նախաձեռնող-հեղինակ մենք չենք հավակնում որեւէ առանձնահատուկ կարգավիճակի: Ցանկացած այլ խումբ կարող էր ստանձնել, կամ դեռ կարող է ստանձնել նմանատիպ նախագիծ: Իրականում, շատ անհատներ եւ խմբեր հրատարակել են անհատական ու հավաքական ուսումնասիրություններ՝ սույն փաստաթղթում ընդգրկված տարբեր հարցերի վերաբերյալ: Փաստը մնում է փաստ, որ, ինչպես վերը նշվեց, միտքը Ռոբերտ Այդաբիրյանին էր, իսկ Թալին Փափազյանը եւ Ժիրայր Լիպարիտյանը ընդունեցին այն եւ երեքով որոշեցին միասին աշխատել այս փաստաթղթի շուրջ՝ որպես մի համապարփակ նախագծի: Մենք հավատում ենք, որ մեր թափանցիկ մեթոդաբանությունը, լրջախոհ մոտեցումը եւ Հայաստանի ու Ղարաբաղի առջեւ ծառայած խնդիրների վերաբերյալ անկեղծ մտահոգությունը կարող են եւ բավարար վստահություն կներշնչեն վերջնական արդյունքի նկատմամբ՝ պետության ղեկավարներին ու քաղաքական առաջնորդներին, ինչպես նաեւ փորձագետներին, կարծիք ձեւավորողներին ու հասարակության լայն շերտերին՝ լրջորեն վերաբերվելու այս զեկույցի բովանդակությանը:

Ներածություն

Մեր փաստաթուղթը կփորձի անդրադառնալ հետևյալ հարցերին. ինչպե՞ս կարելի է բացատրել 2020 թ. սեպտեմբերյան պատերազմը, ի՞նչ ազդեցություն ունի պարտությունը, որո՞նք պետք է լինեն Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունները պարտությունից հետո՝ հատկապես Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ: Եւ ի՞նչ ճշգրտումներ պետք է կատարեն Հայաստանն ու Ղարաբաղը՝ արտաքին քաղաքականության հարցում իրենց մոտեցման մեջ:

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերյան պատերազմի աղետալի ավարտը արմատապես փոխեց իրավիճակը Ղարաբաղում, Ադրբեջանի դիրքը, եւ Ռուսաստանի, Թուրքիայի, ԵԱՀԿ Մինսկի խմբի, ԵՄ-ի ու ԱՄՆ-ի դերերը: Պատերազմն է՛լ ավելի սահմանափակեց Ղարաբաղի ղեկավարության կարողությունը՝ որոշելու իրենց ապագան, եւ նեղացրեց Ղարաբաղի ապագա կարգավիճակը որոշելու հնարավորությունների սահմանները, մինչդեռ Հայաստանն՝ ինքը կորցրել է իր ինքնիշխանության որոշ մասը եւ վտանգում է կորցնել ավելին:

Ավելին. այս պարտության պատճառած վնասը առաջացրել է մեղադրանքների եւ հակամեղադրանքների մի մեծ հեղեղ՝ ինչպես հիմնավոր, այնպես էլ անհիմն՝ կորստի համար պատասխանատվության հետ կապված: Այն նաեւ ներշնչել է տարբեր դերակատարների կողմից իրենք իրենց արդարացնող եւ ինքնապատակ բացահայտումներ, որոնք հակված են է՛լ ավելի պղտորելու արդեն իսկ մռայլ իրավիճակը: Լրատվամիջոցները ողողված են իրական եւ աննշան մանրամասներով, ինչպես նաեւ կեղծ ու արժանահավատ լուրերով, որոնք մոտ են սենսացիոնին: Արդյունքում՝ բանավեճը հիմնականում մնացել է գուրկ որեւէ առանցքային փոխասացությունից: Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովուրդը, այդ թվում՝ նրանց ղեկավարներից շատերը, ապակողմնորոշված են թվում, քանի որ պարտությունը խորտակեց մեծ թվով ենթադրություններ, որոնք ընկած են որոշում ընդունողների մոտ գերիշխող մտածողության հիմքում:

Խոհեմ չէ, հնարավոր է նաեւ վտանգավոր է, փորձելը՝ բուժում պարտադրել նախքան հիվանդության պատճառն իմանալը: Արվել են բազմաթիվ փորձեր. մի քանիսը օգտակար են եղել եւ մտածել տվող, ուրիշները՝ ոչ, եւ նույնիսկ վնասաբեր: Անառողջ վերաբերմունք է փորձեր անելը՝ նվազեցնելու համար տեղի ունեցածը, եւ ասելու՝ «Եկեք առաջ շարժվենք».

պարզապես այն պատճառով, որ չենք ցանկանում զգալ աղետի ծանրությունը կամ ստանձնել որեւէ պատասխանատվություն: Հավասարապես վտանգավոր է ողջ մեղքը զցելը մեկ մարդու եւ նրա կուսակցության վրա, երբ խնդիրները ավելի բարդ են, քան մեկ մարդը կամ կուսակցությունը, եւ երբ աղետը հասունանում էր ավելի քան երկու տասնամյակ:

Հեղինակների կարծիքով՝ մեծ անհրաժեշտություն կա մի փաստաթղթի, որը.

1. Առաջարկում է արժանահավատ բացատրություն, թե ինչպես ենք հասել այս կետին:
2. Իրենից ներկայացնում է հստակ եւ հակիրճ նկարագրություն՝ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ներկայիս մտածողության վիճակի եւ այն մասին, թե այսուհետ առաջ ընթանալու ինչ ձևեր են առաջարկվում:
3. Պատկերացում է տալիս հնարավոր զարգացումների եւ հավանական արդյունքների մասին:
4. Առաջարկություններ է ներկայացնում ապագա քաղաքականության վերաբերյալ:

Նման զեկույց գրելը, երբ իրադարձությունները շարունակում են զարգանալ, դիրքորոշումները շարունակում են ձեւավորվել, եւ քաղաքականությունները շարունակում են ձեւակերպվել, ո՛չ հեշտ է, ո՛չ էլ պարզ:

Այնուամենայնիվ, կարելու է, որ նման ուսումնասիրություններ իրականացվեն, որպեսզի մարդիկ ունենան այնպիսի շրջագծեր, որոնց ներսում քննարկումը, բանավեճը եւ խոսույթը կարող են որոշակի տրամաբանություն եւ հետեւողականություն ձեռք բերել: Մենք կարծում ենք, որ 2020 թ. պատերազմի ավարտին հետեւած ինն ամիսները բավականին երկար ժամանակամիջոց են, որի ընթացքում զարգացան ներըմբռնումներ ու հեռապատկերներ: Հետեւաբար, այս փաստաթուղթը կարող է համարվել ոչ այլ ինչ, քան ժամանակավոր փորձ՝ բացատրելու մտածողության արդի միտումները եւ բացահայտելու հնարավորությունների եւ ուղիների տարրապատկերը:

Մենք՝ այս ծրագրի երեք նախաձեռնողները, հայ մասնագետներ ենք, որոնք վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եւ տարբեր ձևերով ներգրավված են եղել Հայաստանի ու Ղարաբաղի զարգացման գործընթացին ու հետեւողականորեն աշխատել են այդ ուղղությամբ: Մենք մասնակից ենք եղել հանրային խոսույթին՝ բազմաթիվ հարցերի շուրջ: Բացի այդ, մենք մտահոգ ենք եւ ցանկանում ենք նպաստել Ղարաբաղի վերաբերող դեռեւս առկախ մնացած հարցերի լուծմանը եւ Հայաստանի արտաքին ու անվտանգության քաղաքականությունների ապագա ուղղությունների սահմանմանը:

Մենք գիտակցում ենք ներքին եւ արտաքին օրակարգերի սերտ կապը: Ակնհայտ է, որ նման ուսումնասիրությունների անհրաժեշտություն կա, կապված ներքին՝ հայ հասարակության եւ պետական հաստատությունների վրա պատերազմի ազդեցության հետ: Այս փաստաթուղթը կսահմանափակվի արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով, որոնք կդիտարկվեն վերջին իրադարձությունների համատեքստում:

Վերջապես, այս զեկույցի հիմնական մտահոգությունը վերլուծական հեռապատկեր առաջարկելն է: Դա նշանակում է, որ հեղինակները նկատի չեն առնում վեճեր, բանավեճեր եւ բանակոծիվներ, որոնք հիմնված են քաղաքական/ընտրական մտահոգությունների վրա եւ,

ըստ էության, կենտրոնանում են հասարակության կարծիքի եւ ամբոխահաճ միտումների վրա: Հեղինակները գիտակցում են, որ ստորեւ բերված բազմաթիվ դիտարկումներին, հետագա առաջարկություններին ու եզրակացություններին անպայմանորեն համաձայն չեն այս զեկույցում ներդրում կատարած անձինք կամ այլ վերլուծաբաններ ու մեկնաբաններ: Հեղինակները կարող են հաստատել սակայն, որ իրենց առավելագույնն են ներդրել, ամենախիստ ջանքերը գործադրել առաջ քաշված խնդիրների եւ համատեքստերի՝ ուղղամիտ, իրավախոհ ու իրատեսական քննարկման համար:

ՄԱՍ I. Մասնակիցների կողմից հարցաշարին տրված պատասխանների ամփոփում

Բաժին 1. Հայաստանը 2020 թ. դարաբաղյան պատերազմում

1.1. Ռազմական գործոններ, որոնք նպաստել են պարտությանը

Պատահակցային ռազմական գործոններ

Հայաստանի դեմ ռազմական կոալիցիայի հետևանքները

Մասնակիցների կողմից Հայաստանի դեմ ռազմական կոալիցիայի՝ որպես գործոնի վերաբերյալ գնահատականներն ընդգրկում են ամենանվազ նշանակալից մինչև ամենանշանակալի գործոնների ամբողջ ներկայանակը. Ըստ նրանց՝

- Ադրբեջանն ավելի լավ էր նախապատրաստված եւ ավելի լավ սպառազինված, ուներ պատերազմի լավ ծրագիր, իսկ հայկական կողմը աչք էր փակում ադրբեջանցիների մարտական ոգու եւ վճռականության վրա:
- Այն փաստը, որ մյուս կողմը կոալիցիա էր կազմել հայկական ուժերի դեմ, բազմապատիկ ազդեցություն ունեցավ: Մյուս կողմը ժողովրդագրական եւ ռազմական (տեխնիկայի, սպառազինության եւ հետախուզության) առումներով դարձել էր ավելի ուժեղ:
- Եւ, ոմանց կարծիքով, կովում էր ոչ թե Ադրբեջանը, այլ Թուրքիան, կամ, որ է՛լ ավելի վատ է՝ մարտերը մղում էին անօդաչու սարքերը:

Մասնակիցների կարծիքով՝ Հայաստանը սխալ էր հաշվարկել, թե պատերազմում մինչև որ աստիճան էր միայնակ կռվելու, քանի որ չէր կարողացել իր դաշնակից Ռուսաստանին համոզել՝ կռվելու իր կողմից: Աշխարհագրությունը եւս նպաստեց Հայաստան դրսից մատակարարում հասցնելու, ինչպես նաեւ Հայաստանից Ղարաբաղ ապրանքներ տեղափոխելու՝ նյութատեխնիկական խնդիրների առաջացմանը:

Հայաստանի ղեկավարությունը մեղադրվում է Ղարաբաղում, հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքներում ռազմական գործողությունները սահմանափակելու մարտավարական սխալի մեջ՝ դրանով, փաստորեն, նախաձեռնությունը հանձնելով Ադրբեջանին եւ Թուրքիային: Իսկ Հայաստանն իրականում ընտրություն ունեցել է, թե ոչ, մի հարց է, որը պետք է պարզի ապագա հետաքննությունը:

Խնդիրներ Հայաստանի/Ղարաբաղի ներսում

Այս գործոնի վերաբերյալ դիրքորոշումները տատանվում են: Դրանք սկսվում են հետեւյալով.

- Մենք պատերազմում պարտվեցինք ներքին՝ «դավաճանական» տարաձայնությունների պատճառով. Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ, Ղարաբաղի պաշտպանական ուժերի հատվածների եւ այլոց միջեւ եւ (կամ) Հայաստանի Զինված ուժերի (ԶՈւ) ներսում միմյանց հակառակորդ հատվածների միջեւ:

Ու հասնում են մինչեւ.

- Հայաստանն անարդյունավետ օգտագործեց իր ռեսուրսները (իմա՝ սպառազինությունն ու մարդկային ռեսուրսները). չկարողացավ ավարտին հասցնել գորահավաքային գործընթացը (Տե՛ս կամավորական խմբեր կազմելու մասին վարչապետի 2020 թ. հոկտեմբերի 21-ի կոչը), եւ Հայաստանն, ընդհանուր առմամբ, անփույթ էր (օրինակ, պաշտպանական տարածքների թերի ամրացումը): Փորձագետների այս խմբում շատերը ժամանակի կառավարությանը մեղադրում են անձեռնհասության, կազմակերպչական հմտությունների բացակայության կամ հնարավոր պատերազմական սցենարները չկանխատեսելու մեջ: Չնայած մեղադրանքներից մի քանիսը մատնանշում են կառուցվածքային խնդիրներ:

Ռազմական կառուցվածքային գործոններ

Քառորյա (2016 թ. ապրիլյան) պատերազմը շրջադարձային կետ էր: Ռազմական այդ կարճատեւ բախմանը նախորդել էին կառուցվածքային որոշ խնդիրներ: Պատերազմի չորս օրերը բացահայտեցին այլ խնդիրներ եւս, սակայն դրանք ամբողջությամբ չեն սրբագրվել, իսկ որոշ դեպքերում բոլորովին չեն սրբագրվել:

2020 թ. պատերազմի այս մատուցման մեջ փորձագետների մատնանշած թերությունները թվարկվում են նվազող ժամանակագրական կարգով՝ նորերից անցնելով ավելի հներին:

- Ա. Նախկին կառավարությունը Հայաստանի ԶՈւ-ում ժառանգել էր պայմաններ, որոնք այնքան սարսափելի էին, որ տարիներ էին պահանջվելու, որպեսզի դրանք լուծվեին, եւ վերացվեր դրանց ու Ադրբեյջանի բանակի միջեւ առկա հսկայական տարբերությունը: Ոմանց պնդմամբ՝ նախորդ կառավարությունը զգալի ջանքեր գործադրեց, որպեսզի շտկեր իրավիճակը երկու տարվա եւ չորս ամսվա ընթացքում, որ անցել էին իշխանությունն ստանձնելու եւ պատերազմը բռնկվելու միջեւ (2018 թ. մայիսից մինչեւ 2020 թ. սեպտեմբեր):
- Բ. Կային հայեցակարգային թերություններ: Քառորյա պատերազմից հետո «Ազգ-բանակ» հայեցակարգը (2017 թ.), իսկ նախորդ կառավարության օրոք՝ պաշտպանության

նախարարի «տեսլականը» (2018 թ. եւ 2020 թ.) դիտարկվեցին որպէս այդ թերությունները շտկելու փորձեր:

- Գ. ՀՀ իրարահաջորդ կառավարություններին չհաջողվեց ազնվորեն հաղորդակցվել հասարակության հետ՝ ԶՈւ ներսում տիրող իրական վիճակի եւ խնդիրների շուրջ. առնվազն 2016 թ.-ից սկսած (նույնիսկ 2008 թ.-ից, երբ մեկնարկեցին Պաշտպանության ռազմավարական վերանայման աշխատանքները):
- Դ. Գործոն էր վատ հետախուզությունը՝ հատկապէս քառօրյա եւ 2020 թ. պատերազմները կանխատեսելու անկարողության մեջ:
- Ե. Լուրջ խնդիրներ կային գորահավաքի հարցում՝ առհասարակ, եւ պահեստային ուժերի հարցում՝ մասնավորապէս: Դրանց մեջ էին մտնում զինկոմիսարիատների անարդյունավետությունը, միջոցների թերի գույքագրումը, թյուր գնահատումները եւ սխալ նշանակումները: Այս ձախողումները կարող են լինել տարիներ տեւած կոռուպցիայի, ամբարտավանության եւ բանակային ծառայության պարտադրման հարցում թույլատու վերաբերմունքի հետեւանք:
- Զ. Հրամանատարական շղթան ոչ գործուն էր՝ համարվելով կա՛մ որպէս 2015 թ. Սահմանադրության արգասիք, կա՛մ դրա իրագործմամբ պայմանավորված էլ ավելի ծանր իրավիճակ:
- Է. Ռազմական բարձրագույն ղեկավարությունը մտային լուրջ ծուլություն ցուցաբերեց՝ զլանալով ուսումնասիրել եւ պատերազմական ասիմետրիկ հակաքայլեր սովորել սիրիական, իրաքյան, ուկրաինական կամ լիբիական հակամարտություններից, եթե նշենք միայն վերջերս տեղի ունեցածները:
- Ը. Միջին աստիճանի եւ ցածրաստիճան սպաների կրթությունն անբավարար էր, եւ նրանց հոգեբանական պատրաստվածությունը՝ ոչ պատշաճ: Բարձրաստիճան սպաների մեջ բացակայում էր պրոֆեսիոնալիզմը եւ մարտական գործողությունների համար պատրաստվածությունը:
- Թ. Պահեստագործի ռազմական պատրաստվածության մակարդակը ցածր էր:
- Ժ. Վերջին քսան տարիների ընթացքում ռազմական շինարարությունն ընթացել է սխալ ուղղությամբ: Չկարողանալով հարմարվել պատերազմական գործի փոփոխվող իրողություններին՝ ջանքերը պետք է կենտրոնացվեին հատուկ/մոբիլ ուժերի վրա՝ ներառելով հատուկ գործողության ուժերի մի հզոր բաղադրիչ: Ավելին. ցամաքային հակաօդային պաշտպանության հետ կապված մշտական մոլուցքը՝ օդային զինատեսակների անտեսման գնով, թշնամու օդային գերակայությանը դիմադրելու հնարավորությունները դարձրեց լրիվ անհույս ջանք:
- Ի. Կոռուպցիան լայնորեն իշխում էր ԶՈւ տարբեր ոլորտներում եւ գուզորդվում էր բանակի՝ որպէս կիսափակ եւ «սրբազան» ինստիտուտի հարցում հաշվետվողականության պակասով՝ լրջորեն խոչընդոտելով բարեփոխումների հնարավորություններն ու չափերը:
- Լ. Պաշտպանության ազգային քաղաքականությունը գորեղ չէր (ՀՆԱ-ի միայն 4%-ը): Խնդիրներ կան նաեւ ռազմական բյուջեի ծախսման ձեւի հարցում:

Խ. Ղարաբաղյան առաջին պատերազմում հայկական կողմի 1994 թ. հաղթանակը հետզհետե հանգեցրեց անվտանգության եւ արտաքին քաղաքականության կոշտ ռազմատենչ պատկերացման: 1998 թ.-ից ի վեր, հայկական կողմի ռազմավարական մտածողության մեջ իշխել է այդ պատկերացումը:

Այս հարցերը կարելու է են պետք է հանգամանորեն ուսումնասիրվեն Ղարաբաղյան պատերազմի ապագա հետաքննության ընթացքում:

1.2. Հայաստանի պատասխանատվության հարցը Ղարաբաղյան հակամարտության մեջ՝ ընդհանրապես, եւ 2020 թ. պատերազմի մեջ՝ մասնավորապես

Քաղաքական-դիվանագիտական գործոններ

Անկարելու է այն հանգամանքը, որ մասնակիցների պատասխաններում քաղաքական-դիվանագիտական գործոնները հաճախակիորեն նշվել են որպես պարտությունը բացատրող առաջնային գործոններ: Կարելի է պնդել, որ նման կրկնությունն արտացոլում է մասնակիցների մտային կողմնակալությունը: Այնուամենայնիվ, պատասխաններում ձեւակերպված ընդհանուր տեսակետներն իսկապես արտացոլում են դժգոհություն Հայաստանի ղեկավարներից՝ ժամանակի ընթացքում Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ նրանց մոտեցման, ինչպես նաեւ այն բանի համար, թե ինչպես են այդ ղեկավարները սխալ հասկացել կամ անտեսել հակամարտության հարցում միջազգային հանրության դիրքորոշումը:

Ղարաբաղյան հարցի տեսլականն ու ռազմավարությունը

Հակամարտության կարգավորման ընդհանուր ռազմավարության վերլուծությունը, ռազմավարություն, որի ձախողումը հանգեցրեց պատերազմի, կարելի է ամփոփել երեք դիրքորոշումներում.

- Ա. Ունենք պնդում էին, որ Ղարաբաղյան առաջին պատերազմում 1994 թ. հայկական կողմի հաղթանակը հանգեցրել է անվտանգության եւ արտաքին քաղաքականության՝ ավելի ու ավելի կոշտ ռազմատենչ պատկերացման, ինչպես նշված է վերը:
- Բ. Մյուսները պնդում են, որ 1994 թ.-ին՝ Ադրբեյջանի դեմ ռազմական հաղթանակից անմիջապես հետո, Հայաստանը պետք է ճանաչեր Ղարաբաղի անկախությունը: Նրանց փաստարկման մեջ ասվում է, որ Ադրբեյջանը պարտված էր եւ կրնդուներ Ղարաբաղի անկախությունը, բայց խնդիրն այն է, որ հայությունն իր պետությունը կառուցեց «փորը վախ ընկած»-ի հոգեբանությամբ, ուստի վախենում էին համառել այդ հարցում: «Միջազգային լավ գործընկեր» լինելու ռազմավարությունը Հայաստանին

պատանդ դարձրեց միջազգային հանրության եւ, առավել եւս, Ադրբեջանի շահերին ու քարի կամքին:

- Գ. Այս երկու դիրքորոշումների միջեւ շատերը շեշտում են, որ քաղաքական ձախողումների մեջ դեր է խաղացել Ղարաբաղյան խնդրի հարցում վերջնական հստակ նպատակի եւ, հետեւաբար, համապատասխան ռազմավարության բացակայությունը: Նմանապես՝ գոյություն չունեն ո՛չ հնարավոր զիջումների, ո՛չ էլ կարմիր գծերի հստակ սահմանում: Այս դիրքորոշումն ինքնին հասարակական եւ պաշտոնական խոսույթում այս հարցի շուրջ առկա խառնաշփոթի արտացոլումն է: Բանակցություններից Ղարաբաղի դուրս մնալը, օրինակ, այդ թերություններից մեկի ախտանիշն էր, որը թույլ տվեց, որ գերիշխի հակամարտության վերաբերյալ ադրբեջանական պատումն այն մասին, որ հակամարտությունը պետությունների միջեւ տարածքային խնդիր է:

Հակամարտությունը լուծելու կամքի բացակայություն

Այս գործոնի կարեւորության մասին արտահայտված տեսակետների վերաբերյալ մասնակիցներից ոմանք

- Ա. Շարունակում են նախորդ փաստարկը, համաձայն որի՝ խնդիրը լուծելու հայկական ռազմավարությունը Ադրբեջանից Ղարաբաղի դե ֆակտո անկախ կարգավիճակը մշտական եւ միջազգային հանրության կողմից ընդունված դարձնելն էր: Չնայած որոշ քաղաքական ղեկավարներ հստակ հայտարարում էին, թե «Ղարաբաղյան հիմնախնդիրը լուծված է», կառավարության՝ որեւէ իշխանություն ունեցող ոչ մի ղեկավար դա բացահայտորեն չի ընդունել ո՛չ միջազգային հանրության, ո՛չ էլ Հայաստանի հասարակության առջեւ:
- Բ. Պատասխանատվություն վերագրեցին քաղաքական կուսակցությունների եւ ուժերի մեծ մասին, նաեւ ակադեմիական ու մտավոր վերնախավերին (այդ թվում՝ Սփյուռքի), որ չեն կամեցել զորավիզ կանգնել հակամարտությունը փոխզիջումների հիման վրա բանակցությունների միջոցով լուծելու այլընտրանքին:

Հակառակ կողմում ուրիշները համարում են, որ

- Գ. Հակամարտությունը լուծելու ցանկության բացակայությունն ինքնին խնդիր էր: Այս համատեքստում, 1998 թ.-ից ի վեր Հայաստանի՝ իրար հաջորդած ղեկավարները մեղադրվում են խնդիրն իրենցը չհամարելու եւ, հետեւաբար, բանակցային գործընթացում նախաձեռնող լինելու փոխարեն հետեւորդի դերում հանդես գալու ու այնպես վարվելու մեջ, որ կարծես Ղարաբաղյան խնդիրը Հայաստանի լուծելիք հարցը չէր: Բացի դրանից, Հայաստանի ղեկավարները դարձել էին առավելապաշտական դիրքորոշման գերի:

Նախորդ կառավարությունն այստեղ քննադատության է ենթարկվում այն բանի համար, որ ՉԻ ԿԱՐՈՂԱՑԵԼ.

- Դ. Դրամագլխի վերածել բռնության մերժումը, որը թավշյա հեղափոխության տարբերակիչ հատկանիշն էր:
- Ե. Օգտագործել կառավարության հաստատուն օրինակարգության հնարավորությունը՝ վարելու համար խաղաղության քաղաքականություն, որը սկսվել էր շահագրգիռ բոլոր ժողովուրդների շահերը հաշվի առնելու մասին վարչապետի աննախադեպ դրական կոչով,
- Զ. Գործուն կերպով պայքարել «Թշնամի թուրքի» կարծրատիպային կերպարների դեմ,
- Է. Պատերազմը կանխել այն սկսվելուց առաջ եւ դադարեցնել առաջին իսկ հնարավորության դեպքում (օրինակ, հոկտեմբերի 19-ին): Այս առումով, պատասխանատվություն է վերագրվում նաեւ Ազգային ժողովին եւ մեծամասնություն կազմող կուսակցությանը. սահմանադրական լիազորությամբ այն միակ հաստատությանը, որը կարող էր վարչապետին ստիպել ավելի վաղ եւ ավելի քիչ կորուստներով ընդունել հրադադարը եւ կամ նրան ստիպել հեռանալ:

Հարցվածներից ոմանք մատնանշում էին պատասխանատվության մի մեծ ոլորտ, որն ավելի հաճախ վրիպում է դիտորդների ուշադրությունից.

- Ը. Հայաստանում մտավոր եւ ակադեմիական վերնախավերի բացասական դերը. վերնախավեր, որոնք չկարողացան լուրջ բանավեճ ծավալել Ղարաբաղյան հակամարտության հնարավոր տարբերակների ու զարգացումների շուրջ, ինչպես նաեւ եղած տարբերակներին հետեւելիք հավանական սցենարների շուրջ: Քննադատական մտածողությունը խաթարվել էր նաեւ Միյուռքում, որտեղ մտավոր եւ ակադեմիական վերնախավերը չկարողացան խիզախություն ցուցաբերել, նույնիսկ երբ նրանք ավելի տարբերակված մտտեցում ունեին, եւ պայքարել նրանց դեմ, ովքեր Հայաստանի օրինակով անհնարին էին դարձնում քննարկումները:
- Թ. Բանավեճի բացակայությունը բացասաբար անդրադարձավ քաղաքացիական հասարակության վրա, որին հիմնականում դուրս էին թողնում որեւէ որոշում կայացնելու գործընթացից եւ ընկղմում անհանդուրժողականության միջավայրի մեջ:

(1991 թ.-ից ի վեր հակամարտության վերաբերյալ Հայաստանի փոփոխվող բանակցային դիրքորոշումների համառոտ ակնարկի համար տե՛ս Հավելված Ա):

Միջազգային միջավայրը եւ ոչ հայ դերակատարները

Վերջին ավելի քան երկու տասնամյակների ընթացքում Հայաստանի՝ իրար հաջորդած ղեկավարները տարբեր ժամանակահատվածներում ճիշտ չեն գնահատել (ա) Ղարաբաղյան հակամարտության մեջ ոչ հայ դերակատարների շահերը, (բ) հակամարտության՝

տարածաշրջանային եւ միջազգային ավելի լայն հետեւանքները, եւ (զ) ուժային անհավասարակշռությունը, որն առկա էր հայկական կողմի եւ Ադրբեջանի տիրապետած ռեսուրսների միջեւ, ինչպես նաեւ այն միջոցների, որոնցով նա ներկայանում էր միջազգային ասպարեզում:

Մպեկտրի մի կողմում մասնակիցներից ոմանք կարծում են, որ.

Ա. 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը սանձազերծելու մասին որոշումը, ըստ էության, կայացվել է Թուրքիայի կողմից եւ համաձայնեցվել Ռուսաստանի հետ²: Մասնակիցներից ոմանք արտահայտել են այն կարծիքը, թե Հայաստանի կառավարության ժողովրդավարական բնույթը, ի տարբերություն Ադրբեջանի, Թուրքիայի եւ Ռուսաստանի իշխանությունների, կարող էր դեր խաղացած լինել այդ պայմանավորվածության մեջ³: Այստեղ նախորդ կառավարությունը նույնպես քննադատվում է ազգայնական անխոհեմ հռետորաբանության, ռազմական սադրիչ գործողությունների (Տավուշ, 2020) եւ չափից ավելի արեւմտյան կողմնորոշման համար:

Ի հակադրություն դրա, այլ մասնակիցներ կարծում են, որ.

Բ. Հայաստանի ղեկավարները գերազնահատել են Հայաստանի հնարավորությունները, ինչպես նաեւ այն աջակցության աստիճանն ու տեսակը, որ հայկական կողմը կարող էր ստանալ մոտակա եւ հեռավոր այլ երկրներից, ներառյալ՝ պատերազմի դեպքում, միաժամանակ թերազնահատելով թշնամու կարողությունը եւ պատերազմի գնալու պատրաստակամությունը:

² Այն արագությունը, որով Ռուսաստանը կարողացավ տեղակայել իր խաղաղապահ ուժերը սարքավորումների հետ միասին, կարող է վկայել պատերազմի մասին վաղ, նախնական տեղեկացվածության եւ առաքելությանը պատրաստ լինելու մասին:

³ 2020 թ. սեպտեմբերին՝ պատերազմն սկսվելուց ընդամենը մեկ շաբաթ առաջ, Հայաստան իր աշխատանքային վերջին այցելությունից հետո Թալին Փափազյանը կարծում է, որ Հայաստանի ղեկավարները խիստ կասկածում էին, որ պատերազմի դեպքում Թուրքիան կմիջամտի: Նրանք դա թերեւս ուշ են հասկացել եւ չեն իմացել նաեւ աջակցության չափի մասին:

Օգոստոսի վերջերին Թուրքիայի պաշտպանության նախարարը հայտարարեց, որ Թուրքիան այսուհետ իրեն համարում է «հակամարտության կողմ»: Սեպտեմբերի 1-ին հրապարակված իր մի հոդվածում Ժիրայր Լիպարիտյանը այդ հարցի վրա հրավիրեց ղեկավարների եւ լայն հասարակայնության ուշադրությանը՝ պնդելով, որ նման հայտարարությունը նշանակում է, որ Թուրքիան ակտիվորեն մասնակցելու է հաջորդ պատերազմին:

Հասարակական-քաղաքական երկարաժամկետ գործոններ

Ստորև քննարկված հասարակական-քաղաքական երկարաժամկետ երկու գործոնների միջև առկա է շարունակականություն:

Քաղաքական մշակույթը եւ ազգի գաղափարը

Սպեկտրի մի ծայրում մասնակիցների մի մասը պնդում է, որ

Ա. ազգային ինքնությունը կառուցվել է 1994 թ. հաղթանակի էականացման (essentialization) վրա եւ անվերապահորեն ամրապնդել այդ հաղթանակը: Ընդհանուր առմամբ, հայ ազգի գերիշխող տեսլականը խարսխված էր համահայկական ազգային՝ ն հիմքի վրա՝ անկախ պետության հարցերը լուծելու համար պետականագուրկ դարաշրջանի մտային կառույցներ օգտագործելով:

Ի հակադրություն վերը նշվածի, ոմանք պնդում են, որ.

Բ. Պարտությունը պայմանավորված էր պատերազմին սոցիալական (կրթական եւ հոգեբանական) պատրաստվածության եւ հաղթելու հավաքական կամքի բացակայությամբ: Ըստ այս բացատրության՝ Հայաստանի բանակը ուժեղ չէ, քանի որ Հայաստանի հասարակությունը չի ցանկանում անհրաժեշտ ջանքերը գործադրել նման բանակ ունենալու համար եւ, ի վերջո, այն պատճառով, որ երկրի հասարակությունը պատրաստ չէ գնալու անհրաժեշտ զոհողությունների, որոնք պահանջում է պատերազմը: Ըստ էության, այս դեպքում փաստարկվում է, որ Հայաստանը պատերազմում պարտվեց, քանի որ չէր ցանկանում հաղթել: Եւ պարզվեց, որ պետությունը մարտահրավերներին դիմակայելու համար պիտանի չէր, քանի որ նրա ղեկավարներն իրենց հասարակությանը հաղթանակի համար անհրաժեշտ պատրաստականության մեջ չեն պահել:

Պետականակերտմանն առնչվող գործոններ

Այստեղ առանձնացվել են երկու տեսակի գործոններ: Նախ՝ արտաքին գործոնը, ինչը նշանակում է չափից ավելի կախվածություն Ռուսաստանից՝ ոչ միայն որպես Թուրքիայի դեմ անվտանգության երաշխավորի, այլեւ 2001 թ.-ից ի վեր այն հիմնական երկրի, որին յուրաքանչյուր լուրջ մարտահրավերի ժամանակ Հայաստանը դիմում է իր խնդիրը լուծելու համար:

Երկրորդ. ներքին գործոնը, որը կարելի է համարել պետականաշինության կողմերից մեկը: Որոշ մասնակիցներ կարելու են համարում հետեւյալը.

- Ա. Ներքաղաքական տարաձայնությունները. տարբեր ժամանակահատվածներում նոր եւ հին ռեժիմների միջեւ տարաձայնությունները. 2018 թ.-ին ընտրված կառավարության հետ Ղարաբաղի որոշ շրջանակների միջեւ տարաձայնությունները. Ստեփանակերտի առանցքը Երեւանի առանցքի դեմ. բաժանում, որը մեծապես ազդում էր զինվորական հրամանատարության որոշումների ու գործողությունների վրա:
- Բ. 2020 թ. պատերազմի ընթացքում ռեսուրսների գիտակցաբար սխալ կառավարման մասին կասկածները՝ ձեռնարկված նախորդ ռեժիմի հետ կապված քաղաքական խմբակցության կողմից, որը կարող էր օգուտներ քաղել նոր կառավարության պարտությունից:
- Գ. Ներքին մարտահրավերները. սահմանափակ մարդկային-մասնագիտական ռեսուրսներ, ապաշնորհ, միահեծան որոշումների ընդունում, ներքին եւ արտաքին քաղաքականությունների մեջ էթնո-ազգայնականության գերակայություն:

Սպեկտրի մյուս ծայրին ոմանք խնդիրը տեսնում են պետության ներսում ավելի խորունկ խանգարումների (dysfunctions) մեջ, ինչպիսիք են՝

- Դ. Կրթական վատ համակարգը:
- Ե. Էկո-ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը նրանց ձեռքերում, ովքեր մինչեւ 2018 թ. նույնպես մեծապես վերահսկում էին քաղաքական գործընթացները:
- Զ. Պետական ռեսուրսների համընդհանուր թալանը մինչեւ 2018 թ.:
- Է. Պետական անկախ հաստատությունների բացակայությունը:
- Ը. Մերիտոկրատիայի բացակայությունը, լավ կառավարման պակասը, կազմակերպչական վատ ծրագրումը եւ հաշվետվողականության բացակայությունը:

1.3. 2020 թ. նոյեմբերի 10-ի ստեղծած իրավիճակը. Հրադադարի հայտարարությունը

(Հայտարարության հայերեն եւ ռուսերեն տեքստերի համար տե՛ս Հավելված 3:)

Ժողովրդագրական հետեւանքներ

Այս հարցում կարծիքների էական տարբերություն չկա, քանի որ փաստերն ինքնին ակնհայտ են եւ համընդհանուր կերպով ընդունված:

Անմիջական գոհեր

Չնայած պատերազմական գործողությունների ընթացքում գոհված զինվորականների վերջնական թիվը դեռեւս հաստատված չէ, այդուամենայնիվ, հայտարարված է ավելի քան 4000 գոհի մասին, ներառալ անհետ կորածները:

Ամենածանր գինը վճարել են 18-25 տարեկան երիտասարդ զինվորները, հատկապես ժամկետային զինծառայողներն ու պահեստագորայինները: Ընդամենը 45 օրվա ընթացքում ընդհանուր կորուստները կազմել են Ղարաբաղյան առաջին պատերազմի երեք տարիների ընթացքում (1991-1994 թթ.) հայկական կողմի կրած կորուստների 70 տոկոսը: Համեմատությունը գաղափար է տալիս 2020 թ. պատերազմի ընթացքում ուժերի հյուսման աստիճանի, պատերազմի դաժանության, նոր եւ ավելի մահացու զենքերի օգտագործման եւ այն անպատրաստվածության մասին, որ կարելի է ենթադրել: Դա օգնում է նաեւ բացատրելու հոգեբանական ցնցումն ու տառապանքը, որ պատերազմը պատճառեց Հայաստանի եւ ընդհանրապես հայ հասարակությանը:

Ընդհանուր առմամբ, 11 000 զինվոր եւ կամավորական վիրավորվել են կամ լուրջ բուժման կարիք են ունեցել: Հաշմվածների թիվը նույնպես դեռեւս վերջնական չէ. 2021 թ. մարտի դրությամբ ԶՈւ ռազմաբժշկական վարչության տրամադրած թիվը 885 է: Նրանց ֆիզիկական եւ հոգեբանական վերականգնման հարցը վճռորոշ նշանակություն ունի ընտանիքների եւ ընդհանրապես հասարակության առողջության համար:

Միջնաժամկետ եւ երկարաժամկետ հետեւանքներ

Պատերազմի վետերաններն ու հաշմանդամները պահանջելու են տնտեսական եւ սոցիալական օգնություն: Այս կարիքը մասամբ բավարարվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի» (1000 դրամ +) կողմից, որն ապահովվում է Հայաստանում աշխատավարձերից ուղղակի հարկման եւ ամբողջ աշխարհի, ներառյալ Հայաստանի ժողովրդի կամավոր նվիրատվություններից:

Կորուստները մեծապես ծանրաբեռնելու են ընտանիքներին, հասարակությանը եւ տասնամյակների պետական բյուջեն՝ ժողովրդագրական (ներառյալ ԶՈւ-ն), սոցիոլոգիական եւ սերնդային առումներով (օրինակ, ժողովրդագրական բնական աճի զուտ կորուստներ՝ իրենց հերթին ավելացնելով երիտասարդ, չամուսնացած կանանց արտագաղթի միջնաժամկետ եւ երկարաժամկետ ռիսկերը):

Տարածքային կորուստների բնույթն ու հետեւանքները

Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզում եւ նրա շրջակայքում տարածքային կորուստները չորս հիմնական նշանակություն ունեն.

- Ա. Տնտեսական կարելուք ռեսուրսների, ներառյալ արտտավայրերի, գյուղատնտեսական նշանակության հողերի, հանքերի, հիդրոէլեկտրակայանների եւ ջրային ռեսուրսների մատչելիության/ վերահսկողության կորուստը:

- Բ. Հայկական պատմական տարածքների եւ մշակութային ժառանգության կառույցների կորուստներ: Սա ամենից ավելի խորհրդանշվում է Շուշիի կորստով. մի քաղաք, որն այժմ միանում է մշակութային ու քաղաքական նշանակություն ունեցող այն վայրերի ցուցակին, որոնք այլեւս հայաբնակ չեն եւ չեն վերահսկվում հայկական ուժերի կողմից:
- Գ. Հայաստանի անվտանգության մեջ ռազմավարական խորքի կորուստ, ինչն ավելի մեծ վտանգի է ենթարկում բուն Հայաստանի տարածքը:
- Դ. Թշնամական հարեւանների հետ այժմ, ընդհանուր առմամբ, ավելի քան 1300 կիլոմետր սահմանի առկայությունը՝ տարբեր տեղագրություններով ու պաշտպանունակությամբ: Այդ ամենը տեղակայված է մի տարածքում, որտեղ ֆիզիկական ենթակառուցվածքները, ինչպիսիք են՝ խրամատները, բունկերները, մեքենայացված ստորաբաժանումներն ու կազմավորումները, ինչպես նաեւ հրետանին, ավելի ու ավելի խոցելի են ժամանակակից եւ բարձր ճշգրտության հարձակողական զենքի դիմաց:

Մարդասիրական բնույթի հետեւանքներ

Այստեղ եւս փաստերը պարզ են ու ակնբախ:

- Ա. Տասնյակ հազարավոր փախստականներ կան, հիմնականում՝ Շուշիի, Հադրութի, Քելբաջարի ու Լաչինի շրջաններից: Ղարաբաղի իշխանությունները խրախուսում են փախստականների վերադարձը դեռեւս իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներ՝ նախընտրելով, որ նրանք բնակություն հաստատեն Ստեփանակերտից դուրս:
- Բ. Այս գրության պահին Ադրբեջանը շուրջ 170 ռազմագերիներին եւ գերեվարված քաղաքացիական անձանց օգտագործում է որպէս սակարկության լծակ եւ ճնշման գործիք՝ նրանց պիտակավորելով որպէս «դիվերսանտներ» կամ խափանարարներ (saboteurs), ահաբեկիչներ եւ (կամ) վարձկաններ:

Հետեւանքներ՝ կապված անվտանգության հետ

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը

ԶՈւ-ն կրել է մարդկային, սարքավորումների եւ սպառազինության (մեկ երրորդից մինչեւ կեսը՝ կախված տեսակից) նկատելի կորուստներ եւ հոգեբանորեն տուժել է պարտությունից: Կորցրած սարքավորումներն ու սպառազինությունը համալրելու կամ հնարավորության դեպքում նոր տեսակի զենքեր գնելու տնտեսական ծախսերը դեռեւս պետք է հաշվարկվեն:

Շփման գծերը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ

- Ա. Բացառությամբ հյուսիս-արևելյան սահմանի, շփման գիծը (ՇԳ) մինչ պատերազմը գտնվում էր Ղարաբաղի/Արցախի Հանրապետության եւ Ադրբեջանի միջեւ: Այսօր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ փաստացի ՇԳ-ն տարածվում է դեպի հարավ՝ մինչեւ Իրանի սահմանը: Բացի այդ, ՇԳ-ն տարբերվում է սահմանից, քանի որ միջպետական միջազգային սահմանի համար երբեք սահմանազատում չի եղել: Այս նոր շփման գծերի եւ սահմանամերձ շրջանների կարելուր հատվածները (Սյունիք, Տավուշ) գտնվում են ադրբեջանական զինուժի մշտական ճնշման տակ:
- Բ. Նոյեմբերի 10-ից հետո հայտնված քարտեզի վրա Նախիջեւանի հետ Հայաստանի ՇԳ-ն ավելի զգայուն հարց է դարձել: Վայոց Ձորի եւ Հյուսիսային Սյունիքի մարզերի՝ ավազի ժամացույցի նմանվող հատվածներում այն, այսպես ասած, մեկ քայլի վրա է Ադրբեջանից: Իրանք առանցքային կետեր են դարձել Հայաստանի տարածքի անվտանգության համար՝ ի տարբերություն նոյեմբերի 10-ին նախորդող իրավիճակի, երբ Քելբաջարի եւ Լաչինի շրջանները ռազմավարական խորք էին հաղորդում տարածքի պաշտպանությանը: Այսօր Ղարաբաղի եւ Հայաստանի կապը փխրուն պորտալար է, որը վերահսկում է Ռուսաստանը:
- Գ. Ներկայումս ընթանում է սահմանազատման գործընթաց: Ինչպես Հայաստանի եւ Ադրբեջանի համար կարեւորություն ներկայացնող մյուս բոլոր հարցերը, այս գործընթացի որակն ու ոգին եւս երկարաժամկետ հետեւանքներ կունենան տարածաշրջանում խաղաղության կամ պատերազմի ապագա հեռանկարների վրա:
- Դ. Հայաստանում ռուսական ռազմակայանը վճռորոշ դեր է ձեռք բերել: Եթե նախքան 2020 թ. պատերազմը Ռուսաստանի ռազմական ներկայությունն անհրաժեշտ էր հայթորքական սահմանը պաշտպանելու համար, ռուսական անձնակազմն այժմ ներգրավված է նաեւ նոր արևելյան եւ հարավային հատվածների թեժ կետերում:

Քաղաքական ու անվտանգության հետեւանքները Ղարաբաղի համար

Քաղաքական/դիվանագիտական նոր իրողություններ

- Ա. Արցախի Հանրապետությունը՝ Ղարաբաղը, ո՛չ ստորագրել է նոյեմբերի 10-ի հայտարարությունը, ո՛չ էլ պայմանագրի կողմ է հանդիսանում: Հաղթեց այն տեսակետը, որ Ղարաբաղյան հակամարտությունը միջպետական հակամարտություն է՝ ի տարբերություն 1994 թ. հրադադարի համաձայնագրերի, որտեղ Հայաստանից ու Ադրբեջանից բացի երրորդ ստորագրող կողմը Ղարաբաղն էր, ոչ թե Ռուսաստանը:
- Բ. Եռակողմ հայտարարության մեջ կա անուղղակի ճանաչում, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս է:
- Գ. Ռուսաստանի միջամտության գորքերն այժմ, 1991 թ.-ից ի վեր առաջին անգամ, գտնվում են այդ տարածքում:

Անվտանգություն

- Դ. Ղարաբաղը կորցրել է Հայաստանը՝ որպես իր անվտանգության երաշխավորի:
- Ե. Ղարաբաղը կորցրել է սակարկության իր հիմնական լծակը եւ անվտանգության գոտին:
- Զ. Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ հաստատվել է նոր ՇԳ, որը երկու մարտահրավեր է ներկայացնում. (1) ՇԳ-ի կասկածելի պաշտպանունակություն՝ նույնիսկ վերակազմավորված պաշտպանական ուժերի կողմից, եւ (2) այդ ուժերի տեղակայումն ու գործածումը:
- Է. Նոյեմբերի 10-ի հայտարարությունը չի պահանջում ցրել տարածքի պաշտպանական ուժերը: Մա տեղի իշխանություններին մաներելու որոշակի տիրույթ է տրամադրում, գոնե ժամանակավորապես:

Ի՞նչ է մնում Ղարաբաղյան հարցից

- Ը. Ղարաբաղյան հարցը, իրենց հողի վրա անվտանգ եւ ազատ ապրելու՝ այդ տարածքի հայերի իրավունքների կամ նրանց ինքնորոշման իրավունքի հարցը, շարունակում է մնալ սուր՝ գոյաբանական առումով: Սակայն խնդիրը չի քննարկվում պաշտոնական որեւէ ատյանում կամ բանակցային ձեւաչափում՝ չնայած ԵԱՀԿ Մինսկի խումբը վերակենդանացնելու Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի, ինչպես նաեւ Հայաստանի փորձերին:
- Թ. Ռուսաստանի նախագահը հայտարարել է, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս է, որ Ղարաբաղի նկատմամբ գերիշխանության հարցը լուծված է: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը տարբեր ձեւերով հայտարարել է, որ կարգավիճակի հետ կապված բանակցությունները, այսինքն՝ թե Ղարաբաղն ինչպես կկառավարվի, կամ ընդհանրապես գոյություն կունենա՝ տարածքային իմաստով Ղարաբաղ, թե ոչ, (ա) պետք է երկար ժամանակով հետաձգվեն, որպեսզի երկու ժողովուրդները սովորեն միասին ապրել, (բ) որ Մինսկի խումբը կարող է ներգրավվել կարգավիճակի շուրջ բանակցություններում, եւ (գ) բայց Մինսկի խումբն իր գործունեությունն առայժմ պետք է սահմանափակի Ղարաբաղում Ռուսաստանի մարդասիրական ծրագրերին աջակցություն ցուցաբերելով:
- Ժ. Նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունը չի տարբերակում նախկին խորհրդային ժամանակաշրջանի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) կամ տարածքի շուրջ նախկինում գրավված յոթ շրջանները՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ այժմ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող ԼՂԻՄ-ի տարածքը: Այսպիսով, փաստաթուղթը գրոյացնում է ԼՂԻՄ-ի՝ խորհրդային ժամանակաշրջանի կարգավիճակը, քանի որ անուղղակիորեն ճանաչում է այդ տարածքների (Հաղրութ, Շուշի) վրա Ադրբեջանի իրավասությունը եւ ռազմական վերահսկողությունը:
- Ի. Ներկայումս Ղարաբաղի իշխանությունները պետք է գործ ունենան հիմնականում Ռուսաստանի, իսկ երկրորդաբար՝ Ադրբեջանի հետ: Ռուսաստանն ու Ադրբեջանը աշխատում են նաեւ Թուրքիայի հետ՝ յուրաքանչյուրն իր ձեռով: Հայաստանը

նահանջել է չորրորդ հորիզոնական՝ այս պահին ունենալով ապագայի վրա ազդելու սահմանափակ հնարավորություն:

Հետևանքները Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության համար

Նոյեմբերի 10-ի հայտարարությունը միջպետական անհավասարակշիռ փաստաթուղթ է:

Մի կողմից, մասնակիցները շեշտը դնում են Հայաստանի գրեթե ամբողջական կապիտուլյացիան մատնանշող կողմերի վրա.

Ա. Նվաստացուցիչ եւ հարկադրված դրույթներ:

Բ. Գրավյալ շրջանների հետշրջումը (retrocession) դեպի Ադրբեջան (շրջաններ, որոնք ներգրավված չէին պատերազմի մեջ) միեւնույն օրակարգի մեջ է՝ ինչպես այն շրջանները, որոնք Ադրբեջանը հետ վերցրեց մարտերի արդյունքում:

Գ. Նոյեմբերի 10-ի փաստաթղթում չկա որեւէ պարբերություն կամ նախադասություն, որը նախատեսում է Շուշիից, Հադրութից եւ հարակից գյուղերից հայ փախստականների վերադարձն իրենց տները:

Դ. Հայաստանի համար հույժ կարեւոր մարդասիրական հարցերը, ինչպիսիք են՝ ռազմագերիների եւ պատանդների պարտադիր վերադարձը, դարձել են խնդրահարույց, քանի որ 8-րդ կետում վերջնաժամկետ նշված չէ, իսկ Ադրբեջանը նրանց ազատումը կապել է հայտարարության՝ դեռեւս իրագործման ենթակա այլ պայմանների հետ: Այս մյուս հարցերի հետ մեկտեղ, Ադրբեջանի կողմից ռազմագերիներին եւ պատանդներին չազատելը պահպանել է թշնամական մթնոլորտը՝ հիմնված տարածաշրջանում վստահության պակասի վրա:

Մյուս կողմից, Ադրբեջանից եւ Հայաստանից բացի այլ պետությունների առնչությամբ մասնակիցներից ոմանք կարծում են, որ հայտարարությունն արտացոլում է ռազմական եւ դիվանագիտական կողմերի հավասարակշռությունը, ինչպես նաեւ աշխարհաքաղաքական նոր իրողությունները.

Ե. Վերաբաշխվել է տարածաշրջանային դերակատարների ազդեցությունը, եւ նրանց անմիջական ներգրավումը հակամարտության մեջ նոր պատկեր է ներկայացնում:

Զ. Ռուսաստանն այս կարգի մեջ հիմնական հաղթողն է, քանի որ իր ազդեցությունն ու վերահսկողությունն ուղղակիորեն տարածում է նրա վրա, ինչ մնացել է Ղարաբաղից, իսկ անուղղակիորեն՝ Հայաստանի եւ Ադրբեջանի վրա:

Է. Հակամարտությունն այժմ է՛լ ավելի է վերածվել խաղալիքի՝ Հարավային Կովկասի (ՀԿ) դինամիկայից եւ Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ հակամարտություններից անդին. այնպիսիք, ինչպիսիք են նրանց մրցակցությունները Միջին Արեւելքում, մասնավորապես Սիրիայում:

- Ը. Արեւմտյան դերակատարները, որոնք նախկինում ներգրավված էին Ղարաբաղի հարցի շուրջ բանակցություններում, մասնավորապես Եւրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խումբը, փաստորեն, դուրս են մղվել ընթացող գործընթացներից:
- Թ. Բոլոր գործնական նպատակների համար միջազգային հաստատությունների ներգրավվածությունը նվազեցվում-իջեցվում է «մարդասիրական խնդիրների» լուծման:
- Ժ. Կետ, որը Հայաստանին ստիպում է ծառայել միջազգային նպատակի՝ Հայաստանի միջով Արեւմտյան Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ հաղորդակցության գիծ բացելով, որը համարժեք է միջանցքի:
- Ի. Պարտադրվել է ճանապարհներ եւ հաղորդակցության ուղիներ բացել դեպի Հայաստան, Հայաստանից եւ Հայաստանում:
- Լ. Հայաստանի տարածքում հաղորդակցության ուղիների անվտանգությունը ապահովելու է Ռուսաստանը: Պարզ չէ, թե այդ ուղիների վրա ինչ աստիճանի վերահսկողություն է ունենալու Հայաստանը:

Գուցե օգտակար կլինի հիշելը, որ Ղարաբաղի պատմության մեջ այն ժամանակահատվածները, երբ Հայաստանը հնարավորություն է ունեցել դեր խաղալու Ղարաբաղի կարգավիճակի որոշման հարցում, իրականում ավելի հազվադեպ են եղել, քան այն ժամանակահատվածները, երբ հնարավորություն չի ունեցել: Այդ առումով, 1918 -1920 թթ., 1988 -1991 թթ. եւ 1991-1994 թթ. բացառություններ էին, որոնք առաջացել են Ռուսաստանի նահանջով, եւ կային ժամանակամիջոցներ, երբ Հայաստանը հարաբերական ուժ ուներ՝ համեմատած տարածաշրջանային/միջազգային դինամիկայի, ինչպես նաեւ Ադրբեջանի իրավիճակի հետ:

Գոյություն ունի իրատեսական կարծիք, ըստ որի՝ նոյեմբերի 10-ի հրադարարի հայտարարության մի շարք առանձնահատկություններ կարող են դրական կամ բացասական կիրառություն ունենալ՝ կախված նրանից, թե դրանց ինչպես կվերաբերվեն Հայաստանի արտաքին քաղաքականության ոլորտի որոշումներ կայացնողները: Այդ առանձնահատկությունների թվում են մի շարք հարցերի վերաբերյալ երկիմաստություններն ու անորոշությունները:

Այս կարծիքը կարելի է անվանել պետականակենտրոն: Այն հիմնված է այն նախադրյալի վրա, որ կա Հայաստան պետություն, եւ այդ պետությունը պարտականություն ու կարողություն ունի, թեկուզեւ սահմանափակ, գործելու՝ շատ վատ իրավիճակը փոքր-ինչ նվազ վատը դարձնելու համար:

Բաժին 2. Մասնակիցները ինչպե՞ս են ընկալում քաղաքականությունն ու ապագա տարբերակները

Այս բաժնում հեղինակները կքննարկեն արտաքին հարաբերությունների եւ անվտանգության բնագավառներում քաղաքականության այն տարբերակները, որոնք Հայաստանն ունի կամ հնարավոր է, որ ընդունի կարճաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում՝ նկատի առնելով այս աշխատանքի մասնակիցների արտահայտած տեսակետները: Դա արվելու է քայլ առ քայլ: Պատասխանը պետք է անդրադառնա հետեւյալ նկատառումներին.

- Ա. Անհրաժեշտ է զբաղվել ընթացիկ իրադարձություններով եւ արագընթաց զարգացումներով, որոնք պահանջում են անհապաղ արձագանքներ եւ հնարավոր գործողություններ:
- Բ. Անհրաժեշտ է ճշտել այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն, եւ ծրագրերը, որոնք պետք է նախաձեռնվեն հիմա՝ ապագայում ընդունելիք քաղաքականության ձեւակերպմանն ու իրականացմանը պատրաստ լինելու համար:
- Գ. Հայաստան պետության համար երկարաժամկետ նպատակների ձեւակերպումն իր հերթին պետք է պատասխանի ստորեւ նշված մի շարք ենթահարցերի՝ ոչ անպայմանորեն բերվող հերթականությամբ.

- ա. Ի՞նչ ակտիվներ է կորցրել Հայաստանը, որոնց տիրապետում էր պարտությունից առաջ:
- բ. Ի՞նչ հիմնական մարտահրավերների է բախվում Հայաստանը:
- գ. Ի՞նչ ակտիվներ է պարունակում Հայաստանի գույքագրումն այժմ կամ ի՞նչ պետք է ձեռք բերվի արտաքին եւ անվտանգության քաղաքականության մեջ՝ պետության նպատակներին հասնելու համար, կապված չորրորդ ենթահարցի հետ:
- դ. Ո՞րն է Հայաստանի 2020 թ. պարտության դերը՝ երկրի երկարաժամկետ արտաքին եւ անվտանգության քաղաքականության ձեւակերպման մեջ: Այլ կերպ ասած՝ ինչպիսի՞ Հայաստան են պատկերացնում անոնք, որոնք Հայաստանն են դեկլարելու: Ինչպիսի՞ տեղ է Հայաստանն զբաղեցնելու Հարավային Կովկասում, ավելի լայն տարածաշրջանում եւ, ընդհանրապես, ավելի մեծ միջազգային հանրության մեջ: Ի՞նչ գործընթացի միջոցով են հայերը պատկերացնում եւ հասնում նոր ապագայի:

Այս հատվածը նույնպես հիմնված կլինի մասնակիցների պատասխանների եւ ՁԼՄ-ներում առկա տեսակետների վերլուծության վրա:

2.1. Չափանիշներ եւ արժեքներ՝ արտաքին քաղաքական նպատակների որոշման համար

Ակնհայտ է, որ Հայաստանի ապագա արտաքին եւ անվտանգության քաղաքականությունների հարցում համաձայնություն չկա: Կարող է թվալ, թե պետք է հնարավոր լինի համաձայնության գալ առնվազն այն չափորոշիչների շուրջ, որոնցով պետք է մշակվի արտաքին քաղաքականությունը:

Ի՞նչ չափորոշիչներ կամ արժեքներ պետք է օգտագործի Հայաստանը արտաքին եւ անվտանգության քաղաքականությունների նպատակները որոշելու համար: Այս հարցին հնարավոր է պատասխանել այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են.

- Ա. Ազգային արժեքներ,
- Բ. Միջազգային արժեքներ,
- Գ. Ազգային շահեր:

Որքան էլ դրանք գրավիչ լինեն, չեն կարող ծառայել որպես ուղեցույց, քանի որ չափազանց ընդհանուր են եւ լայնորեն բաց են մեկնաբանությունների համար: Նման արժեքները, մեծապես հայտարարվող, ռազմավարական մտածողության զարգացման ուղի չեն առաջարկում:

Այս հարցին հնարավոր է պատասխանել՝ թվարկելով, թե ինչի պետք է հասնի արտաքին քաղաքականությունը: Կան համընդհանուր կերպով ընդունված որոշ նպատակներ.

- Դ. Պետության անվտանգություն,
- Ե. Պետության եւ նրա ժողովրդի համար անվտանգ միջավայր,
- Զ. Պետության երկարաժամկետ կենսունակություն՝ միջազգային կարգի դիմաց,
- Է. Պետության կառուցում, ինչը նշանակում է պետական եւ հասարակական հաստատությունների զարգացում՝ խուսափելու համար ձախողված պետություն դառնալուց,
- Ը. Ժողովրդի տնտեսական եւ սոցիալական զարգացում,
- Թ. Ռեսուրսների իմաստուն եւ արդյունավետ ծախսում:

Սրանք կարելուք նկատառումներ են: Սակայն այս դեպքում եւս քաղաքական գաղափարախոսությունների ու կարծիքների ներկայակերտում է մեկնաբանությունների լայն շրջանակ դրանցից յուրաքանչյուրի իմաստի վերաբերյալ: Իրականում, ինչպես ցույց կտա ստորեւ բերվող քննարկումը, որքան ավելի հստակ են չափորոշիչներն ու արժեքները, այնքան ավելի հստակվում ու խորանում են տարաձայնությունները:

- Ժ. **Ուժեղ զինվորականությունը**, կարելի է ասել, անվտանգ պետության բաղադրիչներից մեկն է: Հայաստան պետության դեմ ագրեսիայի դեպքում դա կարող է նշանակել (ա) զինված ուժեր, որոնք ի վիճակի են պաշտպանություն տրամադրել՝ մինչև Հայաստանի դաշնակից Ռուսաստանը կարողանա միջամտել: Դա կարող է նշանակել նաև, որ (բ) վերազինված բանակը պետք է դառնա պետության կենտրոնական ինստիտուտը եւ բավականաչափ ուժեղ՝ ագրեսոր պետությանը հաղթելու համար կամ (գ) կարողանա հարձակվել ու հետ վերցնել այն, ինչը կորցրել ենք վերջին պատերազմում եւ գուցե ավելին:
- Ի. **Անվտանգության ռիսկերի, գործոնների, ակտիվների եւ ուժային հարաբերությունների իրատեսական գնահատումը** կարող է ողջամիտ թվալ: Մակայն սա, ըստ ոմանց, հակասում է այնք այն առարկությանը, թե իրատեսական գնահատականը սահմանափակում է դեռևս ստեղծվելիք ապագա իրողությունների, «ազգային տեսլականների» վրա հիմնված նպատակներ հաստատելու պետության ունակությունը:
- Լ. **Անկախության մի բարձրագույն մակարդակ**, որը կարող է դիտվել իբրևս վսեմ նպատակ եւ անվիճելի արժեք, մերժվում է նրանց կողմից, ովքեր կարծում են, թե Հայաստանը պետք է իր անկախության է՛լ ավելի մեծ մասը զիջի Ռուսաստանին, որպեսզի պարզեւատրվի անվտանգության հնարավորինս բարձր մակարդակով:
- Խ. **Խաղաղությունը**, կարելի է ենթադրել, կարող է լինել պետության համընդհանուր կերպով ընդունված նպատակներից մեկը: Այդուամենայնիվ, ոմանց համար այն համարժեք է պարտվողականությանը, եւ ռազմատենչ մշակույթն ու միջավայրը եւ գուցե նույնիսկ պատերազմն՝ ինքը, ավելի են հարմար Հայաստանի կարիքներին ու նույնիսկ մեր բնավորությանը:
- Օ. **Հարեւանների հետ բնականոն հարաբերությունները**. մի արժեք, որը կարծես թե ընդհանուր է ոմանց համար, կա՛մ ոմանց կողմից մերժվում է որպես անիրատեսական՝ հաշվի առնելով Հայաստանի որոշ հարեւաններին, կա՛մ էլ համարվում անցանկալի՝ հայ ժողովրդի եւ պետության հատուկ բնույթի պատճառով:

Այն ժամանակ, երբ մարդը հասնում է զգալի որոշակիության, հասկանում է, որ գործ ունի ոչ թե պարզապես տարաձայնությունների կամ նույնիսկ իրարամերժ քաղաքական ծրագրերի, այլ արժեհամակարգերի եւ ապագայի պատկերացման հիմնավոր տարբերությունների հետ:

Այդ տարբերություններին նշանակությունն ու խորությունն ավելի ակնհայտ կդառնան հաջորդ երկու բաժիններում:

2.2. Ի՞նչը պետք է լինի հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը

Փորձագետները, որոնց հետ մենք խորհրդակցել ենք, որպես Հայաստանի արտաքին քաղաքականության միակ, ամենակարևոր նպատակ առաջարկել են հետևյալը: Պարզ է, որ

դրանք չեն ներկայացվում ըստ կարեւորության առաջնահերթության. առաջարկված այդ նպատակները, ավելի շուտ, խմբավորվել են փոխադարձ համատեղելիության եւ փոխլրացման սկզբունքով:

Նպատակներ, որոնք բավականաչափ ընդհանուր են՝ բոլորին ընդունելի լինելու համար.

- Ա. Հայաստանի ժողովրդի անվտանգությունն ու բարգավաճումը,
- Բ. Մարդկանց կենսապայմանների բարելավումը այնպիսի ծրագրերի միջոցով, ինչպիսիք են՝ ցանցերի, ենթակառուցվածքների եւ շրջակա միջավայրի զարգացման ծրագրերը,
- Գ. Հայկական պետության երկարաժամկետ կենսունակությունը,
- Դ. Տնտեսության եւ օտարերկրյա ներդրումների բազմազանեցումը (diversification)՝ Հայաստանը տարածաշրջանային հանգույց եւ արտահանող երկիր դարձնելու համար,
- Ե. Միջազգային սահմանների անվտանգության ապահովումը,
- Զ. Ռազմական, ֆինանսական եւ քաղաքական հուսալի համակարգերի ստեղծումը,
- Է. Մեծ տերությունների հետ վերախմաստավորված հարաբերությունները,
- Ը. Վրաստանի եւ Իրանի հետ տնտեսական կապերի ընդլայնումը:

Նպատակները, որոնք ինչ-որ կերպ հակվում են դեպի ավելի շատ ինքնիշխանություն, տարածաշրջանայնություն եւ բնականոնություն որոնելուն, ներառում են.

- Թ. Բարձրացնել Հայաստանի վարկը՝ որպես կայունության ու խաղաղության նախատիպի (model):
- Ժ. Միջազգային ասպարեզում Հայաստանի արժեքի բարձրացում, որպեսզի այլ երկրներն ավելի հոգատար վերաբերվեն:
- Ի. Անմիջական հարեւանների հետ հարաբերությունների բարելավում եւ կարգավորում, այդ թվում՝ խաղաղության ձգտում եւ բաց սահմաններ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ:
- Լ. Անվտանգություն՝ տարածաշրջանային ինտեգրման, տարածաշրջանային տնտեսական զարգացման եւ հաղորդակցության ծրագրերին մասնակցելու միջոցով. ինչն իր հերթին կօգնի ժողովրդագրությանը:
- Խ. Ինտեգրում ԵՄ եւ ԱՄՆ կառույցներին (բացառությամբ ռազմական հարթության):
- Օ. Ինքնիշխանության պահպանում, վերականգնում այն ամենի, ինչ հնարավոր է եւ նոր դաշինքների կնքում:
- Կ. Հայաստանի իմիջի (վերա)հաստատում՝ որպես ինքնիշխան ժողովրդավարական պետություն:
- Ն. Ռուսաստանից ավելի շատ անկախության ապահովում՝ առանց հարաբերությունները խզելու:

2. Մեփական որոշումներ կայացնելու կարողության բարձրացում, Ռուսաստանի ազդեցության հավասարակշռում բազմակողմ կազմակերպությունների միջոցով, ինչպիսին է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը:
- Ղ. Ապահովել, որ Հայաստանը մասնակցի եւ օգուտներ ստանա Ռուսաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից մշակվող տարածաշրջանային նախագծերից, որոնք որոշում են տարածաշրջանի ավելի մեծ խնդիրները: Ղարաբաղի ապագան նախագահ Պուտինի ձեռքերում է:
- Ճ. Արտաքին քաղաքականության օրակարգից հանել Ցեղասպանության ճանաչման եւ Ցեղասպանության հատուցումների պահանջները:

Նպատակներ, որոնք հակված են հակառակ ուղղության՝ կոչ անելով ավելի շատ ապավինել Ռուսաստանին եւ արտահայտելով վախ Թուրքիայից.

- Ս. Ավելի սերտ հարաբերությունների ապահովում Չինաստանի, Հնդկաստանի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Եգիպտոսի եւ Հունաստանի հետ՝ Թուրքիայի դեմ հնարավոր ընդհանուր ճակատ ձևավորելու համար:
- Յ. Դիվանագիտական եւ ռազմական անվտանգություն Թուրքիայից՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) հետ ներդաշնակեցման եւ Ռուսաստանի հետ հետագա ինտեգրման միջոցով (առանց կայազորային պետություն դառնալու):
- Ն. Ուժեղ բանակի կառուցում՝ Հայաստանի եւ Ղարաբաղի պաշտպանության համար:
- Շ. Ապահովել, որ Հայաստանը չօգտագործվի տարածաշրջանային նախագծերի իրականացման համար, քանի որ դրանք օգուտ կտան միայն այլ պետությունների:
- Ո. Ձգտել Հայոց ցեղասպանության ճանաչման:

Նպատակներ, որոնք առաջնային են համարում Ղարաբաղը.

2. Ղարաբաղը շարունակում է մնալ որպես Հայաստանի օրակարգի առաջնային հարց, հետեւաբար՝ լուծել հակամարտությունները Ղարաբաղի ղեկավարների միջեւ, կանխել վերջին պատերազմի ընթացքում հայկական կողմի գործած ռազմական հանցագործությունների մեղադրանքները, կանխել Ղարաբաղի փախուստը-հեռանալը Հայաստանի «թելի տակից», ունենալ երկրորդ ծրագիր՝ նկատի ունենալով ռուս խաղաղապահների Ղարաբաղը լքելու հնարավորությունը:

Նպատակներ, որոնք կենտրոնանում են մեթոդի վրա.

- Պ. Ուսանողներին եւ փորձնակներին (interns) ուղարկել Արեւմտյան համալսարաններ, հետազոտական կենտրոններ, վերլուծական կենտրոններ եւ հաստատություններ:
- Ջ. Որոշումների կայացման հիմք դարձնել ողջամիտ եւ իրատեսական վերլուծությունները, եւ ըստ այդմ միայն մշակել արտաքին քաղաքականությունը:

Ռ. Բացել դիվանագիտության ազգային դպրոց եւ կատարելագործել կառավարման դպրոցի չափորոշիչները:

Սկզբունքորեն, ամենակարեւորը համարվող ցանկացած նպատակ պետք է լինի այն, որին պետք է ստորադասվեն բոլոր մյուսները, եւ որին պետք է ուղղված լինեն բոլոր միջոցները: Ինչպէս երեւում է, այդ դերի հավակնորդներն ընդգրկում են հարցերի լայն սպեկտր, եւ դրանց հարկավոր է առաջնահերթություն տալ: Շատ նպատակներ հակասական են կամ փոխբացառող: Լավագույնը, որ կարելի է ասել, այն է, որ հայ քաղաքական միտքը, որը մինչեւ 2020 թ. պատերազմը չէր փայլում հարակցությամբ (coherence), ներկայումս ավելի մեծ խառնաշփոթի մեջ է: Հայոց պետությունը նույնիսկ չունի ներքին տարաձայնությունների քննարկման համար հստակ ձեւակերպված շրջանակներ (frameworks):

2.3. Որո՞նք պետք է լինեն Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները

Որո՞նք պետք է լինեն Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթ նպատակները: Ինչպէ՞ս պետք է Հայաստանը դիմակայի այդ նպատակների ներկայացրած մարտահրավերներին: Եւ Հայաստանն ի՞նչ գործոններ պետք է հաշվի առնի արտաքին քաղաքականություն մշակելիս՝ ինչպէս ընդհանուր, այնպէս էլ մասնավոր դեպքերում:

Բոլոր մասնակիցներն իրատեսական դիտարկումներ են արել անմիջապէս հետպատերազմական իրավիճակի վերաբերյալ եւ դառնությամբ բացահայտել անցյալի սխալները: Ըստ նրանց՝ նոր համատեքստը հայերին մղում է կասկածի տակ դնելու գերակշռող գաղափարախոսություններն ու պետության գործերի վարման եղանակը, եւ ճգնաժամից դուրս գալու ելքեր փնտրելու՝ սոցիալական, հոգեբանական առողջապահական, քաղաքական ու անվտանգության մակարդակներում:

Մասնակիցները այն կարծիքին են, որ անհրաժեշտ է լրջորեն հաշվի առնել հետեւյալ գործոնները.

- Ռուսաստանի՝ ամենուրեք ռազմական ներկայությունը,
- Ադրբեջանի տարածքային առաջխաղացումները,
- Թուրքիայի նեոկայսերական հավակնությունները,
- Իրանի եւ Վրաստանի կաշկանդված չեզոքությունը,
- Բայց նաեւ՝ արեւմտյան պետությունների երես թեքելը:

Սակայն ոչ բոլոր մասնակիցներն են նույն շեշտադրումներով մոտեցել այս գործոններին եւ միեւնույն նշանակությունը վերագրել յուրաքանչյուրին: Ընդհանուր համաձայնություն կա այն հարցի շուրջ, որ Հայաստանը պետք է վերագնահատի իր հարաբերություններն այլ երկրների հետ, նոր մոտեցումներ մշակի եւ փնտրի նոր գործընկերներ, որոնք Հայաստանի

հետ նույն շահերն ունեն: Գործուն դիվանագիտության հետ մեկտեղ, Հայաստանը պետք է բանակցի եւ տեղադրի էական պաշտպանական համակարգեր՝ ապահովելու համար հայ ժողովրդի երկարատեւ ներկայությունը սեփական հայրենիքում:

Մասնակիցների մեծ մասը համաձայն է նաեւ, որ նախկին սխալ դատողություններն ու կորցրած հնարավորությունները վերլուծելու անկարողությունը, ինչպէս նաեւ անցյալում սխալ քաղաքականության համար պատասխանատվության սեփական բաժնի մերժումը դրսևտրվել են ռեւանշիզմի վտանգավոր մտածելակերպով: Մտային այս վտանգավոր վերաբերմունքը կարող է հեշտությամբ հանգեցնել նրան, որ անցյալի գործելակերպի եւ համոզմունքների քննադատները համարվեն «վատ» հայեր, նույնիսկ՝ դավաճաններ, իսկ Հայաստանում քաղաքացիական հասարակության ու առաջադեմ խմբերը անվտանգայնացվեն (securitization) եւ համարվեն ազգային անվտանգության սպառնալիք: Իրական վտանգ կա, որ արմատացած պահպանողականությունն ու հայրիշխանությունը, գուգորդված ռեւանշիզմով ու հակաարեւմտականությամբ, կնպաստեն հասարակության ռազմականացմանը եւ կմարմնավորեն Հայաստանի վատագույն ապագան: Նման հոգեբանական ու քաղաքական մթնոլորտը տեղ չի թողնի մրցակցային քաղաքականության, հանրային ազատ խոսույթի ու երկխոսությունների համար: Եթէ այս մտայնությունը գերիշխի, կարելի է սպասել նոր աղետների:

Ստորեւ ներկայացվող ցուցակում թվարկվում են մտահոգության ընդհանուր ոլորտները եւ տարբեր ընտրանքներ, որոնք հնարավոր են կամ առաջարկվում են որպէս հետագա քաղաքականություն:

Հիմնական հարցը Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերություններն են եւ դրանց ազդեցությունը երկրի՝ քաղաքականություն մշակելու կարողության վրա: Ընդհանուր առմամբ, նկատվել է, որ 2020 թ. պատերազմում կրած պարտությունը մեծացրել է իր անվտանգության համար Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից եւ դրանով իսկ սահմանափակել երկրի հնարավորությունները:

Հայաստանը կարո՞ղ է կամ պե՞տք է ունենա սեփական արտաքին քաղաքականություն: Հնարավորությունները տարբեր են, գոնե՝ տեսականորեն:

Մասնակիցների առաջին խումբը հակված է կարծելու, որ Հայաստանը պետք է որդեգրի ավելի շատ «արեւմտյան կողմնորոշում», եւ, հետեւաբար.

- Ա. Վերափոխի Արեւմուտքի նկատմամբ իր արտաքին քաղաքականությունը,
- Բ. Վերականգնի ինքնուրույն՝ Ռուսաստանից ավելի քիչ կախվածությամբ որոշումներ կայացնելու իր ունակությունը,
- Գ. Նախաձեռնի քննարկումներ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ՝ հետագա կարգավորման ներուժն ուսումնասիրելու նպատակով,

- Դ. Լիովին ինտեգրվի ՀԿ-ում տնտեսական, տրանսպորտային եւ անվտանգության շահերին, եւ օգուտներ քաղի տարածաշրջանում զբաղեցրած իր աշխարհագրական դիրքից,
- Ե. Կարելի չափով օգտագործի աշխարհագրական-ռազմավարական իր եզակի դիրքի առավելությունները՝ ապահովության եւ գերակայության հասնելու համար,
- Զ. Խրախուսի եւ մասնակցի հաղորդակցության ուղիների բացմանն ու հետագա զարգացմանը: Փաստը, որ մյուսները կշահեն կամ ավելի շատ կշահեն, չի ժխտում այն փաստը, որ Հայաստանը նույնպես օգուտներ կստանա: Հայաստանի քաղաքականությունը չպետք է հիմնված լինի այն սկզբունքի վրա, որ այն, ինչ լավ է Հայաստանի համար, պետք է վնասի ուրիշներին, ոչ էլ այն սկզբունքի վրա, թե ինչ լավ է ուրիշների համար, չի կարող լավ լինել Հայաստանի կամ հայկական կողմի համար:

Վերը նշված ընտրանքից տարբերվելով՝ մի այլ խումբ պիտի նախընտրեր.

- Է. Ձգտել հավասարակշռելու Ռուսաստանի նշանակությունը որոշումների կայացման մեջ. արեւմտյան՝ ամերիկյան եւ եւրոպական ուժեղ աջակցությամբ,
- Ը. Վերականգնել ինքնավար որոշումներ կայացնելու իր կարողությունը՝ ավելի քիչ կախվածություն ունենալով Ռուսաստանից եւ միշտ հաշվի առնելով իր սերտ կապը Ռուսաստանի հետ ու կախվածությունը նրանից,
- Թ. Ձգտել Վրաստանի ու Ադրբեջանի հետ հավաքական անվտանգության պայմանագրի մի համաձայնություն, որը երաշխավորված լինի Ռուսաստանի, Թուրքիայի ու Իրանի կողմից եւ ունենա արեւմտյան տերությունների հնարավոր աջակցությունը,
- Ժ. Գիտակցել, որ սա մի տարածաշրջան է, (1) որն ունի կարելու աշխարհառազմավարական դիրք՝ ավելի ուժեղ հարեւանների եւ խոշոր տերությունների համար, (2) որ այդ տերությունները եւ տարածաշրջանի մյուս երկու պետությունները կարող են եւ, փաստորեն, վերջին քառորդ դարում իրենց խնդիրները լուծել են առանց Հայաստանի, իսկ Հայաստանը բաց է թողել դրանցից օգուտ քաղելու հնարավորությունը:

Մասնակիցների մի երրորդ խումբ հակառակ խորհուրդն է տալիս.

- Ի. Ձգտել Հայաստանի զարգացման՝ իր իսկ տեմպերով եւ իր առանձին ռեսուրսների միջոցով՝ իբրեւ միայնակ պետություն, որը կանգնած է որպես պատվար՝ ընդդեմ իր որոշ հարեւանների չարամիտ ծրագրերի, եւ գուցե ավելի լիարժեքորեն ինտեգրվել Ռուսաստանին,
- Լ. Թույլ չտալ, ոչ էլ հեշտացնել հաղորդակցության ուղիների բացումը տարածաշրջանում, քանի որ դա օգուտ կրերի ուրիշներին, այդ թվում եւ Հայաստանի հակառակորդներին,
- Խ. Մեփական որոշումներն ամբողջովին համապատասխանեցնել Ռուսաստանի որոշումների հետ:

2.4. Աղբբեջան

Աղբբեջանի հետ Հայաստանի հարաբերությունների վերաբերյալ մասնակիցների կարծիքները տատանվում են ամենահարմարվողականից մինչև ամենառազմատենչի միջև: Դրանով հանդերձ, այդ կարծիքները կարելի է ամփոփել երեք հնարավոր տարբերակներում:

- Ա. Լուծել Աղբբեջանի կողմից գերեվարված խաղաղ բնակչության եւ ռազմագերիների հետ կապված խնդիրները, գծել այդ երկրի հետ Հայաստանի սահմանները, բանակցել պատվաբեր խաղաղության շուրջ, որը կարող է ներառել ապառազմականացված սահմանային տարածքներ, ապա կարգավորել հարաբերությունները:

Այս տարբերակը կարող է սկսվել Աղբբեջանի դեմ առկա ոչ քաղաքակիրթ, առավելապաշտական եւ ազգայնական հռետորաբանության դադարեցմամբ, քանի որ դա հետեւանքներ է ունենում: Աղբբեջանի ուսումնասիրության ծրագրերի ստեղծում, ինչպես նաեւ փոխայցելությունների եւ երկրորդ ուղու դիվանագիտության կապերի ու ծրագրերի խրախուսում: Անշուշտ, Աղբբեջանի սեփական հռետորաբանությունը եւ սաղորիչ քաղաքականությունը, որի նպատակը, թվում է, թե Հայաստանին պարտադրելն է, որ վերջինս պաշտոնապես ճանաչի Աղբբեջանի տարածքային ամբողջականությունը, դժվարացնում է նման փոփոխություններն ընդունելը:

Հռետորաբանությունը փոխելու առաջարկին նպաստում է այն դիտարկումը, որ Աղբբեջանի դեկլարների դեմ անձնական ու քաղաքական հարձակումները վնաս են հասցրել եւ որեւէ օգուտ չեն բերել Հայաստանին՝ որպես ավելի ժողովրդավարական պետության: Հայաստանի հարեւանների ռեժիմներն իրենց գործն են, բացի այն դեպքերից, երբ դրանք ունեն հակահայաստանյան կամ հակահայ բաղադրիչներ: Արեւմուտքը Հայաստանին ամենամոտ գտնվող երկու մյուս երկրներին՝ Ռուսաստանին եւ Իրանին համարում է հակառակորդներ եւ սպառնալիքներ, իբրեւ թե այդ երկրների ռեժիմների հանդեպ ունեցած հակակրանքի պատճառով: Այդուամենայնիվ, ԱՄՆ-ը եւ, առհասարակ, Արեւմուտքը, ընդհանուր առմամբ, հիանալի հարաբերություններ ունեն Սաուդյան Արաբիայի, տարբեր թագավորությունների եւ էմիրությունների, ինչպես նաեւ այլ բռնատիրական ու կոռումպացված պետությունների հետ: Աղբբեջանի ռեժիմը գոյություն ունի 1993 թ.-ից ի վեր, եւ Արեւմուտքը նրա հետ իր բարեկամական ու արդյունավետ քաղաքականությունը երբեք չի հիմնել ռեժիմի բնույթի վրա:

Այս տարբերակը կարող է նախատեսել նաեւ պատերազմից ամեն գնով խուսափելու գործուն քաղաքականություն, բազմաչափ երկխոսության նախաձեռնում, այդ թվում՝ անվտանգության հարցերի վերաբերյալ, եւ տնտեսական հարաբերությունների զարգացում:

Նման քաղաքականության պարագայում պայման չէ ենթադրելը, որ Հայաստանը կորցրել է Ղարաբաղի ապագայի վրա որեւէ հիմնարար ձեռնարկ ազդելու կարողությունը: Մակայն գործնականում պետք է ենթադրել, որ Ղարաբաղի համար անկախություն ձեռք բերելը ներկայում ավելի մեծ անկարելիություն է, քան 2020 թ. սեպտեմբերի պատերազմից առաջ էր:

- Բ. Երկրորդ տարբերակն այն է, որ հարկավոր է փորձել կարգավորել հարաբերությունները Ադրբեջանի հետ՝ միաժամանակ կենտրոնանալով Ադրբեջանի ախորժակի սահմանափակման վրա, որը մեծացել է 2020 թ. պատերազմում տարած հաղթանակից հետո, եւ միեւնոյն ժամանակ՝ խուսափել բախումներից:

Այս տարբերակը պահանջում է զգուշություն ցուցաբերել Ադրբեջանի հետ գործունենալիս՝ դա հիմնավորելով նրանով, որ Հայաստանի եւ Ղարաբաղի համար Ադրբեջանը դեռեւս վտանգ է ներկայացնում, ուստի Հայաստանը պետք է նրա դեմ առավելագույն պաշտպանությունն ստեղծի:

Այս կարծիքի տարբերակներից մեկով Հայաստանն ու Ղարաբաղը պետք է Ադրբեջանից պահանջեն ճանաչել Ղարաբաղի անկախությունը: Այս տարբերակը կարող է նաեւ շեշտադրում կատարել Ադրբեջանի կողմից կատարված մարդու իրավունքների խախտումների եւ պատերազմական հանցագործությունների վերաբերյալ գործեր նախապատրաստելու, ապա այդ գործերը միջազգային եւ եւրոպական դատարաններում հետապնդելու վրա՝ դրանով տարբերակելով այն ադրբեջանցիներին, որոնք քրեական գործողություններ են կատարել, մեծամասնությունից, որը չի կատարել:

Վերջին հնարավորության դեպքում հարկավոր է հաշվի առնել երկու գործոն. (ա) նման գործերը տանուլ տալու հավանականությունը եւ (բ) Հայաստանի սեփական խոցելիությունը նույնանման մեղադրանքների առջեւ:

- Գ. Երրորդ տարբերակը նախատեսում է Հայաստանը վերագինել նորագույն ու հնարավոր լավագույն զենքով, զարգացնել հույժ առաջադեմ տնտեսություն, նույնիսկ հասնել Ադրբեջանի եւ գուցե նաեւ Թուրքիայի հետ ժողովրդագրական համարժեքության ինչ-որ ձևի, պատեհ պահի նոր պատերազմ սկսել՝ վերագրավելու համար 2020 թ. պատերազմում կորցրածը ու թերեւս ավելին, եւ Ադրբեջանին ստիպել ճանաչելու Ղարաբաղի անկախությունը:

Հարկավոր է նշել, որ Ղարաբաղի ղեկավարությունը չի նախատեսում կամուրջներ կառուցել ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ Թուրքիայի հետ, քանի որ իր ապագան կապել է Ռուսաստանի հետ:

2.5. Ռուսաստան

Ռուսաստանը միշտ նշանակալի դեր է ունեցել Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, հատկապես ազգային անվտանգության ոլորտում: Այդ դերն ավելի ցայտուն է դարձել 2020 թ. սեպտեմբերի պատերազմից ի վեր: Լինելով Հայաստանի միակ պաշտոնական դաշնակիցը՝ Ռուսաստանը հանդես է եկել նաև որպես միջնորդ: Այսինքն, շատ առումներով չեզոք դեր է ստանձնել՝ այդպիսով հայերին ներշնչել վստահություն, հույս, նույնիսկ նվիրվածություն, սակայն նաև ներշնչել է կասկած ու մտահոգություն:

Մասնակիցների միջև կա ընդհանուր համաձայնություն այն հարցում, որ Ռուսաստանն առանցքային հարեւան է եւ կշարունակի խաղալ կարեւոր, անփոխարինելի, նույնիսկ գերիշխող դեր: Սակայն կարծիքները տարբերվում են այն հարցում, թե այդ դերը որքանո՞վ պետք է սահմանի կամ սահմանափակի Հայաստանի շահերը, որքանո՞վ պետք է Հայաստանը հետեւի Ռուսաստանի քաղաքականությանը, կամ թե արդյո՞ք պետք է ավելի սերտորեն ինտեգրվի Ռուսաստանին եւ արդյո՞ք ոչ միայն որպես դաշնակից:

Այսպիսով, այստեղ տարբերակված դիրքորոշումները համապատասխանում են մասնակիցների երեք խմբերի տեսակետներին:

Ըստ առաջին խմբի, որը հակված չէ ընդունելու Ռուսաստանի գերակայությունը, Հայաստանը պետք է.

- Ա. Փոխի Ռուսաստանի հետ իր հարաբերությունները, քանի որ Ռուսաստանի վասալը չէ, թեև Ռուսաստանը վերահսկում է Հայաստանի ենթակառուցվածքների էական տարրերը:
- Բ. Վերակազմակերպի իր հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ հիմնվելով վերջին պատերազմից ի վեր ծավալված նոր տրամաբանության վրա: Հայաստանը պետք է վերանայի իր հարաբերությունները Ռուսաստանի հետ, քանի որ հենց Ղարաբաղյան հակամարտությունն է հանգեցրել Ռուսաստանից նրա կախվածության. կախվածություն, որը լավ արդյունքի չհասավ, եւ որովհետև Ռուսաստանը կարող է ավելի տարբերակված քաղաքականություն վարել Հայաստանի եւ Ղարաբաղի նկատմամբ:

Երկրորդ խումբն ավելի հակված է ընդունելու Ռուսաստանի գերիշխող ներկայությունը, բայց փորձում է մեղմել այն: Այդ խմբի համար Հայաստանը պետք է.

- Գ. Հավասարակշռված հարաբերություններ պահպանի Ռուսաստանի հետ, որոնք այժմ երկիմաստ են, նույնիսկ կեղծավոր:

- Դ. Բազմազանեցնի իր տնտեսությունն ու ներդրումներ զարգացնի՝ ռուսական ազդեցությունը նվազեցնելու համար, քանի որ Հայաստանի տնտեսությունը ներկայումս մեծապես կախված է Ռուսաստանից:
- Ե. Գիտակցի, որ խնդիրներ ունի Ռուսաստանի հետ, քանի որ Հայաստանն ունի ժողովրդավարական համակարգ, իսկ Ռուսաստանը կնախընտրեր, որ այդպես չլիներ:
- Զ. Վստահ լինի, որ դուրս չի մնում քննարկումներից, երբ Ռուսաստանը եւ Թուրքիան ծրագրեր են կազմում ՀԿ-ի, ինչպես նաեւ Հայաստանի վերաբերյալ:

Վերջապես, երրորդ խումբը կա՛մ կասկածում է, որ Հայաստանը կարող է խուսափել իր ներքին եւ արտաքին քաղաքականության համար Ռուսաստանի ունեցած մեծ կարեւորությունից, կա՛մ դա համարում է դրական զարգացում: Այսպիսով, այս խմբի համար Հայաստանը պետք է.

- Է. Զգերագնահատի սեփական արտաքին քաղաքականություն սահմանելու իր կարողությունը, հատկապես Ռուսաստանի հարցում, քանի որ Ռուսաստանն ունի իր սեփական քաղաքական նպատակները, եւ Հայաստանը չի կարող շարժվել արմատապես հակառակ ուղղությամբ:
- Ը. Ավելի սերտ հարաբերություններ ունենա Ռուսաստանի հետ՝ ավելի լավ պաշտպանելու համար իր սահմանները, որոնք անկայուն են, բայց Ռուսաստանի օգնությամբ կարող են դառնալ կայուն եւ հուսալի:
- Թ. Գիտակցի, որ իր անվտանգության ապահովման համար ամբողջովին կախված է Ռուսաստանից, եւ գործի համապատասխանաբար:
- Ժ. Ունենա ղեկավար, որը կարող է աշխատել Պուտինի հետ:
- Ի. Հիշի, որ Ռուսաստանն իր ներքին քաղաքականության վրա ազդելու լծակներ ունի, քանի որ Հայաստանի վերնախավերը սպասարկում են Ռուսաստանին:

2.6. Թուրքիա

Թուրքիան եղել է Հայաստանի արտաքին եւ անվտանգության քաղաքականությունների ամենահիմնական մարտահրավերը: 1993 թ.-ից ի վեր Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը Անկարան կապում էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ՝ դրանով վերջ դնելով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջին փորձին: Հետեւաբար, Թուրքիան փակ էր պահում իր սահմանը՝ դրանով, փաստորեն, մասնակցելով Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակմանը:

2008 թ.-ին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլն այցելեց Հայաստան, այսպես կոչված, «ֆուտբոլային դիվանագիտության» շրջանակներում: Դրան հաջորդեց Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկու արձանագրությունների ստորագրումը՝ ուղղված դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու երկու երկրները բաժանող սահմանի բացմանը (Յուրիխ, 2009 թ.): Սակայն Թուրքիան արձանագրությունների իրականացումը

պայմանավորեց Ղարաբաղյան հակամարտության լուծմամբ. մի դիրքորոշում, որն, ի վերջո, երկու երկրներին ստիպեց անվավեր դարձնել իրենց ստորագրությունները⁴:

Թուրքիան կարելու էր խաղաց 2020 թ. պատերազմում Ադրբեջանի կողմից հայկական ուժերին պարտության մատնելու մեջ՝ այդպիսով բարդացնելով նրա նկատմամբ քաղաքականության ծրագրումը:

Այդուամենայնիվ, Թուրքիայի նկատմամբ վարվող քաղաքականության վերաբերյալ տարբերակները լայնորեն բաց են եւ համապատասխանում են վերը քննարկված հարցերից մի քանիսի մեջ նկատվող հիմնական տարբերություններին:

Մասնակիցներից շատերն իրենց գնահատականը սկսում են Թուրքիայի եւ նրա նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի անձի քննարկմամբ.

- Ա. Թուրքիան, իր աշխարհառազմավարական դիրքի, ինչպես նաեւ պետականության՝ բարձր զարգացած զգացողության եւ հմուտ արտաքին քաղաքականության պատճառով, միշտ մեծ նշանակություն կունենա Արեւմուտքի համար՝ ինչ էլ որ անի կամ ասի: Թուրքիան վարժված է ԱՄՆ-ի կամ Եւրոպայի հետ հակասություններ եւ ՆԱՏՕ-ի հետ կապված խնդիրներ ունենալուն: Թուրքիան գիտի, որ իրեն այնքան հեռու չեն հրի, որ լքի այդ ճամբարը: Այդ երկրի երկար պատմությունը, որը հասնում է օսմանյան ժամանակաշրջանին, ցույց է տալիս, որ նա կարողանում է օգուտ քաղել նման հակադրություններից ու մրցակցություններից:
- Բ. Էրդողանը, հավանաբար, որոշ ժամանակ կմնա իշխանության ղեկին, իսկ նրա հետնորդները շատ բան չեն փոխի Հայաստանին եւ Ադրբեջանին առնչվող հարցերում՝ Թուրքիայի քաղաքականության մեջ:
- Գ. Հայաստանը եւ հայկական կողմը պետք է նկատի ունենան, որ Թուրքիան մնալու է հզոր պետություն: Ինչ էլ լինեն նրա ներկա կամ ապագա թույլ կողմերը, դրանք կարող են խոցելիություն ստեղծել մե՛ծ պետությունների նկատմամբ, այլ ոչ թե՛ Հայաստանի:

Մասնակիցներից շատերը հանդես են գալիս քաղաքականության փոփոխության օգտին՝ հաշվի առնելով, որ հակադրությունը լավ արդյունքներ չի տվել: Ըստ այս խմբի, Հայաստանը պետք է.

- Դ. Կարգավորի հարաբերությունները Թուրքիայի հետ, հնարավորության դեպքում՝ առանց միջնորդության, նույնիսկ եթե դա նշանակի հետաձգել Ցեղասպանության

⁴ 1915 թ. սկզբին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կառավարության իրականացրած հայ ժողովրդի Ցեղասպանությունից բացի, հայ-թուրքական հարաբերությունները կրում են Լեւինի եւ Մուստաֆա Քեմալի միջեւ կնքված Հայաստանի եւ հայ ժողովրդի համար նվաստացուցիչ չորս՝ Բաթումի (1918 թ.), Ալեքսանդրապոլի (1920 թ.), Կարսի (1921 թ.) եւ Մոսկվայի (1921 թ.) պայմանագրերի պատմական ծանր բեռը:

ճանաչման հարցը, կամ գուցեև աշխատել Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչման ավելի մեղմ ձևի ուղղությամբ: Հայաստանը պետք է պետության եւ ժողովրդի շահերը վեր դասի այլ նկատառումներից:

- Ե. Նայի դեպի ապագան եւ ստեղծի լարվածության թուլացման մթնոլորտ. չգործի՝ ելնելով անցյալ պատերազմներից:
- Զ. Խուսափի հակաթուրքական կռալիցիաներից, որոնք դատապարտված են ժամանակավոր լինելու, նույնիսկ եթե կայանան: Ուրիշները փոխզիջումների են գնում եւ ներում միմյանց: Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ ստեղծելու լրացուցիչ հակադրություններ:
- Է. Քաղաքականությունը չհիմնավորի հակաթուրքական հայտարարությունների կամ նույնիսկ արեւմտյան կամ այլ տերությունների կողմից սահմանվող պատժամիջոցների վրա:
- Ը. Ցեղասպանությանը վերաբերվի որպես բարոյական, պատմական հարցի, ոչ թե որպես կարգավորման նախապայմանի կամ տարածքային պահանջների հանգեցնող քաղաքական խնդրի:

Թեև ումանք համարում էին, որ պետք է.

- Թ. Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորել միայն վերջինիս կողմից Ցեղասպանության ճանաչումից հետո:

Սակայն մեկ այլ խումբ պնդում էր, որ.

- Ժ. Թուրքիային պետք է վերաբերվել որպես թշնամի երկրի: Հայաստանը պետք է միանա բոլոր հակաթուրքական կռալիցիաներին, որոնք կարող են ձեւավորել հույները, եգիպտացիները, սաուդցիները եւ այլք:
- Ի. Թուրքիան թուլանում է եւ վախենում է տարածքային կորուստներից, իսկ Հայաստանը պետք է ձգտի նպաստել այդ գործընթացին:
- Լ. Հայաստանը պետք է իր դիվանագիտության մաս դարձնի Էրդողանի դեմ միավորներ վաստակելը:

Կամ՝

- Խ. Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում Հայաստանը պետք է հետեւի Ռուսաստանի քաղաքականությանը:

2.7. Իրան

Իրանը, ինչպես մյուս պետությունները, սատարել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ գրավյալ տարածքներն Ադրբեջանին վերադարձնելու պահանջը:

Այլապես, սակայն, Ադրբեջանի հետ Հայաստանի հակամարտության մեջ Իրանը համարվել է չեզոք պետություն: Ումանք նույնիսկ հույս են փայփայել, որ Իրանը կարող էր հավասարակշռել Թուրքիայի ազդեցությունը կամ հանդես գալ հայ ժողովրդի շահերի լիակատար պաշտպանությամբ՝ հաճախ մոռանալով, որ Ադրբեջանի հետ հարաբերվելու համար Իրանն իր սեփական պատճառներն ունի:

Իրանը փորձել է նաև ակտիվ դեր խաղալ հակամարտության կարգավորման գործընթացում. մի քաղաքականություն, որը չի խրախուսվել կամ դրականորեն դիտվել ուրիշների կողմից: Մյուս կողմից՝ Իրանը, որպես տարածաշրջանային խոշոր դերակատար, իր հակամարտություններն է ունեցել միջազգային ասպարեզում: Դա բացատրում է հայկական կողմի մտածողության մեջ Իրանի հանդեպ երկակի վերաբերմունքը:

Թեև երբեմն ավելի սահմանափակ, քան մյուս հարեւանների դեպքում, այնուամենայնիվ, Հայաստանի ապագայի մեջ Իրանի դերի հարցում ումանք շարունակում են այն հույսն ունենալ, որ Իրանը կարող է ռազմավարական գործընկեր լինել: Այս խմբի կարծիքով, Հայաստանը պետք է.

- Ա. Իրանին համարի իր ամենակարեւոր գործընկերն աշխարհում:
- Բ. Իրանը դիտարկի որպես իր ռազմավարական խնդիրների լուծման մաս: Ըստ այս խմբի՝ Իրանը, օրինակ, կարող է հավասարակշռել Ռուսաստանի ազդեցությունը եւ աջակցել Հայաստանին Մեդրիի հարցում:
- Գ. Իրանը դիտարկել որպես իր տնտեսական խնդիրների լուծման մաս. օրինակ, իբրև հայկական արտադրանքի շուկա:
- Դ. Աշխատի, որ Իրանը հավասարակշռի Թուրքիայի տնտեսական լծակները եւ Հայաստանի համար ուղիներ ապահովի դեպի Հնդկաստան ու Չինաստան:
- Ե. Իրանին տեսնի որպես Հայաստանի անվտանգության միջավայրի համար հնարավոր կայունացնող գործոն:
- Զ. Վերագնահատի Իրանի հետ իր հարաբերությունները եւ դրանք դնի ավելի իրատեսական հիմքերի վրա: Հայաստանն, օրինակ, կարող է խորացնել իր հարաբերությունները տնտեսության, հաղորդակցությունների, էներգետիկայի եւ նյութատեխնիկական ապահովման ոլորտներում:

Եւ, հետեւաբար, Հայաստանը պետք է վստահ լինի, որ.

- Է. Իրանի հետ իր սահմանը չդառնա բաժանարար գիծ:
- Ը. Թույլ չտա, որ ուրիշներն իրեն օգտագործեն Իրանի դեմ:
- Թ. Արեւմուտքի եւ Իրանի միջեւ առճակատման դեպքում չեզոք մնա:

Մասնակիցներից մի քանիսը ցանկանում են.

Ժ. Աշխատել Իրանի հետ, քանի որ Իրանը կարող է ներքին խնդիրներ հարուցել Ադրբեջանում, որը ինչ-որ մակարդակում կօգնի Հայաստանին:

Մինչդեռ ոմանք նույնիսկ կարծում են, որ Հայաստանը կարող է.

Ի. Միջնորդի դեր խաղալ Իրանի եւ Արեւմուտքի միջեւ:

Մասնակիցների մեկ այլ խումբ ավելի զգուշավոր է: Նրանք պնդում են, որ Հայաստանը պետք է.

- Լ. Հասկանա, որ Իրանը չի կամեցել եւ այժմ էլ չի կամենում սատարել հայկական առավելապաշտությունը, ինչպես եւ Ռուսաստանը չի սատարել, բայց Իրանը կարող է օգնության հասնել Հայաստանին, եթե Հայաստանը վտանգի ենթարկվի:
- Խ. Իրանի հետ բարեկամական հարաբերություններ ունենա, բայց քաղաքական համագործակցության շատ տեղ չկա:
- Օ. Իրանին չհամարի Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ իր փակ սահմանների պատասխան:
- Կ. Հասկանա, որ Իրանն ավելի է մոտեցել Ադրբեջանին:
- Հ. Չակնկալի, որ Իրանը հակակշիռ կդառնա Թուրքիայի ազդեցությանը, քանի որ Իրանն ունի մեծ թվով ազերի/թրքական ծագումով ազգաբնակչություն:
- Ձ. Չապավինի Իրանին, քանի որ այն մեկուսացված պետություն է, եւ արեւմտյան ժողովրդավարական երկրները հեռու են մնում նրանից:

2.8. Վրաստան

Չնայած մյուս դրացի երկրների նման նույնքան մոտ եւ նույնքան կարեւոր հարեւան լինելուն, Վրաստանը շատ ավելի քիչ է հայտնվում Հայաստանի քաղաքական քննարկումներում, քան Ադրբեջանը, Իրանը կամ Թուրքիան:

Առաջին հայացքից՝ Վրաստանի նկատմամբ Հայաստանի քաղաքականության առնչությամբ շատ հարցեր չպետք է լինեն: Այնուամենայնիվ, կասկածները պահպանվում են, եւ այդ երկրներից յուրաքանչյուրը շատ քիչ բան գիտի մյուսի մասին, եւ կարծես առանձնապես հետաքրքրված չէ մյուսով:

Ամփոփելով Վրաստանի վերաբերյալ առկա տեսակետները, ըստ մասնակիցների, Հայաստանը պետք է.

- Ա. Վրաստանի հետ հարաբերությունները դիտի որպես Ադրբեջանի հետ հետագա հարաբերությունների նախատիպ:
- Բ. Վրաստանի հետ ունենա բնականոն, բարիդրացիական հարաբերություններ:

- Գ. Բարելավի հարաբերությունները Վրաստանի հետ՝ մեծացնելով տնտեսական եւ մշակութային կապերը՝
- Դ. Ընդհանուր շահեր փնտրի Վրաստանի հետ:
- Ե. Վրաստանի հանդեպ լինի ավելի աջակցող եւ պակաս կասկածամիտ:
- Զ. Ապագայում նկատի ունենա Վրաստանի եւ Ադրբեջանի հետ ընդհանուր անվտանգության քննարկման ֆորում ստեղծելու հարցը:
- Է. Համոզվի, որ Վրաստանի հետ հարաբերությունները պայմանավորված չեն Վրաստանի հետ Ռուսաստանի հարաբերություններով կամ չեն ենթարկվում դրանց:
- Ը. Վստահ լինի, որ ջավախահայերը հակամարտ հարաբերության մեջ չեն մտնում Վրաստանի կառավարության հետ, ինչը կարող է խնդիրներ ստեղծել հայ-վրացական հարաբերություններում:
- Թ. Մտածի, թե արդյո՞ք Ադրբեջանն ավելի լավ ուղի է դեպի Ռուսաստան, քանի որ Վրաստանը ներկայումս միակ ցամաքային ուղին է:

Եւ, սակայն, կասկածները պահպանվում են, ու մի քանի մասնակիցների համար Վրաստանը կարող է բացասական դեր խաղալ, ուստի Հայաստանը պետք է.

- Ժ. Հիշի, որ 2020 թ. պատերազմի ժամանակ Վրաստանի դիրքորոշումը բարյացակամ չէր:
- Ի. Ջավախահայերին օգտագործի Վրաստանի դեմ, եթե նման կարիք լինի:

2.9. Արեւմուտք (ԱՄՆ եւ Եւրոպա)

ԱՄՆ-ը եւ Եւրոպան, առանձին վերցրած, թե ավելի շատ ընդհանուր՝ *Արեւմուտք* եզրի ներքո, եղել են Հայաստանի պատմության անբաժանելի մասը՝ տարբեր անվանումներով. Հայկական հարց, Հայկական գործ, Հայոց ցեղասպանության ճանաչում: Տարբեր ժամանակներում Արեւմուտքը եղել է կախարդական փրկիչ, ոգեշնչման աղբյուր եւ երեւակայված դաշնակից (եւ երբեմն՝ այդ ամենը միաժամանակ), որը գրեթե երբեք չի տվել այն, ինչ հայ ժողովուրդն ակնկալել է: Ղարաբաղյան հակամարտությունը եւ դրա լուծման համար մղված պատերազմները չեն թուլացրել շատերի այն հույսերը, թե Արեւմուտքը կգործի իբրեւ դաշնակից՝ միաժամանակ հաստատելով ուրիշների կասկածները. եւ սա հարց է առաջ բերում այն մասին, թե հայ ժողովուրդը պատմությունից ինչ-որ բան սովորել է, արդյոք: Ուստի, զարմանալի չպետք է լինի, որ Արեւմուտքի հետ Հայաստանի հարաբերությունների եւ նրա նկատմամբ քաղաքականության տարբերակների մի լայն ներկայական կարելի է տեսնել. շարունակական ապավինումից մինչեւ հիասթափություն ու սահմանափակ օգնություն, եւ նույնիսկ հակառակություն:

Մասնակիցների մի խումբ կարծում է, որ Արեւմուտքը դեռ կարող է դաշնակից լինել, եւ որ Հայաստանը պետք է.

- Ա. Եւրոպայի համարի նախատիպ եւ ձգտի դառնալ նրա մի մասը: Եւրոպայի պետք է լինի պետության եւ հանրության հարաբերությունների առաջնորդող լույսը. Հայաստանը պետք է ավելի շատ ուշադրություն դարձնի պատերազմի ընթացքում վնասված եւրոպական արժեքներին եւ գնահատի Հայաստանում Արեւմուտքի շահերը:
- Բ. Մերձեւա ՆԱՏՕ-ին:
- Գ. Մերձեւա ԱՄՆ-ին եւ ինտեգրվի Եւրոպային կամ խթանի երկկողմ ու բազմակողմ հարաբերությունները Եւրոպայի հետ՝ որպէս Ռուսաստանի ազդեցությանը հակակշիռ:
- Դ. Ինտեգրվի եւրոպական կառույցներին՝ այնպիսի ոլորտներում, ինչպիսին է կրթությունը՝ չնայած Ռուսաստանի հետ սերտ համագործակցությանը: Օգտագործի արեւմտյան չափանիշները՝ կյանքի բոլոր ոլորտներն արդիականացնելու համար:
- Ե. Ձգտի ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի հետ կապերի սերտացմանը՝ օգնելու ժողովրդավարության գոյատեւմանը Հայաստանում:
- Զ. ԱՄՆ-ին դիտի որպէս առանձին, եզակի տերություն, որն ուժեղ ազդեցություն ունի տարածաշրջանում:
- Է. Սպասարկի ԱՄՆ-ին այնքան ժամանակ, քանի դեռ ԱՄՆ-ը հետաքրքրված է տարածաշրջանով:
- Ը. Ռուսաստանին դիտի որպէս թուլացող տերություն, իսկ ԱՄՆ-ին՝ որպէս տարածաշրջանում աճող ուժ:

Մեկ այլ խումբ հաշտվել է, որ սահմանափակումներ կան այն հարցում, թե ինչ կարող է ինդիքել Հայաստանը, եւ թե ինչ կարող է տրամադրել Արեւմուտքը: Հետեւաբար, Հայաստանը պետք է.

- Թ. Հաղթահարի այն ակնկալիքը, որ Եւրոպայի կամ Արեւմուտքը Հայաստանին օգնության կգան, քանի որ «մենք քրիստոնյա ենք», կամ որ «նրանք մեզ սիրում են»:
- Ժ. Արեւմուտքից վերցնի այն, ինչ կարող է, քանի որ Հայաստանին այլ բան չի մնում, բացի Ռուսաստանի ազդեցության գոտում գտնվելը:
- Ի. Արեւմուտքն օգտագործի որպէս ներդրումների եւ տեխնոլոգիական առաջընթացի աղբյուր:
- Լ. Արեւմտյան երկրները դիտի միայն որպէս հեռավոր եւ ոչ հուսալի աջակիցների:
- Խ. Չգերազնահատի Արեւմուտքի դերը եւ, հետեւաբար, փորձի այդ երկրներն օգտագործել Ռուսաստանի ազդեցությանը հակադրվելու համար: Արեւմուտքը կարող է մասնակցել միայն այն չափով, որքանով նրա նպատակները չեն հակասի Ռուսաստանի շահերին, ինչպէս դրանք սահմանված է Ռուսաստանի կողմից:
- Ս. Արեւմուտքը համարի ներկայումս անկարելի գործոն, բացի նրանից, եթե խոսվում է այն Արեւմուտքի մասին, որն առաջնորդվում է Եւրոպայի կողմից:
- Վ. Հասկանա, որ Արեւմուտքը հետաքրքրված չէ Հայաստանով, բայց, դրանով հանդերձ, այդ պետություններից ստանա այն, ինչ կարող է:

Կան նաև այնպիսիք, որոնք դեմ են այդ դիրքորոշումներին եւ պնդում են, որ Հայաստանը պետք է.

- Ն. Գիտակցի, որ Արեւմուտքը հասունացել է նահանջի համար, եւ պատմությունը ցույց է տվել, որ արեւմտյան միջամտություններն աղետից բացի այլ բանի չեն հանգեցրել:
- Ձ. Նույնիսկ չմտածի ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին: Գիտակցի, որ Արեւմուտքը չունի ինչպես գործող ռազմավարական քաղաքականություն, այնպես էլ այս տարածաշրջանի վերաբերյալ կամ անվտանգության երաշխիքներ տրամադրելու հարցում որեւէ վճռականություն, չնայած Հայաստանը երազում է Արեւմուտքի մասին: Չմոռանա, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է:
- Ղ. Չապավինի ԱՄՆ-ին: Նախագահ Բայդենը չի կարող վերադառնալ 1990-ական թվականների ԱՄՆ քաղաքականությանը: ԱՄՆ-ը չի կարող դառնալ Ռուսաստանը հավասարակշռող գործոն:
- Ճ. Նկատի ունենա, որ ԱՄՆ-ը հարց է տալիս. «Հայաստանը մեզ հե՞տ է»: Ռուսաստանի եւ Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները նյարդայնացնում են արեւմտյան երկրներին, եւ Հայաստանը համարժեք փոխհատուցում չի ստանա արեւմտյան որեւէ կողմնորոշման համար, որը կարող է մտքով անցկացնել:
- Ս. Հասկանա, որ ներկա պայմաններում արեւմտամետ կողմնորոշումը եւ ՆԱՏՕ-ամետ քաղաքականությունը կարող են վտանգավոր լինել Հայաստանի համար:

2.10. Հայաստան եւ Ղարաբաղ

Հայաստանի անկախությունից ի վեր Ղարաբաղը եղել է Հայաստանի ներքին եւ արտաքին հարաբերությունների հիմնական որոշիչը՝ անկախ նրանից, թե տրված որեւէ պահի հանրային քննարկումները կենտրոնացել են դրա վրա, թե ոչ: Այն սահմանել է հանրապետության կյանքի շատ ոլորտներում ընտրանքների արդյունքները: Այն եղել է քաղաքական կուսակցությունների փիլիսոփայության եւ մտածողության հիմնական տարբերակիչը: Եւ այն շահարկվել է ինչպես ներքին քաղաքական ուժերի, այնպես էլ օտարերկրյա դերակատարների կողմից՝ Հայաստանի ապագայի նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու կամ վերահսկողությունն ավելացնելու համար:

Կարելի է պնդել, որ 1994 թ.-ից ի վեր Հայաստանում գերիշխող գաղափարախոսությունը եղել է մի ժողովրդինը, որը վերածնվել է պատմության աչքերում, որը մի փոքր արժանապատվություն եւ արդարություն է ձեռք բերել եւ 1991-1994 թթ.-ին հայկական մի փոքրիկ հողակտոր հետ վերցրել՝ 1915 -1923 թթ. օսմանյան կառավարման ներքո գտնվող պատմական իր հայրենիքից վտարվելուց հետո:

Ուստի պատշաճ է, որ հատուկ ուշադրություն է դարձվում հակամարտության հարցին եւ Հայաստանի Հանրապետության ապագայում դրա գրաված տեղին:

Մեր հարցաշարը, մասնակիցների պատասխանները եւ մատչելի այլ նյութեր կարող են ամփոփվել հարցուպատասխանի հետեւյալ հատվածում:

Որքա՞ն լուրջ էր նոյեմբերյան պարտությունը

Կան մասնակիցներ, որոնք կարծում են, թե կրած կորուստները ժամանակավոր են եւ կառավարելի՝ պնդելով, որ.

- Ա. Մենք մերժում ենք պարտությունը, այնտեղ վերջնականություն չկա,
- Բ. Մենք վերապրեցինք Ցեղասպանությունը, եւ սա նույնպես կվերապրենք:

Կամ՝

- Գ. 2020 թ. պատերազմի արդյունքը չպետք է համարենք խոշոր պարտություն. Հայաստանը կարող ավելի լավ լուծման ձգտել. ռազմական կամ այլ:

Սակայն մեծ մասի համար հարցի պատասխանը շատ տարբեր էր.

- Դ. Այս կորուստը գրեթե մահացու հարված էր Ղարաբաղին: Հայաստանը նվազ ինքնիշխան է. նա կորցրել է Ղարաբաղի անվտանգության երաշխավորի իր կարգավիճակը: Սա պարտությունների երկար շարքում վերջինն է, որը ոչ մի այլ բանի չի հանգեցրել, քան գոյատեւման՝ ազգի ապատարածքայնացմամբ, եւ գոյատեւման՝ այնպիսի մեխանիզմների բարձրացված դերով, ինչպիսին եկեղեցին է: Հայաստանն ու հայերը գոյատեւել են, բայց փաստը մնում է փաստ, որ որքան շատ են կորցրել, այնքան ավելի քիչ են ունակ եղել պաշտպանելու այն, ինչ մնացել է:
- Ե. 2020 թ. պարտությունը դարձավ քնաշրջիկի՝ լուսնոտի նմանված հայության արթնացման կոչ⁵, որոնք համարել էին, որ հակամարտությունը լուծված էր կամ լուծվելու էր այնպես, ինչպես իրենք էին ցանկանում, որ բանակցային կարգավորում գտնելու հրատապություն չկար, որ ժամանակ ունեին եղածը համախմբելու եւ ապագային պատրաստվելու համար. մի խոսքով, որ ժամանակը հայկական կողմի օգտին էր գործում կամ, առնվազն, նրա դեմ չէր աշխատում:
- Զ. Այն, ինչ տեղի ունեցավ վերջին պատերազմում, գրեթե վատագույնն էր, քանի որ Ստեփանակերտը եւ Ղարաբաղի մնացած մասը եւս կարող էին դատարկվել հայ բնակչությունից (տե՛ս Մաս I, Բաժին 1.3/3 Բ): Բացի այդ, Հայաստանը կարող էր հայտնվել քաղաքացիական պատերազմի վտանգի տակ՝ նման Կոմունային, որը հաջորդեց ֆրանս-պրուսական պատերազմին: Այդ պատերազմն ավարտվեց Ֆրանսիայի պարտությամբ. պարտություն, որն իր գործերից մեկում էմիլ Զոլան

⁵ Christopher Clark, *The Sleepwalkers: How Europe Walked Towards War in 1914*, (Քրիստոֆեր Կլարկ, Քնաշրջիկները. 1914 թ.-ին Եւրոպան ինչպե՞ս քայլեց դեպի պատերազմ), 2014:

այդքան իրատեսորեն է նկարագրել:⁶ Ներկայումս միայն Ստեփանակերտը եւ նախկին ինքնավար մարզի հյուսիսային հատվածն են շարունակում մնալ հայկական, բայց իրականում՝ ռուսական վերահսկողության ներքո:

- Է. Բացի այդ, 2020 թ. նոյեմբերի 10-ին ստորագրված զինադադարի հայտարարությունը խաթարել է շատերի վստահությունը Հայաստանի քաղաքական ու զինվորական ղեկավարության նկատմամբ: Արդյո՞ք այդ ղեկավարները երբեւէ կկարողանան ապահովել իրենց բնակչության անվտանգությունը: Ադրբեջանի զինված ուժերի ֆիզիկական մոտիկությունը՝ Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանների մի մասում, նոր մտահոգություններ է առաջացնում: Ղարաբաղն ու Հայաստանն այժմ շրջապատված տարածքի են նմանվում: Նրանց անվտանգությունը առկախված է Ռուսաստանի միջամտության ուժերի քմահաճույքով, որոնք կարող են հեռանալ կամ արդեն 2026 թ.-ին ստիպված կլինեն լքել Ղարաբաղը:

Պե՞տք է, արդյո՞ք, Ղարաբաղն ու Հայաստանն ընդունեն պատերազմի արդյունքն ու նոյեմբերի 10-ի հայտարարությունը, եւ այդ հիմքի վրա որոշեն ապագա քաղաքականությունը

Ինչպես կարելի էր կանխատեսել, շատերը կարծում են, որ Ղարաբաղը եւ Հայաստանը.

- Ա. Պետք է մերժեն զինադադարի հայտարարությունը: Պետք է ամեն ինչ արվի Շուշիի, Հաղարթի եւ մյուս վայրերի ազատագրման համար, որոնք Խորհրդային Միության ժամանակ ինքնավար շրջանի մաս էին կազմում եւ այժմ վերահսկվում են Ադրբեջանի կողմից: Միեւնույն ժամանակ, պետք է ապահովվեն Ղարաբաղի մնացած հատվածը վերադարձած հայերի բնակարանային եւ այլ կարիքները:
- Բ. Չեն կարող ընդունել պարտությունը, քանի որ Ղարաբաղն ունի հոգեւոր արժեք եւ իրենից ավելին է ներկայացնում, քան սոսկ մարդիկ են ու պատմական հողը:
- Գ. Միջազգային հանրության համար ձեւակերպեն այն պատճառները, թե ինչու այդ հայտարարությունը չի կարող ընդունվել. օրինակ, (ա) Հայաստանն այն ստորագրել է հարկադրանքի տակ, (բ) Հայաստանին պարտության մատնելու մեջ վճռորոշ էր Թուրքիայի դերը, եւ Թուրքիան ՆԱՏՕ-ին չի տեղեկացրել իր մասնակցության մասին, կամ (գ) Ադրբեջանը պատերազմում հաղթելու համար օգտագործել է «ջիհադականներին» եւ այլն:

Հակառակ տեսակետն ունեցողները պնդում են, որ կա՛մ.

- Դ. Հայաստանը պետք է փորձի դիվանագիտական միջոցներով վերանայել նոր ստատուս քվոն: Չկա ողջամիտ հավանականություն, որ տեսանելի ապագայում կորցրած

⁶ Emile Zola, *La débâcle*, (Էմիլ Զոլա, *Մեծ պարտությունը*), 1892:

տարածքները կարող են վերագրավվել: Հայաստանը պետք է ձգտի ստատուս քվոյի վերանայման՝ այլ միջոցներով,

Կա՛մ որ.

Ե. Հայաստանը ստորագրել է 2020 թ. նոյեմբերի 10-ի հայտարարությունը, որը ենթադրում է Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչում՝ ներառյալ ամբողջ Ղարաբաղը: Հայաստանը պետք է աշխատի ապահովել տարածքայնորեն սահմանված հայկական Ղարաբաղի գոյատևումը Ադրբեջանի կազմում:

Ո՞րն է առաջիկայում կարելորագույն խնդիրը

Ոմանց համար առաջիկայում կարելորագույն խնդիրը պարզապես.

Ա. Վերազինվելը եւ ապա կորուստները հետ բերելն է,
Մինչդեռ ուրիշների համար՝

Բ. Անկախ այլ խնդիրներից, Ղարաբաղում այժմ հիմնական հարցը հայերի ներկայության չափն ու անվտանգությունը մեծացնելն է:

Որո՞նք են Ադրբեջանի երկարաժամկետ մտադրությունները

Համաձայն տարածված եւ ընդունված տեսակետների.

Ա. Հարցն ունի հեշտ պատասխան. Ղարաբաղը մաքրել իր հայ բնակչությունից:

Սակայն ուրիշները պատրաստ չեն ընդունելու այդ պատասխանը եւ կնախընտրեն սպասել մինչեւ այնպիսի ենթահարցերի համարժեք պատասխաններ տրվեն, ինչպիսիք են՝

Բ. Ինչո՞ւ ադրբեջանական ուժերը կանգ առան Շուշիի մոտ եւ չշարունակեցին իրենց երթն ու չգրավեցին ամբողջ Ղարաբաղը, երբ դա կարող էին անել առանց մեծ դժվարության: Ռուսական միջամտության պատճառով արդյոք: Այդ դեպքում ինչո՞ւ Ռուսաստանն ավելի վաղ չմիջամտեց: Արդյո՞ք դա կախված էր նրանից, որ Հայաստանը հրաժարվեց ընդունել ավելի վաղ առաջարկված զինադադարի պայմանները, որոնք, ի վերջո, ստիպված եղավ ընդունելու հարկադրանքի ներքո: Ռուսաստանի միջամտությունը կարո՞ղ է բացատրել այդ որոշումը: Ռուսաստանն ի՞նչ լծակներ ունեւ, որ Ադրբեջանին ստիպեր չշարունակել իր հաղթական երթը: Այդ լծակներն ապագայում դեռ գործունակ կլինեն: Ադրբեջանն ունեցե՞լ է, արդյոք, իր պատճառները՝ ամբողջ ԼՂԻՄ-ը չգրավելու համար: Ռուսաստանի, Թուրքիայի եւ

Աղբյուրների միջև համաձայնություն կա՞ր այն հարցով, թե որքանով է Աղբյուրների թույլատրվելու առաջ շարժվել: Սրանք կարևոր հարցեր են, որոնք անհրաժեշտ են Աղբյուրների նպատակները պատշաճ գնահատելու համար:

Արդյո՞ք անկախությունը կամ նվազ հստակ «ինքնորոշումը» պետք է լինեն Հայաստանի կամ Ղարաբաղի դիվանագիտության նպատակը

Այս հարցի շուրջ մասնակիցների տեսակետները տատանվում են շատ դրականից մինչև բացասականը.

- Ա. Օրակարգում առաջնային պահել ճանաչման հարցը՝ կոչ անելով ճանաչել Ղարաբաղի ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի կիրառումը:
- Բ. Անկախությունը պետք է դիտարկել նոր ռազմավարության համատեքստում՝ հաշվի առնելով բոլոր թեր եւ դեմ կողմերը: Հայաստանի համար դժվար կլինի պաշտպանել Ղարաբաղի անկախությունը՝ առանց նախապես ճանաչելու այն: Դա չպետք է ապրիորի նպատակ լինի: Միեւնույն ժամանակ, պատերազմի ընթացքում ազգի (Հայաստան-Ղարաբաղ-Սփյուռք) միասնությունը եզակի էր ու ոգեշնչող: Հայ ժողովուրդը վերջապես պետք է սովորեր, որ պետք է ուժեղ ու ապահով լինել՝ կարողանալու համար պահպանել սեփական իրավունքները եւ օգտվել դրանցից: Իրավունքները ինքնակիրառվող չեն եւ ոչ էլ ընծայվում են ուրիշների կողմից:
- Գ. Անկախությունը փոխզիջման տարբերակ էր: Դա մարտավարական քայլ էր, որը կհանգեցներ Հայաստանի հետ վերամիավորման՝ միաժամանակ ավելի քիչ խնդիրներ ստեղծելով Հայաստանի համար: Հաշվի առնելով տեղում այսօր տիրող իրողությունները՝ դա կախված կլինի նրանից, թե ինչպես է ձեւակերպվելու նոր ռազմավարությունը:
- Դ. Խարխլվել է պետականության գաղափարախոսությունը կամ դրա մնացորդը պահպանելու կարևորության ըմբռնումը: Ղարաբաղի բնակչության մեջ, առկա տարբերակների համատեքստում (Ռուսաստանի պաշտպանության ներքո՝ առանց դրա ձեւի հստակ ըմբռնման) կարծես թուլանում է անկախության գաղափարը՝ հայկական Ղարաբաղի գուտ ֆիզիկական պահպանման անհրաժեշտության առջև:
- Ե. Ղարաբաղը, Հայաստանը եւ Սփյուռքը երկու տասնամյակից ավելի սատարել են Ղարաբաղի անկախության ճանաչման գաղափարը: Գործնականում ոչ մի պետություն դա չի արել եւ, հավանաբար, չի անի՝ Աղբյուրներում իրենց ունեցած շահերի եւ Ղարաբաղի նկատմամբ իրական հետաքրքրության բացակայության պատճառով: Դրանից բացի, շատ պետություններ հենց իրենք ունեն անջատողական շարժումներ:

Ո՞վ է որոշելու, թե ինչ է կատարվելու Ղարաբաղի հետ

Նախ կարելու է փաստ: Ղարաբաղի ղեկավարության դերն իր ապագան որոշելու հարցում սկսեց նվազել 1998 թ.-ին: Ի տարբերություն հրադադարի մասին համաձայնագրի, որով ավարտվեց առաջին մեծ պատերազմը, Ղարաբաղի ղեկավարությունը չէր մասնակցում այն բանակցություններին, որոնք հանգեցրին 2020 թ. նոյեմբերի 10-ի համաձայնագրին, եւ Ղարաբաղը այդ հայտարարության ստորագրող կողմ չէ:

Այդուհանդերձ, Ղարաբաղի ղեկավարությունը եւ այլք հավատում են, որ.

Ա. Ղարաբաղը դեռեւս աշխարհաքաղաքական դերակատար է: Այն, ինչ Ղարաբաղն է ասում, ավելի կարելու է կամ պետք է ավելի կարելու լինի, քան այն, ինչ ուրիշներն են ասում: Նպատակը աշխարհաքաղաքական խաղացող մնալն է, հակամարտության կողմի՝ իր նախկին կարգավիճակին վերադառնալը եւ խաղաղ միջոցներով իր անկախությանը ձգտելը: Ղարաբաղը, Հայաստանն ու Սփյուռքը երեք ուժ են. յուրաքանչյուրը պետք է այդ նպատակները հետապնդի այն միջոցներով, որոնցով կարող է եւ այնտեղ, որտեղ հնարավոր է. բոլորը նպատակ ունենալով հասնելու զարգացման, փրկության, ժողովրդագրական աճի եւ քաղաքակիրթ գոյության:

Ուրիշները կարծում են, որ.

Բ. ԵԱՀԿ Մինսկի խումբը պետք է կրկին ակտիվանա՝ հուսալով, որ արեւմտյան երկրները կարող են հավասարակշռող ուժ դառնալ Ադրբեյջանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի՝ այն երեք երկրների նկատմամբ, որոնք վարել են ե՛ւ պատերազմը, ե՛ւ դրա հրադադարը:

Շատերը լուրջ կասկածներ ունեն, որ.

Գ. Ղարաբաղը աշխարհաքաղաքական խաղի գործոն է, բայց ո՛չ խաղացող: Ավելի շուտ՝ Ղարաբաղը գործիք է կամ միջոց: Նրա անմիջական մասնակցությունը հետագա որեւէ բանակցության, խիստ կասկածելի է: Նրա ձայնը կարող է լսելի լինել անուղղակիորեն՝ Հայաստանի եւ (կամ) Ռուսաստանի միջոցով:

Դ. Թվում է, թե Ադրբեյջանը, Ռուսաստանը եւ նույնիսկ Թուրքիան ավելի շատ ասելիք կունենան Ղարաբաղի ապագայի հարցում, քան Հայաստանը: Սա հետեւանքներ ունի մեկ այլ հարցի համար. Ղարաբաղյան հիմնախնդիրը պե՞տք է համարվի կամ կարո՞ղ է համարվել Հայաստանի արտաքին եւ անվտանգության օրակարգի առաջնային գերակա խնդիրը, երբ նկատի առնվի, որ Հայաստանն այնքան քիչ ազդեցություն ունի այդ հարցի պատասխանի վրա: Այլ կերպ ասած, մնացած բոլոր նկատառումներն ու ռեսուրսներն արդյո՞ք պետք է ուղղված լինեն դրան: Թե՞ այն պետք է լինի նրա առաջնահերթությունների սուկ մի մասնիկը:

Անորոշությունը, որը գերիշխում է ապագայի ներկայիս կանխատեսման մեջ, կհանգեցնի՞, արդյոք, նրան, որ Ղարաբաղի բնակիչներից ոմանք կամ շատերն ընտրեն Ռուսաստանի քաղաքացիություն եւ, ի վերջո, արտագաղթեն Ռուսաստան

Սա այն թեման չէ, որը քննարկվում է պատրաստակամությամբ կամ հեշտությամբ, բայց շատերը կարծում են, որ դա իրական հնարավորություն է: Ղարաբաղի բնակիչներին քաղաքացիություն շնորհելու հարցը քննարկելիս Ռուսաստանը կարծես սահմանափակումներ է դնում նրանց Ռուսաստան կատարելիք այցերի վրա եւ չի առաջարկում նրանց անմիջապես բնակություն հաստատել Ռուսաստանում: Հավանաբար, նպատակ ունենալով օրինականացնել իր երկարատեւ ներկայությունն Ադրբեջանում՝ պաշտպանելու համար նրա քաղաքացիներին. ղարաբաղցիներին Ռուսաստանի քաղաքացիություն շնորհելը կարող է, ի վերջո, չափազանց գայթակղիչ լինել այն ընդունողների համար:

Ղարաբաղը պե՞տք է լինի Հայաստանի արտաքին եւ անվտանգության քաղաքականության առաջնահերթ կարեւորություն ունեցող խնդիրը

Այստեղ եւս կարծիքները տարբեր են եւ ընդգրկում են լայն սպեկտր, ինչը կարելի է տեսնել մոտեցումների՝ ստորեւ ներկայացվող շրջանակում.

- Ա. Քանի որ Ղարաբաղի ապագա կարգավիճակը դեռեւս հարցականի տակ է, Ղարաբաղյան հակամարտությունն է որոշում Հայաստանի գրեթե ամբողջ արտաքին քաղաքականությունը: Հակամարտությունն իրեն Հայաստանին է պարտադրում՝ որպես թիվ մեկ առաջնահերթություն:
- Բ. Հայաստանը պետք է Ղարաբաղը համարի իր արտաքին քաղաքականության առաջին խնդիրը. այն պետք է ներթափանցի օտարերկրյա վերլուծական կենտրոններ եւ հաստատություններ, իր անկախությունը պաշտպանելու համար օգտագործի Կոստվոյի օրինակը եւ կենտրոնանա դրա վերակառուցման, վերաբնակեցման ու վերազինման վրա:
- Գ. Իրականում Ղարաբաղը երբեք չի եղել Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունը: Այն, իհարկե, հայտարարվել է որպես այդպիսին, բայց ժամանակի հետ ուշադրությունը որոշ չափով շեղվել է: Նոյեմբերի 10-ի հրադարարի հայտարարությունը չի լուծում Ղարաբաղի կարգավիճակի եւ ապագա կառավարման հարցը՝ այդպիսով այն բաց թողնելով ապագայում լուծելու համար: Թե՛ Ռուսաստանը, թե՛ Ֆրանսիան ընդգծել են Ղարաբաղի ապագա կարգավիճակի հարցի կարգավորմանն աջակցելու իրենց պատրաստակամությունը: Հայաստանի կառավարությունը պետք է շարունակի ամբողջ կարողությամբ աջակցել

Ղարաբաղին՝ ապահովելով, որ այն մնա հայկական: Սակայն Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչման հեռանկարները խիստ աղոտ են:

- Դ. Ղարաբաղը չպետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը, բայց պետք է մնա օրակարգի վերելում՝ նպատակաուղղված հակամարտության խաղաղ եւ պատվաբեր կարգավորմանը: Տեղի հայ բնակչությանը պետք է դեր հատկացվի՝ տարածքի կարգավիճակի եւ տնտեսական բարիքների արդարացի բաշխման հետագա բանակցություններում: Դա Հայաստանին հնարավորություն կտար մրցունակ տնտեսությամբ առավելագույնի հասցնելու սեփական ներուժը:
- Ե. Հայաստանի եւ Ղարաբաղի ռազմավարություններում կարծես թե աճող տարաձայնություններ կան: Մինչ Հայաստանը նկատի է ունենում Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների հարցը՝ հաշվի առնելով իր իսկ անվտանգության կարիքն ու ավելի մեծ ինքնիշխանության որոնումը, Ղարաբաղն իր ապագան կապում է Ռուսաստանի հետ, եւ ռուսերենը Ղարաբաղում դարձրել է երկրորդ պաշտոնական լեզու:
- Զ. Ղարաբաղը Հայաստանի առաջնահերթություն դարձնելը ռիսկային առաջարկ է, որովհետեւ Ղարաբաղին առնչվող հարցերը, որոնց վրա Հայաստանը քիչ վերահսկողություն կամ բախտորոշ դեր ունի, կարող են Հայաստանի անվտանգության հետ կապված ապագա բանակցությունների հաջողությունը կամ ձախողությունը դրանով պայմանավորել:

Կարո՞ղ է Հայաստանը հանդես գալ որպես Ղարաբաղի անվտանգության երաշխավոր

Այս հարցում իշխում է երկու պարզ, սակայն իրարամերժ տեսակետ.

- Ա. Հայաստանը Ղարաբաղի անվտանգության երաշխավորն է եւ (կամ) դեռեւս պետք է լինի:
- Բ. Հայաստանն այլեւս չունի Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը երաշխավորելու կարողություն՝ բազմաթիվ պատճառներով. առաջին հերթին՝ Ղարաբաղից հայկական ուժերի դուրսբերման, ինչպես նաեւ վերջին պատերազմի ընթացքում Հայաստանի զինված ուժերի կրած հսկայական կորուստների պատճառով:

Միջազգային կազմակերպությունները դերակատարություն ունե՞ն Ղարաբաղի կարճաժամկետ եւ երկարաժամկետ ապագայում

Ընդհանուր առմամբ, մասնակիցները եւ ուրիշներ Ղարաբաղի կարճաժամկետ եւ երկարաժամկետ ապագայում տարածաշրջանային կամ միջազգային

կազմակերպություններին մեծ դեր չեն վերագրում, բայց ընդունում են, որ կան հատուկ ոլորտներ, որտեղ դրանք կարող են օգտակար լինել: Այսպես, նրանք հույս են հայտնում, որ.

Ա. ԵԱՀԿ Մինսկի խումբը կարող է կրկին ակտիվանալ որպես հակամարտության կարգավորման հարթակ:

Մասնակիցների մեծ մասը մյուս հաստատություններին վերագրում է երկրորդական կամ տարտամ դեր.

- Բ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարող է օգնել Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում հայկական կրոնական վայրերի ու պատմական օբյեկտների պահպանության գործում:
- Գ. Բազմակողմ կազմակերպությունները կարող են ֆինանսական օժանդակությամբ նպաստել տարածաշրջանի տնտեսական վերաինտեգրմանը՝ վերականգնելու համար կապերը եւ վնասված ենթակառուցվածքները:
- Դ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեն եւ ԵԱՀԿ-ն կարող են նպաստել կողմերի միջեւ երկխոսությանն ու քայլ առ քայլ հաշտեցմանը:
- Ե. Շատերը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը համարում են անօգուտ: Փոքր, չճանաչված մի պետության համար, ըստ էության, ոչ մի հնարավորություն չկա, որ ՄԱԿ-ը որեւէ շոշափելի շահի սպասարկի:
- Զ. ԵԱՀԿ Մինսկի խումբն ապացուցել է, որ ի վիճակի չէ բանակցային խաղաղություն հաստատելու, եւ այժմ գործնականում դուրս է մղվել Ադրբեջանի ու Ռուսաստանի կողմից: Այն կարող է օգտակար լինել, սակայն երկրորդական հարցերի համար:

Է. Ո՞րն է Ղարաբաղի ղեկավարության դիրքորոշումը

Ղարաբաղի ղեկավարները հստակ դիրքորոշում են որդեգրել.

- Ա. Նրանք չեն ընդունի որեւէ կարգավիճակ, որը նրանց որեւէ ձեռով դնի Ադրբեջանի ինքնիշխանության տակ: Ոչ մի հայ չի ապրի Ադրբեջանի տիրապետության ներքո, պնդում են նրանք, որովհետեւ Ադրբեջանը ռասիստական ու հակահայ պետություն է:
- Բ. Ղարաբաղն այժմ ապավինում է Ռուսաստանին՝ որպես իր անվտանգության երաշխավորի:
- Գ. Ղարաբաղը կրնա ընդունի որեւէ լուծում, որն ապահովի Ռուսաստանի շարունակական պաշտպանությունը:

Այնպես է թվում, որ Ղարաբաղի իշխանությունները չեն ունեցել եւ մտադիր չեն ունենալու երկրորդ, այլընտրանքային մի լուծման ծրագիր՝ այն պարագայի համար, երբ ռուսական խաղաղապահ բանակը դուրս գա այդ տարածքից:

2.11. Մփյուռք

Հայկական սփյուռքը, որը համարվում է հայ ժողովրդի երեք բաղադրիչ մասերից մեկը, իրականում իրենից շատ սփյուռքներ է ներկայացնում՝ իր աշխարհագրության, ենթամշակույթների, հետաքրքրության մակարդակների եւ Հայաստանի ու Ղարաբաղի առնչությամբ քաղաքական վերաբերմունքի ու հավակնությունների առումներով: Հայկական քաղաքականության եւ ռազմավարության մեջ, սակայն, նրան սովորաբար վերաբերվել են որպես միաձույլ միավորի: Նրան նաեւ վերագրվել են բազմազան դերեր՝ կախարդական փրկչից մինչեւ շահախնդիր մեջընկնողի (interloper), արեւմտյան մեթոդներն ու մտքի հզորությունը Հայաստան բերելու միջնորդ մեխանիզմից մինչեւ «կթան կովի»: 1988 թ. երկրաշարժից ի վեր Մփյուռքն արժեքավոր օգնություն է ցուցաբերել կյանքի բազմաթիվ ոլորտներում եւ խոշոր ներդրումներ է կատարել վերջին պատերազմի ընթացքում, հիմնականում՝ ֆինանսական օգնության տեսքով: Եւ սակայն նրա լոբբիստական ջանքերը չեն կարողացել պատերազմից առաջ որեւէ երկրի համոզել՝ ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, կամ պատերազմի ընթացքում՝ դադարեցնելու թուրք-ադրբեջանական հարձակումը եւ հայկական կողմին որեւէ շոշափելի օգնություն ցուցաբերելու:

Մասնակիցները Մփյուռքի հետագա դերը ներկայացրել են կարծիքների լայն շրջանակով՝ ոմանք մեծ հույսեր կապելով դրա հետ, ոմանք էլ կասկած հայտնելով մեծ փոփոխություն մտցնելու նրա ունակության վերաբերյալ, առնվազն Ղարաբաղյան խնդրի կապակցությամբ:

Այսպիսով, որոշ մասնակիցներ պնդում են, որ Մփյուռքը.

- Ա. Պետք է ժողովի իր ողջ եռանդը, ամեն ջանք գործադրի՝ առավելագույնի հասցնելու համար իր ռեսուրսների գործածությունը, ինչպիսիք են՝ նոու-հաուն, տարբեր ոլորտների փորձը, ֆինանսները եւ մտավոր ներդրումը՝ օգնելու համար, որ Հայաստանն ու Ղարաբաղը ուշքի գան իրենց կրած կորստից:
- Բ. Պետք է կենտրոնանա Հայաստանի եւ Ղարաբաղի համար լոբբինգ անելու ուղղությամբ, այդ թվում՝ ձգտի հասնելու Ադրբեջանի եւ նրա առաջնորդի դեմ պատժամիջոցների, լոբբինգ անի Ադրբեջանին եւ Թուրքիային զենք վաճառելու դեմ եւ շեշտադրում կատարի հայկական մշակույթի եւրոպական արմատների վրա:

Սակայն ուրիշներն զգուշացնում են, որ Մփյուռքը.

- Գ. Չպետք է ակնկալի, որ Փրկիչ է լինելու: Ամեն անգամ, երբ հայերը ձախողում են ունեցել կամ նոր կառավարություն են կազմել, անցել են այս գործընթացով: Մփյուռքից ավելին են ակնկալել, քան նա կարող է տալ:
- Դ. Ինքնաքննադատության չի դիմել՝ հասկանալու համար, թե ինչու իր ներուժին համապատասխան ներդրում չի կատարել: Առանձին անհատների կողմից եղել են վերլուծություններ, եղել են նաեւ ողբասացություններ: Սակայն Մփյուռքը

կենտրոնացված բանավեճի համար չի կազմավորված եւ չի ստեղծել մի ատյան, որտեղ հնարավոր լիներ դա անել: Սփյուռքի կազմակերպություններն ու հաստատությունները նպատակաուղղված կերպով բացառում են քննադատության ու հաշվետվողականության մեխանիզմները: Նրանք գործում են իրենց իսկ ինստիտուցիոնալ շահերից ելնելով, այլ ոչ թե սահմանելով ու ենթարկվելով գերակա ազգային ու պետական շահերի:

- Ե. Սփյուռքի կազմակերպություններն աջակցել են Հայաստանում ազգայնական եւ առավելապաշտական պատումին ու քաղաքական ծրագրին: Այդպիսով նրանք խոտորել են քաղաքական բանավեճը եւ դժվարացրել հակամարտության փոխզիջումային լուծումը:

2.12. Ցեղասպանության ճանաչման հարցը

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը երկար ժամանակ Հայաստանի պետության ու ժողովրդի օրակարգում է: Պետության դեպքում այդ արշավին նպաստել է 1990 թ. Անկախության հռչակագրի հողվածներից մեկը: Սփյուռքի համար այդ հարցը 1970-ական թվականներից ի վեր եղել է քաղաքական եւ այլ կազմակերպությունների օրակարգի առաջին կետը:

Այդուամենայնիվ, Ցեղասպանության ճանաչումը կամ չճանաչումը միեւնույն նշանակությունը չի ունեցել շահագրգիռ բոլոր կողմերի համար: Ոմանց համար դա ունեցել է խորհրդանշական արժեք՝ որպես ազգի պատմությունը վավերացնելու մի քայլ, ծառայել որպես անմարդկային արարքի արձանագրություն՝ մարդկության տարեգրության մեջ:

Ուրիշների համար այն քաղաքական նշանակություն է ձեռք բերել երկու ճանապարհով.

- Ա. Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչումը կդառնա իրավական եւ քաղաքական այն հիմքը, որի հիման վրա պետք է փոխհատուցման պահանջներ ներկայացվեն այդ երկրին, ներառյալ տարածքային պահանջները:
- Բ. Թուրքիայի կողմից ճանաչման մերժումը բնութագրվել է որպես հավաստի նշան այն բանի, որ Թուրքիան ցանկանում է եւ իրականում մտադիր է նոր ցեղասպանություն իրագործել հայ ժողովրդի դեմ, այս անգամ՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության ժողովրդի՝ այդպիսով հարցը տեղափոխելով հանրապետության անվտանգության ոլորտ:

Հայաստանի իրարահաջորդ կառավարությունները ձգտել են Թուրքիայի հետ հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորման՝ պնդելով, որ նման կարգավորումը կդառնա Թուրքիայի ներկայացրած որեւէ սպառնալիքի նվազեցման ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Սփյուռքը եւ Հայաստանում գտնվող որոշ քաղաքական խմբեր շարունակել են պահանջել, որ կարգավորումը կապվի Թուրքիայի

կողմից Ցեղասպանության ճանաչման հետ, եւ անկախությունից ի վեր արել են ամեն բան, ինչ կարող էին՝ ապահովելու համար Հայաստանի կառավարությունների քաղաքականության ձախողումը:

Որքան էլ Թուրքիայի իրար հաջորդող կառավարությունները հաստատակամ էին Ցեղասպանությունը ժխտելու գործում, Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման խոչընդոտը նրանց համար Ղարաբաղյան հակամարտության չլուծվելն էր: Վերջին պատերազմի ավարտից եւ Ղարաբաղից Հայաստանի ուժերի դուրսբերումից ի վեր՝ Թուրքիան հայտարարել է, որ պատրաստ է սկսելու հարաբերությունների կարգավորումը եւ սահմանի բացումը: Սակայն Թուրքիայի գործուն եւ նշանակալի մասնակցությունն այդ պատերազմին Հայաստանի համար դժվարացրել է Թուրքիայի առաջարկի ընդունումը՝ առնվազն շատ մոտ ապագայում: Հետեւաբար, Ցեղասպանության ճանաչման հարցը շարունակում է մնալ Հայաստանի ներքին քաղաքականության մասը եւ կարելու՝ Սփյուռքի հետ նրա հարաբերությունների համար. մինչդեռ դրա համար տարվող միջազգային քարոզարշավը ենթարկվում է մանրագնին քննության: Որպես այդպիսին, այն առաջացրել է մասնակիցների իրարամերժ պատասխաններ:

Մի խմբի կարծիքով՝ Հայաստանը պետք է.

- Ա. Շարունակի միջազգային քարոզչությունը Ցեղասպանության ճանաչման համար,
- Բ. Խրախուսի լուրջ ակադեմիական աշխատանքը, ավելի շատ գիտնականների ու մտավորականների ներգրավի Թուրքիայից եւ մեծացնի ճնշումը Թուրքիայի վրա,
- Գ. Ավելի շատ ուսանողներ ուղարկի արտերկիր՝ Ցեղասպանության հետագա ուսումնասիրությունն ու հետազոտությունը բարձրագույն կրթության մակարդակով իրականացնելու համար:

Մինչդեռ այլ մասնակիցներ զգուշացնում են.

- Դ. Ցեղասպանության ճանաչումը չպետք է շփոթել Հայաստանի զարգացմանն ու հաջողությանն ուղղված ընդհանուր աջակցության հետ: Որեւէ երկրի կամ քաղաքական գործչի կողմից Ցեղասպանության ճանաչումը չի նշանակում այլ հարցերում աջակցություն Հայաստանի դիրքորոշմանը:
- Ե. Ցեղասպանության ճանաչման արշավը կարող է խոչընդոտ դառնալ, որ Հայաստանն իր շահերը հետապնդի բոլոր մյուս նկատառումներից վեր. շահեր, որոնց մեջ է մտնում Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը:

Բաժին 3. Արտաքին եւ անվտանգության քաղաքականությունների գործոնների գնահատում

3.1. Որո՞նք են Հայաստանի արտաքին եւ անվտանգության ակտիվներն ու խոչընդոտները

Ակտիվներ

Հայաստանի արտաքին եւ անվտանգության քաղաքականությունների մշակման ու իրականացման մասին մտածելու հաջորդ քայլը նրա ունեցած ակտիվների, առավելությունների ցուցակագրումն է:

Այն առավելությունները, որոնք, ըստ մասնակիցների, ենթադրվում է, որ Հայաստանն ունի, հետեւյալն են.

- Ա. Խաղաղասեր երկրի կերպար (image), որը ձգտում է համագործակցության:
- Բ. Երկար պատմություն ու մշակույթ, ինչպես նաեւ համընդհանուր արժեքների ընդունում:
- Գ. Միջազգային պայմանագրերով եւ կանոնադրություններով պաշտպանված պետություն:
- Դ. Պետություն՝ ժողովրդավարական կառավարմամբ, որը հիմնված է Սահմանադրության վրա:
- Ե. Ազգային միատարրություն:
- Զ. Զօգազորված փորձ եւ մարդկային ռեսուրսներ. օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ արհեստական բանականության ոլորտներում:
- Է. Ռազմավարական աշխարհաքաղաքական դիրք: Հայաստանը կարելու է տարածաշրջանային անվտանգության համար եւ ունի աշխարհառազմավարական նշանակություն՝ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Իրանի համար: Այն գտնվում է Արեւելք-Արեւմուտք եւ Հյուսիս-Հարավ առեւտրային ու տրանսպորտային ուղիների խաչմերուկում:
- Ը. Հարեւան երկրների եւ Ռուսաստանի շուկաներ արտահանելու հսկայական ներուժ:
- Թ. Մերձավոր Արեւելքում բնակվող՝ հալածված, ոչ հայ փոքրամասնությունների համակրանքը, որոնք կարող են վերաբնակվել այնտեղ:
- Ժ. Սփյուռք, որի համայնքները լոբբինգ են իրականացնում այլ երկրներում՝ ի աջակցություն Հայաստանի եւ Ղարաբաղի: Սփյուռքն ունի նաեւ մեծ տնտեսական ներուժ (ներդրումներ, արտագաղթածների դրամական փոխանցումներ եւ

մարդասիրական օգնություն) ու մարդկային ռեսուրսներ, այդ թվում՝ մտավոր եւ գիտական ոլորտների մասնագետների ցանց:

Այդուհանդերձ, շատերը նշում են, որ այդ բոլորը հարցական են.

- Ի. Այդ ռեսուրսներն ու ակտիվները գոյություն են ունեցել պատերազմից առաջ, բայց Հայաստանը չեն փրկել սեփական սխալներից:
- Լ. Հայությունը չի գտել ներուժի իրացման ուղիներ ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:
- Խ. Դրամական փոխանցումները ցույց են տալիս արտագաղթի իրողությունը: Փոխանցումների քանակը ցույց է տալիս նրանց թիվը, ովքեր հեռացել են երկրից՝ ստեղծելով ժողովրդագրական ճգնաժամ:
- Օ. Հայաստանի աշխարհագրական դիրքը եւս կարող է խնդիր լինել. հնարավոր է, որ տարածաշրջանում շահեր ունեցող ավելի մեծ տերություններն իշխեն Հայաստանում եւ նրա դիրքը դարձնեն ոչ թե անվտանգության, այլ վտանգի աղբյուր: Բացի այդ, Վրաստանը եւ Ադրբեջանը եւս հավակնում են նույն դերին եւ ավելի շատ հնարավորություններ են ունեցել խաղալու այդ դերը:

Ի՞նչ այլ ռեսուրսներ կամ գործընկերներ կարող էր ապահովել Հայաստանը

2020 թ. սեպտեմբերի պատերազմը առավել քան երբեւէ վեր հանեց տարածաշրջանում եւ միջազգային հանրության մեջ Հայաստանի դիրքի թուլությունը: Փորձագետներն ու քաղաքական գործիչները մի շարք առաջարկություններ են ներկայացրել, թե ինչպես կարելի է բարելավել այդ դիրքը՝ ձեռք բերելով հնարավոր նոր գործընկերներ ու միջոցներ:

Ըստ այդմ, Հայաստանը կարող է.

- Ա. Ձգտել ավելի լավ եւ ավելի ռազմավարական ու տնտեսական հարաբերությունների. այլընտրանքաբար կամ հավաքականորեն՝ Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Պակիստանի, Իսրայելի, Եթովպիայի, արաբական երկրների, աֆրիկյան երկրների, ֆրանսախոս երկրների եւ (կամ) Ուկրաինայի հետ (առանց Ռուսաստանին հակադրվելու):
- Բ. Ձգտել գործընկերության քրդական ուժերի հետ:
- Գ. Աշխատել ասորական եւ արամեական սփյուռքյան համայնքների հետ՝ հյուրընկալ պետություններում եւ միջազգային առյաններում հայանպաստ բանաձեւերին աջակցելու համար:
- Դ. Ձգտել ՆԱՏՕ-ի հետ ավելի սերտ համագործակցության:

Սակայն մի այլ խումբ նշում է.

- Ե. Հայաստանը չի կարող հույսը դնել վերոհիշյալ երկրներից իրական օգնություն ստանալու վրա, քանի որ նրանք բոլորն ունեն իրենց սեփական շահերն ու խնդիրները, եւ իրականում շատ քիչ են հետաքրքրված, թե ինչ է կատարվում Ղարաբաղի կամ նույնիսկ Հայաստանի հետ: Շատ երկրներ կարող էին ավելի շատ տնտեսական կամ մարդասիրական օգնություն ցուցաբերել, բայց, ի վերջո, դրանք մեծ տարբերություն չեն մտցնի Հայաստանի անվտանգության շահերի կենսական ոլորտներում:
- Զ. ՆԱՏՕ-ն շահագրգռված չէ Ղարաբաղի կամ Հայաստանի համար պատասխանատվություն ստանձնելով: Բացի այդ, ՆԱՏՕ-ն թույլ է եւ իր անօգտակարությունն ապացուցել է Վրաստանի հարցում. Վրաստանը 1990-ական թվականների սկզբից հավակնում էր ՆԱՏՕ-ին անդամակցությանը եւ ոչ մի աջակցություն չստացավ Ռուսաստանի հետ իր պատերազմի ժամանակ, որի արդյունքում կորցրեց Աբխազիան ու Հարավային Օսեթիան:

Որո՞նք են Հայաստանի արտաքին քաղաքականությունը մշակելու եւ իրականացնելու խոչընդոտները

Մինչ Հայաստանը փորձում է վերականգնվել 2020 թ. պատերազմի պարտությունից, ըստ մասնագետների՝ արտաքին գործերի հարցում ակնհայտ են Հայաստանի դիրքի բարելավման դեմ առկա բազմաթիվ խոչընդոտներ.

- Ա. Չկառուցակարգված (non-institutionalized) քաղաքականության ձեւավորում:
- Բ. Պարտվածի հոգեբանություն:
- Գ. Նախորդ կառավարության՝ ճիշտ որոշումներ կայացնելու թույլ կարողություն, քանի որ մեծ պատասխանատվություն է կրում պարտության համար:
- Դ. Սահմանափակ ներդրում քաղաքականության մշակման մեջ:
- Ե. Քաղաքականության սահմանափակ ընտրանքներ:
- Զ. Անկարող/անատակ (inadequate) դիվանագետներ:
- Է. Քաղաքականության անհնարին նպատակների հետապնդում:
- Ը. Ռուսաստանից գերկախվածություն:
- Թ. Ժողովրդագրական՝ գրեթե ճակատագրական կորուստներ մինչեւ պատերազմը (արտագաղթ) եւ պատերազմի ընթացքում (զինվորականություն): Արտագաղթի հետեւանքով կորուստներն, ըստ ամենայնի, կշարունակվեն, երբ COVID 19-ի համաճարակը վերահսկվի, եւ հնարավոր դառնա ու թույլատրվի ճամփորդել:
- Ժ. Ղեկավարության կողմից ժողովրդի նկատմամբ ցուցաբերված անվստահությունը, մասնավորապես 1999 թ. հոկտեմբերին խորհրդարանում տեղի ունեցած սպանություններից հետո: Ինչ վերաբերում է երկրի կարողություններին ու սահմանափակումներին,

մարդկանց կերակրել են հայրենասիրական ու ազգայնական խոսքերով՝ փոխանակ ժողովրդի հետ խոսելու բաց ու ազնվորեն:

- Ի. Քննադատաբար, նորարարաբար մտածելու, իրական հետազոտություններ հանձնարարելու եւ օգտագործելու անկարողությունը:

Ղարաբաղյան հարցով արդյունավետ արտաքին քաղաքականություն ձեւակերպելու խոչընդոտներ

Մասնակիցների մի խմբի կարծիքով՝ Ղարաբաղյան հարցով արդյունավետ արտաքին քաղաքականության ձեւավորման երեք հիմնական խոչընդոտներն են.

- Ա. Ուժեղ ղեկավարության բացակայությունը, ներառյալ նրա ձեռնհասության եւ ատակության (կարողունակ լինելու) բացակայությունը:
- Բ. Ղեկավարության նման պակասություններից բխող անկայունությունն ու անվստահությունը:
- Գ. Ղարաբաղի բարձրագույն ղեկավարության եւ նրա Արտաքին գործերի նախարարության միջեւ պատշաճ եւ արդյունավետ համագործակցության ու համակարգման բացակայությունը:
- Դ. Բաքվի եւ Ղարաբաղի ղեկավարության միջեւ նշանակալի շփումների բացակայությունը, որոնց միջոցով կողմերը կարող էին միմյանց դիրքորոշումները գնահատել գաղտնի խորհրդակցությունների հիման վրա, այլ ոչ թե հրապարակային հայտարարությունների, որոնք թերեւս ուղղված էին միայն ներքին լսարաններին:

Սակայն ուրիշները որպես խոչընդոտ առաջարկում են նաեւ հետեւյալ հանգամանքները.

- Ե. Ադրբեջանի ղեկավարության ագրեսիվ հռետորաբանությունը, որը պղտորում է իրավիճակը:
- Զ. ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ Բաքու այցելած անդամների հանդեպ Ադրբեջանի առաջնորդի ամբարտավան պահվածքը, ինչը վկայում է բանակցային գործընթացի նկատմամբ Ադրբեջանի փոխված վերաբերմունքի մասին:
- Է. Բաքվի չկամությունը՝ Ղարաբաղի հայերին առաջարկելու ուրիշ որեւէ այլ բան, քան իբրեւ էթնիկ-կրոնական փոքրամասնության կարգավիճակն է, արտատարածքային հիմունքներով մշակութային ինքնավարությունը:

3.2. Ո՞վ է մշակում եւ ո՞վ է իրականացնում Հայաստանի արտաքին քաղաքականությունը

Ո՞վ է մշակում քաղաքականությունը

Արտաքին քաղաքականության մշակումը կառավարության կարեւոր գործառնություն է եւ այն տարբերվում է պետությունից պետություն ու նույնիսկ վարչակազմից վարչակազմ: Քաղաքականության մշակման ինստիտուցիոնալացման աստիճանը, սակայն, պետության հասունության նշան է: Հայաստանում այն մեծապէս կախված է եղել կառավարությունը ղեկավարող անձից:

Փաստորեն, համարվում է, որ 2018 - 2021 թթ. կառավարության ժամանակ Հայաստանում հետեւյալ ուժերն են քաղաքականություն մշակել.

- Ա. Վարչապետը՝ մի քանի վստահելի անձանց նեղ շրջանակով,
- Բ. Իշխող կուսակցությունը՝ Քաղաքացիական պայմանագիրը,
- Գ. Արտաքին գործերի նախարարությունը,
- Դ. Դիվանագետներ, գիտնականներ եւ վերլուծական կենտրոններ:

Կան մասնակիցներ, որոնք իրական քաղաքականության մշակման ապացույցներ չեն տեսնում եւ կարծում են, որ.

- Ա. Հայաստանում ոչ ոք քաղաքականություն չի մշակում, իսկ այն, ինչը համարվում է քաղաքականություն, ընդամենը հայտարարություններին եւ իրադարձություններին վերաբերող արձագանքների շարք է:

Բայց ուրիշները վստահ չեն, որ ամեն բան այդքան պարզ է: Նրանք կարծում են, որ քաղաքականությունը մշակում է.

- Բ. Ազգային անվտանգության ծառայությունը՝ որպէս Ռուսաստանի փոխանորդ,
- Գ. Ռուսաստանը,
- Դ. Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի նախագահները:

Ո՞վ պետք է մշակի քաղաքականություն

Քանի որ կարծիք կա, որ քաղաքականություն մշակողների շրջանակը չափազանց նեղ է, մի շարք առաջարկություններ են արվել, որ նոր մասնակիցներ ավելացվեն քաղաքականություն մշակողների խմբին՝ ներառելով.

- Ա. Նորոգված Ազգային անվտանգության խորհուրդ, որում ներգրավված են նաև Արտաքին գործերի նախարարությունը, ԶՈւ-ն եւ հետախուզական ծառայությունը:
- Բ. Արդարադատության նախարարություն՝ ապահովելու համար միջազգային իրավունքին համապատասխանությունը:
- Գ. Արտաքին գործերի նախարարություն՝ Chatham House-ի կամ Արտաքին հարաբերությունների խորհրդի նման վերլուծական կենտրոնների աջակցությամբ:
- Դ. Գիտնականներ ու փորձագետներ, ներառյալ՝ Սփյուռքից:
- Ե. Քաղաքական կուսակցություններ՝ ինչպես Ազգային ժողովում ներկայացված, այնպես էլ արտախորհրդարանական:
- Զ. Քաղաքացիական հասարակություն:
- Է. Նախկին ղեկավարների եւ ավագ դիվանագետների խորհուրդ, հատկապես վճռորոշ պահերին:
- Ը. Սահմանափակ մուտքով համաժողովներ:
- Թ. Կոալիցիոն կամ միասնության կառավարություններ:
- Ճ. Խորհրդակցական ժողովի գիտական քարտուղարություն, որը ներառի նաև սփյուռքահայերի:

Ո՞վ է իրականացնում քաղաքականությունը

Մեծ հաշվով, արտաքին քաղաքականությունն իրականացնում են դիվանագետները եւ կառավարության ղեկավարները: Դիվանագետների որակը միշտ էլ խնդիր է եղել, եւ նրանց պատրաստության ու հնարավորությունների վերաբերյալ տեսակետները տարբերվում են:

Դրանք տատանվում են այնպիսի կարծիքներից, որոնք դրական են գնահատում Հայաստանի դիվանագետներին եւ հավատում, որ.

- Ա. Հայաստանի դիվանագետները լավն են. խնդիրն այն քաղաքականությունն է, որը նրանցից պահանջվում է վարել:
- Բ. Հայաստանի դիվանագետները ժամանակի ընթացքում առաջադիմել են:
- Գ. Դիվանագետների որակը կարող է բարելավվել, սակայն իրական խնդիրը քաղաքականության մեջ է:
- Դ. Դիվանագետները լավն են, սակայն երբեմն նրանց ուղարկում են մայրաքաղաքներ, որոնք չեն համապատասխանում նրանց մասնագիտական կարողունակությանը:
- Ե. Դիվանագետներին չի թույլատրվում ինքնուրույն մտածել քաղաքականության տարբերակների մասին:

Այլ փորձագետներ վերջնական գնահատական չունեն, սակայն կարծում են, որ դիվանագետների վերապատրաստումն ու օգտագործումը կարող է բարելավվել: Այդ դիտարկումները ներառում են հետևյալ տեսակետները.

- Զ. Հայաստանը չունի բավականաչափ լավ դիվանագետներ:
- Է. Դիվանագետները քաջատեղյակ չեն այն երկրներից ու տարածաշրջաններից, ուր նրանք նշանակվում են:
- Ը. Դիվանագետները պատրաստվում են արտերկրի դպրոցներում, այլ ոչ թե հայկական դիվանագիտական դպրոցում:
- Թ. Թոշակի անցած դիվանագետները կարող էին հրավիրվել, որպեսզի օգնեն պատրաստելու նոր դիվանագետներ՝ օգտագործելով սեփական փորձը:
- Ժ. Ծագումով հայ դիվանագետները, որոնք ծառայում են այլ կառավարություններում, կարող են օգնել հայ դիվանագետների պատրաստմանը:

Սպեկտրի մյուս եզրին նրանք են, ովքեր մտածում են, որ.

- Ի. Շատ դիվանագետներ տարածաշրջանը տեսնում են Ռուսաստանի աչքերով:
- Լ. Շատ դիվանագետներ իրականում գործում են պարզապես որպես քաղաքական կամ կառավարության ղեկավարների անձնական ներկայացուցիչներ:
- Խ. Հայաստանը չունի իսկական/կարողունակ դիվանագետներ:

Հետևյալ կետերի շուրջ կարծեք թե համաձայնություն կա.

- Օ. Հայաստանի դիվանագետների կրթությունը կարող է բարելավվել:
- Կ. Նշանակումների համակարգը պետք է ավելի հետեւողական եւ լիովին մերիտոկրատական դարձնել:
- Հ. Դիվանագետները պետք է խորագիտակ լինեն այն երկրի կամ տարածաշրջանի պատմությանը, մշակույթին ու քաղաքականությանը, ուր իրենք նշանակված են:
- Ձ. Հայաստանը պետք է հիմնի ազգային դիվանագիտական դպրոց, որը կարող է գործանալ այլ դպրոցների հետ գործընկերության միջոցով, բայց որտեղ կուսուցանվեն պետական շահերը:
- Ղ. Արտաքին գործերի նախարարությունը պետք է ներգրավի նախկին կարողունակ դիվանագետների՝ որպես հրավիրյալ դասախոսների, այդ թվում՝ Մփյուռքից եւ, առհասարակ, այլ երկրներից:
- Ճ. Դիվանագետները կարող են իրենց առավելագույն ներուժը դրսևորել, երբ նրանց տրվում են հստակ ու հետեւողական ցուցումներ՝ ուղղված իրապաշտ ու մտածված արտաքին քաղաքականության իրագործմանը:

ՄԱՍ II. Հեղինակների դիտարկումները, առաջարկություններն ու եզրակացությունները

Այս սպիտակ թղթի երկրորդ բաժինը կազմված է հեղինակների դիտարկումներից, առաջարկություններից եւ եզրակացություններից, որոնց համար միայն իրենք են պատասխանատվություն կրում:

Բաժին 1. Դիտարկումներ եւ նկատառումներ երկարաժամկետ քաղաքականությունների համար

Անմիջական մտահոգության հարցերի շուրջ կարծիքների ամբողջական սպեկտրն առաջին մասում համադրված ներկայացնելուց հետո, հեղինակները երկրորդ մասում առաջարկում են իրենց սեփական դիտարկումներն ավելի լայն միջավայրի վերաբերյալ. միջավայր, որում Հայաստանն ու Ղարաբաղը գործում են, որոշումներ կայացնում եւ ձեւակերպում քաղաքականություններ: Եթե կրկնենք սույն փաստաթղթի ներածության մի պարբերությունը՝ նրանց հիմնական մտահոգությունն է առաջարկել վերլուծական հեռանկար: Սա նշանակում է, որ հեղինակները չեն կենտրոնանում քաղաքական կուսակցությունների եւ առաջնորդների միջև վիճաբանությունների, տարաձայնությունների ուղղությամբ, ինչպես նաեւ այնպիսի քննարկումների ու բանավեճերի, որոնք հիմնված են քաղաքական-ընտրական մտահոգությունների վրա եւ, ըստ էության, կենտրոնանում են հանրային կարծիքի ու ժողովրդականություն վայելող միտումների վրա:

Հեղինակները գիտակցում են, որ այստեղ ներկայացվող դիտարկումներին եւ դրանց հետեւող առաջարկություններին ու եզրակացություններին անպայմանորեն համաձայն չպիտի լինեն հարցարանին պատասխանած որոշ մասնակիցներ եւ շատ այլ վերլուծաբաններ:

Նրանք ավելի քան գիտակցում են նաեւ, որ պետության որոշ ղեկավարներ ու քաղաքական առաջնորդներ կարող են բազմաթիվ հիմնավոր մտահոգություններ ու վախեր ունենալ, որ Հայաստանի ու Ղարաբաղի ժողովրդի մեծամասնությունը այս առաջարկությունները չի ընդունի:

Հեղինակներն այստեղ կարող են միայն պնդել, որ այս փաստաթղթի միակ նպատակը իրատեսական վերլուծություն առաջարկելն է:

1.1. Հայաստանի շուրջ առկա միջազգային իրողությունները

Այժմ, ավելի քան երբեւէ, Հայաստանի արտաքին քաղաքականությունն անհրաժեշտ է մշակել տարածաշրջանային եւ միջազգային զարգացումների համատեքստում, եւ այն չի կարող

հիմնվել ցանկալին իրականության փոխարեն ընդունելու մտածողության ու հայրենասիրական խանդավառության վրա: Հեղինակները հասկանում են պարտությունն ընդունելու դժվարությունն ու դրանից բխող՝ դավաճանված լինելու զգացումը: Նրանք նաև հասկանում են ռազմատենչ քաղաքականության մասին մտածելու անհագ ցանկությունը, որը խոստանում է վերականգնել կորուստները եւ վերականգնել հպարտության զգացումը՝ համապատասխան հռետորաբանությամբ: Ավելի կարելու է, սակայն, հասկանալ, թե ինչ է փոխվել այս միջավայրում, բացի ակնհայտ կորուստներից: Ամենից առավել, Հայաստանը պետք է խուսափի սխալ ենթադրությունների եւ ինքնախաբեության վրա հիմնված քաղաքականության մշակումից:

Ակնհայտ է, որ Հայաստանը գործում է մի փոփոխական միջազգային միջավայրում, որտեղ դժվար է կանխատեսել զարգացումները՝ որեւէ աստիճանի վստահությամբ: Այս փոփոխականությունը կարելի է մասամբ բացատրել ԱՄՆ՝ վերջին տարիների քաղաքականության անկանխատեսելիությամբ, եւ դրա ապակայունացնող ազդեցություններով: Համաշխարհային հարցերում ԱՄՆ կարելորությունը հաշվի առնելով՝ սա մի էական խնդիր է, որին պետք է ուշադրություն դարձնել:

2020 թ.-ին Ջոզեֆ Բայդենի ընտրությունն, անշուշտ, հնարավորություններ է ընձեռում բացասական միտումների որոշ մասը հետ շրջելու համար: ԱՄՆ-ում ավելի արհեստավարժ ու ազգային շահերի վրա հիմնված քաղաքականությունների համակցությունը կարող է նվազեցնել Ռուսաստանի հետ լարվածությունները: ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը կարող են համաձայնության գալ Ուկրաինայի, Իրանի եւ աշխարհում այլ թեժ կետերի շուրջ: Բայդենը կարող է նաև ուղղել Մերձավոր Արեւելքի քաղաքականության հետ կապված իր նախորդի լուրջ սխալները: Այդ տարածաշրջանը կլինի այն հիմնական թատերաբեմը, ուր ԱՄՆ-ը, Ռուսաստանը եւ առաջնորդող դերերի հայտ ներկայացնող այլ երկրներ, ինչպիսիք են, օրինակ, Թուրքիան ու Իսրայելը, կմրցեն եւ թերեւս նաև կհամագործակցեն: Ի վերջո, Բայդենի վարչակազմն, անկասկած, կվերականգնի գործընկերային մոտեցումը, հատկապես իր դաշնակիցների եւ Եւրոպայի հետ՝ մարտահրավերներին դիմակայելու եւ միջազգային հակամարտությունները լուծելու համար:

Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, սակայն, կարող են նաև ավելի վատ մրցակցության մեջ հայտնվել՝ Նոր Աշխարհակարգի վերաբերյալ իրենց տարբերվող տեսակետների կամ դրանում իրենց դերի պատճառով: Գոյություն ունեցող լարվածությունները կարող են է՛լ ավելի սրվել: Կասկածից վեր է, սակայն, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նախագահ Ջորջ Չ. Ու. Բուշի կողմից հայտարարված Նոր Աշխարհակարգը շատ կարճ կյանք ունեցավ, եւ այն սահմանելու ու իրագործելու հնարավորությունը մսխվեց: Մասամբ սա այն պատճառով էր, որ Արեւմուտքը պնդեց, որ շարունակեն Ռուսաստանին վերաբերվել որպես թշնամու եւ ընդլայնեն ՆԱՏՕ-ն՝ մինչեւ Ռուսաստանի սահմանները, չնայած այն խոստումին, որ ՆԱՏՕ-ն չէր ընդլայնվելու:

ԱՄՆ վերադարձը 1990-ական թվականների իր հեզեմոն դիրքին, անհնար է, որովհետև Չինաստանը համաշխարհային կարգի՝ տնտեսական եւ ռազմական մրցակից ուժ է: Չինաստանի մարտահրավերի դեմ ավելի դժվար է պայքարել, քանի որ նրա շահերն առաջ են մղվում տնտեսական ներթափանցման միջոցով եւ հազվադեպ՝ միայն ուժի ցուցադրությամբ կամ կիրառմամբ: Եւրոպան փորձում է ուղիներ գտնել եւրոպական հսկայական տարածքների ու ձեռնարկությունների ձեռքբերումից Չինաստանի կապիտալը հեռու պահելու համար: Աֆրիկան եւ Հարավային Ամերիկան միջոցներ չունեն դիմակայելու չինական առաջխաղացմանը՝ նույնիսկ եթե դա ցանկանային:

Այսպիսով, պետք է պարզ լինի, որ Հայաստանն ու Ղարաբաղը համապատասխան երկրներից որեւէ մեկի՝ ներառյալ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի համար հիմնական մտահոգություններ չեն: Երբ մեծ պետություններն սկսում են իրենց սակարկությունները՝ հիմնված իրենց ազգային շահերի վրա, ավելի հավանական է, որ փոքր պետությունները դառնան մեծերի շահմատային զինվորներ, եւ ոչ փղեր կամ ձիեր. այն խաղերում, ուր խաղում են խոշոր դերակատարները: Ավելի հավանական է, որ խոշոր խաղացողները փոքրերի համար դերեր սահմանեն, ոչ թե հակառակը:

Ուստի, քաղաքականություն ու կարծիք ձեւավորողները պետք է սկսեն այն հստակ ըմբռնումից, որ Երեւանն աշխարհի կենտրոնը չէ, եւ Ղարաբաղն աշխարհի շատ երկրների օրակարգի թիվ մեկ հարցը չէ: Քաղաքականություն մշակելիս, լինի արտաքին, թե անվտանգության քաղաքականություն, նրանք երբեք չպետք է մոռանան այն միջավայրը, որում իրենք եւ բոլոր մյուսները գործում են:

1. Միջազգային կարգը

- Ա. Այսօր հստակ սահմանված միջազգային կարգ գոյություն չունի: Տարածաշրջանային եւ խոշոր տերությունների միջեւ հարաբերությունները շարունակում են մնալ անկանխատեսելի ու երերուն:
- Բ. Տարածաշրջանային տերությունները, ինչպիսիք են՝ Թուրքիան, Իրանն ու Իսրայելը, փորձում են նույնպես իրենց կամքը պարտադրել Մերձավոր Արեւելքում եւ Միջերկրական ու Էգեյան ծովերում՝ ներթափանցելով նախկինում գերտերությունների բացառիկ իրավասության գոտիներ:
- Գ. Մի շարք հակամարտություններ կառավարվում են միասնաբար գործող տարածաշրջանային տերությունների կողմից՝ առանց ԱՄՆ-ի կամ ՆԱՏՕ-ի որեւէ նշանակալի ներգրավման:
- Դ. Այս փոփոխությունների հետեւանքով իշխանության հարաբերություններում առաջացած անորոշություններն ավելի են սրվում ազատական կարգի նահանջի հետեւանքով՝ նույնիսկ Եւրոպայում եւ, հնարավոր է, ԱՄՆ-ում. կարգ, որը հանդիսանում էր վարչակարգերն ու կառավարությունները գնահատելու մի գերիշխող արժեհամակարգ:

- Ե. ԱՄՆ նոր վարչակազմը եւ Արեւմուտքը դեռ չեն գտել նոր աշխարհակարգի համար մի արդյունավետ հայեցակարգ, որը հաշվի կառնի ձեւավորվող իրողություններն ու տեսանելի ապագայի համար կկարողանա կարգավորել միջազգային հարաբերությունները՝ այլ խոշոր տերությունների հետ համաձայնեցված այս նոր, բազմաբեւեռ միջազգային համայնքում:
- Զ. Հայաստանին մոտ եւ հեռու գտնվող տարբեր պետությունների քաղաքականությունների, որոշումների ու վարքի վրա ազդող գործոնները հասկանալու եւ վերլուծելու գործում՝ Հայաստանի քաղաքականությունն մշակողները պետք է ուշադրություն դարձնեն ակնհայտ աշխարհաքաղաքական/աշխարհառազմավարական գործոններից անդին որոշիչ դեր կատարող այլ գործոնների: Խոսքն այստեղ տնտեսական գործոնների մասին է՝ ածխաջրածնային պաշարներից բացի, ինչպիսիք են, օրինակ, այս կամ այն ոլորտում ներդրումային հնարավորությունները, որոնք կարող են շահույթ ապահովել, ինչը բոլոր երկրների բիզնես ղեկավարները փնտրում են, եւ ինչի նկատմամբ կառավարությունները նույնպես անտարբեր չեն:

2. Արեւմուտքը եւ տարածաշրջանային/միջազգային կազմակերպությունները

- Ա. Եւրոպական Միությունն աննախադեպ մարտահրավերների է բախվում թե՛ իր ներսում, թե՛ հարակից տարածքներում:
- Բ. ՆԱՏՕ-ն տկարացել է մի շարք գործոնների հետեւանքով. անդրատլանտյան կապերի թուլացման, Թրամփի վարչակազմի քաղաքականության եւ (ՆԱՏՕ-ի չափանիշներով) Թուրքիայի «անազնիվ» քաղաքականության հետեւանքով. Թուրքիայի, որը հանդիսանում է այդ կազմակերպության ամենակարեւոր անդամը՝ հարավում, եւ ունի նրա երկրորդ ամենակարեւոր բանակը:
- Գ. Նմանապես, միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպությունները, ներառյալ ՄԱԿ-ը եւ ԵԱՀԿ-ն, կորցրել են իրենց լծակների մեծ մասը:
- Դ. Արեւմուտքը չի հանդիսանում եւ չի ցանկանում հանդիսանալ 2020 թ. Ղարաբաղյան պատերազմի արդյունքները հետ շրջելու կամ նոյեմբերի 10-ի հայտարարությունը փոխելու գործոն: Ներկայիս արդյունքները շատ տարբեր չեն նրանից, թե ինչ է եղել Արեւմուտքի՝ մնացյալ միջազգային հանրության հետ համատեղ մշտապես հետապնդած արդյունքը: Նրանք հույս ունենին, սակայն, որ այդ արդյունքը պիտի ձեռք բերվեր բանակցությունների միջոցով՝ առանց այդքան կյանքերի եւ միջոցների կորստի, եւ իրենց լիակատար մասնակցությամբ:
- Ե. Այդուհանդերձ, Արեւմուտքը գիտակցում է, որ դուրս է մնացել հավասարումից, աշխարհաքաղաքական առումով՝ նույնիսկ Հարավային Կովկասից: Ղարաբաղի հակամարտությունը այն հարցերից մեկն էր, որն Արեւմուտքը, մասնավորապես ԱՄՆ-ը, 1990-ական թվականներին օգտագործեց որպես Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական հավասարման մեջ մուտք գործելու անցակետ: 2020 թ. պատերազմը եւ ռուսական-թուրքական դերը դրա առաջընթացի ու ավարտի հարցում

Արեւմուտքի համար հանդիսացան դիրքի կորուստ: Չնայած ԱՄՆ-ը եւ Եւրոպան պատրաստ չեն թշնամանալու Ադրբեջանի եւ նույնիսկ Թուրքիայի հետ, կարծես նրանք որոշել են օգտագործել հրադադարի հայտարարությանը հաջորդած տակավին չլուծված հարցերը՝ դեռեւս այս շարժուն գործընթացների մեջ որպէս լիիրավ գործընկերներ վերադառնալու համար: ԱՄՆ-ը եւ Եւրոպան կարող են օգտակար լինել, եթե Հայաստանն ու Ղարաբաղը ձեւակերպեն ողջամիտ քաղաքականություն՝ իրատեսական նպատակների հասնելու համար: Թեւեւ ներգրավվելու այս նոր ցանկությունը կարող է օգուտներ բերել հայկական կողմին, Հայաստանը պետք է զգույշ լինի, որպէսզի այն չընդունի որպէս հակակշիռ՝ համարժեք նրան, թե ինչ են Ռուսաստանն ու Թուրքիան միասնաբար ներկայացնում, կամ որպէս մի ռազմավարություն, որը կարող է հանգեցնել 2020 թ. նոյեմբերի 10-ի հրադադարի հայտարարությամբ Հայաստանին պարտադրված պայմանների արմատական փոփոխության:

2. Այնուամենայնիվ, ԱՄՆ-ը, մեծ հաշվով, տիրապետում է հսկայական միջոցների եւ անցյալում նպաստել է Հայաստանի զարգացմանն ու բարեկեցությանը:

3. ԱՄՆ

- Ա. ԱՄՆ-ը կարող է այլեւս կամք չունենալ, եւ գուցե նույնիսկ հնարավորություն, տարածաշրջանային վեճերում երկարաժամկետ ռազմական միջամտության համար, ինչպէս դա եղել է անցյալում: Աֆղանստանի եւ Իրաքի պատերազմներն ամերիկյան ուժի սահմաններն ակնհայտ դարձրին: Բացի այդ, ներքին խնդիրների պատճառով ԱՄՆ-ը նաեւ կորցրել է փափուկ ուժ գործադրելու իր ազդեցության մի մասը:
- Բ. Շահերի բախումից եւ մրցակցությունից այն կողմ այդ մրցակցություններին ավելանում է գաղափարական կողմը: ԱՄՆ-ը շահարկում է մենատիրականությունը (authoritarianism) եւ մարդու իրավունքները: Իսկ նախագահ Պուտինը քննադատում է Արեւմտյան ազատական ժողովրդավարություններն ու Վաշինգտոնյան համաձայնությունը՝ աշխարհի շատ մասերում գտնվող անապահով սոցիալական խավերի կարիքների նկատմամբ անուշադիր լինելու համար: Պուտինը կոչ է արել վերահաստատել ազգային տնտեսությունները եւ կարգավորել հակամարտությունները՝ տարածաշրջանային, այդ նպատակով ստեղծված ժամանակավոր համագործակցային դաշինքների միջոցով:
- Գ. ԱՄՆ-ը, հնարավոր է, կարողանա Թուրքիային վերադարձնել իր ճամբարը, չնայած դա չի կարող լինել այն նույն բանաձեւի հիման վրա, ինչն անցյալում էր: ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի՝ Թուրքիայի հետ հարաբերությունները կայունացնելու նոր փորձը ստիպված պիտի լինի հաշվի առնել Թուրքիայի շահերը՝ ինչպէս դրանք սահմանում է այդ երկրի ներկայիս իշխանությունը:
- Դ. Կռաւարությունն ու քաղաքական առաջնորդները Հայաստանում պետք է զգուշորեն մտածեն նախքան անդրադարձային (reflexive) գայթակղությանը տրվելը՝ ենթադրելու համար, թե ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացումն անպայմանորեն

օգտակար է Հայաստանին: ԱՄՆ-ը եւ Եւրոպան Հայաստանի օրակարգը չեն որդեգրելու որպէս իրենցը, եւ այն, թէ որքանով նրանք Թուրքիային կկարողանան մղել դէպի իրենց սեփական օրակարգերն ու արժեքները, սահմաններ ունի: Նրանք կարող են օգտակար լինել, եթէ Հայաստանի խնդրածն իրենց իսկ մոտեցումների տրամաբանության մեջ լինի, կամ եթէ այն, ինչ Հայաստանը խնդրում է, նրանցից քիչ ծախս պահանջի կամ ոչինչ չարժենա:

- Ե. ԱՄՆ-ը գուցէ դեռեւս հետապնդում է երկարաժամկետ նպատակ. իր տնտեսական, ու թերեւս նաեւ քաղաքական նախատիպն այնպիսի երկրների պարտադրել, ինչպիսիք են՝ Ուկրաինան, Իրանը եւ Ռուսաստանը, որոնք Թուրքիայի հետ համատեղ ներկայացնում են 350 միլիոն սպառողների շուկա: ԱՄՆ-ը կշարունակի պատժամիջոցներ կիրառել նրանց առաջնորդների նկատմամբ, մինչ իր հիմնական մրցակիցը՝ Չինաստանը, իր շահերն է հետապնդում՝ այլ երկրներին ֆինանսական ու առեւտրային օգնություն առաջարկելով, ներառյալ՝ այդ պետությունների համար իր հսկայական շուկան բացելով:

4. Տարածաշրջանային ուժերն ու Հարավային Կովկասը

- Ա. Ինքն իրեն համարելով պաշարման մեջ գտնվող միջնաբերդ՝ Ռուսաստանն իրեն պաշտպանում է Արեւմուտքի շարունակական առաջխաղացումից: Արեւմուտքի կողմից շրջափակման ուրվականը կամ նույնիսկ ավելի վատը, Ռուսաստանի ռազմավարական մտածողության այն որոշիչ տարրն է եղել, որը մղել է ռուսներին նախընտրելու բռնապետական վարչակարգերը եւ առավել հաճախ հակադրվելու Եւրոպական նախատիպին: Սակայն Եւրոպական նախատիպը որդեգրելու գայթակհությունը 30 տարի շարունակ դրսևտրվել է նախկին խորհրդային հանրապետություններում՝ Բելառուսում, Մոլդովայում, Ուկրաինայում եւ Հարավային Կովկասի հանրապետություններում:
- Բ. Ռուսաստանի քաղաքականությունը գնահատելիս պետք է նշել, որ Ռուսաստանը երբեք չի խոստացել օգնել Հայաստանին՝ Ղարաբաղի վրա Ադրբեջանի հարձակման դեպքում: Ընդհակառակը. Ռուսաստանը բավականաչափ հստակորեն հասկացրել է, որ հարգում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինչը նշանակում է, որ Ղարաբաղը համարում է Ադրբեջանի մասը: Մոսկվան նաեւ չմիջամտեց 2016 թ. եւ 2020 թ. հուլիսին սրված ռազմական գործողությունների ժամանակ: Ռուսաստանը մի քանի անգամ է առաջարկել իր փոխզիջումային լուծումները, նույնիսկ վերջին երկու տարիների ընթացքում. լուծումներ որոնք Հայաստանն ու Ղարաբաղը մերժել են: Հիասթափված լինելը արդարացի հակազդեցություն չէ, երբ այն, ինչի հույս ունեիր, քեզ երբեք չէին խոստացել: Ռուսաստանի վարքագիծը կարելի է հարցականի տակ դնել այլ հարցերի առնչությամբ:
- Գ. Չնայած Ռուսաստանի քաղաքականության ու մտադրությունների վերաբերյալ կան անհերքելի փաստեր, որոնք հայտնի են, եւ որոշ իրողություններ, որոնք կանխատեսելի են, գոյություն ունեն շատ ավելի հանգամանքներ, որոնք հայտնի չեն:

Քաղաքականություններն ու ռազմավարությունները պետք է կառուցել բազմաթիվ հնարավոր սցենարների լավագույն պատկերացման վրա:

- Դ. Հայաստանի եւ Ղարաբաղի կողմից երկարաժամկետ ծրագրի կազմումը պետք է ներառի այն հավանականությունը, որ Ռուսաստանը կարող է լքել Ղարաբաղը, ինչպես դա տեղի ունեցավ 1991 թ.-ին. Ռուսաստանը նաեւ պատրաստվում էր լքել Հայաստանը 1992 թ.-ին, եթե ռուսական բազայի ներկայությունը շարունակելու Հայաստանի խնդրանքը չլիներ:
- Ե. Վերջին պատերազմի մեջ ներգրավվելու՝ ժամանակի եւ ձեւի ընտրության հարցում Ռուսաստանի նպատակներից մեկը Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հաղորդակցությունների բացման ապահովումն էր: Ռուսաստանը նաեւ հետապնդում էր իր սեփական շահերը՝ պատերազմի կառավարման մեջ եւ հրադադարի պայմանների հարցում: Այդպիսի մի նկատառում էր, թերեւս, Վրաստանով Հայաստան ու Իրան անցնող ճանապարհներին մի այլընտրանք ստեղծելը՝ որպես Վրաստանին պատժելու մի եղանակ՝ ՆԱՏՕ-ի եւ Արեւմուտքի հետ վերջինիս շարունակվող բացահայտ ու ամուր գործընկերության համար:
- Զ. Ռուսաստանը մեծացրել է վերահսկողությունը հայկական Ղարաբաղից մնացած հատվածի վրա եւ այսպիսով կարող է Հայաստանին ավելի հաստատուն կերպով տանել դեպի իր ուղեծիր. այնքանով, որքանով հայկական քաղաքականությունը կախված է Ղարաբաղից:
- Է. Հայաստանի կապվածությունը ռուսական աշխարհին, սակայն, առհասարակ չի վիճարկվել միջազգայնորեն, չնայած Արեւմուտքը շարունակել է Հայաստանին լրացուցիչ այլընտրանք առաջարկելու իր փորձերը: Հայկական կողմը հույս ունի, որ ռուսական ուղեծրում, ինչպես ԽՍՀՄ տարիներին, կօգտվի Ռուսաստանի Դաշնության շոյալությունից եւ Եւրասիական տնտեսական միության ու Շանհայի համագործակցության կազմակերպության մեջ նրա ունեցած ազդեցությունից:
- Ը. Մյուս կողմից, Ռուսաստանին առավել մտահոգում է Ադրբեջանի կողմից Ռուսաստանի ուղեծիրը լքելու սպառնալիքը, որն ուղեկցվում է Թուրքիայի հետ Ադրբեջանի սերտ հարաբերություններով, Արեւմտյան ներդրումներից եւ արտասահմանում իր սեփական ներդրումներից կախվածությամբ:
- Թ. Տեսանելի ապագայում Ադրբեջանը կմնա որպես իր սահմաններից դուրս գործող մի ուժ՝ առնվազն էներգետիկայի եւ օտարերկրյա ներդրումների ոլորտներում: Կարելի է նաեւ ակնկալել, որ դեռեւս որոշ ժամանակ կշարունակի ռազմական գերակայությունը Հայաստանի նկատմամբ:

Հարկ է նշել, որ քանի որ Ադրբեջանի վերելքը կախված է ածխաջրածնային պաշարների արտահանումից, որոշ կանխատեսումների համաձայն՝ հում նավթի նրա պաշարները 10 -15 տարուց կսպառվեն: Այդուամենայնիվ, եզրակացություններ անելիս պետք է զգուշանալ այն հավանականությունից, թե Ադրբեջանը պակաս գերիշխող կլինի, հատկապես Հայաստանի համեմատությամբ: Ադրբեջանը շարունակելու է զգալի եկամուտներ ստանալ բնական գազի իր պաշարներից,

հնարավոր է նաև նոր նավթային ու գազային հանքավայրերի հայտնաբերումից, եւ, իհարկէ, արտասահմանում ունեցած իր ներդրումներից ու իր տնտեսությունը բազմազանեցնելու (diversify) փորձերից: Բացի դրանից, Ադրբեջանը օգտվում է եւ, հավանական է, որ կշարունակի օգտվել Թուրքիայի եւ մյուս սերտ դաշնակիցների բազմաբնույթ աջակցությունից: Վերջապէս, գիտակից լինելով իր խոցելի կողմերին, հավանական է, որ Ադրբեջանը կփորձի լուծել Ղարաբաղի հետ առնչվող բոլոր մնացյալ հարցերը՝ մինչ այդ պահը, եթէ այն երբեւէ պիտի գա: Հնարավոր է, որ իր այս վերջին պատերազմի ժամանակացույցի պատճառներից մեկը հենց դա էր:

Որոշումը, թէ ինչ է անելու եւ ինչպիսին է դառնալու Հայաստանը 10 -15 տարի հետո, պետք է հաշվի առնի այս գործոնը, որը լուրջ եւ առարկայական վերլուծության պետք է ենթարկվի:

- Ժ. Իր նոր առաջնորդի իշխանության գալով՝ Թուրքիան դուրս եկավ իր Անատոլիական տարածքից եւ ռազմական գրոհներ սկսեց իր սահմաններից անդին՝ կոպտորեն խախտելով քեմալիստական սկզբունքները, որոնցով 1923 թ.-ից ի վեր առաջնորդվում էին Թուրքիայի իշխանությունները: Կարելի է ակնկալել, որ Էրդողանը դեռեւս որոշ ժամանակ իշխանության դեկին կմնա, նույնիսկ հակառակ Թուրքիայի ժողովրդի մեծամասնության տրամադրությունների:
- Ի. Չնայած իր ճգնաժամերին ու դժվարություններին, Թուրքիան, հնարավոր է, դուրս գա ներկայիս իրավիճակից՝ որպէս աշխարհաքաղաքական ու տնտեսական ավելի ուժեղ խաղացող: Հայաստանը եւ հայ ժողովուրդը չպետք է ապավինեն Թուրքիայի հնարավոր թուլությանն ու տնտեսական ճգնաժամերին եւ նրա նկատմամբ պակաս խստապահանջ ու իրատեսական քաղաքականություն որդեգրեն: Հայաստանը չպետք է ռեֆլեքսիվորեն մտածի, որ ճգնաժամում գտնվող Թուրքիան ավելի օգտակար է իր համար: Ցեղասպանությունն իրականացվել է Օսմանյան կայսրության պատմության ամենաթույլ ու վատթարագույն պահին, երբ նրան որակում էին որպէս «Եւրոպայի հիվանդ մարդ»: Թուրքիան, ինչպէս Օսմանյան կայսրությունն էր, կարող է թույլ լինել որոշ պետությունների համեմատ, սակայն ոչ թույլ՝ մի շարք այլ պետությունների համեմատ, ներառյալ Հայաստանի: Նույնը ճիշտ է նաև Ռուսաստանի առնչությամբ:
- Լ. Եթէ Ադրբեջանը պատերազմ չհայտարարի Ռուսաստանին, դժվար թէ Ռուսաստանը պատերազմ սկսի Ադրբեջանի դեմ, եթէ նույնիսկ նրանց որոշ շահեր չեն համընկնում:
- Խ. Ռուսաստանը նաև դժվար թէ պատերազմի մեջ մտնի Թուրքիայի հետ, նույնիսկ եթէ Ռուսաստանը կարող է ուրախ չլինել Թուրքիայի նեոկայսերական նախագծերով: Այդ երկու երկրներն ավելի շուտ իրենց միջեւ կբաժանեն վիճելի օբյեկտներն ու գոտիները կամ միասին կտնօրինեն դրանք՝ մի շարք պատճառներով. ներառյալ Արեւմուտքին տարածաշրջանից դուրս թողնելու իրենց ավելի լայն շահը:
- Տ. Հարավային Կովկասի ապագան ավելի շատ որոշելու են Ռուսաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի ու, հնարավոր է, նաև Իրանի ղեկավարները, քան որեւէ այլ պետություն կամ դաշինք: Չնայած այս երկրների փոխհարաբերություններն ու Հայաստանի վրա նրանց ազդեցությունը հեշտ չէ կանխատեսել, կարելի է վստահ լինել, որ այն երկրների

ղեկավարները, որոնց տրամադրություններն առավել էական են լինելու, դեռևս որոշ ժամանակ մնալու են իշխանության ղեկին: Նույնիսկ եթե այս կամ այն առաջնորդի կամ առաջնորդների փոփոխություն լինի, ներկայումս գոյություն ունեցող ընդհանուր քաղաքականությունների ուրվագիծը դժվար թե տեսանելի ապագայում արմատական փոփոխության ենթարկվի այս երկրներից որևէ մեկում: Ընդհանուր գծերով, վերջին 30 տարիներին բոլոր երեք խոշոր հարեւանները Հարավային Կովկասի նկատմամբ ունեցել են հետեւողական քաղաքականություն՝ չնայած ղեկավարների բազմաթիվ փոփոխություններին:

- Կ. Ռուսաստանի եւ Թուրքիայի համագործակցությունը բազմաշերտ է, եւ հայկական բաղադրիչը այդ բարդ փոխհարաբերության միայն մեկ կողմն է. այն նաեւ ընթացքի մեջ գտնվող հարց է: Գոյություն ունեն, անշուշտ, անհամաձայնության ու մրցակցության ոլորտներ: Հստակ է, այնուամենայնիվ, որ երկու երկրներն էլ ցանկանում են Հարավային Կովկասը պահել իրենց ազդեցության սահմաններից ներս, եւ երկուսի շահն է Արեւմուտքին դուրս թողնել այն շրջանակից, որն իրենք համարում են իրենց ազդեցության գոտին: Այս նպատակով նրանք նաեւ կամենում են Իրանին ավելի շատ ձայնի իրավունք տրամադրել: Այս առումով, Լեռնային Ղարաբաղի եւ նույնիսկ Հայաստանի շահերն այս երկրների ավելի լայն շահերի տեսանկյունից դառնում են երկրորդական:
- Ն. Նույնիսկ եթե այս համագործակցությունը չտարածվի բոլոր հարցերի վրա կամ երկար կյանք չունենա, այն բավարար է Հարավային Կովկասի վրա այնպիսի ազդեցություն ունենալու համար, որը դեռևս երկար ժամանակ կսահմանափակի Հայաստանի այլընտրանքները:
- Ձ. Հարավային Կովկասում իրական եւ երկարաժամկետ խաղաղության, կայունության ու համագործակցության հաստատումը Ադրբեյջանից ու Թուրքիայից կպահանջի գիտակցել, որ չնայած իրենց համար առավել կարելուր հարցերը կարող են ամբողջությամբ կամ մեծ մասամբ լուծված լինել, հայկական կողմն ունի նույնքան օրինակարգ հարցեր, որոնք դեռևս պետք է լուծել: Երկարաժամկետ նպատակներն, այսպիսով, պետք է հաշվի առնեն այս խնդիրները:

1.2. Հայաստան

- Ա. Կարելու է նշել, որ հետխորհրդային Հայաստանը ծնվել է մի երկսայր մարտահրավերից. ժողովրդավարական համակարգով աջակցվող ինքնիշխան պետության հիմնում եւ լուծման կարիք ունեցող ազգային հարցի՝ Ղարաբաղի ապագայի նկատմամբ պատասխանատվության ստանձնում: Հայկական պետականության հետագծում այս երկու չափումները սերտորեն փոխկապակցված էին: (Տե՛ս հավելված Բ)
- Բ. Հայաստանի թավշյա հեղափոխությունը արտաքին քաղաքականության, պաշտպանության կամ անվտանգության ոլորտներում շահաբաժիններ չապահովեց. այն նույնիսկ արժեք չունեցավ դիվանագիտական դաշտում ո՛չ պատերազմի

Ժամանակ, ո՛չ էլ պարտությունից հետո: Չնայած դրան, Հայաստանի քաղաքացիները եւս մեկ անգամ մերժեցին միահեծան եւ հիմնականում կոռումպացված նախորդ երկու վարչակարգերը՝ այդպիսով հիասթափեցնելով շատերին, ովքեր հույս ունեին, որ միահեծան վարչակարգին պարտվելը կամրացներ իշխանության վերադառնալու իրենց խաղաքարտերը: Սրանք այն նույն ուժերն են, որոնք նաեւ պնդում են, որ Ռուսաստանի անվտանգությունը Հայաստանի առաջնորդի եւ իր ժողովրդավարական հայացքների նկատմամբ պատճառ դարձան 2020 թ. պատերազմին Ռուսաստանի միջամտության ուշացման:

Գ. Հայաստանի արտաքին եւ անվտանգության քաղաքականությունները կառուցված էին որպես պատասխան 1990-ական թվականների կեսերի իրականությանը, որը բաղկացած էր հետեւյալ գործոններից.

1. ԱՄՆ-ը գերիշխող եւ նախաձեռնող դեր ուներ միջազգային հարաբերություններում եւ հաճախ գործում էր որպես տարածաշրջանային տերությունների զսպման ուժ:
2. Ռուսաստանը մշտապես հակադրվում էր ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային:
3. Թուրքիան չէր համարձակվի մտնել Հարավային Կովկաս:

Այս ենթադրություններն այլեւս ի գորու չեն: Սա նշանակում է, որ Հայաստանի անվտանգության միջավայրը փոխվել է, եւ նրա քաղաքականությունը պետք է այժմ արտացոլի նոր իրողությունները:

Դ. Չորրորդ ենթադրությամբ, որ Հայաստանը պաշտպանված էր թուրքական որեւէ հարձակման դեմ՝ Ռուսաստանի հետ իր 1997 թ. պայմանագրով, դեռեւս ուժի մեջ է: Սակայն Ղարաբաղի դեմ վերջին պատերազմում Թուրքիայի նշանակալի աջակցությունն Ադրբեջանին՝ մտահոգություններ ու վախեր առաջացրեց: Այս մտահոգությունները պետք է քննարկվեն Ռուսաստանի հետ, իսկ վախերը պետք է թոթափվեն:

Ե. Սակայն թիվ մեկ խնդիրը մնում է այս սպառնալիքների պատշաճ եւ առարկայական գնահատումը: Թուրքիան Ադրբեջանին օգնեց նրա ռազմական արշավում, սակայն չնայած բարձրագույն եւ համառ ահագանգերին ու նախազգուշացումներին, Թուրքիան չսպանեց ՀՀ ոչ մի քաղաքացու եւ ոչ էլ որեւէ թիզ տարածք վերցրեց:

Զ. Երբ սպառնալիքները չափազանցվում եւ մեծացվում են, երկիրը կորցնում է այդ հարցերը դիվանագիտորեն լուծելու հնարավորությունները, ինչպիսին, թերեւս, Թուրքիայի հետ հարաբերությունների դեպքում է. երբ սպառնալիքները թերագնահատվում են, երկիրը կորցնում է պատերազմներ, ինչպիսին Ադրբեջանի դեպքում էր՝ վերջին 20 կամ ավելի տարիներին: Երկու հարեւաններին ասելը լավ հայի էությունը չէ, եւ ո՛չ էլ այն կարող է ռազմավարություն լինել:

Է. Հայաստանի արտաքին եւ անվտանգության քաղաքականություններ մշակելու եւ իրագործելու այլընտրանքները միշտ էլ սահմանափակ են եղել. այժմ դրանք է՛լ ավելի

են սահմանափակվել, հատկապես, երբ անվտանգությունն ընկալվում է ամենալայն իմաստով:

- Ը. Հայաստանը եւ Ղարաբաղը չեն կարող անտեսել հատկապես երիտասարդների շրջանում արտագաղթի շարունակվող խնդիրը: Այս միտումը կարող է խորանալ մոտ ապագայում, հատկապես, եթե այն, ինչ առաջարկվում է հաջորդ սերնդին, անորոշությունն է, անկայունությունն ու առկախ մնացած հարցերի չլուծումը, կամ ավելի վատ՝ մեկ այլ պատերազմ. սրանք բոլորն էլ պիտի խոչընդոտեն ներդրումներն ու խրախուսեն արտագաղթը:
- Թ. Չնայած այս փաստաթուղթը չի անդրադառնում ներքին ճակատում հուզող շատ բարդ հարցերին, անհրաժեշտ է ընդգծել, որ փոքր պետությունների համար, հատկապես այնպիսիների, որոնք անկայուն անվտանգության պայմանների մեջ են, ինչպիսին Հայաստանն է, գործնականում անհնար է տարանջատել ներքին քաղաքականությունը արտաքին քաղաքականությունից, քանի որ այլ երկրները կարելու էր դեր են կատարում հանրապետության կյանքի գրեթե յուրաքանչյուր ոլորտում եւ քաղաքականություն մշակողների մտքերում: Սա ծանր բեռ է դնում քաղաքական ուժերի եւ իշխանությունների վրա, որոնք պետք է ժողովրդին ներկայացնեն Հայաստանի իրական հիմնախնդիրներն ու այլընտրանքները, եւ նրանց առաջարկած լուծումներն ու այն ռազմավարությունը, որը պետք է օգտագործվի այդ լուծումներն իրականացնելու համար:
- Ժ. Կառավարական, քաղաքական, մտավորական եւ մեդիա առաջնորդները պետք է խելացի ու խելամոռեն անդրադառնան՝ մեծ մասամբ չխուսվող, չուսումնասիրված, սակայն ակնհայտորեն իրական այն խնդրին, որը ցավ է պատճառում Հայաստանի հասարակության որոշ խավերին. այն կարելի է անվանել հակադարաբաղյան տրամադրություններ, որոնք մեծացել են մի շարք պատճառներով: Նման տրամադրություններին պետք է անդրադառնալ եւ դրանց դեմ պայքարել կառուցողական ու ոչ քաղաքականացված կերպով: Եթե միջոցներ չձեռնարկվեն, անցյալի սխալները կկրկնվեն. դարաբաղցիները կպիտակավորվեն, իսկ իրատեսները կհամարվեն դավաճաններ:

1.3. Ղարաբաղ

- Ա. Ինչպես վերը նշվեց, Ղարաբաղի կարգավիճակը պարունակում է ոչ թե մեկ, այլ երկու բաղադրիչ հարցեր: Առաջինն այն է, թե ո՞ւմ գերիշխանության տակ է այն գործում. սեփական ինքնիշխանությամբ որպես անկախ պետություն՝ ուն, թե՞ մեկ այլ պետության կամ մանդատի ներքո: Երկրորդն այն է, թե ինչպե՞ս է այն կառավարվում:
- Բ. Արդյո՞ք Ղարաբաղի ապագա կարգավիճակն արդեն որոշված է, թե՞ այն դեռեւս բանակցությունների առարկա է: Տարբեր դերակատարների դիրքորոշումները հակասական են եւ որոշ դեպքերում՝ առհասարակ փոխբացառող: Սա լավ չէ ապագայի համար.

1. Կարգավիճակի առաջին բաղադրիչի կապակցությամբ Ադրբեջանի նախագահը հայտարարել է, որ խնդիրը լուծված է. որ Ադրբեջանը՝ հայտարարելով Ղարաբաղի վրա դե յուրե ինքնիշխանության հաստատման մասին, այժմ նաեւ դե ֆակտո վերահսկողություն է հաստատել, բացառությամբ նախկին ԼՂԻՄ-ի՝ ինքնավար այդ տարածքի մի հատվածի, որը նա ժամանակավորապես վստահել է ռուս խաղաղապահներին: Հարեւաններն ու մնացյալ միջազգային համայնքը համաձայն են Ադրբեջանի հետ: Բաքուն ընդունում է, որ որոշ մանրամասներ պարզաբանման կարիք ունեն, սակայն դա կարելի է անել ավելի ուշ: Այդ մանրամասները կարգավիճակի երկրորդ բաղադրիչի մասն են՝ ինքնավարության այն ձեւն ու աստիճանը, որ հայերը կարող են ունենալ: Արդյո՞ք հայերը կունենան տարածքայնորեն սահմանված, ինքնակառավարվող հայկական Ղարաբաղ: Ոչ, ասում է Բաքուն: Երկարաժամկետ հեռանկարում, Ադրբեջանի կառավարության պնդմամբ, հայերը կարող են ապրել Ղարաբաղում, եթե ցանկանան, սակայն նրանք դա կարող են անել որպես Ադրբեջանի քաղաքացիներ եւ պիտի կառավարվեն որպես այդպիսիք: Բաքուն կարծում է, որ այդ հայերը պիտի ցանկանան լինել այդ շրջանի համար ծրագրվող՝ բարգավաճող տնտեսության մի մասը: Ադրբեջանի նախագահը մինչ պատերազմը հայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզը կարող էր ինքնավարություն ունենալ Ադրբեջանի կազմում: Բայց սա մինչ այն էր, երբ Ադրբեջանն ստիպված եղավ գնալ պատերազմի, որպեսզի հետ շրջի Ղարաբաղի առաջին պատերազմի արդյունքները: Դժվար է ասել, թե այդ դիրքորոշումն արդյո՞ք նորից կփոխվի:
2. Ռուսաստանի նախագահը, որ միջնորդ հանդիսացավ հրադադարի հայտարարության համար, պատերազմից հետո ավելի քան մեկ անգամ հայտարարել է, որ Ղարաբաղը Ադրբեջանի մաս է կազմում, որ նա ավելի վաղ չմիջամտեց պատերազմին, որովհետեւ Ռուսաստանը Ղարաբաղը համարում էր Ադրբեջան, եւ գորք ուղարկեց միայն այն ժամանակ, երբ Ադրբեջանը խնդրեց: Ուստի պարզ է, որ երբ Ռուսաստանը խոսում է կարգավիճակի խնդրի մասին, նկատի ունի կարգավիճակի երկրորդ բաղադրիչը. արդյո՞ք այն, ինչ մնացել է Ղարաբաղից, ապագայում ինքնակառավարվող տարածք է լինելու, արդյո՞ք Բաքվի կողմից ենթադրվող լուծումը պիտի հաղթանակի, թե՞ որեւէ մի այլ կարգավորում պիտի կիրառվի:
3. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարն անդրադարձել է երկրորդ այս չափմանը՝ երկու փոքր-ինչ հակասական հայտարարություններով. (1) ԵԱՀԿ Մինսկի խումբը կարող է զբաղվել այդ հարցով, եւ (2) կարգավիճակը պետք է քննարկել մի քանի տարի հետո, երբ հայերն ու ադրբեջանցիները ապրած կլինեն միասին, եւ մյուսները կարող են տեսնել, թե ինչպիսին են նրանց փոխհարաբերությունները. այն ժամանակ կարելի է լուծումներ պատկերացնել, որոնք այսօր անհնար են թվում:

4. Ղարաբաղի իշխանությունը երկու բաղադրիչներն էլ համարում է չլուծված. նա չի ճանաչում Ադրբեջանի գերիշխանությունն այդ տարածքում, կտրուկ հայտարարել է, որ ոչ մի հայ չի մնա Ղարաբաղում, եթե Ղարաբաղը հայտնվի ադրբեջանական գերիշխանության տակ, նա դեռևս նշում է անկախության համար պայքարի մասին եւ կասկած չունի, որ ցանկացած իրավիճակում պետք է ինքնակառավարվող լինի: Այդ իշխանության համար միակ կարելուրագույն փաստը ռուսական զորքերի ներկայությունն է, որոնք ներկայացնում են ավանդական Ռուսաստանին՝ հայերի պաշտպանին, որի հետ Ղարաբաղի իշխանությունն այսօր կապում է այդ տարածքի ապագան:
5. 2020 թ. նոյեմբերի 10-ի հրադարարի հայտարարությունը, որը համաձայնությունից ավելին է, բայց պայմանագրից նվազ մի փաստաթուղթ, բացահայտորեն չի անդրադառնում կարգավիճակի հարցին: Սակայն, այդ փաստաթղթի չորրորդ կետի առաջին նախադասությունը հայտարարում է, որ հայկական ուժերը դուրս կգան Ղարաբաղից ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայմանը զուգահեռ: Հարցն այն է, թե ինչն է պիտի դուրս գան: Ոմանց համար թաքնված պատասխանն այն է, որ Հայաստանի զորքերն իրավունք չունեն այնտեղ լինելու, քանի որ Ղարաբաղը ադրբեջանական տարածք է: Այդուամենայնիվ, մինչ այսօր Հայաստանի կառավարությունը որեւէ հայտարարություն չի արել, որ համաձայն է այդ գնահատման հետ, եւ կան նշաններ, որ կառավարությունը նախկինի պես Արցախը Ադրբեջանի մաս չի համարում, եւ որ Մինսկի խումբը պետք է շարունակի բանակցել Ղարաբաղի ապագայի շուրջ:
6. Բացի այդ, որեւէ երկիր, օտարերկրյա առաջնորդ, ոչ էլ տարածաշրջանային կամ միջազգային որեւէ կազմակերպություն չի դատապարտել Ադրբեջանին՝ նոր պատերազմ սկսելու եւ ոչ միայն յոթ գրավյալ տարածքները, այլեւ նախկին ԼՂԻՄ հարավային մասն ու Շուշին հետ վերցնելու համար: Դատապարտումներ չկային, ուր մնաց արդյունքները հետ շրջելու պահանջներ լինեին, չնայած այն հանգամանքին, որ այդ արշավը մի շարք հատկանիշներ ուներ, որոնք հակասում էին միջազգային չափանիշներին:
7. Այսպիսով, կարելի է ենթադրել, որ գոնե հարեւաններն ու միջազգային հանրությունը, ներառյալ «Հայաստանի ընկերները», վերահաստատել են իրենց այն դիրքորոշումը, որ Ղարաբաղը Ադրբեջանի մասն է, եւ այդ հաղթանակին հասնելու Ադրբեջանի կիրառած միջոցները որեւէ բան չեն փոխել ու չեն փոխելու:
8. Նրանք, ովքեր հակառակն են պնդում, կարելի է ասել, որ ինքնախաբեության մի նոր շրջանի մեջ են ներգրավված: Որեւէ այլ լուծում հետապնդելը, ինչպիսին, օրինակ, Ղարաբաղի անկախությունն է, ոչ միայն անօգուտ է, այլև ներկայիս պայմաններում կարելի է նաեւ վտանգավոր համարել:
9. Ղարաբաղում հայերին տրվելիք ինքնակառավարման մակարդակի առնչությամբ անորոշությունները մնում են. այն դեպքում, երբ ռուս խաղաղապահները դեռևս

փնտրում են հստակորեն սահմանված մանդատ եւ իրենց պարտավորություններն ու իրավասությունները ճշտող փոխհամաձայնեցված կանոններ չունեն: Ղարաբաղի հնարավորությունները շատ ավելի սահմանափակ կլինեն, քան Հայաստանին: Քանի դեռ ռուս խաղաղապահները Ղարաբաղում են, հավանական է, որ պիտի որոշեն, թե արդյոք Ղարաբաղի բանակը պիտի գոյություն ունենա, եւ եթե այո, որքան ժամանակով եւ ինչ նպատակով: Բաքուն հայտարարել է, որ անհրաժեշտություն չի տեսնում, որ Ղարաբաղը զինվորներ ունենա:

- Դ. Այս անորոշությունները չեն կարող նպաստել բոլոր դարաբաղցիների՝ իրենց տները վերադառնալուն եւ այնտեղ երկարաժամկետ մնալու հանձնառությանը: Դեռեւս ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը կարծես չեն շտապում վերացնել այդ անորոշությունը:
- Ե. Ռուսաստանը հանգիստ է նոյեմբերի 10-ի հայտարարության հիֆրիդային բնույթի հետ (ո՛չ պարզապես հրադադար, ո՛չ էլ լիարժեք միջազգային պայմանագիր), քանի որ այն համապատասխանում է իր շահերին, բացառությամբ նրա, որ փորձում է հստակեցնել իր խաղաղապահ զորքերի մանդատը: Ռուսաստանը կցանկանար ամրապնդել իր ներկայությունն Ադրբեջանում՝ հստակ մանդատով. Ադրբեջանն առայժմ հնարամտորեն շրջանցել է այդ փորձերը:
- Զ. Տարածաշրջանի ապագայի տեսանկյունից, որն առաջիկա մի քանի տարիներին առնվազն լինելու է ռուս-թուրքական (եւ իրանակա՞ն) տնօրինության տակ, եւ որտեղ, միեւնույն ժամանակ, հիմնական վիճակը անորոշությունն է, տարածաշրջանային տերություններից մեկը կամ երկուսն էլ կարող են ավելի կամ պակաս հաստատակամ լինել միջնաժամկետ հեռանկարում: Ռուս խաղաղապահներին կարող է խնդրեն հեռանալ արդեն 2025 թ.-ին, առաջին հնգամյա ժամկետի վերջում, կամ դրանից հետո՝ ցանկացած հնգամյակի վերջին: Չնայած ռուսական ներկայությունը Ղարաբաղում ենթադրում է, որ Ռուսաստանն ամեն ինչ կանի այնտեղ երկար ժամանակ մնալու համար, Մոսկվան կարող է որոշել, զոնե տեսականորեն, այլ քաղաքականություն հետապնդել ի՛ր իսկ պատճառներով:
- Է. Որեւէ քաղաքականություն կամ գործողություն, որն արտացոլի նոյեմբերի 10-ի հայտարարությունը մերժելու կամ այդ փաստաթղթում ամրագրված պատերազմի ելքը ուժի գործադրմամբ շրջելու որոշում, կարող է պատճառ դառնալ, որ Ադրբեջանը վերկսի ռազմական գործողությունները Ղարաբաղի մնացյալ հատվածի նկատմամբ եւ, հավանաբար, կրկնի իր ճնշման արշավը Հայաստանի սահմանին:
- Ը. Չպետք է մոռանալ, որ չնայած Ղարաբաղի ղեկավարները չէին հրավիրվել ստորագրելու 2020 թ. նոյեմբերի 10-ի հրադադարի հայտարարությունը, նրանք Հայաստանի վարչապետին հորդորել էին համաձայնել ցանկացած պայմանի եւ ստորագրել այդ հայտարարությունը, որպեսզի վերջ դրվի ադրբեջանական առաջխաղացմանը: Այսպիսով, Ղարաբաղի իշխանություններն օգտվեցին Հայաստանի արած այդ քայլից եւ այդ առումով պատասխանատվություն են կրում:
- Թ. Նոյեմբերի հայտարարությունն ունի անորոշություններ, որոնց մի մասը կառուցողական է: Այդպիսի անորոշությունները հնարավորություններ են ընձեռում

բարելավելու Հայաստանի դիրքը՝ Ադրբեջանի հետ ճարտար ու դրական ոգով բանակցությունների վարման միջոցով:

- Ժ. Այսպիսի երկխոսությունների եւ անորոշությունների օգտագործմամբ է, որ Արեւմուտքը մտադիր է կրկին գործուն կերպով ներգրավվել քննարկումներում ու բանակցություններում, որի կարիքը Ադրբեջանը, Ռուսաստանն ու Թուրքիան չեն տեսնում: Հայկական կողմը, հատկապես Հայաստանը, կարող է օգտվել Արեւմուտքի վերադարձից, եթե (ա) սխալ չմեկնաբանի այդ հարցում Արեւմուտքի՝ ավելի ներգրավման ցանկության պատճառները, եւ (բ) չզերագնահատի այն, ինչ Արեւմուտքը կարող է եւ պատրաստ է տալ:
- Ի. Միջազգային համայնքին՝ Ղարաբաղյան հակամարտությանը կապելուն ուղղված քաղաքականությունը ծրագրելիս՝ Հայաստանն ու Ղարաբաղը պետք է գիտակցեն, որ պատերազմի արդյունքը (ա) նվազեցրել է հակամարտության մի շարք չափումների շրջանակը եւ (բ) այն դարձրել է տարաշաճրջանային՝ ի համեմատ առավել միջազգայնացված բնույթի, որն ուներ մինչեւ պատերազմը:
- Լ. Հակամարտությունը ներկայումս տեղափոխվել է նաեւ Հայաստանի սահմաններ: Ադրբեջանն օգտագործում է հարձակողական հռետորաբանություն, ներառյալ մի նոր պատերազմի սպառնալիք. պատերազմ, որը կուղեկցվի ռազմական գործողություններով՝ Հայաստանի հետ իր սահմանին, եւ որը կհետապնդի երկու նպատակ: (ա) Հայաստանին պարտադրել արեւմտյան Ադրբեջանի ու Նախիջեւանի միջեւ բացելու հաղորդակցության/փոխադրական մի հատուկ կապ, որի մասին արձանագրված է 2020 թ. նոյեմբերի 10-ի հայտարարության մեջ: Բաքվի կարծիքով, սա պետք է լինի Լաչինին համարժեք մի միջանցք, իսկ Հայաստանի կարծիքով՝ անհրաժեշտություն չկա հատուկ կարգադրության, որ բաց, բնական հաղորդակցությունը բավարարի այդ պահանջը: Եւ (բ) Հայաստանին պարտադրել, որ պաշտոնապես ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ինչը կհանգեցնի Հայաստանի կողմից իր իսկ տարածքային ամբողջականության ճանաչման եւ վերջ կդնի իր՝ հետպատերազմյան անկայունություն առաջացնող վարվելակերպին: Այս երկու՝ իրար հետ կապված հարցերի լուծումը, Հայաստանի թե Ադրբեջանի նախընտրած այլընտրանքով, նշանակալի հետեւանքներ պիտի ունենա Հայաստանի տարածքի, տնտեսության եւ սահմանամերձ համայնքների համար: Հետեւաբար, Հայաստանը սա պետք է համարի իր արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրը՝ դառնալով այդ հարցի լուծման շահախնդիր կողմ եւ որոշում կայացնողներից:

1.4. Բանավեճի անհրաժեշտությունը

- Ա. Մի երկրի համար, որի ընտրության հնարավորություններն արդեն սահմանափակ են, առողջ քննարկման ու բանավեճի անհրաժեշտությունը՝ ի տարբերություն բանավոր վիրավորանքների ու հիստերիկ աղմուկի, որոնք քննարկումն անհնար են դարձնում, խիստ կարեւոր են:

- Բ. Բանավեճը կարող է սկսել՝ պատասխանելով մի քանի փոխկապակցված ու անմիջականորեն համապատասխան հարցերի. Հայաստանն ու Ղարաբաղն արդյո՞ք ընդունում են 2020 թ. նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունը: Եթե այո, ապա դրան ի՞նչ է հետեւելու: Եթե ոչ, ապա Հայաստանի կառավարությունը կամ Ղարաբաղի իշխանությունները ինչպե՞ս կառաջարկեին փոխել այն: Եթե բանակցությունների միջոցով, ապա ո՞ւմ հետ: Եթե պատերազմով, ապա ի՞նչ բանակով: Արդյո՞ք Հայաստանի վերակառուցումը պիտի լինի նոր իրողությունների հիմքի վրա, թե՞ Հայաստանը նպատակ ունի փոխել իրողություններն ու Հայաստանը դնել մշտական պատերազմի ճանապարհին:
- Գ. Այս եւ այլ հարցերի շուրջ արդյունավետ բանավեճի համար կարելու է սահմանել, թե կարծիքների տարբերություններն արդյո՞ք (ա) ռացիոնալ ու ստուգելի տարբերությունների վրա հիմնված վերլուծությունների պատճառով են, եւ, հետեւաբար, դառնում են մեկնաբանությունների հարց, (բ) գուտ քաղաքական բնույթի են, որ նշանակում է՝ դիրքորոշումներն ու քաղաքականությունները պարզապես իշխանության հասնելու հարմար գործիք են, (գ) փիլիսոփայական բնույթի են, որը նշանակում է՝ կան խոր ճեղքեր այն պատկերացումների միջեւ, որ տարբեր խմբերն ունեն Հայաստանի, հայ ժողովրդի ապագայի եւ տարածաշրջանի ու աշխարհի հետ նրանց հարաբերությունների մասին:
- Դ. Երկրորդ հարցը, որին հիմա պետք է պատասխանել, այն է, թե ինչպիսի՞ Հայաստան են նրա ղեկավարներն ու ժողովուրդը պատկերացնում ապագայի համար՝ հաշվի առնելով պետության կարողություններն ու ներուժը, իրական ակտիվներն ու սահմանափակումները: Այս հարցերի պատասխանը կսահմանի կամ գոնե պետք է սահմանի Հայաստանի կարճաժամկետ ու երկարաժամկետ քաղաքականությունները: Պատրանքները պետք չէ ներկայացնել որպես տեսլական: Տեսլականները, ի տարբերություն պատրանքների, պետք է համապատասխանեն այն ակտիվներին, որոնք կա՛մ ներկայումս առկա են, կա՛մ կարելի է դրանք ձեռք բերել պատշաճ ու խելացի ռազմավարություններով եւ ներդրումների միջոցով: Հայաստանը եւ հայ ժողովուրդը չպետք է մոռանան, որ կենսունակ, գործող, մի խոսքով՝ բնականոն պետություն ստեղծելու նպատակը գոնե նախապայմանն է ցանկացած այլ տեսլականի, որ կարելի է փայփայել:
- Ե. Թույլ կողմերը գիտակցելն ամոթ չէ, ներառյալ ուրիշների նկատմամբ ունեցած թուլությունները: Դա չանելն է վնասակար: Կոշտ հռետորաբանությունն ու առավելապաշտությունը չեն վերացնի անհավասարակշռությունը, բացառությամբ ներքին քաղաքական սպառնան համար: Հայաստանի եւ Ղարաբաղի խոցելի կողմերը այլապես տեսանելի են բոլորին: Հնարավոր չէ փոխհատուցել ներկայիս թուլության նշանակությունը՝ վաղը գերտերություն դառնալու նախագծով, որը պահանջում է քաղաքացիներին մթության մեջ պահել, կամ որ ավելի վատ է՝ կուրացնել նրանց:
- Զ. Կարելու է հիշել, որ այն, ինչ Հայաստանի առաջնորդներն ասում եւ անում են, նույնքան կարելու է իր հետեւանքներով, որքան այն, ինչ ուրիշներն են ասում եւ անում:

Է. Հայաստանի ղեկավարներն ու քաղաքացիներն ի վիճակ են եզրակացնելու, որ այս հարցերի շուրջ պետք է բանավեճի մեջ մտնել եւ պատասխանների միջեւ ընտրություն կատարել: Քաղաքական կուսակցությունների, մտավորական վերնախավերի եւ ՋԼՄ-ների պատասխանատվությունն է վստահելի այլընտրանքներ ներկայացնել քաղաքացիներին՝ որպես Հայաստանի հավակնությունների համախմբման բանալի՝ գործող պետություն եւ ավելին լինելու համար:

Բաժին 2. Առաջարկություններ

Մինչ առանձին մտահոգություններին ու առաջարկություններին անդրադառնալը՝ շատ օգտակար է կրկին նշել Հայաստանի ապագայի համար առանցքային կարելություն ունեցող երեք հիմնական ուղղությունները, որոնք 2018 թ.-ին ձևակերպել էր հանգուցյալ ականավոր դիվանագետ Ռուբեն Շուգարյանը.

- Ա. Հայաստանը պետք է իր տունը կարգի բերի:
- Բ. Հայաստանը պետք է համաձայնեցնի պետական եւ ազգային շահերն՝ առհասարակ, սակայն հատկապես հակամարտությունների ու պատերազմների ժամանակ:
- Գ. Հայաստանը պետք է ազգային ինքնության հարցերի շուրջ լուրջ քննարկում ունենա, որը կարող է հանգեցնել համաձայնության՝ այն հարցի շուրջ, թե որտեղ է գտնվում Հայաստանը մշակութային եւ քաղաքական առումով:⁷

Քաղաքականություն մշակելու չորս եղանակ կա.

1. Ռեֆլեքսորեն կամ ամբարտավան ինքնագոհությամբ,
2. Մտածելով ինստիտուցիոնալ կամ կուսակցական շահերի մասին,
3. Կեղծելով վերլուծությունը. սկսելով կարծիքից կամ համոզմունքից, ներկայացնելով այն որպես լուրջ քննարկման եզրակացություն, այնուհետեւ վերադառնալով վերլուծությանը՝ գտնելու այն արդարացնող փաստեր եւ փաստարկներ,
4. Իրականում ճիշտ հարցադրումն անելով, վերլուծելով ու գնահատելով՝ առանց կանխորոշված արդյունքների, հաշվի առնելով կարճաժամկետ ու երկարաժամկետ փոփոխություններն ու օրինաչափությունները, որոնք հանգեցնելու են լավագույն հնարավոր արդյունքներին:

Սույն զեկույցի հեղինակները կարծում են, որ Հայաստանն ու Ղարաբաղն այլեւ չեն կարող իրենց թույլ տալ առաջին երեք տարբերակների շռայլությունը. որոնք կարող են հանգեցնել եւ հանգեցրել են աղետալի հետեւանքներով պատրանքների վրա հիմնված քաղաքականության:

Հեղինակների առաջարկությունները վերաբերելու են քաղաքականության մշակման եւ իրագործման երկու փուլերին:⁸

⁷ *Does Armenia need a Foreign Policy?* (Հայաստանն ունի՞ արտաքին քաղաքականության կարիք), ք. հրատարակություն, 2019, էջ. 269-270.) (Այս հատորից ավելի երկար, ներկայացուցչական մեջբերման համար տե՛ս Հավելված Դ):

⁸ Սույն զեկույցը չի անդրադառնալու մոտալուտ մտահոգություններին, ինչպիսիք են՝ Ադրբեջանում դեռեւս կալանքի տակ գտնվող քաղաքացիական անձանց եւ ռազմագերիների վերադարձը, եւ այլ անմիջական մարդասիրական ճգնաժամեր, որոնք առաջ են եկել պատերազմի հետեւանքով ու որոնք համաձայնեցվել են 2020 թ. նոյեմբերի 10-ի հայտարարության մեջ:

Առաջին փուլը ներառում է անմիջական մտահոգությունները: Ի՞նչ պետք է անել, եւ ինչ ՉՊԵՏՔ է անել ՀԻՄԱ: Փոքր պետությունները, հատկապես նրանք, որոնք հայտնվել են սարսափելի իրավիճակում, հաճախ հավելյալ դժբախտություններ են ստեղծում՝ «ինչ ՉՊԵՏՔ է անել»-ու ցուցակ չունենալու պատճառով:

2.1. Անմիջական մտահոգություններ

Քայլեր, որոնք պետք է ձեռնարկվեն հիմա

- Ա. Հայաստանի կառավարությունն ու հայ քաղաքական ուժերը պետք է զիտակցեն պետության ու ժողովրդի կրած կորուստներն ամբողջությամբ ու խորությամբ, որոնք կխոչընդոտեն քաղաքականություն ձեւավորելու եւ իրագործելու Հայաստանի կարողությունը, ինչպես նաեւ առկա քաղաքական ընտրանքների սահմանափակ բնույթը: Առանց այդպիսի գույքագրման կառավարությունն, ավելի հավանական է, որ նոր սխալներ թույլ տա:
- Բ. Անհրաժեշտ է ստեղծել անկախ հետաքննական մի հանձնաժողով, որը կուսումնասիրի այն գործընթացներն ու քայլերը, որոնք Հայաստանին հանգեցրին պատերազմի, եւ պարտության պատճառները՝ ի հակակշիռ մասնակի տեղեկատվության արտահոսքի վնասաբեր գործելակերպի: Այդպիսի հանձնաժողովը պետք է ունենա հետաքննության համար բոլոր լիազորությունները, սակայն լինի կառավարությունից անկախ, եւ ազատ՝ քաղաքական ազդեցությունից ու միջամտությունից: Հետաքննությունը պետք է լինի փաստերի վրա հիմնված եւ ապաքաղաքական:
- Գ. Կառավարությունը եւ քաղաքական ուժերը պետք է ամբողջովին, ազնվորեն ու իրատեսորեն գնահատեն բուն պատերազմի ու նաեւ հակամարտության կողմերի դիրքորոշումների վերաբերյալ հեռու կամ մոտ գտնվող այլ երկրների, միջազգային կազմակերպությունների եւ միջնորդների քաղաքականություններն ու դիրքորոշումները՝ պատերազմից առաջ, դրա ընթացքում եւ դրանից անմիջապես հետո:
- Դ. Կառավարությունը պետք է զգուշորեն կշռի ցանկացած քայլ կամ քաղաքականություն, որոնք չեն ընդունում մի պարզ իրողություն. ներկայումս Ղարաբաղի ճակատագիրն ավելի շատ կախված է Ռուսաստանից, Ադրբեջանից, թերեւս նաեւ Թուրքիայից, հնարավոր է նաեւ Իրանից: Այս երկրներն ասելիք ունեն նաեւ Հայաստանի ընտրանքների եւ սեփական քաղաքականությունն իրագործելու կարողության վերաբերյալ: Կառավարությունն, ուստի, խոհեմ կգտնվեր, եթե լրջորեն քններ այս պետությունների հետ գործ ունենալու ամենաարդյունավետ եղանակը:
- Ե. Կառավարությունը պետք է սկսի պաշտպանության հայեցակարգի եւ զինված ուժերի նպատակի վերասահմանման գործընթաց՝ ներառելով օդային ուժի դերը, որը Զինված ուժերի խիստ ծախսալից մի ճյուղ է եւ որեւէ դեր չխաղաց վերջին պատերազմում:

Կառավարությունը պետք է վերակազմի պետության զինված ուժերը՝ հաշվի առնելով նոր իրողություններն ու նոր տեխնոլոգիաները, իր պաշտպանության հայեցակարգի վերասահմանման հիման վրա:

- Ձ. Կառավարությունը պետք է նախաձեռնի իր անվտանգության ռազմավարության վերանայում, ներառյալ՝ նոր դաշինքների որոնում:
- Է. Կառավարությունը պետք է նախաձեռնի իր արտաքին քաղաքականության խոր ուսումնասիրություն, բայց նաև վերարժեքավորի իր դիվանագիտությունը, վերանայի դիվանագետների պատրաստման հարցը, եւ վերահիմաստավորի Արտաքին գործերի նախարարության դերը:
- Ը. Կառավարությունը պետք է նվազեցնի լարվածությունը Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ, եւ նրանց հետ բացի խոսույթի ուղիներ՝ խորհրդապահական կամ այլ կերպ, հասկանալու համար նրանց քաղաքականությունները՝ ուղղակի ճանապարհով ու սառնասրտորեն: Այս քննարկումները կարող են վերածվել ներկայումս կամ ապագայում փոխադարձ շահագրգռություն ներկայացնող հարցերի շուրջ բանակցությունների: Հարեւաններն ու միջազգային հանրությունը, վստահաբար, կսատարեին նման նախաձեռնությունները: Մա ներառում է նաև Ռուսաստանը, որը բացահայտորեն հայտարարել է այդ մասին:
- Թ. Կառավարությունը պետք է հրավիրի Հայաստանի եւ Մփյուռքի հնարավոր լավագույն ուղեղներին՝ օգնելու համար վերը նշված բոլոր հետազոտություններում եւ ուսումնասիրություններում, ներառյալ՝ կիբեր տեխնոլոգիաների եւ ՏՏ ոլորտների փորձագետներին:
- Ժ. Կառավարությունը պետք է հատուկ զգուշությամբ գնահատի իր բանակցող եւ որոշումներ կայացնող անձնակազմին:
- Ի. Նոր կառավարությունը պետք է գործի այն հիմքով, որ « ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» նոր ստատուս քվոյի մեջ մտնելը չափից ավելի մեծ բեռ կլինի՝ հաշվի առնելով Հայաստանի ներկայիս բազմաշերտ թույլ կողմերը, եւ կխոչընդոտի սոցիալական ու տնտեսական կյանքի մի շարք ոլորտների զարգացումը: Այս փաստը նույնպես պետք է հստակորեն ու միանշանակ կերպով հաղորդվի Հայաստանի ժողովրդին:
- Լ. Հայաստանը կարող է եւ պետք է առաջնորդող դեր ունենա Ղարաբաղին բարձր մակարդակի տնտեսական ու սոցիալական օժանդակության տրամադրմամբ՝ մարդկային ռեսուրսների զարգացման հարցում:
- Խ. Ղարաբաղի հետ համաձայնության մեկ կետը պետք է լինի այն, որ լավագույնը, որ նա հիմա կարող է անել, Ադրբեջանի հետ առկա իրավիճակի լիցքաթափումն է. այնպես, որ Ադրբեջանի ղեկավարները քաջալերվեն՝ շփման մեջ մտնելու համար Ղարաբաղի իշխանությունների հետ, եւ հակառակը. Ղարաբաղի իշխանություններն էլ քաջալերվեն՝ շփման մեջ մտնելու համար Ադրբեջանի հետ:
- Օ Վերջապես, ինչ-որ ժամանակ՝ շատ շուտով, Հայաստանը պետք է արմատական, ռազմավարական որոշում կայացնի այն հարցի վերաբերյալ, թե ինչպես պիտի արձագանքի ստեղծված այս նոր իրողություններին, թե ինչպիսի պետության ու

հասարակության է ձգտում, եւ ինչ դեր պիտի ստանձնի Հարավային Կովկասի տարածաշրջանում: Հենց այդ ընտրությունը կատարվի, այն պետք է ներկայացվի եւ ամբողջապես բացատրվի Հայաստանի ժողովրդին ու ողջ հայությանը: Հայաստանն ու հայ ազգը արժանի են տեղեկացված լինելու, թե որտեղ են գտնվում եւ ինչ տարբերակներ ունեն, եթե Հայաստանը ցանկանում է խուսափել ձախողված պետություն լինելուց եւ կարելու դառնալ տարածաշրջանում ու դրանից դուրս: (Տե՛ս Եզրակացություններում նկարագրված տարբերակները):

Ինչ ՉՊԵՏՔ Է անել

- Ա. Կառավարությունն իր դիվանագիտական խոսույթում չպետք է հիմնվի ռեֆլեքսային եւ հակազդական (reactive) քաղաքականությունների ու հոետորաբանության վրա: Պետության դիվանագիտական հնարավորությունները չեն կարող սահմանափակվել ռեֆլեքսային հակառակությամբ ու թշնամական հոետորաբանությամբ, ինչը որոշ քաղաքական ուժեր ցուցաբերում են Հայաստանի չորս հարեւաններից երկուսի, նույնիսկ երեքի նկատմամբ. հոետորաբանություն, որը հեշտությամբ շփոթվում է քաղաքականության կամ ռազմավարության հետ:
- Բ. Կառավարությունը չպետք է շփոթի լոբբինգը դիվանագիտության հետ, կամ ենթարկվի լոբբիստական չափանիշների ու նպատակների ազդեցությանը: Դիվանագիտությունը մեծ ու փոքր ազգերի շահերի հետապնդումն է միջազգային ասպարեզում: Լոբբինգը սփյուռքյան համայնքային կազմակերպությունների գործն է. նրանք պետք է պահպանեն ընդունող երկրների օրենքներն ու կանոնները, չեն կարող շատ հեռանալ այդ երկրների շահերից, ինչպես նաեւ ենթարկվում են ներհամայնքային մրցակցությունների ու տեղական նկատառումների: Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովրդի ու պետության անվտանգության շահերը չեն կարող ստորադասվել լոբբիստական կազմակերպությունների պահանջներին:
- Գ. Նմանապես, կառավարությունը եւ քաղաքական ուժերը չպետք է ազգային օրակարգը շփոթեն պետության օրակարգի հետ: «Ազգը» ներառում է բոլոր հայերին, անկախ նրանից, թե որտեղ են նրանք գտնվում, ինչ վարչակարգերի ու կառավարությունների ներքո են ապրում: Պետությունը տարածքայնորեն սահմանված միավորում է՝ հստակ սահմանված բնակչությամբ, որի անվտանգության ու բարեկեցության համար պետությունը պատասխանատու է միջազգային իրավունքներով ու պարտականություններով: Պետությունն ունի կառավարություն, որը պատասխանատու է իր ժողովրդի առջեւ եւ նրա համար: Պետության ու ժողովրդի, որի համար այդ պետությունը պատասխանատու է, կենսական շահերը չպետք է թուլացվեն, նույնիսկ՝ տապալվեն, փորձելով դա հաճելի դարձնել սփյուռքյան համայնքներին:
- Դ. Կառավարությունը պետք է դիմադրի իր ներկայիս դիվանագիտությունը այնպիսի փաստարկների վրա հիմնելու գայթակղությանը, որոնց նպատակն է ապացուցել, որ Ադրբեջանն այս պատերազմը հաղթեց անարդարորեն, ինչը հավասարազոր է

պարտության արդարացման ու կարեկցանք մուրալու վրա հիմնված դիվանագիտության: Այլ երկրների կառավարությունները Հայաստանի կառավարությունից ավելի լավ գիտեն Թուրքիայի ու իսլամական ջիհադիստների կողմից Ադրբեջանին տրամադրված օգնության մասին: Այդ փաստերը Ադրբեջանի հաղթանակը պակաս կարեւոր, իսկ Հայաստանի պարտությունը պակաս շոշափելի չեն դարձնում:

- Ե. Կառավարությունը չպետք է մտածի, որ արտաքին քաղաքականության նպատակը Ադրբեջանի եւ Թուրքիայի հայտարարություններում ու գործողություններում սխալներ գտնելն ու դրանք գովազդելն է, կամ արտաքին քաղաքականությունը նման ցուցակների վրա հիմնելը: Փոխարենը, կառավարությունը պետք է հաշվի առնի այս երկու երկրների բոլոր հայտարարություններն ու գործողությունները, եւ հասկանա Թուրքիայի ու Ադրբեջանի ողջ բարդ ու երբեմն հակասական քաղաքականությունները, որպեսզի բաց չթողնի դիվանագիտության միջոցով հիմնախնդիրներ քննարկելու եւ թերեւս նաեւ լուծելու հնարավորությունները:
- Զ. Հայ դիվանագիտությունը պետք է խուսափի եւ զգուշանա մեծ տերությունների կողմից` Ադրբեջանի ու Թուրքիայի հետ ունեցած Հայաստանի ներկայիս խնդիրների որեւէ հնարավոր գործիքավորումից (instrumentalization): Այլ կառավարությունները չունեն մշտական «ընկերներ» ու «թշնամիներ»: Այդպիսի գործիքավորումները, ըստ սահմանման, հնարավոր են այլ երկրների շահերի ժամանակավոր համընկնումների պատճառով, եւ, հետեւաբար, ցանկացած ժամանակ ենթակա են փոփոխման ու հետշրջման: Նման գործիքավորման իրական օգտակարությունը կարող է շատ քիչ լինել, սակայն բացասական հետեւանքները կարող են շատ ավելի նշանակալի լինել:
- Է. Հայաստանի կառավարությունը չպետք է այլ կառավարություններին դերեր վերագրի, որոնք այդ երկրները չեն կարող ստանձնել, եւ որոնք նրանք, իրականում, չեն ստանձնել ու հստակեցրել են, որ չեն էլ ստանձնելու: Եւ իր դիվանագետներին չպետք է այնպիսի հանձնարարություններ տա, որոնք անհնար է իրագործել:
- Ը. Հայաստանը չպետք է ապավինի իր որեւէ թշնամի երկրի «մոտալուտ անկմանը» կամ որեւէ հակառակորդ առաջնորդի` իշխանությունից հեռացմանը կամ պարտությանը: Նույնիսկ իրենց ամենաթույլ վիճակում, Հայաստանի շուրջը գտնվող երկրների մեծ մասը, որ կարեւոր են, ավելի ուժեղ են, քան Հայաստանը:
- Թ. Կառավարությունը պետք է խուսափի հակառակորդ պետությունների եւ կառավարությունների նվաստացմանն ապավինելուց. որպես մի գործիք, որպեսզի ավելի ժողովրդավար եւ մարդու իրավունքների նկատմամբ ավելի մեծ հարգանք ունեցող պետություն երեւա: Լավագույն դեպքում սրանք պարզապես շեղող երեւույթներ են, որոնք թվում է, թե քողարկում են իրական քաղաքական նպատակների կամ ռազմավարության բացակայությունը:
- Ժ. Կառավարությունը եւ քաղաքական առաջնորդները չպետք է պատրանքայնությունը շփոթեն քաղաքական երեւակայության կամ հեռանակարային ծրագրի հետ: Առաջինը բնորոշվում է իրականության հետ որեւէ առնչության բացակայությամբ, երկրորդը

հիմնված է հասանելի, իրատեսական նպատակների եւ այնպիսի մեթոդների վրա, որոնք դեռեւս չեն օգտագործվել կամ դրանց մասին չեն մտածել:

- Ի. Կառավարությունը չպետք է ենթադրի, որ այն, ինչ վատ է Ադրբեջանի եւ Թուրքիայի համար, Հայաստանի ու Ղարաբաղի համար լավ է, կամ այն, ինչ լավ է նրանց համար, անհրաժեշտաբար վատ է հայկական կողմի համար:
- Լ. Կառավարությունն ու քաղաքական առաջնորդները պետք է գիտակցեն, որ կարգախոսները, վեհ նպատակների հռչակումն ու բարոյական արժեքները ճանապարհային քարտեզ չեն հանդիսանում՝ երկարաժամկետ, նպատակաուղղված վերականգնման համար:
- Խ. Կառավարությունը չպետք է պետական հաստատությունների ու գերատեսչությունների վրա դնի պատասխանատվություններ ու նպատակներ, որոնց նրանք չեն կարող հասնել, որպեսզի ցույց տա, որ հավակնում է վեհ ծրագրերի եւ գաղափարների:
- Ս. Հաշվի առնելով Հայաստանի զինված ուժերի ներկայիս վիճակը, Հայաստանի կառավարությունը պետք է իր ուժերի ներածին չափով ամեն ինչ անի՝ խուսափելու համար ռազմական գործողությունների վերսկսումից. անկախ երկարաժամկետ հեռանկարում որդեգրված նպատակներից: Հայաստանն ու Ղարաբաղը չեն կարող իրենց նոր փորձություններ ու սխալ հաշվարկներ թույլ տալ:

2.2. Առաջարկներ՝ երկարաժամկետ արտաքին քաղաքականության զարգացման համար

1. Ղարաբաղի մասին

Ներքո նշվածները Ղարաբաղի ապագայի վերաբերյալ վարկածային հնարավորություններ են.

- Ա. **Անկախություն:** Սա պատերազմից առաջ եղած նպատակն էր եւ դեռեւս Ղարաբաղի արտաքին քաղաքականության նպատակների ցանկի մեջ է՝ չնայած այլեւս առաջատարը չէ: Այդ արշավը հիմնվում էր ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա: Այնուամենայնիվ, անկախությունն ավելի քիչ հավանական է պատերազմից հետո, քան պատերազմից առաջ էր, որի պատճառներն արդեն վերը քննարկվել են այս զեկույցի մեջ:
- Բ. **Անջատում հանուն փրկության (remedial secession):** Սա անկախության տանող մեկ այլ ուղի է, որն օգտագործվեց Կոսովոյի համար: Սակայն Արեւմուտքի կողմից այդ ուղին ստեղծելու եւ օգտագործելու պատճառն ավելի շատ կապված էր աշխարհաքաղաքական շահերի հետ, որոնք Ղարաբաղի դեպքում կիրառելի չեն: Հակառակը, այստեղ այլ պետությունների աշխարհաքաղաքական շահերը

պարտադրում են Ղարաբաղի անկախության չճանաչում՝ որեւէ պարագայում, քանի դեռ անհնարը չի դարձել հնարավոր եւ Ադրբեջանը դրան չի համաձայնել:

Գ. **Ռուսական խնամակալություն**՝ որեւէ տեսակի: Մա ներկայիս կարգավիճակն է եւ տարածվում է Ղարաբաղի այն հատվածի վրա, որն Ադրբեջանի ուղղակի վերահսկողության տակ չէ: Կարո՞ղ է այս կարգավիճակը կամ նրա որեւէ տարբերակ լուծում հանդիսանալ: Հրադադարի հայտարարությունը, որով հաստատվեցին խաղաղապահ ուժեր, կարող է երկարաձգվել յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Սակայն չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ դա կարող է մի օր ավարտվել, քանի որ Ադրբեջանը կարող է պահանջել ռուսներից՝ հեռանալ, կամ, որ քիչ հավանական է, Ռուսաստանը կարող է որոշել հետ քաշվել: Անորոշությունը, որը ցույց է տալիս այս իրավիճակը, լուրջ արգելք կարող է հանդիսանալ անվտանգության եւ վստահության համար, որի կարիքը Ղարաբաղի ժողովուրդն ունի՝ վերադառնալու եւ վերակառուցելու համար: Բացի այդ, ինչպես Ադրբեջանը կորցրեց համբերությունը՝ բանակցային լուծմանն սպասելով, այնպես էլ այս դեպքում նույնպես կարող է հասնել մի պահ, երբ նա չհանդուրժի ռուսական զորքերի ներկայությունը կամ Ղարաբաղի հայերի կողմից պատերազմի ելքի տրամաբանության մերժումը: Հարցը, որին անհրաժեշտ կլինի անդրադառնալ, այն է, թե արդյո՞ք Ռուսաստանը կպնդի մնալ Ադրբեջանում, եթե Ադրբեջանը գործի դնի Ռուսաստանի ներկայությունը դադարեցնելու իր իրավունքը:

Դ. **Ռուսական խաղաղապահների փոխարինումը մեկ այլ, թերեւս ԵԱՀԿ ոչ համանախագահող երկրով**: Ռուսաստանը կընդդիմանա նման քայլին, քանի որ դա կսպառնա տարածաշրջանում իր շահերին. Ադրբեջանը կարող է ողջունել այն՝ որպես իր ինքնիշխանությանն ավելի նվազ սպառնալիք ներկայացնող. Ղարաբաղը, անշուշտ, դեմ կլինի դրան, քանի որ չի վստահում ուրիշներին եւ կարող է զգացողություն ունենալ, որ դավաճանում է Ռուսաստանին:

Այն, ինչ առկա է, սցենարներ են, որոնք ավելի շուտ շեշտում, քան նվազեցնում են Ղարաբաղի եւ Ադրբեջանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի, Ռուսաստանի եւ Արեւմուտքի, եւ, հնարավոր է, Ղարաբաղի եւ Հայաստանի՝ փոխբացառող դիրքորոշումների միջեւ եղած ճեղքերը: Այս բազմաթիվ հակադրությունները ոչ մի լավ բան չեն նախանշում անվտանգության համար. անվտանգություն, որը հայերը պետք է զգան, երբ վերադառնան Ղարաբաղ կամ որոշեն, թե արդյո՞ք պիտի մնան այնտեղ կամ հեռանան այնտեղից:

Ղարաբաղի ապագայի համար գոյություն ունի նաեւ հինգերորդ հնարավորությունը.

Ե. **Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ փոխհամաձայնություն**: Ղարաբաղի կողմից Ադրբեջանի ինքնիշխանության ընդունումը՝ բարձր ինքնավարությամբ տարածքայնորեն սահմանված կարգավիճակի եւ ռուսական/միջազգային երաշխիքների ու ռուսական/միջազգային որոշ ներկայության դիմաց: Այս տարբերակը, զուցե, նույնպես կարելի է պահեստային համարել:

Այս տարբերակը շատ դարաբաղցիների կողմից դիտվում է որպես Ղարաբաղի «նախիջեւանացման» հստակ ուղի. այն է՝ Ղարաբաղի հայկական մեծամասնության դանդաղ նուսրացում եւ հայերի վերջնական կորուստ: Նման հավանականություն, անշուշտ, կա: Սակայն մինչ ամենավատը ենթադրելն ու դա համարելը որպես ամենահավանական հեռանկար, անհրաժեշտ է լուրջ եւ առարկայական վերլուծություն կատարել: Նման վերլուծությունը պետք է հաշվի առնի, որ Ղարաբաղն ինքնին այլեւս սպառնալիք չէ Ադրբեջանի համար, եւ պատասխանի հետեւյալ հարցին. հնարավո՞ր է, որ Բաքուն ունենա իր սեփական պատճառները, որպեսզի հայերը մնան Ղարաբաղում: Այս տրամաբանությամբ չափից ավելի ենթադրություններ են ընդունվել որպես անքննարկելի ճշմարտություններ, եւ չափից ավելի քիչ վարկած է ուսումնասիրված՝ այդպիսով սահմանափակելով այն այլընտրանքները, որոնք կարելի է նկատի ունենալ առնվազն որպես քննարկման արժանի:

Արժե կրկնել. անհնարինին ձգտելը կարող է թողնել առանց որեւէ ձեռքբերման. աշխատանքը՝ ուղղված նրան, թե ինչ է հնարավոր եւ ինչը կարելի է փրկել, ավելի հավանական է, որ արդյունք տա:

- Ա. Իդեալականորեն, Ղարաբաղի եւ Հայաստանի կատարած ընտրությունների միջեւ որեւէ տարբերություն պետք է ծառայի միեւնոյն ընդհանուր նպատակին. պահպանել Ղարաբաղի հայ բնակչությանը իր նախնյաց հողում՝ ապահով եւ հնարավորինս ազատ. ինքնիշխանության հնարավորինս փոքր մասի զոհաբերումը՝ ի շահ ավելի մեծ անվտանգության եւ խնդրո առարկա հանդիսացող անհատների ու համայնքների գոյաբանական (existential) կարիքների բավարարման:
- Բ. Այնուամենայնիվ, Հայաստանը կարող է եւ պետք է եզրակացնի, որ իր սեփական երկարաժամկետ անվտանգությունը, կայունությունն ու բարեկեցությունը պահանջում են Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորում: Հայաստանը պետք է նաեւ ընդունի, որ (ա) Ղարաբաղը թվում է, թե որոշում է կայացրել դուրս թողնել բոլոր տարբերակները, բացի ռուսական զորքերի ներկայությանն ամբողջական ապավինումից՝ անկախ նրանից, թե Հայաստանն ինչ է մտածում, եւ (բ) Երեւանն ավելի քիչ լծակներ ունի Ղարաբաղի ապագայի վրա ազդելու համար: Այս հանգամանքներում Հայաստանը գուցե ստիպված լինի որոշում կայացնել, թե որքանով է խոհեմ ապագայի նկատմամբ Ղարաբաղի դիրքորոշումը որդեգրելը. դիրքորոշում, որը բացառում է որեւէ այլ տարբերակի շուրջ քննարկումներ ու որեւէ բանակցություն, բայց եւ մի դիրքորոշում, որ Ստեփանակերտը հորդորում է Հայաստանին որդեգրել՝ իր համար որոշ վտանգներով հանդերձ:
- Գ. Ղարաբաղում նպատակն ավելի շուտ պետք է լինի տեղի բնակչության իրավունքների շուրջ բանակցելը, քան ձեւակերպելը մի կատարյալ լուծում՝ որպես վերջնական ու անբանակցելի նպատակ: Այս նպատակին հասնելու համար տեղի բնակչությունը պետք է գործուն մասնակցություն ունենա տարածքի կարգավիճակի շուրջ բանակցություններին: Նրանք այլեւս չեն խոսում Ղարաբաղի անկախության կամ

Հայաստանին կցվելու մասին, այլ ավելի շուտ խոսում են Ադրբեջանին չինտեգրվելու եւ ինքնորոշման վերջնական իրավունքի մասին: Ղարաբաղի ղեկավարները պետք է իրենց լուրջ եւ առարկայական վերլուծությունն ունենան իրական տարբերակների ու ռիսկերի վերաբերյալ, եւ իրենց մտքերի ընթացքով կիսվեն սեփական ժողովրդի հետ:

- Դ. Հակամարտության երկարաժամկետ լուծման բանալին, թերեւս, Լեռնային Ղարաբաղի հարցերով սահմանափակված բանակցություններում չէ. ավելի շուտ, այն կարող է կապված լինել նոր եւրոպական ու եւրասիական անվտանգության ճարտարապետության շրջանակներում հայկական արդյունավետ արտաքին քաղաքականության հետ: Այն պիտի պահանջի շատ զգույշ հավասարակշռման գործողություն, Ռուսաստանի եւ այլ միջնորդների կողմից այս նպատակների հնարավոր որդեգրում, եւ տեղի բնակչության կողմից դրանց ընդունում: Սակայն, ի տարբերություն անկախության, այն ավելի հասանելի նպատակ կլինէր՝ հաշվի առնելով հիմնական խաղացողների մեջ շահերի ավելի ընկալունակ համաստեղության հնարավորությունը:
- Ե. Կարճաժամկետ հեռանկարում հիմնական որոշումները կկայացվեն Մոսկվայում, Անկարայում եւ Բաքվում, սակայն Երեւանի դիրքորոշումները պետք է պատշաճ կերպով ձեւակերպվեն ու պաշտպանվեն: Հետեւաբար, Հայաստանի ապագա կառավարությունը պետք է անցնի բազմակողմանի մոտեցման. Բաքվի եւ Անկարայի հետ ուղղակի խոսույթի ուղիների բացում, տարածաշրջանում տնտեսական կապերի բացմանն ուղղված օժանդակություն, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի մեջ ներգրավում եւ բարիդրացիական հարաբերություններ կառուցելու պատրաստակամության հստակեցում:

Վերջում, Ղարաբաղի ղեկավարներն ու ժողովուրդը պետք է ռիսկերի կառավարման խոր վերլուծություն իրականացնեն՝ մտքում ունենալով 2020 թ. պատերազմից առաջ իրենց կատարած սխալ հաշվարկները: Ղարաբաղի եւ Հայաստանի ղեկավարները պետք է կշռեն յուրաքանչյուր այլընտրանքի հետ կապված ռիսկերը, քանի որ չկա լավ լուծում, չկա նույնիսկ վատ լուծում. այն, ինչ կա, շատ վատ եւ ամենավատ լուծումներն են: Ո՞ր տարբերակն ավելի մեծ հավանականություն ունի հայկական Ղարաբաղին ապահովելու երկարաժամկետ եւ անվտանգ կյանքով: Ավելի քան երկու տասնամյակ Ղարաբաղի մասին մտածելն այնքան խստորեն սահմանափակվել էր, որ ո՛չ Ղարաբաղի, ո՛չ էլ Հայաստանի ղեկավարները չունեին պահեստային ծրագիր, եթե իրենց առաջին ծրագիրը տապալվեր: Նրանք չպետք է այդ նույն տեղում լինեն այժմ:

2. Հայաստանի մասին

- Ա. Հայաստանը պետք է հստակ ուղեցույց ընդունի իր արտաքին ու անվտանգության քաղաքականությունների համար. ուղեցույց, որը հիմնված կլինի մի շարք հնարավոր զարգացումների վրա: Նպատակը պետք է լինի ինքնիշխանության պահպանումն ու ամրապնդումը ոչ թե որպես կարգախոս կամ մի վերացական հատկանիշ, այլ որպես

մի էական մեխանիզմ՝ ազգային շահերի ու կառավարման ձեռի անկախ սահմանման ու հետապնդման համար. կառավարման ձեռ, որն ընտրում է ժողովուրդը: Դրան հասնելու լավագույն տարբերակը հարեւանների հետ հակամարտությունները լուծելն է, իր ինքնիշխանությանն ու տարածքին սպառնացող իրական վտանգների նվազեցումը, եւ խաղաղ ու ներկայացուցչական մեթոդի որդեգրումը ղեկավարների ընտրության համար, որոնք էլ կսահմանեն ու կհետապնդեն պետության շահերը:

- Բ. Հայաստանը պետք է ձգտի վերականգնել ինքնիշխանության աստիճանը, որը կորցրել է: Մակայն նա պետք է վերականգնման ուղին փնտրի՝ շարժվելով եղած հնարավորությունների տիրույթում. հնարավորություններ, որ սահմանված են ներկայիս ծանր նոր իրողություններով: Մի կողմից՝ Ռուսաստանի վարքը բարոյական քննության ենթարկելը, եւ մյուս կողմից՝ Հայաստանին օգնելու Արեւմուտքի պատրաստակամությունը չափազանցնելն այդ ուղին չէ: Ո՛չ Ռուսաստանի հետ 1997 թ. պայմանագրում, ո՛չ էլ որեւէ այլ փաստաթղթում՝ դրանից հետո, Ռուսաստանը չի խոստացել ռազմական օգնություն ցուցաբերել Ղարաբաղին՝ Ադրբեջանի հետ պատերազմի դեպքում: Ընդհակառակը, Ռուսաստանը շարունակաբար կրկնել է, որ Ղարաբաղը համարում է Ադրբեջանի մաս, որ չի ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, եւ պնդել է, որ Ղարաբաղի շուրջը գտնվող հայկական վերահսկողության տակ եղած յոթ շրջանները պետք է վերադարձվեն: Ավելի բարդացնելով պատկերը՝ Ռուսաստանը գիտեր, որ Հայաստանին իր վաճառած զենքի մի մասը տեղափոխվում էր Ղարաբաղյան ճակատ, եւ Հայաստանը գիտեր, որ Ռուսաստանը զենք է վաճառում նաեւ Ադրբեջանին:
- Գ. Բացի Ռուսաստանի հետ սերտորեն աշխատելուց եւ ամուր պաշտպանություն կառուցելուց՝ այս նպատակներին հասնելու լավագույն եղանակը բոլոր շահագրգիռ կողմերի հետ երկխոսություն սկսելն է, նույնիսկ եթե սկզբում՝ առանձին-առանձին եւ գաղտնի, հետագոտական, ոչ պաշտոնական պայմաններում:
- Դ. Այսպիսով, Հայաստանը պետք է Ադրբեջանի հետ երկխոսության համապարփակ շրջանակ մշակելու նախաձեռնություն ցուցաբերի՝ վիճահարույց հարցերը մեկ առ մեկ լուծելով, ինչը կհանգեցնի հարաբերությունների կարգավորման:
- Ե. Ժամանակի ընթացքում Հայաստանը պետք է ենթադրյալ սպառնալիքների շուրջ իրատեսական ու անկողմնակալ գնահատում իրականացնի եւ միջոցներ ձեռնարկի, առաջին հերթին, լարվածությունները թուլացնելու, վերացնելու համար, իսկ այնուհետեւ աշխատի հարաբերությունների կարգավորման ուղղությամբ՝ որպես երկարաժամկետ անվտանգության համակարգի անբաժանելի բաղադրիչ:
- Զ. Այս առումով, կարելուք հանգրվան են լինելու Ադրբեջանի հետ սահմանագատման ուղղությամբ աշխատող միջկառավարական աշխատանքային խմբի զարգացումները: Ցանկացած պարագայում, հատկապես հաշվի առնելով մինչ այժմ Ռուսաստանի կողմից ցուցադրվող թույլ դաշնակցային հանձնառությունները, Հայաստանը պետք է սահմանների անվտանգության ասպարեզում աշխատի նաեւ այլ ուղղություններով:
- Է. Կառուցակարգված հայաֆոբիան՝ ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Թուրքիայում, պետք է լինի այս երկու երկրների հետ քննարկվելիք թեմաներից մեկը: Նրանց հետ

ամուր խաղաղությունը այլ տեսակի հռետորաբանություն է պահանջելու. այնպիսին, որը ենթակայեցման նվաստացուցիչ վերաբերմունքից անցնի դեպի համակեցություն՝ թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում:

- Զ. Հայաստանն իր քաղաքացիների համար պետք է հստակեցնի, որ հաղորդակցության ուղիների եւ ճանապարհների բացումը երկարաժամկետ հեռանկարում բարիդրացիական հարաբերությունները կարգավորելու, ինչպես նաեւ տարածաշրջանային փոքրամասշտաբ համագործակցության համար ուղի բացելու մի գործիք է: Նման միջոցառումներն իրենք իրենցով խաղաղություն չեն բերի: Սակայն նրանք հնարավորություն կտան, որ հակամարտության բոլոր շահագրգիռ կողմերի համար պատերազմն ապագայում ավելի թանկ տարբերակ դառնա:
- Է. Ինչպես եւ Հայաստանի բոլոր սահմանների դեպքում, Սյունիքի հետ կապված առաջին ու ամենահրատապ առաջնահերթությունը պիտի լինի պահպանությունն ու պաշտպանությունը, այդ թվում՝ հսկողության եւ տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով: Սակայն սա պետք է համատեղվի տարածաշրջանում կյանքի միջազգայնացման եւ տարբեր միջազգային գործընկերների ներգրավման՝ միջնաժամկետ հեռանկարի հետ, ինչպես նաեւ շրջափակումների վերացման ֆոնին:
- Ը. Վերջապես, որպես այս տարածաշրջանում ու դրանից դուրս Հայաստանի ինքնաներկայացման երկարաժամկետ հեռանկար, Հայաստանը կարող է եւ պետք է լրջորեն մտածի չեզոքության վրա հիմնված արտաքին ու անվտանգության քաղաքականությունների մշակման առավելությունների մասին, որոնք սովորաբար զարգացել են Վրաստանի ու Ադրբեջանի հետ՝ որոշակի ժամանակահատվածում: Այսպիսով, Հայաստանի եւ իր հարեւանների անվտանգության՝ ենթադրյալ ու իրական սպառնալիքները կնվազեն: Ճիշտ հանգամանքների ներքո նման մոտեցումը կարող է նաեւ աջակցություն ստանալ տարածաշրջանի երեք հիմնական հարեւանների՝ Իրանի, Թուրքիայի եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ, ընդհանուր առմամբ, միջազգային հանրության կողմից: Երկարաժամկետ հեռանկարում չեզոքությունը, ինչպես էլ որ այն պիտակավորվի, կարող է ավելի ապահով ու մշտական այլընտրանք լինել այն տարբերակներին, որոնք մինչ այժմ գերակայող են եղել այս թեմային վերաբերող բոլոր խոսույթներում. ռուսամետ, արեւմտամետ եւ կոմպլեմենտար քաղաքականությունների: (Տե՛ս Հավելված Գ)

3. Դիվանագետների եւ արտաքին գործերի նախարարության մասին

- Ա. Հայաստանի դիվանագիտության ու դիվանագետների հետ կապված առավել կարեւոր կետը հետեւյալն է. դիվանագիտությունը պետք է դիտարկել որպես Հայաստանի անվտանգության համակարգի մի անբաժանելի բաղադրիչ՝ ռազմական ուժերի ու դաշինքների հետ համատեղ: Մա ճիշտ է հատկապես Հայաստանի նման սահմանափակ միջոցներ ունեցող մի փոքր երկրի համար: Դիվանագիտությունը չպետք է դիտարկվի որպես զուտ հանրային կապերի ծառայություն: Արդյունավետ եւ խելամտորեն օգտագործելու դեպքում, դիվանագիտությունը նույնքան հավանական է,

որ նվազեցնի կամ չեզոքացնի սպառնալիքներն ու վտանգները, որքան պատերազմներն ու բանակները, եթե ոչ ավելին:

- Բ. Դիվանագետների ուսուցումը կարելի է բարելավել եւ դարձնել այնպիսին, որ այն արտացոլի Ա. կետում նրանց վերագրված դիրքը:
- Գ. Դիվանագետներին պաշտոնների նշանակելու համակարգը պետք է լինի ավելի հետեւողական եւ ամբողջապես արժանիքների վրա հիմնված:
- Դ. Դիվանագետների ուսուցումը պետք է ներառի այն երկրի կամ տարածաշրջանի պատմությանը, մշակույթին ու քաղաքականությանը ծանոթանալը, որում նրանք նշանակվել են:
- Ե. Կառավարությունը պետք է ստեղծի դիվանագիտության ազգային դպրոց, որը պետք է կայանա այլ դպրոցների հետ համագործակցությամբ, սակայն որտեղ պետք է ուսուցանվեն պետական շահերը:
- Զ. Դիվանագիտական դպրոցը պետք է օգտվի մի շարք նախկին բարձրաստիճան պաշտոնյաների արժեքավոր փորձից եւ կարողություններից՝ ի շահ թե՛ ներկա անձնակազմի, թե՛ դիվանագետների ապագա սերնդի: Նույնը կարելի է ասել Սփյուռքից ու, առհասարակ, այլ երկրներից հրավիրված դիվանագետների եւ դասախոսների պարագայում:
- Է. Կառավարությունը հատուկ ուշադրություն պետք է դարձնի Արտաքին գործերի նախարարության ուժեղացմանը՝ որպես մի հաստատության, եւ ի լրումն քաղաքականության իրականացման իր ավանդական դերի՝ ապահովի նրա ներգրավումը քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման մեջ, որպեսզի դիվանագիտությունն ու քաղաքական նկատառումներն ավելի ներդաշնակ լինեն:

2.3. Անվտանգության եւ պաշտպանության մասին

1. Առաջարկություններ ռազմական տեսության եւ պրակտիկայի ոլորտում

- Ա. Ստեղծել հետաքննող հանձնաժողով 2020 թ. սեպտեմբերի պատերազմի տեսության պատրաստության եւ իրականացման հարցերով: Այս փաստաթղթում այդ տեսությունը հասկացվում է որպես ռազմական գործողությունների իրականացման եղանակներ ու մեթոդներ, ինչպես նաեւ դրանց հետ կապված մարտավարություններ, տեխնիկա ու ընթացակարգեր:
- Բ. Հայաստանի համար անհնար է ինքնուրույն պաշտպանել իր ներկայիս սահմանների ողջ երկայնքը (1300 կմ), առավել եւս, որ այդ սահմանները միջազգայնորեն համաձայնեցված չեն, եւ որքանով հարցը վերաբերում է Ադրբեջանին՝ դրանք «շփման գծեր» են:
- Գ. Կառավարությունը կարիք ունի Ադրբեջանի հետ սահմանի պաշտպանության ապահովման համար պահանջվող կարիքների ամբողջական գնահատման, ինչպես

նաեւ հետազոտման, թե որտեղ է կառավարությունն այժմ այդ կարողությունների առումով:

- Դ. Գնահատել, թե որտեղ են ամրացված տարածքներն անհրաժեշտ եւ օգտակար, եւ որտեղ ավելի հարմար կլինեն պաշտպանության այլ համակարգեր (ինչպիսիք են, օրինակ, պարեկությունը կամ տեխնիկական հսկողության համակարգերը):
- Ե. Հայաստանի ժողովրդագրությունը դանդաղ գործող ռուսեր է եւ արդեն մեծ խնդիր: Այս առումով, փոքր բանակի մասնագիտացումը պետք է լուրջ ուսումնասիրված տարբերակ լինի: Թիրախը պետք է լինի մի ուժ, որի չափերը պետք է որոշել, սակայն այդ թիվը հստակորեն պետք է ավելի փոքր լինի, քան մինչ 2020 թ. պատերազմն էր:
- Զ. Հայաստանը պետք է ուսումնասիրի ռազմական տեսության ոչ ռուսական տեսակներ եւ շեշտի, որ ռազմական գիտության (ի տարբերություն պատերազմական արվեստի) վրա հիմնված պատերազմի խորհրդային, ռուսական ձեւը եւ այգորիթմները նույնիսկ Հայաստանին ստիպել էին անտեսել, թե ինչ կարող էր նա օգտագործել իր սեփական ուսումնասիրություններից ու փորձից:
- Է. Տեսանելի ապագայում Հայաստանը չի կարող դուրս գալ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ), ո՛չ էլ Ռուսաստանի հետ փոխադարձ պաշտպանության պայմանագրից, բացի եթե Ռուսաստանում մեծ խառնաշփոթ լինի. սակայն սա չի նշանակում, որ Ռուսաստանը պետք է լինի Հայաստանի ներկայիս բոլոր մարտահրավերների պատասխանը:

2. Առաջարկություններ անվտանգության վերաբերյալ

- Ը. Հայաստանի վաղեմի խնդիրն այն է, որ եթե նա ճկունության որոշ աստիճան չցուցաբերի, ապա ռազմական ցանկացած սպառնալիքի կամ սահմանային խախտման դեպքում կախված կմնա Ռուսաստանի՝ միջամտելու պատրաստակամությունից: Ուստի, երկարաժամկետ հեռանկարում, Հայաստանը պետք է ձգտի փոխել իր անվտանգության համակարգը:
- Թ. Հայաստանը պետք է մշակի սպառնալիքները նվազեցնելու սեփական մոդելը՝ երկրի զինված ուժերի համար հստակ սահմանված նպատակներով: Այս նպատակը նկատի ունենալով՝ պետք է լուրջ մտածել Հայաստանի չեզոքության տարբերակի շուրջ: Այս տարբերակը լուրջ քննարկում է պահանջում:
- Ժ. Անվտանգությունը պետք է հասկանալ հնարավորինս իր ամենալայն իմաստով: Ցանկացած ոլորտ, որը կարող է ազդել հանրապետության տարածքային ամբողջականության եւ ինքն իրեն ու իր ժողովրդին, ինչպես նաեւ իր ժողովրդի բարեկեցության համար կենսական անհրաժեշտությունները պաշտպանելու կարողության վրա, պետք է համարվի անվտանգության սահմանման եւ օրակարգի մաս: Այս առումով, ներքո հիշատակվածներն են այն ոլորտները, որոնք առանձնացվել են որպես Հայաստանի անվտանգության անբաժանելի բաղադրիչներ.
 - 1. Ֆիզիկական անվտանգություն. Հայաստանի տարածքային ամբողջականությանն ու ժողովրդի կյանքին սպառնացող վտանգները,

2. Դիվանագիտական անվտանգություն. համապատասխան դաշինքներ, որոնք դիվանագիտական աջակցություն են ապահովում միջազգային ասպարեզում,
 3. Կիբեր եւ ենթակառուցվածքային անվտանգություն. հարձակումներ, որ կարող են խաթարել կառավարության էական ճյուղերն ու ծառայություններ մատուցելու կարողությունը,
 4. Հաղորդակցության անվտանգություն. համապատասխան այլընտրանքային ուղիներ,
 5. Տրանսպորտային անվտանգություն,
 6. Ջրի եւ սննդի անվտանգություն,
 7. Էներգետիկ անվտանգություն,
 8. Շրջակա միջավայրի անվտանգություն՝ հաշվի է առնելով կլիմայի փոփոխության կարեւոր ազդեցությունը,
 9. Ժողովրդագրական անվտանգություն. նվազման միտումները հետ շրջելը,
 10. Մշակութային անվտանգություն. տարածաշրջանում ազգային ժառանգության պահպանություն,
 11. Տնտեսական ու ֆինանսական անվտանգություն,
 12. Քաղաքական անվտանգություն. իշխանության օրինակարգության վրա հիմնված կայունություն, կանխատեսելիություն⁹:
- Ի. Նպատակահարմար կլիներ քննարկել նաեւ մի նոր չափում՝ «մտավոր անվտանգությունը», որը կարող է սահմանվել որպէս մի այնպիսի միջավայրի ստեղծում ու պահպանում, ուր կապահովվեր հանրային քաղաքականության ու ազգային շահերի հետ կապված բոլոր հարցերի ազատ քննությունն ու դրանց շուրջ քննարկումը: Այսպիսի մթնոլորտի բացակայությունը մի գործոն էր վտանգավոր թվացող ընդհանուր համահավանության (consensus) զարգացման հարցում. մի համահավանություն, թե ինչպէս պետք է լուծվեր Ղարաբաղյան հակամարտությունը:
- Լ. Անվտանգությանը սպառնացող վտանգները, հատկապէս ֆիզիկական անվտանգությանը, չպետք է քաղաքականացվեն կամ գաղափարականացվեն. Հայաստանը պետք է մշակի սպառնալիքների գնահատման՝ վստահելի, առարկայական եւ ոչ գաղափարախոսական շրջանակ (framework): Ցանկացած կառավարություն պետք է հնարավորինս հստակ սահմանի սպառնալիքները եւ տարբերակի իրական ու կարծեցյալ վտանգները: Սպառնալիքի թերագնահատումը կարող է հանգեցնել աղետների. սակայն որեւէ պատճառով սպառնալիքների գերագնահատումը կարող է անհնար դարձնել այդ սպառնալիքը նվազեցնելու հնարավորությունը:

⁹ Շատերն են առաջարկել Հայաստանի անվտանգության հիմնախնդրի սահմանումներն ու լուծումները: Այս զեկուլոյցի հեղինակների համար օգտակար է եղել Բաֆֆի Գասարճյանի հոդվածը. "12 Imperatives for Armenia's Future", EVN Report, 1 դեկտեմբեր, 2020 թ. <https://www.evnreport.com/politics/12-imperatives-for-securing-armenia-s-future>.

Խ. Պիվանագիտությունը՝ նախաձեռնողական դիվանագիտությունը, պետք է ընկալվի որպես Հայաստանի անվտանգության մարտահրավերների լուծման անբաժանելի մասը: Համապատասխան ռազմական պաշտպանությունների ապահովումը եւ սպառնալիքների դեմ դաշինքների կառուցումը այդ լուծման միայն մեկ մասն են: Մյուս էական մասը դիվանագիտության պատշաճ ու թիրախավորված օգտագործումն է:

3. Առաջարկություններ Հայաստանի զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ

Հայաստանը պետք է անցնի զինված ուժերի խորքային բարեփոխումների, որպեսզի լուծի ազգային անվտանգության հրատապ խնդիրները:

Նոր, կատարելագործված եւ ավելի ժամանակակից բանակի ջատագովությունը՝ որպես ռեֆլեքսային արձագանք 2020 թ. պատերազմի կորուստներին, չպետք է բավարարի Հայաստանին ու Ղարաբաղին: Այդ բանակը հստակ առաքելություն պետք է ունենա: Բայց ինչպիսի՞ն կարող էր լինել Ջինված ուժերին (ՋՈՒ) տրված հանձնարարականը.

- Ա. Պաշտպանել Հայաստանի սահմանները ներխուժումների՞ց, թե՞ դիմադրել այնքան ժամանակ, մինչեւ ապահովվի Ռուսաստանի աջակցությունը զավթիչի դեմ պայքարում:
- Բ. Պատրաստ լինել օգնելու Ղարաբաղի մնացած հատվածի՞ն, եթե Ադրբեջանը վերսկսի ռազմական գործողությունները՝ այդ տարածքներն իր անմիջական վերահսկողության տակ վերցնելու համար:
- Գ. Բավականաչափ կարողություններ կուտակել՝ հարձակման անցնելու եւ պատերազմը վերսկսելու համար՝ կորցրած տարածքները, ու թերեւս ավելին, հետ բերելու նպատակով:

(ՋՈՒ վերաբերյալ մանրամասն առաջարկությունների համար, տե՛ս Հավելված Ե)

4. Սփյուռք

- Ա. Կառավարությունը չպետք է չափից ավելի ապավինի սփյուռքյան կազմակերպությունների դիվանագիտական հնարավորություններին, որոնք իրենց կառավարությունների հետ աշխատելիս հիմնականում գործում են որպես լոբբիստական խմբեր:
- Բ. Կառավարությունը չպետք է նաեւ գերազնահատի Սփյուռքի՝ ֆինանսական ու ներդրումային իրական կարողությունները:

- Գ. Սփյուռքը կարող է գաղափարների, վերլուծությունների, տեսակետների եւ հետազոտությունների արժեքավոր աղբյուր լինել, ավելին, քան մինչ այժմ նրանից խնդրել են ներդրել. ի լրումն մարդասիրական ու հարակից այլ ոլորտների, որոնք մինչ օրս գերակայել են Հայաստան-Սփյուռք հարաբերություններում:
- Դ. Ներդրումներ ապահովելու համար, հատկապես հանրապետության հարավում, կառավարությունը պետք է մշակի բիզնես ոճի ցուցադրություններ եւ չապավինի միայն ազգայնական ու հայրենասիրական հռետորաբանությանը: Սփյուռքի գործարարները Հայաստանի ներդրումային միջավայրում աշխատելու բավականին փորձ ունեն՝ իմանալու համար, որ պետք է զգույշ լինեն, հատկապես ներկայիս իրավիճակը հաշվի առնելով: Այս գործարարներից շատերը մեծ կորուստներ կրեցին Ղարաբաղում, ներառյալ՝ Շուշիում, կատարած ներդրումներից: Հայաստանը պետք է ի վիճակի լինի համոզելու նրանց՝ ապագա կայունության եւ անվտանգության հարցում. ահա թե ինչու է նաեւ կարեւոր Թուրքիայի ու Ադրբեջանի հետ խոսելը:
- Ե. Սփյուռքի մարդկային ռեսուրսների գույքագրումը պետք է ավարտվի եւ օգտագործվի հնարավորինս շատ ոլորտներում: Սփյուռքի միջոցների մի զգալի մասը մնում է չօգտագործված:
- Զ. Կառավարությունն, առհասարակ, պետք է թափանցիկ լինի՝ Սփյուռքից եկող միջոցների ծախսման հարցում, բայց հատկապես այն միջոցների, որոնք տրվել էին պատերազմի ժամանակ. պարբերական զեկույցների միջոցով եւ անհրաժեշտ մանրամասներով:
- Է. Կառավարության եւ Սփյուռքի լոբբիստական խմբերի, քաղաքական կուսակցությունների միջեւ պետք է քննարկումներ ընթանան լոբբինգի ուղղության շուրջ՝ միմյանց դեմ աշխատելուց խուսափելու համար: Այդուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը պետք է հասկանա, որ եթե Սփյուռքը կարող է իրեն թույլ տալ հիմնելու իր քաղաքականությունը պատրանքների վրա, եւ գուցե նույնիսկ նման պատրանքների կարիքն ունի՝ գոյապահպանության եւ համախմբման համար, Հայաստանի կառավարությունն ու Հայաստանի ժողովուրդը դա իրենց թույլ տալ չեն կարող:

Բաժին 3. Եզրակացություններ

Հայաստանի քաղաքացիներն ու ղեկավարները կանգնելու են իրենց ապագայի հետ կապված դժվար ընտրության առջեւ: Երկիրը բախվում է մեծ մարտահրավերների, այդ թվում՝ ազգայնական գաղափարախոսության, որը հարմար չէ անկայուն պետականության խնդիրները մեղմելու համար. տրանսպորտային շրջափակումից եւ ռազմական գերհանձնառությունից տկարացած տնտեսություն, արտաքին ուժերի (հատկապես՝ Ռուսաստանի) բարի շնորհներից գերկախվածություն, երկրների, որոնք չեն կիսում Հայաստանի արտաքին քաղաքական բոլոր նպատակները:

Հայ քաղաքական կուսակցություններն ու առաջնորդները պետք է առաջարկեն Հայաստանի ու Ղարաբաղի վրա ներկայումս ազդող ներքին ու միջազգային ծանր ճգնաժամերի իրենց լուծումները: Այս կուսակցություններից ու առաջնորդներից շատերը որոշակի պատասխանատվություն են կրում այդ ճգնաժամերի համար, իրենց իրականացրած անիրատեսական, հաճախ պատրանքների վրա հիմնված քաղաքականությունների համար, ինչպես նաև ակտիվորեն այնպիսի քաղաքականություններ խրախուսելու կամ դրանց հետ համաձայնելու համար, որոնք հանգեցրին պատերազմի եւ այնուհետեւ պարտության:

Այս փաստաթղթի հեղինակները գիտեն, որ հայերի համար դժվար է ընդունելը, որ իրենք պարտվեցին, եւ որ պատասխանատվությունից խուսափելու պաշտպանական մեխանիզմները հեշտությամբ են կառուցվում: Պաշտպանության նման միջոցներից մեկը նույնիսկ ավելի ազգայնական հռետորաբանության գործածումն է, քան այն, ինչն առաջին հերթին երկիրը տարավ աղետի:

Իշխանություններն ու ընդդիմադիր կուսակցություններն այժմ պարտավոր են անկեղծ ու բաց խոսել ժողովրդի հետ: Երկիրն ու հասարակությունը չեն կարող իրենց ճանապարհը գտնել, եթե փաստերը, հասանելի տարբերակներն ու հնարավորությունները քողարկված են, եթե ազնիվ գնահատականների փոխարեն նրանց կերակրում են կարգախոսներով, ինչպես նախկինում էր: Քաղաքական ու մտավորական վերնախավերը չպետք է խոսույթը վերածեն մրցակցության՝ այն բանի շուրջ, թե ո՞վ կարող է ավելի շատ խոսել եւ ասել ավելի քիչ, ո՞վ կարող է ավելի բարձր հայիոյել ու ավելի շատ վիրավորանքներ հասցնել, եւ թե ո՞վ կարող է դրախտ խոստանալ երկրի վրա: Հայ ժողովուրդն ավելի լավին է արժանի:

Ընտրությունների հիմքում, որ նոր կառավարությունը պետք է կատարի այսքան հարցերի եւ ուղղությունների վերաբերյալ, կլինի այն տեսլականը, որը իշխանական առաջնորդները կխոստանան ժողովրդին՝ քարոզարշավի ընթացքում, ինչպես նաև այն ուղին, որով պետությունը պետք է անցնի ժողովրդի ու պետության վերականգնումն ապահովելու համար: Սա պետք է ներառի այն երաշխիքը, որ կառավարությունն ի վիճակի կլինի խուսափել պատրանքների վրա հիմնվելու պատճառով կատարած հրեշավոր սխալներից, եւ առաջին հերթին՝ խաղաղության, կայունության ու բնականոնության հաստատմանը հասնելու անկեղծ ցանկությունը, իսկ հետագայում՝ թերեւս ավելին:

Անկախ նրանից՝ հարցը Ղարաբաղի ապագան է, Հայաստանի տնտեսական ու սոցիալական վերականգնումը, հարեւանների հետ հարաբերությունները, թե Հայաստանի տեղը տարածաշրջանում ու աշխարհում, գոյություն ունեցող հնարավորությունները կարելի է ամփոփել հետեւյալ երեք տարբերակներում.

- Ա. Հայաստանը մերժում է 2020 թ. նոյեմբերի 10-ի հայտարարության պայմաններն ու հիմքերը եւ նպատակ է դնում վերակառուցելու պետությունը՝ հնարավորինս ամենաուժեղ բանակով: Բոլոր միջոցները, այդ դեպքում, տրամադրվում են նման ռազմականացված պետության կառուցմանը՝ վերջին պատերազմի արդյունքը

փոխելուն ուղղված նոր պատերազմ նախաձեռնելու նպատակով: Այս տարբերակով՝ Հայաստանը իրականացնում է դիվանագիտություն, որի նպատակն է Ղարաբաղի անկախության ապահովումը, եւ Ադրբեջանի, Թուրքիայի ու Բաքվի այլ դաշնակիցների նկատմամբ ռազմական գերակայության հասնելը:

- Բ. Հայաստանը չի կատարում 2020 թ. նոյեմբերի 10-ի հայտարարության կետերը, նպատակ է դնում դառնալու ուժեղ բանակով կայագորային պետություն, որը կարող է դիմադրել ադրբեջանական կամ թուրքական հարձակումներին, եւ հրաժարվում է բացել իր հաղորդակցության ուղիները: Սա՝ այն պատճառով, որ նա չի ցանկանում, որ իր հավերժական թշնամիները՝ Ադրբեջանն ու Թուրքիան, օգտվեն այդ բաց ուղիներից՝ չնայած վերանվաճման նոր պատերազմ սկսելու Հայաստանի մտադրության բացակայության: Այս իրավիճակում Ղարաբաղի ապագան վստահված է Ռուսաստանին, եւ Հայաստանը պատրաստ պետք է լինի ռազմական օժանդակություն ցուցաբերելու Ղարաբաղին, եթե դրա կարիքը նորից առաջանա:
- Գ. Հայաստանն ընդունում է պարտության պատճառները, ազդեցությունն ու կարեւորությունը՝ որպես արդեն տեղի ունեցած փաստ, կենտրոնանում է (ա) հավաքական ու ընտանեկան հոգեցնցումները (trauma) բուժելու, (բ) իր տնտեսության, սոցիալական համախմբվածության, պետական հաստատությունների, կրթական եւ առողջապահական համակարգերի վերականգնման ու (գ) լավ սահմանված, ողջամիտ առաքելություն ունեցող ժամանակակից պաշտպանական բանակի վերակառուցման ուղղությամբ: Այս դեպքում՝ Ղարաբաղի առնչությամբ, Հայաստանն աշխատում է Ղարաբաղի հայության համար ապահովել հնարավորինս լավագույն կարգավիճակը՝ աշխատելով Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի եւ միջազգային հանրության հետ եւ օգտագործելով դիվանագիտությունը՝ լավագույն երաշխիքներ ապահովելու համար: Նոյեմբերի 10-ի հայտարարության ցանկացած փոփոխություն կիրականացվի բանակցությունների միջոցով, որոնք կներառեն ուղղակի բանակցություններ Ադրբեջանի եւ Ռուսաստանի հետ: Ղարաբաղի ապագա կարգավիճակի վերաբերյալ հնարավոր լուծումների ձեւակերպման հարցում, հայկական քաղաքականություն մշակողները հնարավոր հետեւանքների հաշվարկներ են կատարում երկու սցենարների համար. ռուսական խաղաղապահները մնում են Ղարաբաղում կամ թողնում են Ղարաբաղը՝ որեւէ պատճառով, ապագայի ինչ-որ մի պահի: Ի վերջո, Հայաստանը կարգավորում է դիվանագիտական հարաբերությունները Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ, ու նվազեցնում կամ վերացնում իրական կամ թվացյալ գոյաբանական սպառնալիքները: Այս հարցում Հայաստանն, անշուշտ, կունենա բոլոր միջազգային խաղացողների աջակցությունը:

Այս տարբերակներից առաջինը պարզապես պատրանքային է, եթե ոչ՝ ինքնասպան: Երկրորդն ավելի մոտ է նրան, ինչ երկիրն ունեւ անցյալ քսան կամ ավելի տարիների ընթացքում, եւ ինչը ո՛չ բերեց խաղաղության ու անվտանգության, ո՛չ էլ կայունության ու բարեկեցության: Այս զեկուցման հեղինակները որեւէ այլ իրական ու իրատեսական տարբերակ չեն տեսնում՝ երրորդից բացի:

Նրանք, ովքեր համաձայն չեն, պետք է ապացուցեն, որ իրենց ենթադրությունները ամուր հիմք ունեն. այդպիսի ենթադրությունները պատերազմից առաջ համարվում էին անքննելի, սակայն ապացուցվեց, որ դրանք կեղծ էին՝ աղետալի հետեւանքներով: Նրանք պետք է ապացուցեն, որ ամուր հիմքեր ու լավ պատճառներ կան հավատալու, որ այն, ինչին հնարավոր չեղավ հասնել վերջին քսանհինգ տարիների ընթացքում՝ այնպիսի առաջնորդների ղեկավարությամբ, որոնք վստահեցնում էին մարդկանց՝ ցանկացած պարագայում հաղթանակի հասնելու հարցում, հնարավոր կլինի հասնել հիմա: Եւ որ հնարավոր կլինի այնպես անել, որ այլ երկրները՝ թշնամի, թե բարեկամ, մտածեն Հայաստանի ցանկությունների, այլ ոչ թե իրենց շահերի տեսանկյունից:

Հայաստանը չի ստեղծվել եւ անկախությունը ձեռք չի բերվել որպես մի ասպարեզ, որտեղ առաջնորդները մրցակցեն՝ ցուցադրելու համար, թե ով է ամենից ավելի ատում իր հարեւաններին: Ժողովուրդը անկախ պետություն ստեղծեց՝ հաղթահարելով վախը, որպեսզի ապրի օրինավոր եւ ստեղծի մարդկանց բարգավաճման, նրանց երազանքներն ու տեսլականները զարգացնելու համար լավագույն միջավայրը: Այս նպատակներին հնարավոր չի լինի հասնել խոստումներով, որոնք չեն կարող կատարվել, եւ պատրանքներով, որոնք հակասում են իրականությանը:

Ուրիշ ի՞նչ արհավիրք պետք է պատահի հայ ժողովրդին ու պետությանը, որպեսզի հայկական իշխանություններն ու վերնախավերը որոշեն անկեղծ լինել իրենք իրենց հետ եւ գործեն համապատասխանաբար: Նրանք կարող են թաքցնել դաժան իրողությունները մեր ժողովրդից ու իրենք իրենցից. սակայն մնացյալ աշխարհը չափազանց լավ է տեսնում եւ գիտի պատերազմի արդյունքը, այդ արդյունքի պատճառները եւ դրա նշանակությունը ապագայի համար:

Հայաստանն ու հայ ժողովուրդը պետք է սովորեն սահմանել այն հիմնարար արժեքները, որոնց շուրջ համաձայնությունն էական է պետության գոյատեւման համար, եւ պետք է համաձայնեն, թե ինչպես պետք է լուծվեն մնացած հարցերի շուրջ տարաձայնությունները: Դա սկսում է երկրի Մահմանադրություն եւ օրենքներ ունենալուց ու դրանք հարգելուց, ինչպես նաեւ հատվածական ու կուսակցական շահերից ու ես-երից վեր բարձրանալով: 1990-ական թվականների սկզբներին միասնական կառավարություն չկար, եւ միասնություն չկար Հայաստանում կամ Մփյուռքում: Ընդհակառակը, իշխանությունը բախվում էր ամենակոշտ եւ կատաղի ընդդիմությանը: Այդուհանդերձ, հայկական կողմը հաղթեց եւ զարգացում արձանագրեց մի շարք ոլորտներում՝ չնայած ձախողելով որոշ ոլորտներում: Ժողովրդի ձայնը կարելու է եւ կարելու կլինի միայն այն դեպքում, երբ առաջնորդներն ու կուսակցությունները ժողովրդին լավ ծառայեն: 1990-ական թվականների վերջերից հետո ոչ մի առաջնորդ կամ կուսակցություն Հայաստանում չի եկել իշխանության՝ Ղարաբաղյան խնդրի լուծման վերաբերյալ հստակորեն ներկայացնելով իր մտտեցումը, եթե դա առավելապաշտական լուծում չի եղել: Օրինակարգությունը, որ ժողովուրդը

ընտրությունների միջոցով ներդնում է առաջնորդի մեջ, ավելի հաճախ հիմնվում է իրավիճակի ընդհանուր զգացողության, ոչ թե հատուկ խնդիրների բարձրացման ու առաջարկվող լուծումների վրա: Մա հսկայական պատասխանատվություն է դնում ընտրված առաջնորդի վրա՝ այդ վստահությունը որոշակի ոլորտներում խոհեմ որոշումների վերածելու առումով:

Ի՞նչ է Հայաստանը ցանկանում իր ապագայի համար: Ինչպիսի՞ պետական միավորում է ի՞նչ հասարակական պայմանագիր: Ներկա համատեքստը հաշվի առնելով՝ այս հարցը կարող է շատերին անօգտակար թվալ: Այս զեկույցի հեղինակներն ընդունում են, որ այս հարցն առաջադրելու մեջ գաղափարախոսական կողմնակալություն կա: Այդ կողմնակալությունը պետականակենտրոն դիրքորոշում որդեգրելն է, այսինքն՝ հիմքում ընդունելը այն, որ անկախ պետականությունը, նույնիսկ նվազ ինքնիշխանությամբ՝ ինչպիսին այսօր է, արժեք է, որի համար պետք է աշխատել ու պայքարել, եւ որը պետք է պահպանել: Վերջին երեք տարիների շատ կարճ ժամանակամիջոցի ընթացքում հայ հասարակությունը, հատկապես նկատի ունենալով 18 -30 տարեկաններին, անցավ վարչակարգի՝ ոչ բռնի փոփոխության ոգեւորության միջով, մի շարք ներքին՝ թեւէ չավարտված բարեփոխումների, հավաքական հոգեցնցում պատճառած կործանարար պատերազմի ընկճող փաստերի եւ Ղարաբաղի՝ գրեթե կորստի միջով: Նախընտրելի Հայաստանի առնչությամբ ընտրություն կատարելիս՝ առաջնորդները պետք է մտածեն երիտասարդների եւ նրանց ապագայի մասին:

Ով էլ ստանձնի Հայաստանում իշխանությունը, պետք է կառավարի իմաստնությամբ: Մի քանի իմաստուն երեցների հետ պետք է խորհրդակցել՝ կայունություն հաստատելու, խորապես անհանգստացնող հարցերին պատասխանելու եւ հավասարակշռված դատողությամբ որոշումներ ընդունելու համար: Պետք է նշանակվեն լավ վարչարարներ, որոնք ցույց կտան, որ կառավարությունն արդյունավետ է աշխատում հրատապ խնդիրների լուծման առումով: Եւ ապագայի Հայաստանը պատկերացնելու համար երիտասարդ մտքեր պետք է ներգրավվեն: Հայաստանին անհրաժեշտ է կառավարման հմտություններ ունեցող մի ղեկավար, որը գործի շրջահայեցողությամբ ու խոհեմությամբ, կարողանա պատշաճորեն կառավարել երկիրը, ցուցաբերի հստակ միտք եւ հետեւողական ռազմավարություն, ընտրի լավագույններին, որոնց հետ հնարավոր կլինի կառավարել, եւ խրախուսի նրանց: Այսպիսի առաջնորդի իմաստնությունը կճանաչվի ժողովրդի կողմից, քանի որ ժողովուրդը գիտի, թե ինչ է անում առաջնորդը, գիտի նաեւ, թե ինչպես եւ ինչու է դա անում:

Վերջապես, պատկերացնելով Հայաստանի ապագան՝ հայ ժողովուրդը չի կարող անտեսել այն վտանգները, որոնք առաջացել են կլիմայական փոփոխություններից, բնական աղետներից, համաճարակներից ու մարդկային գործողությունների հետեւանքով ստեղծված ճգնաժամերից, եւ որոնք կյանքեր են խլում, համակարգեր ու տնտեսություններ քայքայում: Այլ խոսքով՝ աղետները, որոնք միջազգային միասնական լուծումներ են պահանջում՝ սկսելով տարածաշրջանային համագործակցությունից, այժմ պետք է համարվեն նույնքան լուրջ եւ անխուսափելի՝ ինչպես ազգային անվտանգության այլ սպառնալիքները: Հայաստանն ու հայ

Ժողովուրդը պաշտպանված չեն նման աղետներից, որոնք սպառնում են համայն մարդկությանը: Դրանց նկատմամբ պատրաստության ծրագրերը հայ ժողովրդի համար նույնքան կարևորություն պետք է ստանան, որքան հարեւանների հետ հակամարտությունները: Այս վերջինները պետք է դիտարկվեն ընդհանուր վտանգների տեսանկյունից:

ՄԱՍ III. Առնչվող փաստաթղթեր

Առնչվող փաստաթուղթ 1. Հարցարան

Հայերեն հարցարան

ՀԱՐՑԱՐԱՆ Արտաքին քաղաքականության եւ Անվտանգության «Սպիտակ թղթի»

I. ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Ձեր կարծիքով, որո՞նք են 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների հայ-ադրբեջանական պատերազմի ռազմական պարտության հիմնական պատճառները:
2. Ի՞նչն էք համարում այդ պարտության երկու կամ երեք երկրորդական պատճառները:
3. Ձեր կարծիքով, որո՞նք են ռազմական պարտության հիմնական հետեւանքները:
4. Ձեր կարծիքով, որո՞նք են նոյեմբերի 9 -10-ի հրադադարի հայտարարության՝ ամենաէական բացասական եւ դրական առանձնահատկությունները:
5. Ի՞նչ էք կարծում, որեւէ սխալ կա՞ր Հայաստանի եւ Արցախի վարած քաղաքականության ու ռազմավարության մեջ, որը տարավ 2020 թ. սեպտեմբերի պատերազմի: Խնդրում ենք բացատրել՝ ի՞նչ եւ ո՞ր ժամանակահատվածում:

II. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

6. Ձեր կարծիքով, որո՞նք են Հայաստանում եւ Արցախում (կառավարություններ եւ հիմնական քաղաքական դերակատարներ) առկա տարբեր մոտեցումները՝ այն առնչությամբ, թե ինչպես պետք է Հայաստանը մտածի Արցախի ապագայի մասին:
7. Քաղաքական մտածողության ո՞ր գաղափարախոսությունը կամ ուղղությունն է թուլացել կամ ամրապնդվել ռազմական պարտությամբ:
8. Ձեր կարծիքով, որո՞նք են Հայաստանի համար երեք հիմնական խոչընդոտները, որոնք խանգարում են ձեւավորել ու վարել Ղարաբաղյան եւ արտաքին արդյունավետ քաղաքականություն:

9. Ձեր կարծիքով, որո՞նք են Հայաստանի ղեկավարների եւ առկա քաղաքական ուժերի կողմից Ղարաբաղի խնդրի ու հարեւանների հետ հարաբերությունների վերաբերյալ ձեւակերպված տարբեր մոտեցումներն ու ռազմավարությունները:

10. Ձեր կարծիքով, որո՞նք են պատերազմից հետո Ղարաբաղյան հիմնախնդրի հետ կապված՝ ղարաբաղյան առաջնորդների եւ քաղաքական ուժերի կողմից ձեւակերպված մոտեցումներն ու ռազմավարությունները:

11. Ի՞նչ դեր էք կտայիք ԵԱՀԿ-ին, ՄԱԿ-ին՝ Արցախի մոտակա եւ երկարաժամկետ ապագայում:

12. Ի՞նչ էք կարծում, Հայաստանը եւ (կամ) Արցախը պե՞տք է հետապնդեն միջազգային ասպարեզում Արցախի անկախության ճանաչման նպատակ:

13. Ի՞նչ էք կարծում, Ղարաբաղը եղե՞լ է, կամ պե՞տք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ կարեւորություն ունեցող հարցը:

Եթե այո, ապա ի՞նչ նպատակով:

III. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ

14. Ի՞նչը պետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը:

15. Հայաստանը պե՞տք է ընդունի Ղարաբաղյան երկրորդ պատերազմի արդյունքում ստեղծված ստատուս քվոն, թե՞ պետք է փորձի վերանայել այն: Հայաստանը եւ (կամ) Արցախը պե՞տք է որեւէ փորձ կատարեն՝ հետ վերցնելու համար տարածքները՝ (ա) ԽՍՀՄ ժամանակաշրջանից կորցրած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ), եւ (բ) ԼՂԻՄ-ից դուրս գտնվող յոթ շրջանները, որոնք մինչեւ վերջին պատերազմը գտնվում էին հայկական ուժերի վերահսկողության տակ:

16. Հայաստանը պե՞տք է շարունակի պաշտպանել Արցախի անկախությունը եւ արշավը՝ դրա ճանաչման համար:

17. Ձեր կարծիքով, որո՞նք են Հայաստանի ներկայիս արտաքին քաղաքական օրակարգի երեք հիմնական մարտահրավերները: Իշխանությունները ո՞ր խնդիրների վրա պետք է կենտրոնանան եւ լուծեն:

18. Կա՞ն ինչ-որ հատուկ քայլեր, որոնք Հայաստանը պետք է անհապաղ ձեռնարկի արտաքին եւ անվտանգության քաղաքականության ոլորտում:

19. Կախված, Ձեր կարծիքով, այդ քաղաքականության ամենակարեւոր նպատակից, ինչի՞ց պատրաստ կլինեք հրաժարվել կամ փոխզիջման գնալ՝ դրան հասնելու համար:
20. Որո՞նք են Հայաստանի երեք հիմնական միջոցները՝ իր արտաքին քաղաքական նպատակները հետապնդելիս:
21. Հայաստանը պե՞տք է ձգտի անդամակցել ՆԱՏՕ-ին, թե՞ պետք է փորձի իր դիրքերը ամրացնել ռուսական ծիրի մեջ:
22. Ինչպե՞ս կբնութագրեք Հայաստանի ներկայիս հարաբերությունները Ռուսաստանի հետ:
23. Ինչպիսի՞ն պետք է լինեն Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ:
24. Ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի քաղաքականությունը Ադրբեջանի հարցում:
25. Ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Հայաստանը պե՞տք է միանա հակաթուրքական դաշինքին՝ այլ երկրների հետ, կամ խրախուսի նման դաշինքը:
26. Ի՞նչ դեր կտաք Իրանին՝ Հայաստանի մոտակա եւ երկարաժամկետ ապագայում:
27. Ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ:
28. Ի՞նչ դեր կտաք Արեւմուտքին (Եւրոպային, ԱՄՆ-ին) Հայաստանի մոտակա եւ երկարաժամկետ ապագայում:
29. Ի՞նչ եք կարծում, վերը նշվածներից բացի կա՞ն այլ երկրներ եւ կազմակերպություններ, որոնց նկատմամբ Հայաստանը պետք է հատուկ ջանքեր գործադրի՝ իր արտաքին քաղաքական նպատակներին հասնելու համար:
30. Ի՞նչ չափանիշներ պետք է օգտագործվեն արտաքին քաղաքական նպատակներ ձեռնարկելու եւ առաջնահերթություններ սահմանելու համար:
31. Ձեր կարծիքով, ո՞վ է մասնակցում Հայաստանի արտաքին քաղաքականության ձեռնարկմանը:
32. Ի՞նչ եք կարծում, Ձեր թվարկած դերակատարներից բացի այլոք պե՞տք է մասնակցեն այդ քաղաքականության ձեռնարկմանը: Եթե այո, ի՞նչ մեխանիզմներով:

33. Ի՞նչ էք կարծում, Հայաստանի դիվանագետների մասնագիտական պատրաստվածությունը համարժեք է երկրի առջև ծառայած մարտահրավերներին:

IV. ՆԱԵԻ

34. Կա՞ն լրացուցիչ մտքեր, մեկնաբանություններ, առաջարկություններ, որոնք կցանկանայիք ավելացնել:

Անգլերեն հարցարան

I. THE WAR

1. What do you think is the primary reasons for the military defeat of the September–November 2020 Armenian–Azerbaijani war?
2. What would you consider two or three secondary reasons for that defeat?
3. What do you think are the main consequences for the military defeat?
4. What do you think are the most significant—negative and positive—features of the November 9/10 Ceasefire Statement?
5. Do you think there was anything wrong with the policies /strategies pursued by Armenia and Karabakh leading to the September 2020 war?

Please explain what and, if relevant, during what time period?

II. POSTWAR

6. What do you think are the different approaches currently in Armenia and Karabakh— governments, major political players—on how Armenia should think about the future of Karabakh?
7. Which ideology or direction of thought has been weakened or strengthened by the military defeat?
8. What do you think are the three main obstacles to Armenia’s ability to formulate and pursue an effective Karabakh/foreign policy?
9. What do you think have been the different approaches/strategies Armenia’s leaders and political forces have articulated regarding the Karabakh issue and relations with neighbors?

10. What do you think are the different strains of thought approaches/strategies Karabakh's leaders and political forces have articulated since the recent war regarding the Karabakh issue and relations with neighbors?
11. What role would you assign the OSCE, UN, in Karabakh's near- and long-term future?
12. Do you think Armenia and/or Karabakh should pursue the goal of independence for Karabakh internationally?
13. Do you think that Karabakh has been or should be the first priority in Armenia's foreign policy?

If yes, with what aim?

III. FOREIGN AND SECURITY POLICIES IN THE FUTURE

14. What should the main aim of Armenia's foreign policy be?
15. Should Armenia accept the status quo created by the Second Karabakh War or try to revise it? Should Armenia and/or Karabakh undertake any attempts to recapture territories (a) lost from the Soviet era NKAO, and (b) from the seven districts outside NKAO that had been under Armenian control until the recent war?
16. Should Armenia continue to advocate and campaign for Karabakh's independence?
17. What do you think are the three major challenges in Armenia's current foreign policy agenda? What issues should be focused on and resolved?
18. Are there any specific steps Armenia should be taking immediately in the foreign and security policy area?
19. Depending on the most important objective of that policy according to you, what would you be ready to give up or compromise in order to attain it?
20. What are the three main assets Armenia has when pursuing its foreign policy goals?
21. Should Armenia strive to join NATO or should it strive to strengthen its position within the Russian orbit?
22. How would you characterize Armenia's current relations with Russia?
23. What should Armenia's relations be with Russia?
24. What should Armenia's policy be regarding Azerbaijan?

25. What should Armenia's policy be toward Turkey? Should Armenia join/encourage an anti-Turkey alliance with other countries?
26. What role would you assign Iran in Armenia's near- and long-term future?
27. What should Armenia's policy be toward Georgia?
28. What role would you assign the West (Europe, the US) in Armenia's near- and long-term future?
29. Do you think there are countries and organizations other than those considered above that Armenia should spend special effort in pursuit of its foreign policy goals?
30. What should the criteria be for making and prioritizing foreign policy aims?
31. Who, in your opinion, takes part in the formulation of Armenia's foreign policy?
32. Do you think actors other than the one(s) you listed should be involved in the formulation of that policy? If yes, with what mechanisms?
33. Do you think the professional preparation Armenia's diplomats are adequate for the challenges facing the country?

IV. ALSO

34. Any additional thoughts/comments/suggestions you would like to offer?

Առնչվող փաստաթուղթ 2. Պատասխանողների/մասնակիցների ցուցակ

Այս փաստաթղթի յուրաքանչյուր պատասխանողի/մասնակցի հնարավորություն է տրվել ծանոթանալու տեքստի նախնական տարբերակին, մեկնաբանություններ անելու եւ առաջարկություններ ներկայացնելու: Նախաձեռնողները/հեղինակները մասնակիցներին նաև հարցրել են, թե նրանք ցանկանո՞ւմ են, որ իրենց անունները նշված լինեն ստորեւ՝ որպես մասնակցի/պատասխանողի:

Նրանք, ովքեր թվարկված են այստեղ, պարտադիր չէ, որ համաձայն լինեն զեկույցի եզրակացությունների կամ առաջարկությունների հետ: Անունների ցանկագրումը ցույց է տալիս միայն, որ նրանք պատասխանել են հարցաթերթիկին եւ ծանոթացել են նախաեզրափակիչ տարբերակին:

Ստորեւ թվարկված կամ այլապես ներկայացված մասնակիցները պատասխանատվություն չեն կրում սույն փաստաթղթի բովանդակության համար: Այս փաստաթղթի սկզբում թվարկված երեք հեղինակները լիովին պատասխանատվություն են կրում դրա բովանդակության համար:

Մասնակցի անունը/հիմնարկը

(Հիմնարկը ներառված է միայն ծանոթացման նպատակով)

Ժիրայր Ամիրխանյան, գնդապետ, Պաշտպանության նախարարություն, Հայաստան
Վահրամ Աթանեսյան, Արցախի Հանրապետության ԱԺ Արտաքին հարաբերությունների
հանձնաժողովի նախկին նախագահ, Արցախ
Ժերար Շալյան, աշխարհաքաղաքականության, զինված հակամարտությունների մասնագետ,
Փարիզ
Վիգեն Չեթերյան, Վեբստերի համալսարան, Ժնև
Ֆիլիպ Գամաղեյան, Սան Դիեգոյի համալսարան
Օհանես Գեոքչյան, Բեյրութի ամերիկյան համալսարան
Աննա Գեուրգյան, Երևանի պետական համալսարան
Ռայմոնդ Գեուրգյան, պատմաբան, Ցեղասպանության մասնագետ, Փարիզ
Արման Գրիգորյան, Լիհայի համալսարան, Փենսիլվանիա
Տիգրան Եզավյան, լրագրող, արևելագետ, Ֆրանսիա
Ադասի Թադեոսյան, Երևանի պետական համալսարան
Ռաֆայել Թեյմուրազյան, Կոնիբրայի համալսարան, Պորտուգալիա
Թաթուլ Հակոբյան, լրագրող, Երևան

Նժդեհ Հովսեփյան, ՀՀ փոխվարչապետի խոսնակ, Երևան
 Միշել Մարյան, գրող եւ փիլիսոփա, Փարիզ
 Դիանա Յայլոյան, բ.գ.թ. եւ Caucasus Talks-ի համահիմնադիրը
 Սարգիս Շահինյան, Շվեյցարիա-Հայաստան խորհրդարանական խումբ, Շվեյցարիա
 Տիգրան Պողոսյան, Ռիսկի կառավարման մասնագետ, Ղարաբաղյան վերջին երկու
 պատերազմների կամավորական
 Ժան Ռոբերտ Ռավիո, Փարիզի համալսարան, Նանտեր
 Էմիլ Սանամյան, Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայագիտական Ինստիտուտ,
 Լոս Անջելես, Վաշինգտոն
 Ռոնալդ Սյունի, Միչիգանի համալսարան, Անն Արբոր
 Թալին Տեր-Մինասյան, Արեւելյան լեզուների եւ քաղաքակրթությունների ազգային
 ինստիտուտ, Փարիզ
 Ռազմիկ Փանոսյան, Գալուստ Գյուլբենկյան Հիմնադրամ, Լիսաբոն
 Ասպետ Քոչիկյան, Հայաստանի ամերիկյան համալսարան
 Գեւորգ Օսկանյան, Բիրմինգհեմի համալսարան

Տեղեկատվություն հարցաշարին պատասխանողների/մասնակիցների մասին

Ուղարկված հրավերների թիվը	73
Մասնակիցների թիվը (հարցաթերթիկը լրացրած եւ վերադարձրածների, ներառյալ 3-ը՝ բանավոր հարցազրույցների միջոցով)	45

Մասնակիցների բաժանումն ըստ աշխարհագրության եւ մասնագիտության

(Խնդրում ենք նկատի ունենալ, որ սահմանները՝ աշխարհագրական կամ մասնագիտական, ամրագրված չեն: Այժմ ավելի շատ ճկունություն կա, հատկապես որոշելու դեպքում՝ հարցվողը Հայաստանում է, թե Սփյուռքում: Խմբերը թվարկված են միայն ընդհանուր պատկերացում տալու համար:)

Մասնակիցներ, որոնք բնակվում են հին Սփյուռքում	20
Մասնակիցներ, որոնք բնակվում են Հայաստանում	12
Մասնակիցներ Հայաստանից կամ նախկին ԽՍՀՄ-ից, որոնք մշտապես բնակվում են Սփյուռքում	8
Մասնակիցներ Արցախից	3
Հայաստանի հարեւան երկրներում բնակվող մասնակիցներ	2

Ընդհանուր 45

Բաժանում՝ ըստ սոցիալ-մասնագիտական զբաղմունքի

Համալսարանի դասախոսներ եւ (կամ) հետազոտողներ՝ սոցիալական գիտությունների եւ (կամ) ճշգրիտ գիտությունների ոլորտից	27
Քաղաքացիական ծառայողներ, պետական պաշտոնյաներ, դիվանագետներ	5
Լրագրողներ	5
Բիզնեսի եւ կառավարման ոլորտում գործող անհատներ, որոնք նաեւ ներգրավված են բարեգործական գործունեության մեջ՝ Հայաստանում եւ (կամ) Արցախում	4
Ռազմական եւ հարակից ոլորտ	2
Սփյուռքում բնակվող քաղաքացիական հասարակության ակտիվիստներ	2
Ընդհանուր	45

Առնչվող փաստաթուղթ 3. 2020 թ. նոյեմբերի 10-ի հրադարարի հայտարարություն

Հրադարարի հայտարարություն՝ հայերեն

Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարում են հետևյալի մասին.

Նոյեմբերի 10, 2020 թ. 11.45

1. Հայտարարվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի եւ բոլոր ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին 2020 թ. նոյեմբերի 10-ին, Մոսկվայի ժամանակով 00: 00-ից: Ադրբեջանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ Կողմեր, կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերի վրա:
2. Ադրբեջանի շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թ. նոյեմբերի 20-ը:
3. Լեռնային Ղարաբաղում շփման գծի երկայնքով եւ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմ՝ 1960 զինվորներով՝ հրաձգային զենքով, 90 զրահամեքենայով, 380 միավոր ավտոմոբիլային եւ հատուկ տեխնիկայով:
4. Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը տեղակայվում է հայկական զինված ուժերի դուրսբերմանը զուգահեռ: Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի գտնվելու ժամկետը 5 տարի է՝ հաջորդ 5 տարվա ավտոմատ երկարաձգմամբ, եթե կողմերից ոչ մեկը ժամկետի ավարտից վեց ամիս առաջ չհայտարարի այդ դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին:
5. Հակամարտության կողմերի համաձայնեցրած պայմանավորվածությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը բարձրացնելու նպատակով ստեղծվում է Հրադարարի վերահսկման խաղաղապահ կենտրոն:
6. Հայաստանի Հանրապետությունը մինչև 2020 թ. նոյեմբերի 15-ը Ադրբեջանի Հանրապետությանն է վերադարձնում Քելբաջարի շրջանը, իսկ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը՝ Լաչինի շրջանը: Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը կապահովի Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ եւ միեւնույն ժամանակ չի շոշափի ք. Շուշին, կմնա Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ առաքելության վերահսկողության տակ: Կողմերի

համաձայնությամբ՝ առաջիկա երեք տարում կորոշվի Լաչինի միջանցքով երթևեկության նոր երթուղու կառուցման ծրագիրը, որը կապահովի Ստեփանակերտի եւ Հայաստանի միջեւ կապը՝ հետագայում այդ երթուղու պահպանման համար ռուսական խաղաղապահ զորակազմի վերատեղաբաշխմամբ: Ադրբեջանի Հանրապետությունը երաշխավորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների երթևեկության անվտանգությունը երկու ուղղություններով:

7. Ներքին տեղահանված անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ հարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո:

8. Կատարվում է ռազմագերիների եւ այլ ձերբակալված անձանց ու զոհվածների դիակների փոխանակում:

9. Տարածաշրջանում բացվում են բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունն ապահովում է տրանսպորտային հաղորդակցությունը Ադրբեջանի Հանրապետության արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների անարգել երթևեկություն կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները: Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը Ադրբեջանի արեւմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների կառուցումը:

Հրադարձի հայտարարություն՝ ռուսերեն

<http://kremlin.ru/events/president/news/64384>

Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации

10 ноября 2020 года 11:45

Мы, Президент Азербайджанской Республики И.Г.Алиев, Премьер-министр Республики Армения Н.В.Пашинян и Президент Российской Федерации В.В.Путин, заявили о следующем:

1. Объявляется о полном прекращении огня и всех военных действий в зоне нагорно-карабахского конфликта с 00 часов 00 минут по московскому времени 10 ноября 2020 года. Азербайджанская Республика и Республика Армения, далее именуемые Сторонами, останавливаются на занимаемых ими позициях.

2. Агдамский район возвращается Азербайджанской Республике до 20 ноября 2020 года.

3. Вдоль линии соприкосновения в Нагорном Карабахе и вдоль Лачинского коридора развёртывается миротворческий контингент Российской Федерации в количестве 1960 военнослужащих со стрелковым оружием, 90 бронетранспортёров, 380 единиц автомобильной и специальной техники.

4. Миротворческий контингент Российской Федерации развёртывается параллельно с выводом армянских вооружённых сил. Срок пребывания миротворческого контингента Российской Федерации – 5 лет с автоматическим продлением на очередные 5-летние периоды, если ни одна из Сторон не заявит за 6 месяцев до истечения срока о намерении прекратить применение данного положения.

5. В целях повышения эффективности контроля за выполнением Сторонами конфликта договорённостей развёртывается миротворческий центр по контролю за прекращением огня.

6. Республика Армения до 15 ноября 2020 года возвращает Азербайджанской Республике Кельбаджарский район, а до 1 декабря 2020 года – Лачинский район. Лачинский коридор (шириной 5 км), который будет обеспечивать связь Нагорного Карабаха с Арменией и при этом не будет затрагивать г.Шушу, остаётся под контролем миротворческого контингента Российской Федерации.

По согласованию Сторон в ближайшие три года будет определён план строительства нового маршрута движения по Лачинскому коридору, обеспечивающий связь между Нагорным Карабахом и Арменией, с последующей передислокацией российского миротворческого контингента для охраны этого маршрута.

Азербайджанская Республика гарантирует безопасность движения по Лачинскому коридору граждан, транспортных средств и грузов в обоих направлениях.

7. Внутренне перемещённые лица и беженцы возвращаются на территорию Нагорного Карабаха и прилегающие районы под контролем Управления Верховного комиссара ООН по делам беженцев.

8. Производится обмен военнопленными, заложниками и другими удерживаемыми лицами и телами погибших.

9. Разблокируются все экономические и транспортные связи в регионе. Республика Армения гарантирует безопасность транспортного сообщения между западными районами

Азербайджанской Республики и Нахичеванской Автономной Республикой с целью организации беспрепятственного движения граждан, транспортных средств и грузов в обоих направлениях. Контроль за транспортным сообщением осуществляют органы Пограничной службы ФСБ России.

По согласованию Сторон будет обеспечено строительство новых транспортных коммуникаций, связывающих Нахичеванскую Автономную Республику с западными

ՄԱՍ IV. Հավելվածներ

Հավելված Ա. Ղարաբաղի վերաբերյալ Հայաստանի բանակցային դիրքորոշումների համառոտ ակնարկ

Ստորև կներկայացվի վերջին 30 տարվա ընթացքում Ղարաբաղյան հակամարտության եւ հարեւան երկրների հանդեպ Հայաստանի դեկլարանների դիրքորոշումների ամփոփագիրը:

1991 թ. - փետրվար 1998: Առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կառավարման տարիներին հարեւան երկրների հետ խաղաղ եւ բնականոն հարաբերությունների հաստատումը առանցքային է Հայաստանի ազգային անվտանգության, տնտեսական զարգացման եւ ինքնիշխանության պահպանման համար: Ադրբեջանի հետ հակամարտությունը պետք է լուծել իրատես (pragmatic) եւ իրապաշտական նկատառումներից ելնելով, քանի դեռ Հայաստանը գտնվում է համեմատաբար ուժեղ դիրքում: Ըստ այս դիրքորոշման, որքան երկար հայկական կողմը սպասի փոխզիջումների վրա հիմնված համաձայնության, այնքան քիչ կստանա. ուժերի հավասարակշռությունն, ամենայն հավանականությամբ, կփոխվի, եւ պատերազմը կդառնա ավելի հավանական՝ առանց հայկական նոր հաղթանակի հանդեպ վստահության: Ղարաբաղի կարգավիճակի հարցը կարող էր եւ պետք է հետաձգվեր, քանի որ անհնար է այդ հարցում այդ պայմաններում համաձայնության գալ: Հայաստանը եւ Ղարաբաղը պետք է ձգտեն խաղաղության հաստատման եւ Ղարաբաղի համար անվտանգության որոշակի երաշխիքների՝ գրավյալ տարածքների մեծ մասի վերադարձի դիմաց¹⁰: Այս մոտեցումը, ի վերջո, կառավարության որոշ անդամների կողմից մերժվեց, եւ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին ստիպեցին հրաժարական տալ:¹¹

1998 - 2018 թթ. ապրիլ: Հայաստանի դիրքորոշումը կարծրացավ, երբ նոր առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը պնդեց, որ Հայաստանը տակավին ժամանակ ունի, որ Ադրբեջանի ածխաջրածնային ռեսուրսների արտահանումից ակնկալվող եկամուտները հայկական կողմը կկարողանա հավասարակշռել Սփյուռքի ներդրումներով, եթե Հայաստանն ընդունի Սփյուռքի հիմնական քաղաքական օրակարգային կետը՝ Յեղասպանության ճանաչման հարցը՝ որպես պետական գերակա քաղաքականություն: Գրավյալ տարածքների մեծ մասը վերադարձնելու համար Հայաստանը պահանջում է կա՛մ անհապաղ ճանաչել Ղարաբաղի անկախությունը, կա՛մ համաձայնագիր՝ տեսանելի ապագայում հանրաքվե ապահովելու

¹⁰ Մինսկի խմբի՝ 1997 թ. սեպտեմբերի առաջարկը միջազգային միջնորդական առաքելության գազաթնակետն էր այս ընթացքում: Տեքստի համար տե՛ս <https://www.legal-tools.org/doc/8760bb/pdf/>

¹¹ 1999 թ. Դեյվիդ Դ. Լեյտինը եւ Ռոնալդ Գ. Սյունին հրապարակեցին մի հոդված, որն առաջարկում էր հակամարտության մեկ այլ իրատեսական լուծում՝ նույն ոգով, ինչ ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ 1997 թ. առաջարկն էր: Այդ առաջարկը արժանի ուշադրության չարժանացավ: Տե՛ս <https://mepc.org/journal/armenia-and-azerbaijan-thinking-way-out-karabakh>

մասին: Բոլորի կարծիքով՝ հանրաքվեն նույնն է, ինչ անկախ կարգավիճակը. կարգավիճակ, որը կախված է Ադրբեջանի համաձայնությունից, եւ որը չի սատարում միջազգային հանրությունը, ներառյալ Հայաստանի բարեկամներն ու դաշնակիցները: Մի պահ, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ համաձայնեցվում է տարածքների փոխանակման բանաձեւը՝ Մեդրին Ղարաբաղի դիմաց: Բայց այդ բանաձեւը մերժվում է անմիջապես՝ երկու երկրների բարձրագույն շրջանակներում:

Արդյունքում՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումն անհնար է դառնում, Հայաստանը դուրս է մնում տարածաշրջանային նախագծերից, հայտնվում է ավելի թշնամական տարածաշրջանային միջավայրում եւ մեծանում է նրա կախվածությունը Ռուսաստանից:

2016 թ.-ին՝ Մերժ Սարգսյանի նախագահության օրոք, քառօրյա պատերազմը բացահայտում է հայկական կողմի պաշտպանական դիրքերի խոցելի կողմերը: Սարգսյանն այն ժամանակ դրսևւորում է առավել ճկուն դիրքորոշում: Սակայն նա պնդում է անկախության կամ անկախության հանրաքվեի հարցը, որը հանգեցնում է նույն արդյունքին. չկա հակամարտության կարգավորում:

Թե՛ Հայաստանի, թե՛ Ղարաբաղի ղեկավարներն այս ժամանակահատվածում շարունակում են վստահ լինել հայկական կողմի պաշտպանունակության գերակայության վրա:

2018 - 2020 թթ.: Նիկոլ Փաշինյանի գլխավորած թավշյա հեղափոխությունից հետո հակամարտության կողմերը պայմանավորվեցին վստահության ամրապնդման միջոցառումների շուրջ. սակայն բովանդակային հարցերի վերաբերյալ սպասվող բանակցությունները տեղի չունեցան: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահ է, որ հայկական կողմը դեռ ժամանակ ունի՝ մինչ նման բանակցությունների մեջ մտնելը: Նա համոզված է, որ կարող է հավաքել մի ուժեղ միջազգային դաշինք՝ ի պաշտպանություն Հայաստանի եւ Ղարաբաղի անկախության՝ ապավինելով իր թավշյա հեղափոխության հաջողությանը եւ Հայաստանում ժողովրդավարական կառավարման վերականգնման ուղղությամբ ձեռնարկված ուժեղ քայլերին: Ի վերջո, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ստեղծված դրական մթնոլորտը վերածվեց փոխադարձ մեղադրանքների: Հայկական կողմը հայտարարեց, որ բանակցություններն անօգուտ են, եւ մերժեց փուլային մոտեցման վրա հիմնված հակամարտության մասնակի լուծման համար առաջարկվող բանաձեւերը:

Փաշինյանը չունի Ռուսաստանի լիակատար վստահությունը: Երբ վրա հասավ լայնամասշտաբ պատերազմը, Արեւմուտքի կողմից սպասվող դիվանագիտական եւ հնարավոր ռազմական աջակցությունը չիրականացավ, հայկական կողմը հայտնվեց միայնության մեջ ու կորցրեց պատերազմը:

Հավելված Բ. Դիտարկումներ հայկական պետականության հետագծի վերաբերյալ՝ կապված Ղարաբաղյան խնդրի հետ, ինչպես նաև այդ թեմայով որոշ առաջարկություններ

Այս դիտարկումները կապված են հետխորհրդային Հայաստանի հետագծի եւ պետության կառուցման գործընթացում կատարված ընտրությունների հետ: Հեղինակները ձեռնպահ կմնան որոշակի ամսաթվերից, որպեսզի խուսափեն այդ դիտարկումներն անհատականացնելուց, եթե դրանք չեն վերաբերում պատմական փաստերին:

1. Կարելի է պնդել, որ հետխորհրդային Հայաստանը ծնվել է երկակի մարտահրավերից. ինքնիշխան ժողովրդավարական պետության կայացում ԵՒ ազգային հարց, որը լուծման կարիք ունի՝ Ղարաբաղի հարցը

Երկրորդ հարցը գերադասվեց առաջինից, ենթադրաբար, առաջին Ղարաբաղյան պատերազմի ժամանակ՝ չնայած առաջին մարտահրավերի զգալի առաջընթացին: Բայց ժողովրդավարական եւ ինքնիշխան պետության կայացումը որպես արժեք շարունակական անկում ապրեց անկախության երկրորդ տասնամյակում:

Ինչ-որ ավելի ուշ պահի, Ղարաբաղյան հակամարտությունը, որը տեսականորեն մնում էր Հայաստանի արտաքին քաղաքական գերակայությունը, փաստորեն, դադարեց լինել հանրային քննարկման հիմնական առարկա կամ որոշիչ գործոն՝ նախընտրական արշավներում:

Միջազգային ասպարեզում հարցը սկսեց ընկալվել որպես նեղ ազգայնական խնդիր երկու երկրների միջև, որը բնութագրվում էր տարածքային վեճերի եւ պատմական անարդարության տարբեր տարրերով, այլ ոչ թե համընդհանուր օրինաչափական (normative) խնդրով:

Ստատուս քվոն պահպանելու ընտրությունը նաև իր ազդեցությունն ունեցավ Հայաստանի դիվանագիտության վրա՝ Հայաստանը պասիվ դարձնելով քննարկումներում եւ նվազեցնելով նույնիսկ իր օրինակարգ հարցերը լսելի դարձնելու կարողությունը:

Այն, ինչ մնաց Ղարաբաղյան հիմնախնդրից, կասկածելի հռետորաբանությունն է, որն ուղղված էր ներքին սպառմանը, բայց լավեց բոլորի կողմից. հռետորաբանություն, որում գերակշռում էր «ոչ մի թիզ հողի» «ազգային» գաղափարախոսությունը՝ հիմնված «հաղթողի իրավունքների» վրա, ըստ որի՝ դաշտում գոյություն ունեցող իրականությունն է, որ պետք է պարտադրի լուծումը: Այդ հարցը պարզապես օգտագործվեց եւ շահավետ դարձվեց իշխող վերնախավի կողմից:

2018 թ. թավշյա հեղափոխության արդյունքում հայտնված կառավարությունը փորձեց հետ շրջել ճոճանակը («Հայաստանի վրա կենտրոնացած արտաքին քաղաքականությունը») և կյանքի կոչել ժողովրդավարական տեսլականը: Պետականաշինության տեսանկյունից՝ Հայաստանը, որը կաշկանդված է իր բնակչության թվաքանակով և տնտեսական հնարավորություններով, չի կարող իրեն թույլ տալ ո՛չ համատարած կոռուպցիա, ո՛չ էլ անգործունակ հաստատություններ: Այն ժամանակներում, երբ անհրաժեշտ էր ժամանակ և շրջահայեցություն՝ անհրաժեշտ, բայց բարդ ներքին բարեփոխումների համար, Հայաստանն անտեսեց ստատուս քվոյի հակասություններն ու խնդիրները, ուժային հարաբերությունների տեղաշարժերը, միջազգային և տարածաշրջանային աշխարհաքաղաքական կազմաձևերի փոփոխությունները և այդ գործոնների ազդեցությունն իր դիրքորոշման վրա:

2. Հայերը վճարում են չուծված հակասությունների և իրենց քաղաքական հիմնավորումների սխալ գնահատականների համար

Պետականաշինության մի շարք խնդիրներ չիրականացվեցին: Դա ճիշտ էր ինչպես Հայաստանի սեփական դիրքորոշումներում, այնպես էլ Հայաստանի ու արտաքին դերակատարների միջև հարաբերություններում:

- 1994 թ. ռազմական հաղթանակը, որը որոշակի ժամանակահատվածում Հայաստանն ու Ղարաբաղը չկարողացան վերածել քաղաքական հաղթանակի:
- Դիվանագիտական/հռետորական կապի խզումը Ղարաբաղի անկախության ճանաչման միջազգային արշավի և Հայաստանի կողմից Ղարաբաղի անկախությունը չճանաչելու միջև, որը Հայաստանը պատճառաբանել է նրանով, թե նման արարքը վերջ կդնի բանակցություններին:
- Տարածքային-իրավական-քաղաքական խզումը Հայաստանից առանձնացած (չնայած չճանաչված) Ղարաբաղի Հանրապետության ու Հայաստանի հետ նրա փաստացի ինտեգրման (օրինակ՝ 2000-ական թվականների կեսերից պետական մարմինների կողմից հրապարակված քարտեզներ, ուր երկու միավորները ցույց են տրվում որպես միացյալ մեկ միավոր) միջև:
- Ղարաբաղի Հանրապետության 2006 թ. Սահմանադրության դրույթը, որը գրավյալ շրջանները անվանում էր «անվտանգության գոտի» ԼՂԻՄ տարածքի համար, այնուամենայնիվ, միացյալ դարաբաղյան պետության տարածքում:

Սրանք հանգեցրել են հակառակ արդյունքի: Արդյունքը 2020 թ. նոյեմբերի 10-ից հետո ստեղծված իրավիճակն է:

Հավելված Գ. Զինված եւ միջազգայնորեն երաշխավորված չեզոքության գաղափարը

Ստորեւ ներկայացվում է ռազմավարության երկարաժամկետ տեսլականը, որը Հայաստանը կարող է դիտարկել որպես իր արտաքին քաղաքական սկզբունքի մեկ սցենար: Հեղինակները կարծում են, որ արժե այդ թեմայի մասին խոսել:

Նախադրյալներ. Հայաստանը ցանկանում է պակաս խոցելի լինել տարածաշրջանային մեծ տերությունների միջեւ աշխարհաքաղաքական մրցակցության համար: Միեւնույն ժամանակ, Հայաստանը պետք է միջոցներ ապահովի իր ինքնիշխան տարածքը պաշտպանելու համար:

Հայաստանը շատ փոքր պետություն է՝ ըստ բոլոր չափանիշների եւ սահմանումների, ինչպես նաեւ «փոխանցումային» պետություն է: Որպես այդպիսին, Հայաստանը գտնվում է անվտանգության մշտական երկրնորանքի մեջ, որը հեղինակները ներկայացրին այս փաստաթղթում, եւ որը բազմիցս նկատվել է շատ մեկնաբանների կողմից: Հայաստանի գոյատևումը՝ որպես անկախ միավոր, կախված է մյուսների՝ այդ փաստի լիարժեք ընդունումից: Չնայած ՄԱԿ-ը/միջազգայնորեն ճանաչված պետությունները, որպես այդպիսին, «չեն անհետանում», նրանք ռիսկի են ենթարկվում ձախողված պետություններ դառնալու կամ ամբողջովին ենթադասվելու առավել լիարժեք երկրների կողմից. վտանգ, որը հավասարապես սպառնում է նրանց ժողովուրդների բարգավաճմանը:

Չեզոքությունը պետք է ընդունվի որպես ճկունություն ունեցող մոտեցում, որի վերջնական նպատակն է սահմանափակել տատանվող աշխարհաքաղաքական մրցությունների եւ խաղերի ազդեցությունը Հայաստանի համար: Կարելու է պնդել, որ չեզոքությունը պետք է դուրս գա Սառը պատերազմի երկրեւեռ առձակատման եւ խմբային համատեքստից: Անհրաժեշտ է մի մեխանիզմ, որը Հայաստանին եւ նախկին ԽՍ՝ նոր ապագադրությամբ պետություններին դուրս կդնի Ռուսաստանի եւ Թուրքիայի կայսերական ու ոչ ազատական նախագծերից, ինչպես նաեւ ավելի հեռավոր պետությունների անհարկի ազդեցություններից եւ ուժային խաղերից: Իրանի կայսերական ռեֆլեքսներն ավելի պաշտպանողական են, քան հարձակողական, իսկ տվյալ պահին այդ պետությունը կարող է դրական մոտեցում ունենալ նման տարբերակի նկատմամբ:

Հայաստանը եւ Հարավային Կովկասի (ՀԿ) երկու մյուս պետությունները բախվում են մրցակցության, եթե ոչ՝ առձակատման, երկու մակարդակի վրա: Առաջին մակարդակը կայսերական նոր հավակնություններով եւ փոխադարձ կասկածներով հարեւան երկու նախկին կայսրություններն են՝ Թուրքիան եւ Ռուսաստանը: Երկրորդ մակարդակը հետաառապատերազմյան Արեւելք-Արեւմուտք առձակատման մնացորդներն են. առձակատում, որն այժմ կիրառվում է այս տարածաշրջանի համար: Այս պրիսմակի արդիականությունը, սակայն, մեծապես գերազանահատված է: Ավելին, դա ավելի քիչ արդիական է, երբ խոսքը վերաբերում է ՀԿ-ին, քան, օրինակ, Ուկրաինային, քանի որ

Արեւմուտքը տարածաշրջանում առաջնությունը տալիս է Ռուսաստանին: Եւ, վերջապէս, այն նվազում է, քանի որ տարածաշրջանային ազդեցությունները բազմազանեցվում են (Չինաստանի, Հնդկաստանի եւ այլ երկրների հետ): Ուժերի բազմաբեւեռ հավասարակշռությունը ներկայումս զարգանում է:

Իրապաշտների եւ նեոիրապաշտների համար ուժերի համաշխարհային հավասարակշռությունը կարող է նշանակել վերադարձ դեպի օրինաչափ միջազգային քաղաքականություն: Այնուամենայնիվ, դա կարող է նաեւ որոշ փոքր պետությունների չեզոքություն որդեգրելու հնարավորություն տալ¹²: Չեզոքությունը մի շարք սահմանափակումներ է առաջացնում այս փոքր պետությունների համար՝ պայմանով, որ երկարաժամկետ հեռանկարում նրանք կստանան անվտանգության եւ ինքնիշխանության ավելի մեծ զգացողություն: Նույնիսկ եթէ Ադրբեջանը շատ ավելի լավ հաջողություններ եւ միջոցներ ունի Թուրքիայի եւ Ռուսաստանի հետ իր արտաքին հարաբերությունները հավասարակշռելու հարցում, քան Հայաստանը, իսկ Վրաստանը մի փոքր պակաս խոցելի է, քան Հայաստանը, բայց դեռեւս բարձր գին է վճարում Ռուսաստանի հետ փշոտ հարաբերությունների համար, ՀԿ երեք պետությունները մի ընդհանուր խնդրի են բախվում՝ կապված բազմակի եւ մրցակցային շահերի հավասարակշռման հետ:

Ստորեւ ներկայացված են որոշ նախադրյալներ, որոնք ընկած են չեզոքության հասնելու գործընթացի հիմքում.

- Ա. Հայաստանը զարգացնում է իր ողջ տարածքի հզոր պաշտպանունակությունը: Նա ոչ մեկին պատերազմ չի հայտարարում եւ չի վարում պատերազմի քաղաքականություն ոչ մեկի հետ: Նա նաեւ ելնում է այն նախադրյալից, որ ոչ մեկը չի պատերազմի միայն Հայաստանի շահերի համար:
- Բ. Չեզոքությունը պետք է կարգավորվի քաղաքական կոնվենցիայով եւ (կամ) իրավական միջազգային կոնվենցիայով: Որպեսզի Ռուսաստանի համար իսկապէս ընդունելի լինի, դա, ի վերջո, պետք է դառնա միջազգային իրավունքի մաս (եւ ոչ միայն ինքնահռչակված, ինչպէս Թուրքմենստանի կամ Մոլդովայի դեպքում), նույնիսկ եթէ սկզբում նման ուղղության ընտրությունն ընկնի մի անհատի պետական պատասխանատվության վրա եւ աշխատի դրա համար: Այս պահին օտարերկրյա ռազմական բազաները դուրս կբերվեն:
- Գ. Չեզոքության հասնելու գործընթացը կպահանջեր ինչ-որ պահի դուրս գալ ՀԱՊԿ-ից եւ դուրս բերել ռուսական ռազմաբազան: Միեւնույն ժամանակ, ՆԱՏՕ-ն եւ Հայաստանը հասկանալի կդարձնեն, որ ՆԱՏՕ-ին անդամակցություն տեղի չի ունենա: ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը, նույնիսկ բարձր մակարդակի վրա, ՀԱՊԿ-ի հետ համագործակցության հետ միասին, ոչ միայն հնարավոր կլիներ, այլ նաեւ ցանկալի՝ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ հակաահաբեկչությունը, կազմակերպված

¹² Archie Simpson, *Realism, Small States and Neutrality*, (Արչի Սիմփսոն, Իրապաշտություն, փոքր երկրներ եւ չեզոքություն), 2018.

հանցավորությունը, սպառնալիքների նոր տեսակները, բնական պաշարների պաշտպանությունը եւ մարդկանց թրաֆիքինգը: ՀԱՊԿ-ի ներսում Հայաստանի կարգավիճակը սկզբում պետք է վերանայվեր, ինչպես եւ ՆԱՏՕ-ի հետ «Գործընկերություն հանուն խաղաղության»-ը: Անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ Ռուսաստանի պահանջով), չեզոքությունը կարող է փոփոխվել հայ-ռուսական անվտանգության երկկողմ դաշնագրով. այս երկու հարցերը ձեւականորեն տարանջատված են եւ գործում են մի քանի տարի: Սա գուցե նախընտրելի տարբերակ չէ Հայաստանի համար, բայց կարող է անհրաժեշտ փոխզիջում լինել որոշ ժամանակով:

- Դ. ԵՄ ընդհանուր արտաքին քաղաքականությանը եւ ճգնաժամերի կառավարմանը մասնակցելը միանշանակ թույլատրվում է: Չեզոք պետությունները նույնպես հանդիսանում են ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության (ԳՀԽ) կոոպերատիվ անվտանգության բլոկի նման ուժեղ տեղաբաշխման մաս (հավաքական անվտանգությունն ուղղված չէ արտաքին թշնամու դեմ):
- Ե. Միջոցներ. պաշտպանության ծախսեր, պաշտպանական բարեփոխումներ, ավելի մեծ ծանոթություն արեւմտյան դրական ժողովրդավարական արժեքներին. առևտրի աճ բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ինչպես նաեւ ավելի մեծ մասնակցություն չինական՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությանը:
- Զ. Կարող էին պաշտպանական երկկողմ հարաբերություններ լինել մի շարք երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի եւ այլ պետությունների (օրինակ՝ Չինաստանի, Հնդկաստանի, Ֆրանսիայի) հետ, որոնց շրջանակը եւ մակարդակը պետք է նորովի մտածել:
- Է. Հատուկ բազմակողմ հարաբերություններ կարող են ստեղծվել անվտանգության ոլորտում՝ Եւրոպայի չեզոք պետությունների (Իռլանդիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա, Ավստրիա) հետ:
- Ը. Հայաստանի ազգային հեղինակությունը կբարձրանար, քանի որ Հայաստանն իր համար հեռանկար կունենար՝ խռովարար լինելու կամ լսելի չլինելու փոխարեն: Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, այստեղ կարող է տեղ լինել փակուղուց դեպի դարպասներ եւ կամուրջներ անցնելու համար:

Եթե այս սցենարը հնարավորինս շուտ ընդունվի, կարող է դրական ազդեցություն ունենալ խիստ արդիական հարցերի վրա.

- Թ. Դա կարող է մեղմացնել այն ոչ կառուցողական եւ հապճեպ ձեւերը, որոնցով ներկայումս լուծվում է սահմանների կարգավորման հարցը, հատկապես եթե Հայաստանն անմիջական աշխատանքային քննարկումներ սկսի Ադրբեյջանի եւ (կամ) Թուրքիայի հետ:
- Ժ. Կարող է հնարավորություն լինել միջազգային միջամտության/վերահսկողության համար. օրինակ՝ հավաքական անվտանգության առաքելությամբ, որում եւրոպական չեզոք պետությունները դերակատարություն կունենային Հայաստանի բնակչության

անվտանգությունն ապահովելիս՝ սահմանամերձ բնակիչների անվտանգության վրա կենտրոնացած ռազմական-քաղաքացիական առաքելության միջոցով: Ադրբեջանի հետ հարաբերությունների ներկայիս իրավիճակը, որում Ռուսաստանը հանդես է գալիս որպես միակ միջնորդ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ, չի նպաստում հարաբերությունների հանդարտեցմանը:

Հայաստանը կարող է սկսել մտածել նման տարբերակի մասին եւ այդ հարցի վերաբերյալ նախնական քննարկում նախաձեռնել իր երկու հարեւանների հետ: Ո՞ր երկիրը պետք է շահագրգռված լիներ Հայաստանի չեզոքության մեջ, որպեսզի այս տարբերակը իրագործելի դառնա: Առաջին՝ Ռուսաստանը եւ Թուրքիան, երկրորդ՝ Իրանը, երրորդ՝ արեւմտյան գործընկերները (ԱՄՆ/ԵՄ): Բացասական արձագանքներ պետք է ակնկալվեն, առաջին հերթին, Ռուսաստանից: Տարբեր տարածաշրջանային թատերաբեմերում Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ տեղի ունեցող մրցակցության/համագործակցության ընթացքում նրանք հակված չեն լինելու կորցնել ազդեցության գոտին ՀԿ-ում, եթե դրա դիմաց որեւէ բան չեն ստացել:

Նոր պայմանավորվածությունը կարող է լինել ավելի ընդգրկուն պայմանավորվածության բաղկացուցիչ մասը: Պատմականորեն միայն նահանջող կամ ժողովրդավարական կայսրություններն են ընդունել երրորդ երկրի չեզոքությունը: Թուրքիան եւ Ռուսաստանը մրցում են գերիշխանության համար եւ ուժեղ բռնապետական ռեժիմներ են: Այնուամենայնիվ, նրանց աշխարհաքաղաքական դիրքը եւ տնտեսական բարենպաստությունը կարող են ինչ-որ պահի ստիպել նրանց՝ ավելի ճկուն վերաբերմունք որդեգրելու: Դա կարող է լինել այն ժամանակ, երբ քննարկումները արագանան, եւ չեզոքության տարբերակն ավելի գործնական դառնա:

Եւրոպական, ամերիկյան, ռուսական եւ մյուս գործընկերների հետ այդ տարբերակի վերաբերյալ նախնական քննարկումներն ու շփումներն անհրաժեշտ կլինեն՝ գնահատելու համար իրագործելիությունը եւ թե ինչպիսի աջակցություն ու տնտեսական շահույթներ կարող է ակնկալել Հայաստանը՝ այդ քայլի նախապատրաստման ընթացքում:

Եթե որոշ միջազգային գործընկերներ ընդունում են Հայաստանի նպատակը, ապա պետք է պայմանավորվածություններ ձեռք բերվեն արտոնյալ պայմաններում պաշտպանողականորեն զինելու Հայաստանը՝ այս կարգավիճակը եւ նրա ինքնիշխանությունը պաշտպանելու համար: Ուստի, որքան շուտ Հայաստանն այսօր կարողանա համագործակցել տարբեր գործընկերների հետ, այնքան ավելի լավ հնարավորություն կունենա ապագայում անվտանգության դաշինքից անցնելու չեզոքության: Մի շարք երկրներից, այդ թվում՝ Ֆրանսիայից, Հայաստանի հետ համագործակցության եւ զենքի գործարքների մակարդակը բարձրացնելու առաջարկներ են արվել: Գուցե արժե ուսումնասիրել այն հնարավորությունը, որ Ֆրանսիան, Հնդկաստանը, Չինաստանը, ԱՄՆ-ը

և Ռուսաստանը կարող են դառնալ զենքի առևտրի գործընկերներ՝ ուղղված պաշտպանական միջոցներին:

Այս տարբերակը ձեռք է բերում արդիականություն և իրագործելիություն, եթե այն դառնա ՀԿ տարածաշրջանային տարբերակ, որով Վրաստանը կդադարեցներ ՆԱՏՕ-ին անդամակցելու իր քաղաքականությունը, իսկ Ադրբեջանը չէր զբաղվի Թուրքիայի հետ հետագա ռազմական համարկմամբ (integration): Այդ դեպքում, նույնիսկ Ռուսաստանի համար դա կարող է ընդունելի փոխզիջում լինել:

Եթե Հայաստանը որդեգրեր այդ կողմնորոշումը, ուրեմն այդ հեռանկարը կքննարկեր Վրաստանի և Ադրբեջանի հետ՝ փաստարկելով, որ ՀԿ երեք երկրները կլուծեն իրենց՝ անկախության և խաղաղության խնդիրները, եթե միասին ընտրություն կատարեն մի ընդհանուր չեզոք տարածքի օգտին: ԱՄՆ-ը և Եվրոպան միշտ երեք երկրներին նայել են որպես մի ընդհանուր փաթեթի. հետևաբար, նրանք կողջունեին նման ընդհանուր առաջարկը:

Գերտնները չեզոքության հարց է առաջ քաշում Արևելյան գործընկերության մի շարք պետությունների համար.

«ԵՄ՝ հարեւանությանը վերաբերող քաղաքականության, ժողովրդավարության խթանման, օրենքի գերակայության և շուկայական տնտեսության սկզբունքները կարեւոր են: Արևելյան Եվրոպայի երկրները (Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան և Բելառուս) հանդիսանում են Եվրոպական հարեւանության քաղաքականության մասը (ԵՀՔ), որը կենտրոնանում է ԵՄ-ի հետ հարաբերությունների վրա՝ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ առևտուրը և ներդրումները, ֆինանսները, էներգետիկան և տրանսպորտը՝ մյուսների շարքում: Այս պետությունները հայտնվել են «աշխարհաքաղաքական երկրնտրանքի» առջև՝ Բրյուսելի և Մոսկվայի նկատմամբ իրենց արտաքին ու անվտանգության քաղաքականությունների կողմնորոշմամբ. ԵՄ-ի հետ ավելի սերտ քաղաքական ասոցացում և տնտեսական համարկում՝ մի կողմից, Ռուսաստանի և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ, որի մեջ մտնում են Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Հայաստանը և Ղրղզստանը) հետ բարելավված գործընկերություն՝ մյուս կողմից: Այս երկրների չեզոքությունը կարող էր նպաստել ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև ավելի սերտ տնտեսական համագործակցությանը և վերջ դնել նրանց միջև եղած կացությանը, որն անկայուն է և անցանկալի¹³»:

Այս տարբերակը պայմանավորված է Արեւմուտքի և Ռուսաստանի միջև հարաբերությունների որակով: Որպեսզի լիցքաթափումը հնարավոր լինի, անհրաժեշտ է նոր

¹³ Heinz Gärtner, “Neutrality as a Model for the New Eastern Europe?” (Հայնց Գերտներ, Չեզոքությունը որպես Նոր Արևելյան Եվրոպայի նախատի՞պ), 2018 <https://archive.transatlanticrelations.org/wp-content/uploads/2018/04/Neutrality-as-a-Model-for-the-New-Eastern-Europe.pdf>

ձևիակ (détente) կամ Ռուսաստանի աստիճանական կամ դրամատիկ նահանջ: Նախնական խորհրդակցություններ սկսելու համար ճիշտ պահին ընտրելու հարցով Հայաստանը կարող է նաև մտածել ժամանակի այն հնարավոր կետի մասին, երբ Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները դառնան առավել խոր եւ ամուր, իսկ Արեւելք-Արեւմուտք լարվածությունը թուլանա:

Արեւմտյան երկրները շահագրգռված կլինեն Արեւելյան Եւրոպայի չեզոք երկրների անվտանգության նոր ճարտարապետությանն ուղղված բանակցությունների հարցում՝ տարածաշրջանը կայունացնելու եւ Ռուսաստանի հետ պատերազմի ռիսկերը նվազեցնելու համար: Մշտական չեզոքությունն այս պետությունների համար (ամբողջ Արեւելյան գործընկերությունը) կդառնար անվտանգության այդ նոր ճարտարապետության առանձնահատկությունը:

Գնահատում. այս այլընտրանքը պետք է քննարկել՝ այն համեմատելով ամեն բան Ռուսաստանի գնացքին կապելու եւ այդ երկրի հետ ամբողջական ռազմավարական համարկման այլընտրանքի հետ: Ռուսական սցենարն ավելի հեշտ է եւ իրագործելի: Այստեղ Ռուսաստանի կորուստը Հայաստանի աշխարհառազմավարական ինքնավարությունն է, եթե ոչ ուղղակի ինքնիշխանությունը: Բացի այդ, ոչինչ չի վստահեցնում, որ հայ ժողովուրդը կբարգավաճի ռուսական տիրապետության ներքո: Եթե արտաքին քաղաքականության նպատակը պետական միջոցներով ազգային շահերի պաշտպանությունն է, ապա այդ սցենարի պարագայում չի բացառվում այդ նպատակից, այսինքն՝ ազգային շահերի հետապնդումից, հնարավոր հրաժարումը:

Մյուս կողմից, չեզոքության տեսլականը Հայաստանի քաղաքական մտքի եւ, առավել եւս, նրա ղեկավարների ու դիվանագետների համար անձանոթ տարածք է: Չկա իրագործելիության որեւէ երաշխիք՝ հաշվի առնելով այսօրվա համատեքստը: Բայց նոր կառավարությունը, որը նախ կվերականգնի երկրի կառավարելիությունը եւ կսկսի ամենահրատապ սահմանադրական բարեփոխումներ, գուցե նպատակահարմար համարեր այս սցենարը մանրակրկիտ ուսումնասիրել:

Հավելված Դ. Հանգուցյալ դեսպան Ռուբեն Շուգարյանի ժառանգությունը

Թավշյա հեղափոխությունից հետո, բայց 2020 թ. պատերազմից առաջ, դեսպան Ռուբեն Շուգարյանը, որը կյանքից հեռացավ երիտասարդ հասակում, 57 տարեկանում՝ 2020 թ. սկզբին, գրել է.

«Այն, ինչ Հայաստանը լիովին չկարողացավ իրականացնել մինչև 1997 թ. Ռուսաստանի հետ բարեկամության եւ համագործակցության պայմանագրի ստորագրումը, դեռ կարող է իրականացվել, եթե նույն սխալները չարվեն կրկին: Դա անելու համար անհրաժեշտ է պատշաճ կերպով համապատասխանեցնել մի շարք արտաքին եւ ներքին նախադրյալներ:

Անկախությունը վերականգնելուց քսանհինգ տարի անց, իր ինքնիշխանության ամրապնդման աշխարհաքաղաքական այլընտրանք ստեղծելու երկրորդ փորձից առաջ Հայաստանը պետք է համոզվի, որ հետեւյալ խնդիրները համարժեք լուծում են ստացել.

1. Հայաստանը պետք է իր տանը կարգուկանոն հաստատի: Սա, անկասկած, դժվար գործ է, որը հնարավոր չէ իրականացնել մեկ օրվա մեջ: Այնուամենայնիվ, դեռեւս հույս կա, որ ձեւավորվող քաղաքացիական հասարակությունը դա անելու համար բավականաչափ արագ արդյունավետ միջոցներ կգտնի՝ կանգնեցնելու համար մարդկանց զանգվածային արտագաղթը եւ վերականգնելու Հայաստանի հեղինակությունը՝ որպես Կովկասում ժողովրդավարության կղզյակի: Կոռուպցիայի եւ սոցիալական անարդարության դեմ պայքարը գոնե պետք է հասնի նախագահ Սասկաշվիլիի Կրաստանի մակարդակին՝ նրա առաջին պաշտոնավարման ընթացքում:
2. Այն պետք է համաձայնեցնի մշտապես եւ կրկին հակամարտող պետական ու ազգային շահերը՝ որոշակի նախապատվություն տալով առաջինին: Հայաստանի դեպքում, չնայած այն միատարր երկիր է, այս երկու հասկացությունները նույնական կամ հոմանիշ չեն: Առաջինը պատկանում է նոր, հետանկախական մտածելակերպին, որը ամբողջովին ձեւավորված չի եղել եւ չի ընկալվել ազգային մակարդակում. երկրորդը պնդում են ավանդական մտածողության ջատագովները: Հասկանալի պատճառներով՝ Սփյուռքն ավելի շատ է վերջինիս բնական կրողը, բայց նույնիսկ աշխարհի 90 երկրներում տարածված հայկական համայնքներում պետք է կամք լինի՝ գտնելու ճիշտ հավասարակշռություն երկուսի միջեւ՝ այդպիսով հաշվի առնելով մինչ այժմ սխալ ընկալված եւ հաճախ թերագնահատված պետության շահը: Հաշտվել նոր իրողության հետ՝ նշանակում է հասկանալ ինքնիշխանության բարձրագույն արժեքը՝ դարերով առանց պետականության գոյություն ունենալուց հետո:

3. Ազգային ինքնության վերաբերյալ լուրջ քննարկում, որը կարող է հանգեցնել համահավանության՝ այն հարցի շուրջ, թե որտեղ է գտնվում Հայաստանը մշակութային եւ քաղաքական առումով, եւ ինչպիսի ընտրությունն պետք է կատարել երկրի համար ավելի բարեկեցիկ, կայուն եւ անվտանգ ապագա ապահովելու նպատակով: Նման քննարկումը չպետք է գաղափարախոսականացվի (ideologize) եւ կաշկանդված լինի ազգային անվտանգության իրական ու ենթադրյալ մտահոգությունների՝ երբեք չփոխվող շարքով. մտահոգություններ, որոնք պետք է լուծվեն այլ տեղում: Ինքնիշխանության հնարավոր կորուստը պետք է դրվի այս շարքի վերեւում՝ որպես անվտանգության հիմնական սպառնալիք: Այս քննարկման արդյունքը կարող է լինել երկարաժամկետ ինքնագիտակցությունը, որը, ի վերջո, կուրվագծի Հայաստանի ապագայի իդեալական նպատակը միջազգային հանրության համար. ուրվագծում, որը չի խոչընդոտվում դրան այսօր հասնելու անհնարիությամբ, բայց ներդաշնակ է ազգի բնական եւ գիտակցված ընտրության հետ»:

Ռուբեն Շուգարյանը ամենահիմուտ դիվանագետներից եւ ազդեցիկ մտավորականներից մեկն է, եւ այս հանգամանքը նրան բարձր կարգի որակավորում էր հաղորդում՝ ընդհանուր դիտարկումներ եւ առաջարկություններ անելու համար: Նա տիրապետում էր հսկայական գիտելիքների ու փորձի՝ համաշխարհային (Ռուսաստան) եւ տարածաշրջանային (Թուրքիա, Իրան) տերությունների ծավալապաշտական ռազմավարության, ինչպես նաեւ Արեւմուտքի այն շահերի վերաբերյալ, որոնք համապատասխանում էին Ադրբեջանի շահերին: 2018 թ. ապրիլի 15-ին լույս տեսած իր գրքի վերջաբանում Շուգարյանը ներկայացրել է դիվանագիտական բաղադրատոմսեր, որոնք կարող էին կանխել գալիք աղետը: Ցավոք, նրան չէին հետեւում թավշյա հեղափոխության առաջնորդները. այդ հեղափոխությունը մի իրադարձություն էր, որի հետ նա մեծ հույսեր էր կապում: Պատմությունը սովորեցրել է նրան, որ հենց փոքր երկրներն են ամենաբարձր գինը վճարում խոշոր երկրների հետ կապված հակամարտությունների համար: Շուգարյանը կոչ էր անում անմիջական գործընկերային հարաբերությունները բարելավել, առաջին հերթին, սեփական հարեւանների հետ: Ավելորդ է ասելը, որ նրա խոսքերը մնացին աննկատ:

Հավելված Ե. Առաջարկություններ Հայաստանի Զինված ուժերի բարեփոխումների համար¹⁴

1. Հետաքննող հանձնաժողով. 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը

Անհրաժեշտ է համապարփակ հետաքննություն, որը լույս սփռի 2020 թ. պատերազմի տարբեր երեսների վրա: Այդ հետաքննության արդյունքում պետք է պատրաստվի զեկույց, որի մի տարբերակը պետք է հրապարակվի հանրության համար, իսկ պետական տարբերակը կմնա գաղտնի, քանի դեռ Հայաստանը չի կարգավորել իր ազգային անվտանգության ներկայիս խնդիրները: Հանձնաժողովը պետք է լիովին անկախ լինի՝ իր գործունեության, փորձագետների ընտրության եւ ինստիտուցիոնալ կարգավորման առումով: Չնայած ռազմական գաղտնիքների զգայունությանը պատշաճ ուշադրություն դարձնելուն, թափանցիկությունն առաջնային է: Առանց խորհրդարանի եւ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության վրա հիմնված ճնշումների՝ զինվորականները, որպես բյուրոկրատական քաղաքականության մասնակիցներ եւ ունենալով իրենց սահմանափակ շահերը, կամովին չեն փոխվի:

Միեւնույն ժամանակ, այդ հետաքննությունը թույլ կտա գնահատական տալ 1994 թ. հաղթանակին՝ հետադարձ կերպով (ex-post): Հայ ազգայնականությունը ոչ օրինաչափ (abnormal) կապ ունի պատմության հետ: Քանի որ այն սնուցվում է հուսահատությամբ եւ հիասթափությամբ, հայ ազգայնականությունը պատճառ դարձավ, որ 1994 թ. հաղթանակի պատճառները չկարողանանք եւ չկամենանք անաչառորեն գնահատել: Այդ հաղթանակը սկսեց ընկալվել որպես փոխհատուցում՝ նախորդ բոլոր պարտությունների, զրկանքների եւ անարդարությունների, ու որպես վերականգնում՝ դրանց պատճառած հետեւանքների: Նույնքան վտանգավոր կլիներ 2020 թ. պարտությունը էականացնելը (essentialize): 2020 թ. պատերազմը պետք է մանրակրկիտ հետաքննվի, որպեսզի չառաջանա զոհարկություն եւ (կամ) անկարողություն:

Հարկ է նշել, որ Հայաստանում նման նախաձեռնության օգտին մի շարք ձայներ են լսվում. ներառյալ (բայց ոչ միայն) Գլխավոր շտաբի (ԳՇ) նախկին պետ Օնիկ Գասպարյանի եւ նախորդ կառավարության որոշ բարձրաստիճան անդամների:

¹⁴ Այս բաժինն օգտվել է գնդապետ Ժիրայր Ամիրխանյանի (Պաշտպանության նախարարություն, Հայաստան, ք.գ.թ., Ազգային անվտանգության հարցերի բաժնի պետ, Ռազմածովային բարձրագույն դպրոցի, Մոնտերել, Կալիֆորնիա) եւ Ներսես Կոպալյանի (Լաս Վեգասի Նեւադայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի գիտությունների թեկնածու) հետ կարծիքի փոխանակումներից եւ խորհրդակցություններից: Հեղինակները երախտապարտ են նրանց մեկնաբանությունների համար՝ միաժամանակ մնալով միակ պատասխանատուները սույն փաստաթղթում արտահայտված տեսակետների համար:

Հայաստանից դուրս հաջողված դեպքեր են եղել, երբ նման հետաքննությունները տվյալ հասարակությանն օգնել են հաղթահարելու ներքին ցնցումը եւ խոր բեւեռացումը: Կա նաեւ միջազգային բավականաչափ փորձ՝ «ինչ չանել»-ու առնչությամբ, Հայաստանի պարագայում նման մի նախաձեռնություն դյուրացնելու համար:

2. Տեսության բարեփոխում

Հայկական նախընտրությունները, որոնք ժառանգվել են խորհրդային ռազմական տեսությունից (այսինքն՝ պատերազմելու եղանակներն ու մեթոդները), հակված են դեպի հյուժիչ պատերազմի. մարդկային ռեսուրսների կառավարում, մեծ քանակությամբ զրահատեխնիկայի կիրառում եւ ուժեղ հենարան՝ ի դեմս հակաօդային պաշտպանության ու հրետանու, եւ ի վնաս օդային գերազանցության ու կենսունակ հետեւակի:

Սակայն սա աչք է փակում շարժունակ եւ ճկուն ինքնապաշտպանական խմբերի վրա, որոնք հանգուցային դեր ունեցան Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմում: Ասես՝ բանակի կառուցման ընթացքում հայկական ռազմական ավանդույթի օգտակար կողմերը կորել էին ԳՇ-ի համար: Նույնիսկ լավատեղյակ դիտորդներն էին ակնկալում, որ հայկական ուժերը կկարողանան ավելի լավ օգտագործել տեղանքն ու պաշտպանողական դիրքը, քան այն, ինչ նրանք արեցին 2020 թ. հոկտեմբերին ու նոյեմբերին:

2020 թ. Ղարաբաղյան պատերազմը չի փաստել, որ տանկերը անգործածելի են, եւ ոչ էլ ապացուցել է, որ հաջորդ պատերազմները միայն ռոբոտներն են ղեկավարելու: Բայց այն, անշուշտ, ցույց տվեց, որ շարժական, միավորված սպառազինության ու հրետանային ստորաբաժանումների բացակայությունը կարելու է թերություն հանդիսացավ ճակատամարտի եւ հնարավորությունների ենթադրյալ դասավորությունում:

Այն դեպքում, երբ ակնհայտ է, որ պատերազմով սպառված զսպման կարողությունները պետք է վերակառուցվեն եւ ուժեղացվեն, հարցը, թե արդյո՞ք պետք է վերանայվի գնումների քաղաքականությունը, կախված կլինի տեսության բարեփոխումների ընտրությունից:

Պաշտպանության նախարարության եւ ԳՇ-ի տարրերի միջեւ կա տեսական դիմակայություն: Այն դեպքում, երբ բարեփոխումների ներդրումը եկել է ՊՆ-ից, ԳՇ-ն դրանք ընդունել է միայն մակերեսորեն (եւ ոչ գործնականում), կամ ընդհանրապես չի ընդունել: Այս խնդիրը տեսանելի դարձավ քառօրյա պատերազմից հետո Ազգ-բանակ հայեցակարգի հրապարակմամբ եւ երկու համապարփակ փաստաթղթերով, որոնք ներկայացնում են «Պաշտպանության նախարարի վերանայումը»՝ հրապարակված 2018 եւ 2020 թվականներին: Այս վերջին երկու փաստաթղթերում թվարկվում էին զինված ուժերի արդիականացման եւ բարեփոխման կարելու տարրեր: Իրականացված բարեփոխումներից ոչ մեկը, սակայն, բավարար չէր 2020 թ. պատերազմի ելքի վրա ազդեցություն ունենալու համար: Հավանաբար, ԳՇ-ն գործել է այն ենթադրությամբ, որ կնախընտրեր սպասել խաղաղության՝ զանգվածային

բարեփոխումներ իրականացնելու համար: Պարզվեց, որ սա խելամիտ չէր: Այժմ Հայաստանը պետք է անհապաղ սկսի այդ բարեփոխումները:

3. Անհամաչափ եւ հիբրիդային պատերազմ

Պետք է մշակվեն ոչ գծային պատերազմի տեսություններ, որոնք օգտագործում են տնտեսական, քաղաքական, հոգեբանական եւ կիրքեր ազդեցությունները թշնամու սպառնալիքների կամ թիրախների վրա: Տեղեկատվության սպառազինումը շարունակում է մնալ լուրջ թերություն՝ ինչպես հայկական պետության պաշտպանական, այնպես էլ հարձակողական զինանոցում, իսկ ուժեղ անհամաչափ եւ հիբրիդային պատերազմի տեսության մշակումը վճռորոշ նշանակություն ունի հանրապետության անվտանգության ճարտարապետության համար:

4. Հայաստանի ռազմական կրթական համակարգի բարեփոխում

Հայաստանի ռազմական ակադեմիաները դեռեւս հնացած են, սահմանափակ միջոցներով, անբավարար քանակի որակյալ հրահանգիչներով եւ գիտական հետազոտությունների ու ռազմական ակադեմիկոսների պակաս ունեն: Ինչպես լայնածավալ բարեփոխումներ են պահանջվում Հայաստանի կրթական համակարգում, այնպես էլ նույն լայնածավալ բարեփոխումներն անհրաժեշտ են նաեւ երկրի ռազմական կրթական համակարգում:

Հայաստանի երեք հիմնական ռազմական ակադեմիաները չունեն գերժամանակակից ռազմական հարմարություններ, ակադեմիական պատրաստվածություն, ընդլայնված ռազմավարական եւ մարտավարական պատրաստվածություն, առաջատար մասնագետներ եւ հրահանգիչներ, ու որակյալ հետազոտություններ: Հայաստանի ռազմական ակադեմիաների՝ համեմատաբար ցածր որակի պատճառով կրտսեր սպայական կազմը, ռազմական ծրագիր կազմողները եւ ռազմավարները, որոնց պատրաստում է այդ կրթական համակարգը, մնում են Հայաստանի անվտանգության ճարտարապետության կարիքներին անհամապատասխան եւ թերի: Հայաստանի ռազմական կրթական համակարգը պետք է բարեփոխվի եւ մոդելավորվի առաջադեմ ռազմական ակադեմիաների օրինակով. այն պետք է ներառի ճշգրտություն՝ հետազոտությունների եւ ռազմական գիտության մեջ, քաղաքականության մշակում եւ ռազմավարական հրամանատարության կատարելագործում:

5. Ղեկավարման եւ կառավարման (Command and Control, C2) համակարգ

2015 թ. Սահմանադրությամբ սահմանված՝ ղեկավարման եւ կառավարման մեխանիզմները թուլանում են: Փոփոխությունները, որոնք նրանք պատկերացնում են խաղաղության եւ պատերազմի միջեւ, պատերազմի ժամանակ անհաջողության աղբյուր դարձան:

Սկզբունքորեն, զինված ուժերը ենթարկվում են կառավարությանը: Հետեւաբար, ՊՆ-ն հետեւում է Անվտանգության խորհրդի սահմանած պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղություններին, այնուհետեւ դրանք փոխանցում է Ջինված ուժերին: Խաղաղության պայմաններում՝ ԳՇ պետը, ռազմական ամենաբարձր պաշտոնյան, ենթարկվում է ՊՆ-ին: Սակայն պատերազմի ժամանակ գլխավոր հրամանատարը դառնում է վարչապետը, իսկ ՋՈՒ-ն զեկուցում է վարչապետին:

2008 թ.-ից սկսած ռազմավարական պաշտպանության երկու տեսություն է ներկայացվել, ուր հատկապես շեշտադրված է այն, որ առաջադրանքով հրամանատարումը (mission command) C2 համակարգի հիմնական փիլիսոփայությունն է եւ առաջնորդող սկզբունքը: Այդ նույն հարցը վերաձեւակերպվեց 2018 եւ 2020 թվականների նախարարական վերանայման մեջ: Հրամանատարում առաջադրանքով հայեցակարգի առավելությունները կարող են լինել.

1. Էական քայլ կատարելը դեպի պատերազմի նկատմամբ մաներային մոտեցում,
2. Հաղթահարելը մարտադաշտի անկայունությունը եւ հաղորդակցության հավանական խափանումը,
3. Կողմնորոշում-որոշում-կատարում կապը կրճատելը,
4. Նախապատվություն տալը առաքելության տիպի պատվերներին, որոնք լավ կհամապատասխանեն լեռնային եւ անտառային ռազմական գործողությունների թատերաբեմին,
5. Հրամանատարի մտադրության ըմբռնումը եւ փոխվստահության ձեւավորումն ընդգծելը, որը հնարավորություն կտա ավելի լավ հակազդելու ցանկացած սպառնալիքի եւ հնարավորություններն օգտագործելու ռազմի դաշտում:

6. Պրոֆեսիոնալ եւ բարձր արդյունավետությամբ բանակ

Սա հիմնականորեն կպահանջի լայնածավալ կառուցակարգված եւ ենթակառուցվածքային բարեփոխումներ, որոնք խթան կհանդիսանան Հայաստանի զինված ուժերի արդիականացման համար: Դրանք պետք է ներառեն, բայց չսահմանափակվեն հետեւյալով. (1) զինված ուժերի ռազմական պատրաստվածության բարձրացում՝ բոլոր ռազմական միավորների մշտական պատրաստվածությամբ, (2) գորահավաքային կարողությունների ավելացում, (3) գորամասերի վերակազմավորում՝ դիվիզիաներից ու գնդերից մինչեւ բրիգադներ՝ որպես ստանդարտ մարտական միավորում, (4) պատերազմի օպերատիվ մակարդակում արագ արձագանքման ուժերի զարգացում, (5) հատուկ ջոկատների ստորաբաժանումների չափի եւ գործառնական շրջանակի ընդլայնում եւ (6) ավագ սպաների թվի նվազեցում՝ կրտսեր սպաների թվի միաժամանակ ավելացմամբ. այդպիսով վերացնելով «շրջված բուրգի» խնդիրը, որն այժմ առկա է Մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ոլորտում:

7. Զինված ուժերի համալրման համակարգ

Զորահավաքային համակարգը պետք է փոխակերպվի բարեփոխումներով, որոնք ուղղված լինեն զորակոչին եւ պրոֆեսիոնալ զինծառայողների ու զորակոչիկների համապատասխան մասնաբաժինների ու դերերի վերանայմանը: Հետեւյալ նկատառումները նման բարեփոխումների հեռանկարային ուղղություններ են: Այս փաստաթղթի հեղինակները դրանք առաջարկում են որպես ընդհանուր ուղղություններ, որոնք պետք է դիտարկվեն ռազմական եւ քաղաքացիական-ռազմական ակնառու փորձագետներից կազմված ապագա հանձնաժողովի կողմից, որին հանձնարարված կլինի խորությամբ ուսումնասիրել այդ խնդիրները:

2020 թ. պատերազմում 18 - 20 տարեկան պատանիների զորակոչային բանակը անտանելի զին վճարեց: Ապագայում նման իրավիճակից խուսափելը պետք է լինի ԶՈՒ՝ ցանկացած բարեփոխումային փաթեթի վճռորոշ տարրը:

Զորակոչը կարող է աստիճանաբար եւ որոշ չափով կրճատվել իր տեւողությամբ (տեւողությունը պետք է սահմանվի)՝ միաժամանակ բարելավելով որակը: Այն կարող է հավասարապես լինել արական եւ իգական սեռի ներկայացուցիչների համար, սակայն զորակոչի կազմակերպման հարցում սեռին հարմարեցված տարբերություններով:

Զինվորական ծառայության պայմանները բարելավվել են 2018 եւ 2020 թվականների ընթացքում: Եթե բարձրագույն հրամանատարությունը հաջողվի հետագայում նվազեցնել վատ սովորությունները, ինչպիսիք են՝ ահաբեկումը եւ բռնությունը, այն կդառնա ավելի գրավիչ:

Պարտադիր զորակոչի ժամկետից հետո, ով ցանկանում է շարունակել ծառայությունը, կարող է դառնալ մասնագետ՝ պայմանագրով: Անհրաժեշտ կլինի նախկին զորակոչիկներին կանչել կանոնավոր վերապատրաստումների եւ թարմացումների: Պահեստայինների ուսուցումը, ինչպես նշվեց, երկար ժամանակ անտեսվել էր:

Եթե պրոֆեսիոնալ բանակի համակարգը դառնա հայկական ԶՈՒ-ի կորիզը, ապա ընդհանուր թիրախ կարող է դառնալ երեք բրիգադի կազմավորումը՝ յուրաքանչյուրը 5000 հոգուց բաղկացած: Այս թիվը ավելի փոքր է, քան ազգային զորակոչը նախատեսում էր մինչեւ 2020 թվականը: Այն, ինչի կարելի է հասնել այս թիրախային թվի հետ, այսինքն՝ ինչ առաքելություն պետք է սահմանել ԶՈՒ-ի համար, ուսումնասիրության ենթակա հարց է եւ կախված է հիմնական ռազմավարությունից, որը Հայաստանը կընտրի իր համար: Այնուամենայնիվ, նախորդ համակարգը, ապավինելով պաշտպանության (ոչ լիարժեք) ամրացված տարածքներին, ցույց տվեց նաեւ, որ ցանկացած թվով զինվորներ, որ Հայաստանը կարող էր հավաքագրել զորակոչային բանակում, նույնիսկ լավագույն ժամանակներում, անբավարար կլինեին: Եթե Հայաստանը նպատակ ունի պահպանել ՇԳ-ն, որը հավասար է Հայաստանի եւ

Աղբրեջանի միջև սահմանի ամբողջ երկարությանը՝ երկար ժամկետում, ցանկացած համակարգ ցանկացած դեպքում կարող է անկարող լինել:

Առաջարկվող համակարգը թանկարժեք է՝ ծախսային առումով. դրա տարեկան նվազագույն արժեքը մոտավորապես գնահատվում է մեկ միլիարդ դոլար: Այս հարցը պետք է նույնպես քննարկվի այդ համակարգի տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ:

8. Ստեղծել կամավոր պայմանագրային պահեստային ուժ՝ հիմնված տարածքային սկզբունքի վրա՝ պրոֆեսիոնալ բանակին աջակցելու համար

2020 թ. պատերազմը ցույց տվեց, որ Հայաստանն ունի վատ պատրաստված պահեստագորայիններ՝ անհամարժեք պատրաստվածությամբ եւ բանակի գծային ստորաբաժանումների հետ լավ ինտեգրվելու անկարողությամբ: Կամավորներին ուղղված վարչապետի կոչը այս իրավիճակի ակնհայտ ապացույցն էր:

Պայմանագրային պահեստագորայինները հավաքվում էին շաբաթական մեկ անգամ ցածր մակարդակի ուսուցման եւ պարբերաբար՝ շաբաթ-կիրակի օրերին վերապատրաստման, իսկ հավաքական դաշտային ուսուցման համար՝ տարեկան մի քանի շաբաթ:

Կարող են ստեղծվել նաեւ իզական պահեստային ջոկատներ, որոնք, հնարավոր է, սկզբում առանձնացված լինեն արական սեռից:

Արտերկրում ապրող հայերի համար կարող են լինել օրենսդրական դրույթներ՝ որպես պայմանագրային պահեստագորայիններ ընդգրկվելու համար: 2020 թ. պատերազմի ընթացքում մի շարք սփյուռքահայեր կամավորագրվեցին՝ առանց Հայաստանի քաղաքացիություն ունենալու: Այս մարդկանց առնչությամբ, որոնք փաստացի պաշտպանված չեն հայկական պետության կողմից, գոյություն ունի իրավական սողանք:

Յուրաքանչյուր պահեստային միավոր կապված է ակտիվ բաղադրիչ միավորի հետ: Ակտիվ պահեստագորը պետք է ինտեգրվի Ընդհանուր բանակի հայեցակարգին՝ առանձին, բայց զուգահեռ հրամանատարական շղթաներով: Կան կամավոր խմբեր, որոնք զբաղվել են պահեստագորայինների եւ նախագորակոչիկների պատրաստմամբ: Դրանք կարող են օգտակար լինել այս տեսակի բարեփոխումների իրականացման, ինչպես նաեւ հասարակություն-բանակ հարաբերությունների սոցիոլոգիական կողմերի համար, ու նաեւ որոշելու համար, թե ինչ են ուզում քաղաքացիները եւ պատրաստ են կամ պատրաստ չեն դրանք կատարելու:

Պայմանագրային պահեստագործի առավելությունները.

- Դեպի ծով ելք չունեցող երկրներում՝ խորդուբորդ տեղանքով եւ սահմանափակումներով (չափերով, կազմակերպչականությամբ, ֆինանսապես, հագեցվածությամբ) պահեստագործը կարող է աջակցել գործող ուժին:
- Տարածքային սկզբունքի վրա հիմնված գործուն պահեստագործը կստեղծի ամբողջական ստորաբաժանումներ՝ տեղական ստորաբաժանումների անձնակազմի շատ ավելի մեծ համախմբվածությամբ: Նրանք կունենան ավելի լավ ուսուցում եւ տեղանքի իմացություն:
- Տարածքային բաշխումը նման պահեստագործին կստիպի արձագանքել շատ ավելի արագ՝ ի համեմատ կենտրոնացված ազգային ուժերի:
- Քաղաքացիների հետ կապի հաստատում տեղական մակարդակում, ինչը կդառնա փողոց՝ երկկողմանի երթևեկությամբ. օրինակ՝ այն կդառնա «մեր համայնքային գունդը»:
- Այն հնարավորություն է տալիս քաղաքացի-զինվորներին (ստորաբաժանման հիմնական մասը) ծառայել իրենց երկրին՝ միաժամանակ շարունակելով ապրել, աշխատել եւ սովորել իրենց սեփական համայնքում:
- Այն փոխանցում է լիարժեք մոբիլիզացված երկրի զգացում, որը պատրաստ է պաշտպանվել յուրաքանչյուր քառակուսի կիլոմետր տարածքի վրա:
- Այն մեղմում է ժողովրդագրական տկար պատկերը:
- Այս ուժերը օգտակար են նաեւ խաղաղ ժամանակներում:
- Այս նախատիպը կարող է հարմարեցվել հայկական պատմական ավանդույթի օրինակով՝ այն «հիմնավորելու» համար ազգային փորձի մեջ:

Հեղինակները կրկին պնդում են, որ այս տարբեր ուղղությունները կարիք ունեն խոր եւ լայնակի ուսումնասիրման: Համեմատության համար կարելի է բերել մի շարք երկրների օրինակներ. Ֆինլանդիայի, Շվեյցարիայի, Իսրայելի եւ այլ երկրների: Հայաստանի քաղաքացիների սոցիալական երկարաժամկետ հակումները, ինչպես նաեւ արտաքին քաղաքականության ընտրությունը, որն արվել է այսօր եւ կարվի մոտ ապագայում՝ որոշումներ կայացնողների կողմից, փոխկապակցված են այն ուղղությունների հետ, որոնք, ի վերջո, պետք է գերակա դառնան Հայաստանի պաշտպանական համակարգի նկատմամբ:

9. Ռազմահետազոտական եւ արդյունաբերական էկոհամակարգի ստեղծում, որը որոշակի արժեք ունի արտաքին շուկաների համար եւ մեծապես օգտակար է ազգային անվտանգության կարիքների համար

- **Հետազոտություն եւ զարգացում.** օգտագործելով երկրի եւ Միջուկի գիտատեխնոլոգիական փորձագետներին, ինչպես նաեւ համատեղ ներդրումային ընկերություններին՝ պետական ձեռնարկությունների (ՊՁ) հետ մեկտեղ, Հայաստանը

պետք է գլխավորի ռազմական հետազոտությունների եւ զարգացման լայնածավալ նախագիծը:

- **Ռազմարդյունաբերական համալիրի զարգացում.** համատեղ ձեռնարկությունների ներդրում եւ զարգացում ՊՁ-ների մասնակցությամբ, որոնց միջոցով ռազմական տեխնիկայի եւ տեխնոլոգիայի արտադրության ենթակառուցվածքը համապատասխանեցվում է պետական հետազոտական եւ զարգացման ծրագրերին:

Այս երկու կետերը միասին կձառայեն մրցունակ եւ արդյունավետ էկոհամակարգի առաջացմանը, որում հետազոտությունը, զարգացումը եւ արդյունաբերական արտադրությունը համաժամանակեցվում (synchronize) են: Դրա համար ոչ պետական հատվածը պետք է ամրապնդի արտահանմանն ուղղված իր ակտիվները, որպեսզի երբ պետական հատվածը հետագայում պատրաստ լինի այդ գործի մեջ նետվելու, արդյունավետ կապ ստեղծվի մասնավոր ներդրողների եւ ՊՁ-ի միջեւ:

«Եթե ցանկանում եք կառուցել մի երկիր, ուր կվերադառնան նրա որդիներն ու դուստրերը, եթե ցանկանում եք կառուցել մի երկիր, որտեղից նրանք կմեկնեն միայն արձակուրդի, եթե ցանկանում եք մի երկիր, որը վախ չի ունենա ապագայի նկատմամբ, ապա կատարեք ընդամենը երկու քայլ.

- 1. Կոռուպցիան հավասարեցրեք հայրենիքի դավաճանությանը, իսկ կոռումպացված պաշտոնյաներին՝ դավաճաններին, մինչև յոթերորդ սերունդը...*
- 2. Երեք մասնագիտություններ դարձրեք առավել բարձր վարձատրվող և հարգված: Դրանք զինվորականներն են, ուսուցիչները և բժիշկները ...*

... Եւ ամենակարեւորը՝ աշխատանք, աշխատանք և աշխատանք, քանի որ ոչ ոք չի կարող պաշտպանել քեզ, ոչ ոք չի կերակրի քեզ՝ քեզանից բացի, և քո երկիրը միայն քեզ է պետք և ուրիշ ոչ մեկին: Երբ դա դառնում է ոչ թե սոսկ բառեր և մի պարզ կարգախոս, այլ ապրելակերպ, ուրեմն դու հասել ես քո նպատակին ... »:

Վերագրված է Իսրայելի վարչապետներից
Գոլդա Մեյրին
